«ՆՈՐԱՎԱՆՔ»
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Կարեն Վերանյան

ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան
2016

ՀՏԴ 32.001 : 93/94
ԳՄԴ 66.0 + 63.3
Վ 490

Գիրքը հրատարակվում է
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Գիտական խմբագիր՝
ՎԱՀՐԱՄ ՀՈՎՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ,
Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար

Վերանյան Կարեն

Վ 490 ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ/
Կ.Վերանյան. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2016. - 224 էջ:

Հետազոտությունը նվիրված է Իսրայել պետության փորձի ուսումնասիրությանը, որն ուղղակի կամ անուղղակի առնչություն ունի հայկական իրականության հետ: Անդրադարձ է կատարվում հարավկովկասյան ռազմաքաղաքական զարգացումներում Իսրայելի դերակատարման, Իսրայել-Ադրբեջան ռազմատեխնիկական համագործակցության խնդիրներին: Լուսաբանվում են Իսրայելի զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության իրավական նորմերը, որոնք արժեքաբանական առումով կարող են ուսանելի լինել: Ներկայացվում է սփյուռք-պետություն համագործակցության, հայրենադարձության կազմակերպման, արտերկրի համայնքների գիտակրթական պոտենցիալն ի շահ պետության կիրառելու իսրայելական փորձը, ինչը նույնպես կարող է դրական օրինակ ծառայել:

ՀՏԴ 32.001 : 93/94
ԳՄԴ 66.0 + 63.3

ISBN 978-9939-825-30-4

© «Նորավանք» ԳԿՀ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ 1.
ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 9

1.1. Իսրայել-Հարավային Կովկասի երկրներ հարաբերությունները 9

1.2. Ադրբեջան-Իսրայել ռազմատեխնիկական համագործակցությունը 24

ԳԼՈՒԽ 2.
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 47

2.1. Զինվորականի դերը հրեությունում. հրեա զինվորականի վարքականոնը 48

2.2. Կնոջ դերն Իսրայելի պաշտպանության բանակում ……... 59

2.3. Հոգևորականությունն Իսրայելի բանակում 71

2.4. Հրեա ռազմագերիների հիմնահարցն Իսրայելում ……..... 80

2.5. Հրեությունում Իսրայելի զինվորականության աջակցման ծրագրերը 93

2.6. Հայրենասիրության հիմնահարցն Իսրայելի հասարակությունում 100

2.7. Պատերազմի էթիկան Իսրայելի հասարակությունում ……..... 108

2.8. Հրեա ժողովրդի ազգակերտման պատմությունից. «Մասադայի» հերոսապատումը ……..... 118

2.9. Զինվորականության հոգևոր-բարոյական արժեհամակարգի հիմնահարցեր. միջազգային փորձ և հայ իրականություն ……..... 142

ԳԼՈՒԽ 3.
ՍՓՅՈՒՌՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 154

3.1. ԱՄՆ հրեական լոբբինգը 154

3.2. Գլոբալ փոփոխությունները և հրեական համայնքները 164

3.3. Հայրենադարձության իսրայելական փորձը 169

ԳԼՈՒԽ 4.
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 189

4.1. ԱՄՆ հրեական համայնքի գիտական պոտենցիալը 189

4.2. Խորհրդային գիտնականների ավանդն Իսրայելում գիտության զարգացման գործում ……..... 194

ՀԱՎԵԼՎԱԾ
Վարդան Աթոյան
Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում 198

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 220

ԱՌԱՋԱԲԱՆ

Հետազոտությունը ներկայացնում է թեմատիկ վերլուծությունների շարք, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով առնչություն ունեն Հայաստանի անվտանգային և պաշտպանական հիմնահարցերի հետ: Լուսաբանվում են Հարավային Կովկասում Իսրայելի արտաքին քաղաքականությանը, վերջին տարիներին մեր տարածաշրջանում Իսրայելի ռազմաքաղաքական ներգրավվածությանը, ռազմաքաղաքական միտումներին վերաբերող հիմնախնդիրները: Կարելի է փաստել, որ ի տարբերություն նախորդ դարի 90-ականների վերջերի և 2000-ականների սկզբների, երբ Իսրայելի ներգրավվածությունը մեր տարածաշրջանում պայմանավորված էր հիմնականում Թուրքիայի միջնորդությամբ և ներկայանում էր որպես Թուրքիա-Իսրայել տանդեմ, այսօր հարավկովկասյան ռազմաքաղաքական գործընթացներում այդ երկիրը դարձել է չմիջնորդավորված և կարևոր արտաքին գործոն: Մի կողմից, Իսրայել-Ադրբեջան երկկողմ ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական ներկայիս համագործակցության տեմպերը գտնվում են բավական բարձր մակարդակի վրա, ինչն էապես մեծացրել է իսրայելական կողմի ներգրավումը Հարավային Կովկասում: Մյուս կողմից, Հարավային Կովկասը և, մասնավորապես, Ադրբեջանն Իսրայելին հետաքրքրում է նավթագազային ռեսուրսներով և դրանց մատակարարման հարցերի համատեքստում: Մեր տարածաշրջանում

Իսրայելի ռազմաքաղաքական ակտիվացման հանգամանքը պայմանավորված է մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներով (սիրիական ռազմաքաղաքական վերադասավորումներ, Թուրքիայում քրդերի հիմնախնդրի կտրուկ ակտիվացում, Իսրայել-Իրան առճակատում և այլն)։ Ելնելով այս իրողություններից՝ ներկայացրել ենք Հարավային Կովկասում Իսրայելի ռազմաքաղաքական ներգրավվածության հիմնական ուղղությունները, ռեսուրսներն ու հիմնախնդիրները։ Անդրադարձել ենք նաև Իսրայել-Ադրբեջան ռազմատեխնիկական համագործակցության ձևավորման և զարգացման հարցերին։

Հետազոտության հաջորդ թեմատիկ վերլուծությունը վերաբերում է պաշտպանական ոլորտի խնդիրներին։ Ներկայացվում են Իսրայելի պաշտպանության բանակի բարոյահոգևոր դաստիարակության, զինվորականության արժեքաբանական հարցերը։ Հայտնի է, որ Իսրայելի ղեկավարությունը մշտապես մեծ կարևորություն է տվել և տալիս է երկրի զինվորականության հոգևոր-բարոյական դաստիարակության խնդիրներին՝ որպես Իսրայելի պաշտպանության բանակի զինվորականության մարտունակության ապահովման կարևոր բաղկացուցիչներից մեկը։ Պատահական չէ, որ զինվորականության արժեքաբանական հարցերը երկրի պաշտպանական դոկտրինում առանցքային տեղ ունեն։ Իսրայելի զինվորականության բարոյահոգևոր դաստիարակությունը, արժեքաբանական հայեցակարգային մոտեցումների ուսումնասիրությունը, որպես միջազգային փորձի ուսանելի օրինակ, կարող է նպաստել ՀՀ ԶՈՒ-ում զինվորականության հոգևոր-բարոյական դաստիարակության զարգացման աշխատանքներին, դրականորեն անդրադառնալ

զինվորականների փոխհարաբերությունների (զինվոր-զինվոր, զինվոր-սպա) վրա, աջակցել մեր զինվորականության մարտունակության բարձրացմանը:

Թեմատիկ ուղղություններից մեկն էլ նվիրված է Իսրայելի օրինակով սփյուռք-պետություն փոխհարաբերությունների, հրեական համայնքներից հայրենադարձության իրավաքաղաքական հիմքերի, հայրենադարձության կազմակերպման մեխանիզմների ուսումնասիրմանը: Սա նույնպես ուշագրավ է Հայաստանում սփյուռք-պետություն համագործակցության զարգացման և հատկապես հայրենադարձության կազմակերպման իրավական ու քաղաքական մեխանիզմների ուսումնասիրման առումով: Իսրայելում սփյուռք-պետություն համագործակցության հաստատման և զարգացման, հայրենադարձության կազմակերպման մեխանիզմների ուսումնասիրությունը կարող է նպաստել մեր երկրում այդ ոլորտում իրականացվող հայեցակարգային-իրավական մոտեցումների կիրառության, արտերկրի հայկական համայնքներում հայրենադարձության ուղղությամբ տարվող հանրային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Սփյուռք-պետություն փոխհարաբերությունների, հայրենադարձության հիմնահարցերի համատեքստում են քննարկվում նաև Իսրայելի կրթությանն ու գիտությանը վերաբերող հարցերը՝ ընդգծելու համար գիտության, կրթության զարգացման գործում հրեական համայնքների զգալի ավանդն Իսրայել պետության զարգացման գործում: ԱՄՆ հրեական համայնքի օրինակով ցույց են տրվում Միացյալ Նահանգներում հրեության կրթական, գիտական պոտենցիալի զարգացման, երկրի

հասարակական-քաղաքական կյանքում հրեության ազդեցության մեծացման խնդիրները։ Անդրադարձ է կատարվում նաև խորհրդային գիտնական հրեաների հայրենադարձության հարցերին, որոնց անվան հետ է կապվում Իսրայելի միջուկային ծրագրի զարգացումն առհասարակ։

Իբրև *Հավելված* ներկայացվել է նաև Վարդան Աթոյանի՝ Իսրայելի ուղեղային կենտրոններին նվիրված ուսումնասիրությունը, որում խոսվում է երկրի ներքին և արտաքին քաղաքականությունում, ղեկավարության որոշումների ընդունման համակարգում դրանց ունեցած դերակատարության մասին։

ԳԼՈՒԽ 1.
ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

1.1. Իսրայել-Հարավային Կովկասի երկրներ հարաբերությունները

Խորհրդային կարգերի փլուզմամբ նոր հնարավորություններ բացվեցին նորանկախ հանրապետությունների հետ ուղղակի, չմիջնորդավորված համագործակցության հաստատման և կապերի ամրապնդման ուղղությամբ։ Հարավկովկասյան երկրներն Իսրայելին հետաքրքրում էին այդ երկրներում բնակվող հրեական համայնքների հիմնահարցերի հետ կապված. Իսրայել պետության համար լավ հնարավորություն էր ստեղծվել նոր լիցք հաղորդել թե՛ Իսրայելի՝ հետխորհրդային տարածքի հրեական համայնքների հետ համագործակցության խորացմանը, թե՛, ինչն առավել էական էր, տեղի հրեական համայնքներից դեպի Իսրայել հայրենադարձության խթանմանը։ Հետխորհրդային տարածքի հրեական համայնքներից Իսրայել հայրենադարձության կազմակերպման արդյունքում արտագաղթեց նախևառաջ հրեական հետխորհրդային սփյուռքի մտավոր, գիտական պոտենցիալը, որը հետագայում էական ազդեցություն ունեցավ Իսրայել պետության կրթության, գիտության (հատկապես ճշգրիտ գիտությունների) զարգացման վրա։

Մյուս կողմից, հետխորհրդային կարգերի փլուզումը նպաստեց Իսրայելի արտաքին քաղաքական ներգրավմանն այդ երկրի համար ռազմավարական, աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող այնպիսի տարածաշրջանում, ինչպիսին է Հարավային Կովկասը: Իսրայել պետության համար նոր հնարավորություններ էին բացվել Հարավային Կովկասի և միջինասիական երկրների հետ ուղիղ երկխոսության հաստատմամբ առավել ազդեցիկ քաղաքական, իսկ հետագայում նաև՝ ռազմաքաղաքական դեր ու նշանակություն ստանձնելու Իսրայել-Թուրքիա, Իսրայել-ՌԴ, ինչպես և Իսրայել-Իրան հարաբերություններում:

Ինչպես ցույց տվեցին Իսրայել-Հարավային Կովկաս հարաբերությունների հետագա զարգացումները, իսրայելական կողմի քաղաքական համագործակցությունն առավել արդյունավետ ընթացք ստացավ միայն Ադրբեջանի հետ: Ավելին, վերջին տասնամյակում Իսրայել-Ադրբեջան համագործակցությունն անցել է որակապես նոր մակարդակի՝ գլխավորապես շեշտը դնելով ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական համագործակցության զարգացման ուղղությունների վրա:

Իսրայելի համար Ադրբեջանը հետաքրքրական է առաջին հերթին իր նավթագազային ռեսուրսներով: Մյուս կողմից, Ադրբեջանն իսրայելական կողմի համար կարևոր պետություն է Իսրայելի մերձավորարևելյան քաղաքականության, Իսրայել-Թուրքիա, Իսրայել-Իրան փոխհարաբերությունների համատեքստում: Ադրբեջանն Իսրայելի համար կարևորվում է նաև որպես իսրայելական արտադրության սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մատակարարման շուկաներից մեկը:

Կարելի է միանշանակ ասել, որ ի տարբերություն մինչև 2000-ականներն ընկած ժամանակահատվածի, երբ Իսրայել-Ադրբեջան երկկողմ հարաբերություններ, որպես այդպիսիք, գոյություն չունեին և այդ հարաբերությունները գերազանցապես դիտարկվում էին Իսրայել-Թուրքիա ռազմավարական տանդեմի շրջանակներում, 2000-ականներից սկսած և հատկապես վերջին տասնամյակում երկու երկրների միջև քաղաքական հարաբերությունները վերածվեցին ոչ միայն չմիջնորդավորված, երկկողմ համագործակցության, այլև էական խթան հաղորդեցին այդ համագործակցության հատկապես ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական բաղադրիչներին։

Ի տարբերություն Ադրբեջանի, Վրաստանի և հատկապես Հայաստանի հետ մերձավորարևելյան այդ երկրի փոխհարաբերություններն, օբյեկտիվ և ոչ օբյեկտիվ քաղաքական պատճառներից ելնելով, ոչ միայն ձեռք չբերեցին համագործակցության զարգացման միտումներ, այլև հանգեցրին որոշակի հակասությունների։

Հայաստան-Իսրայել ներկայիս քաղաքական հարաբերությունները բավական թույլ են։ Դրանք լավագույն դեպքում սահմանափակվում են Քնեսեթում ժամանակ առ ժամանակ, պայմանավորված մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներով (Իսրայել-Թուրքիա, Իսրայել-Իրան կամ Իսրայել-ՌԴ հարաբերություններ), Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման հիմնահարցի բարձրացմամբ, որը, որպես կանոն, տարբեր քաղաքական պատճառներով այդպես էլ դրական ընթացք չի ստանում։

Հայ-իսրայելական քաղաքական հարաբերությունների կարևոր մաս են կազմում երկկողմ հասարակագիտական, կրթական ու մշակութային ոչ կանոնավոր շփումները, իրականացվող փոխայցելությունները։

Վերջին տասնամյակում Իսրայել-Ադրբեջան ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական համագործակցության խորացման միտումները բացասական ազդեցություն ունեցան Հայաստան-Իսրայել հարաբերությունների վրա։

Նույն դինամիկան արձանագրվեց նաև Իսրայել-Վրաստան փոխհարաբերություններում, որտեղ հետխորհրդային շրջանում առաջացան հակասություններ ու խնդիրներ, բնութագրվեցին զարգացման դրական միտումներն ակնառու չեն։ Վերլուծաբանների զգալի հատվածը հակված է դա պայմանավորել 2008թ. վրաց-հարավօսական օգոստոսյան պատերազմով և դրա հետևանքներով։

Խնդիրն այն է, որ հետպատերազմյան շրջանում պաշտոնական Վաշինգտոնը որոշակիորեն սառեցրեց Վրաստանի հետ հարաբերությունները՝ փորձելով չգնալ բացահայտ առճակատման Կրեմլի հետ։ Այդ շրջանում Վաշինգտոնում Վրաստանի նախկին նախագահ Մ.Սաակաշվիլուն դադարեցին ընդունել բարձր մակարդակով, ինչպես դա սովորաբար արվում էր նախկինում։ Անհերքելի է, որ պատերազմական գործողություններից հետո զգալիորեն նվազեցին Վրաստանի նախկին միջազգային կշիռն ու վարկանիշը, ինչն անուղղակի ազդեցություն ունեցավ նաև Իսրայել-Վրաստան համագործակցության վրա։

Վերը հիշատակված գործընթացների համատեքստում Իսրայելի ղեկավար շրջանակները վերանայեցին հարավկովկաս-

յան ռազմավարական նախկին գերակայությունները՝ Վրաստանի հետ համագործակցությունը հասցնելով բավական ցածր մակարդակի։ Պատահական չէ, որ այդ ժամանակահատվածում զգալիորեն կրճատվեցին իսրայելցի բարձրաստիճան պաշտոնյաների այցելությունները Թբիլիսի, սառեցվեց նախկինում բարձր մակարդակներով ընթացող երկկողմ համագործակցությունն այդ թվում և ռազմական ոլորտում։ Ավելին, 2010թ. օգոստոսին Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարար Ռամազ Նիկոլաիշվիլու հետ հանդիպմանը հայտարարեց, որ «Մերձավոր Արևելքում և Կովկասում տիրող զգայուն իրադրության առկայության պայմաններում ռազմական համագործակցության հարցը դրված չէ երկկողմ հարաբերությունների օրակարգում»։

Երկու երկրների միջև հարաբերություններում լուրջ խնդիրներ առաջացան հատկապես 2010թ. հոկտեմբերին Բաթումում իսրայելցի խոշոր գործարարներ՝ Էյլատում (Իսրայել) Թուրքիայի պատվավոր հյուպատոս Ռոն Ֆուքսի (Ron Fuchs) և Nirrnetco (Overseas) Ltd. Ընկերության նախագահ Զեև Ֆրենկելի (Ze’ev Frenkiel)՝ Վրաստանի ֆինանսների փոխնախարար Ավթանդիլ Խարաիձեին կաշառելու փորձի մեղադրանքով ձերբակալության փաստի հետ կապված։ Այս միջադեպը մեծ աղմուկ բարձրացրեց և վերածվեց միջազգային սկանդալի։ 2011թ. ապրիլի 1-ին Թբիլիսիի դատարանի որոշմամբ իսրայելցի գործարարները դատապարտվեցին համապատասխանաբար 7 և 6.5 տարվա ազատազրկման, ինչպես նաև պարտավորվեցին վճարել շուրջ կես միլիոն ամերիկյան դոլարի տուգանք։

Ինչպես փաստում են փորձագետները, Վրաստանի կառավարության հետ իսրայելցի երկու գործարարների հարաբերությունների նախապատմությունը վերաբերում է դեռևս երկրի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի նախագահության ժամանակահատվածին. Ֆուքսին և Ֆրենկելին 1991թ. հաջողվել էր ձեռք բերել Վրաստանի տարածքում գործող բոլոր խողովակաշարերի կառավարման և առկա բոլոր ածխաջրածնային հանքավայրերի վերամշակման բացառիկ իրավունքի վերաբերյալ անժամկետ համաձայնագիր: Տվյալ համաձայնագրի հետ կապված լուրջ խնդիրներ առաջացան երկրի նախկին նախագահ Մ.Սաակաշվիլու նախաձեռնած հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման արդյունքում:

Գործի մանրամասներն այսպիսին են. 2010թ. հոկտեմբերին իսրայելցի գործարարների ձերբակալությունից 7 ամիս առաջ այդ գործը քննվեց Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնում (Internetional Centre for Settlement of Investment Disputes – ICSID), որտեղ վեճը հարթվեց ի վնաս Վրաստանի կառավարության: Վրաստանի գործող կառավարությանը պարտավորեցվեց գործարարներին վճարել $100 մլն: Վրաստանի ղեկավարությունը, սակայն, բողոքարկեց որոշումը:

Դատական գործընթացի ձգձգման պատճառով իսրայելցի գործարարները խոստացան $7 մլն կաշառք տալ Վրաստանի այդ ժամանակվա ֆինանսների փոխնախարար Ավթանդիլ Խարաիձեին՝ ձախողելու Վրաստանի կառավարության բողոքարկումը, ինչն էլ բացահայտվեց տեղադրված տեսախցիկի միջոցով: 2010թ. հոկտեմբերին, նրանց ձերբակալությունից անմիջապես հետո Վրաստանի ՆԳՆ-ն հրապարակեց Ֆուքսի և Ֆրենկե-

լի հետ Ավթանդիլ Խարաիձեի հանդիպման տեսագրությունը, որը կայացել էր մի քանի շաբաթ առաջ, ստամբուլյան հյուրանոցներից մեկում: Տեսագրությունից երևում է, որ իսրայելցիները վրացի պաշտոնյային առաջարկել են $7 մլն դոլար, ևս $18 մլն խոստացել էին փոխանցել կառավարող «Միասնական ազգային շարժում» կուսակցության հաշվեհամարին, եթե վրացիները հրաժարվեն միջազգային դատարանների որոշումը բողոքարկելուց և ժամանակին վճարեն գումարը: Գործարարները չեն ենթադրել, թե Ավթանդիլ Խարաիձեն այդ ամենի մասին նախօրոք տեղեկացրել է վրացական հատուկ ծառայություններին և խոսակցությունը ձայնագրվում է:

Ֆուքսի և Ֆրենկելի ազատ արձակման հարցով Վրաստանի ղեկավարությանն էին դիմել Իսրայել պետության բարձրաստիճան դեմքերը՝ նախագահ Շիմոն Պերեսն ու նախկին արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը, ինչը որևէ դրական արդյունք այդպես էլ չտվեց: Չպետք է մոռանալ, որ Ռոն Ֆուքսը վաղեմի կապեր ուներ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի հետ:

Վրացի պաշտոնակցին՝ Գրիգոլ Վաշաձեին Լիբերմանի հոած ուղերձում ասվում է. «Այն, որ Վրաստանի իշխանությունները Ֆուքսին և Ֆրենկելին հրավիրել են երկիր, հետո ձերբակալել, կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ երկու պետությունների հարաբերությունների զարգացման համար: Սա կփլուզի երկու երկրների միջև բոլոր տնտեսական կապերը, որոնք վերջին տարիներին այդքան արագ զարգանում էին»:

Պաշտոնական Թբիլիսին, սակայն, չընկրկեց՝ ակնարկելով երկրի դատական համակարգի անկախության կարևորությունն Իսրայելի հետ բարեկամությունից:

Ի պատասխան Վրաստանի իշխանությունների գործողությունների, 2011թ. սկզբներին Իսրայելի արդյունաբերողների ասոցիացիայի նախագահ Շրագա Բրոշը քանիցս հորդորեց երկրի կառավարությանը կրճատել Վրաստանի հետ համագործակցության ծավալները և իսրայելցի գործարարների այցելությունները: Իսրայելի զբոսաշրջության նախարար Ստաս Միսեժնիկովն իր հերթին հայտարարեց, որ մտադիր չէ հանդիպել Վրաստանի տնտեսության և կայուն զարգացման նախարար Վերոնիկա Կոբալիայի հետ, որը նույնպես հետագայում չեղյալ հայտարարեց նախատեսված այցելությունն Իսրայել:

2011թ. հունվար-մարտին պաշտոնական Թբիլիսիին հասցեագրված սուր քննադատություններով կրկնակի հանդես եկավ Իսրայելի հեղինակավոր լրագրողներից մեկը՝ «Մաարիվ» թերթի մեկնաբան Բեն Կասպիթը: Նրա մեկնաբանությունները կարևորվում են այնքանով, որ վերջինս սերտ կապեր ունի Իսրայելի իշխող կոալիցիայի բարձր շրջանակների հետ և հիմնականում արտահայտում է Իսրայել պետության պաշտոնական տրամադրությունները:

Վրաց-իսրայելական փոխհարաբերությունների վրա բացասաբար անդրադարձավ նաև 2010թ. օգոստոսին պաշտոնական Թբիլիսիի կողմից Վրաստանում գործող իսրայելական Ashtrom International Ltd. խոշոր շինարարական ընկերությանը երկրից դուրս մղելու հանգամանքը, ինչն ուղղակիորեն հարվածեց Իսրայել պետության իշխող կոալիցիային առնչություն ունեցող գործարարների ու անհատների շահերին: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն, Կովկասում Ashtrom International Ltd. ընկերության գործունեության հետ է առնչվում Իսրայել

պետության իշխող կոալիցիայի խոշոր դեմքերից մեկը։

2010թ. նոյեմբերին Թբիլիսիի դատարանը, Վրաստանի ֆինանսների նախարարության հետաքննության վարչության ներկայացրած բողոքի (խուսափում անշարժ գույքի վաճառքից նախատեսված հարկերի վճարումից) հիման վրա մեղադրանք ներկայացրեց իսրայելցի միլիարդատեր Աբրահամ Նանի-կաշվիլուն և Քնեսեթի նախկին պատգամավոր (1988-1996թթ.), 1990-ական թթ. սկզբներին՝ տրանսպորտի փոխնախարար Էֆրաիմ Գուրին (Efraim Gorlishvili)։

Երկու երկրների միջև լուրջ հակասություններ առաջացան նաև այն ժամանակ, երբ Վրաստանի կառավարությունը հրաժարվեց վճարել իսրայելական պաշտպանական Elbit Systems ընկերությանը Վրաստանին մատակարարված Hermes 450 տեսակի 40 անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) դիմաց։ Հիշեցնենք, որ 2007թ. իսրայելական այդ ընկերությունը Վրաստանի կառավարության հետ ստորագրել էր մի քանի համաձայնագիր ԱԹՍ-ների մատակարարման վերաբերյալ։ Արդյունքում՝ իսրայելական ընկերությունը Վրաստանի իշխանությունների դեմ հայց էր ներկայացրել բրիտանական արդարության գերագույն դատարան՝ $100 մլն գումար առգրավելու հարցով։

Ինչպես նշեցինք, փորձագետների մի մասը Իսրայելի և Վրաստանի միջև հարաբերությունների սառեցման գործընթացը պայմանավորում էր 2008թ. հարավօսական պատերազմական գործողություններով։ Մասնավորապես, ռազմական գործողությունների ընթացքում կիրառվում էին Hermes 450 տեսակի ԱԹՍ-ներ, որոնցից առնվազն 4-ը ոչնչացվեց։ Վերջիններիս կիրառությունն անհանգստացնում էր պաշտոնական Մոսկվա-

յին։ Վրաստանի կառավարությանն իսրայելական ԱԹՍ-ների մատակարարման դադարեցումը կարող էր հետևանք լինել ռուս-իսրայելական երկկողմ բանակցությունների։

Elbit Systems ընկերությունը Վրաստանի հետ համագործակցությունն սկսել էր 2000-ականներից, սակայն հենց 2008թ. Իսրայելը դադարեցրեց ռազմական տեխնիկայի մատակարարումները Վրաստանին։

Վրաստանի հետ համագործակցության թուլացմանը զուգահեռ՝ իսրայելական կողմը սկսեց ջերմացնել համագործակցությունն Ադրբեջանի և Ռուսաստանի հետ։ Հարավկովկասյան ուղղությամբ Իսրայել պետության ռազմավարական գերակայությունների փոփոխության միտման մասին են խոսում նաև Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի ու արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի այցերը Բաքու։ Բաքվի հետ համագործակցության խորացմանը զուգահեռ՝ դրական լուրջ քայլեր արձանագրվեցին նաև Կրեմլի հետ համագործակցությունում։

Ռուսական կողմն իր հերթին շահագրգռված էր Իսրայել-Վրաստան համագործակցության սառեցման և առհասարակ Հարավային Կովկասում պաշտոնական Թբիլիսիի քաղաքական, նաև տնտեսական մեկուսացման հարցով։ Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում Աբխազիայի հետ իսրայելական կապերի հաստատման խնդիրը, որն ազդարարեց որակապես նոր գործընթացի մեկնարկը Իսրայել-Հարավային Կովկաս հարաբերություններում։ Պաշտոնական Մոսկվան իր լուռ համաձայնությունը տվեց նաև Աբխազիայի հետ իսրայելական կողմի «առայժմ չափավոր» համագործակցության հաստատմանը, ինչը կնպաստի Աբխազիայի

միջազգային կշռի ընդլայնմանը, հետևաբար և տարածաշրջանում ռուսական դիրքերի ամրապնդմանը:

Աբխազիայի հետ համագործակցության հաստատման հարցում իսրայելական կողմը շահագրգռվածություն է ցուցաբերում նաև այն առումով, որ Աբխազիան ունի ելք դեպի Սև ծով (220 կմ ցամաքով) և դրանով իսկ ներկայանում է որպես Թուրքիայի ու Ռուսաստանի, ինչպես նաև Ռումինիայի, Բուլղարիայի «հարևան»: Ավելին, Աբխազիայի տարածքով է անցնում M-27 ավտոմայրուղին, որը կապում է Ռուսաստանի հարավը Վրաստանի ու Ադրբեջանի հետ:

Վրաց-իսրայելական հարաբերություններն ավելի լարվեցին այն բանից հետո, երբ 2011թ. մարտին Իսրայելում հյուրընկալվեց Աբխազիայի ղեկավարության ուղարկած պատվիրակությունը: Աբխազական պատվիրակության այցն իրականացվում էր Իսրայել պետության ղեկավարության կողմից Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեի և տնտեսության ու կայուն զարգացման նախարար Վերոնիկա Կոբալիայի այցելությունների ցուցադրաբար մերժման ֆոնին:

Աբխազիայի հետ, սակայն, իսրայելական կողմը շփումներ ունեցել էր շատ ավելի վաղ, երբ դեռևս 2004թ. հուլիսի վերջին համագործակցության և փորձի փոխանակման նպատակով Աբխազիա էր այցելել Վրաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Քոհենի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում ընդգրկվել էին Վրաստանում և ՀՀ-ում հրեական հայտնի «Սոխնութ» գործակալության ներկայացուցչության ղեկավար Դով Պիկուլինը, Հարավային Կովկասում հեղինակավոր ամերիկա-հրեական «Ջոյնթ» կազմակերպության ներկայացուցչության ղեկավար

Մեիր Զիզովը: Ռիվկա Քոհենը հանդիպումներ ունեցավ Աբխազիայի նախկին փոխնախագահ Վալերի Արշբայի և նախկին վարչապետ Ռաուլ Խաջիմբայի հետ, քննարկվեցին տնտեսական և քաղաքական հարցեր: Աբխազիայի նախկին փոխնախագահ Վալերի Արշբան հրապարակայնորեն հույս հայտնեց, որ «Իսրայել պետությունը կլինի Աբխազիայի անկախությունը ճանաչող առաջին երկրներից մեկը»:

Աբխազիայի հետ իսրայելական կողմի շփումները հաճախակիացան հատկապես 2010թ. ընթացքում: Ոչ մեկ անգամ Աբխազիա այցելեց իսրայելական նախաձեռնող խումբը՝ գործարարներ Էլիա Յուդայի և Մարկ Բուրլեի գլխավորությամբ: Այցելությունների ընթացքում նրանք հանդիպումներ ունեցան Աբխազիայի վարչապետ Ս.Շամբայի և կառավարության աշխատակազմի ղեկավար Դ.Կովեի հետ:

Իսրայելական նախաձեռնող խումբը ներկայացրել էր առաջարկություններ Աբխազիայում գործարարության, բժշկության և գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ: Աբխազիայի կառավարությունն իր հերթին շահագրգռվածություն հայտնեց համագործակցելու նախաձեռնող խմբի հետ, ինչի արդյունքում հիմնեց աշխատանքային խումբ, որը պետք է մշակեր առաջարկված ներդրումային նախագծերը:

Իսրայելական նախաձեռնող խումբն այցելեց նաև Աբխազիայի Գուդաութայի շրջանի Նովի Աֆոն քաղաք, որտեղ խմբի անդամները հանդիպեցին քաղաքային վարչության ղեկավար Ֆելիքս Դաութայի հետ: Հանդիպման ընթացքում որոշում ընդունվեց տարբեր ոլորտներում սերտ համագործակցություն հաստատել Նովի Աֆոնի և Իսրայելի Թիբերիա քաղաքի միջև: Արդյուն-

քում՝ Նովի Աֆոն քաղաքի վարչության ղեկավարը դիմում հղեց Թիբերիայի քաղաքապետ Զոար Օվեդին, որն իր հերթին պատասխանեց պաշտոնական նամակով: Խոսքը վերաբերում էր մասնավորապես երկու քաղաքների միջև մշակութային և հումանիտար փոխգործակցության, կապերի հաստատման և դրանց եղբայրական քաղաքների կարգավիճակ տալու մտադրությանը:

Իսրայելցի գործարարներ Էլիա Յուդայի և Մարկ Բուրլեի հերթական այցելությունն իրականացվեց 2010թ. դեկտեմբերի 23-ին՝ արդեն հստակ առաջարկություններով: Գործարարներին ուղեկցում էին նաև բժշկության ոլորտում ներգրավված մասնագետներ, որոնք մեծ փորձ ունեին ողջ աշխարհում ախտորոշիչ կենտրոնների հիմնադրման հարցում: Իսրայելցի մասնագետներն այցելեցին Աբխազիայի մի շարք բժշկական հաստատություններ և ծանոթացան երկրի առողջապահական համակարգին: Ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում նախատեսվում էր Աբխազիա ներկրել արդիական բժշկական տեխնոլոգիաներ և սարքավորումներ:

Կողմերի միջև համագործակցությունը շարունակվեց 2011թ. առաջին կեսից: 2011թ. ապրիլի 14-ին իսրայելական հեղինակավոր Global Comprehensive Security Transformation (Global CST) ընկերության պատվիրակությունը, որը մասնագիտացած է պաշտպանական և անվտանգության ապահովման ոլորտներում, խորհրդանշական այցելություն կատարեց Աբխազիա: Նշենք, որ այցի նախապատրաստական գործընթացը մեկնարկել էր 2010թ. վերջին:

Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն, ընկերությունը մտադիր էր համագործակցություն հաստատել Աբ-

խազիայի հետ ինչպես պաշտպանական, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնագավառներում: Կողմերի միջև Սուխումում կայացած բանակցություններից հետո Global CST ընկերության պատվիրակության ներկայացուցիչները հանդես եկան հայտարարությամբ, ըստ որի՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել Աբխազիա մատակարարել ոչ հարձակողական տեսակի ռազմական տեխնոլոգիաներ, անվտանգության ապահովման համար նախատեսված սարքավորումներ, նորագույն բժշկական տեխնոլոգիաներ[1]: Բանակցությունների արդյունքում իսրայելական ընկերությունը մտադրություն է հայտնել նաև ներդրումներ իրականացնել Աբխազիայի տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, օգտակար հանածոների արդյունահանումը:

Երկու խոսքով անդրադառնանք Global CST ընկերությանը՝ շեշտելու վերջինի Աբխազիա կատարած այցի և կայացած բանակցությունների կարևորությունը: Իսրայելական հեղինակավոր ընկերությունը գլխավորում են Իսրայելի պաշտպանության բանակի նախկին բարձրաստիճան սպաները: 2006թ. հիմնադրված մասնավոր ընկերությունը, որը ղեկավարում է Իսրայելի պաշտպանության բանակի Գլխավոր շտաբի Օպերատիվ վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Իսրայել Զիվը, սերտ կապեր ունի Իսրայել պետության իշխանական վերնախավի հետ[2]: Ընկերության գործունեությունն ուղղված է այդ թվում նաև ռազմական տեխնոլոգիաների ու ռազմական տեխնիկայի մատակարարումների ապահովմանը, ինչպես նաև հատուկ զորամիա-

[1] http://cyclowiki.org/wiki/Исраэль_Зив, Исраэль Зив.
[2] Նույն տեղում:

վորումների պատրաստմանը (օրինակ՝ Գվինեայում և Կոլումբիայում)։ Որոշ հաղորդագրությունների համաձայն, իսրայելական կողմը՝ ի դեմս այդ ընկերության, նախատեսում էր աբխազական կողմին հանձնել անօդաչու թռչող ինքնաթիռներ։ Ի դեպ, նման ոլորտներում ներգրավված բոլոր իսրայելական մասնավոր ընկերություններն ու անհատներն անխտիր սերտորեն համագործակցում են Իսրայել պետության հետ։ Այս առումով, ինչպես նկատում են փորձագետները, իսրայելական ընկերության ղեկավարության այցելությունը Սուխում վկայում է Իսրայելի պաշտոնական դիրքորոշման մասին։

Սուխումում կայացած բանակցություններին իսրայելական կողմը ներկայացնում էին Իսրայելի պաշտպանության բանակի Գլխավոր շտաբի Օպերատիվ վարչության պետ Իսրայել Զիվը (ընկերության նախագահ) և Բ.Նեթանյահուի նախկին ռազմական քարտուղար Մեիր Քլիֆին (ընկերության գլխավոր տնօրեն), ինչպես նաև ընկերության ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի հարցերով դեպարտամենտի ղեկավար Իոսիֆ Միլշտեյնը (ի դեպ, վերջինս պաշտոնական Կրեմլի, այդ թվում և երկրի ուժային կառույցների ու խոշոր մասնավոր ընկերությունների հետ Global CST հոլդինգի կապերի զարգացման հարցերի պատասխանատուն է)։ Պատվիրակության անդամներին պաշտոնական մակարդակով դիմավորեցին Աբխազիայի վարչապետ Սերգեյ Շամբան և մի շարք նախարարներ, այդ թվում և երկրի պաշտպանության նախարար Մերաբ Քիշմարիան։

Ոչ պաշտոնական տվյալների համաձայն, իսրայելական պատվիրակությունը ծանոթության նպատակով այցելեց Սու-

խումից դուրս գտնվող մի շարք ռազմավարական օբյեկտներ: Իսրայելական կողմի այցելությունը տևեց երկու օր՝ ապրիլի 15-ը ներառյալ:

1.2. Ադրբեջան-Իսրայել ռազմատեխնիկական համագործակցությունը

Իսրայելական պաշտպանական ընկերությունները

Իսրայելն աշխարհի զարգացած ռազմարդյունաբերական համալիր ունեցող երկրներից մեկն է: Մինչև 1948թ. Իսրայել պետության հիմնադրումը գործում էին որոշ հրեական պաշտպանական նշանակության ընկերություններ, որոնք մասնագիտացած էին սպառազինությունների մշակման և արտադրման գործում:

Իսրայելի ռազմարդյունաբերության ոլորտի պետական խոշոր ընկերություններից կարելի է առանձնացնել մի քանիսը:

Israel Aerospace Industries (IAI) պաշտպանական ընկերությունը հիմնադրվել է 1953թ., մասնագիտացած է ավիացիոն-տիեզերական, պաշտպանական արտադրության ոլորտներում: Ընկերության գործունեությունն իրականացվում է հրթիռատիեզերական և ավիացիոն տեխնիկայի, ՀՕՊ համակարգերի, էլեկտրոնային-օպտիկական, էլեկտրամեխանիկական սարքավորումների ոլորտում հետազոտությունների կազմակերպման, մշակման, արտադրության, սպասարկման ու վաճառքի ուղղություններով: Կազմակերպությունն արտադրում է նաև ռազմական և քաղաքացիական ավիատիեզերական սարքավորումներ, արբանյակներ: Ունի 16 հազար աշխատակից:

Ընկերության դուստր կազմակերպություններից է ELTA Systems-ը: Տարբեր տվյալներով, Israel Aerospace Industries ընկերության վաճառքի ծավալները կազմում են տարեկան ավելի քան $3,3 մլրդ: Ընկերության արտադրանքի 80%-ն արտահանվում է համաշխարհային շուկա, 20%-ը բաժին է ընկնում ներքին սպառմանը: Ընդ որում, ընկերության ողջ արտադրանքի 65%-ը ռազմական նշանակության արտադրանք է: Ընկերությունն իրականացնում է նաև ավիացիոն տեխնիկայի տարբեր տեսակների մշակման և արդիականացման աշխատանքներ:

Israel Aerospace Industries-ը մասնագիտացած է ավելի քան 1 տասնյակ տեսակի ԱԹՍ-ների նախագծման, արտադրության ոլորտներում: Ընկերությունն արտադրում է հետևյալ տեսակի ԱԹՍ-ները.

IAI E-HUNTER – տակտիկական, հետախուզական ԱԹՍ

RQ-5 Hunter – տակտիկական, հետախուզական ԱԹՍ

IAI Eitan – ծանր հետախուզական և հարվածային ԱԹՍ

IAI HARPY – հակառադիոլոկացիոն ԱԹՍ

IAI RANGER – տակտիկական, հետախուզական ԱԹՍ

IAI Scout –տակտիկական, հետախուզական ԱԹՍ

IAI SEARCHER – տակտիկական, հետախուզական ԱԹՍ

IAI SEARCHER II – տակտիկական, հետախուզական ԱԹՍ

IAI, RUAG, Oerlikon ADS 95 RANGER – հետախուզական ԱԹՍ

IAI Heron – հեռահար հետախուզական ԱԹՍ

IAI Bird-Eye 400 – փոքր ԱԹՍ

Ghost – գերփոքր տակտիկական հետախուզական ԱԹՍ:

Israel Aerospace Industries-ը հայտնի է նաև ռմբակոծիչների, հրթիռային սպառազինության նախագծման, արտադրության ասպարեզներում: Նշենք դրանցից մի քանիսը.

Ռմբակոծիչներ

IAI Nesher

IAI Kfir – բոլոր եղանակային պայմանների համար բազմանպատակային ռմբակոծիչ:

Հրթիռային սպառազինություն

IAI Jumper — տակտիկական հրթիռային համակարգ

Israel Military Industries (IMI) ընկերությունն Իսրայելի խոշոր պետական պաշտպանական կորպորացիաներից մեկն է, որը մասնագիտացած է սպառազինությունների համակարգերի, զինամթերքի, հրթիռային համակարգերի և զրահատեխնիկայի արտադրության ոլորտներում:

Ընկերությունը հիմնադրվել է 1933թ.՝ մինչև Իսրայել պետության ստեղծումը, հանդիսանալով այդ տարածաշրջանում սպառազինությունների առաջին արտադրողը:

Ընկերությունն ունի 3800 աշխատակից: Կազմակերպության արտադրանքի ավելի քան 60%-ն արտահանվում է միջազգային շուկա: Ընդ որում, ընկերության արտադրանքի միայն 10%-ն է քաղաքացիական նշանակության: Արտադրվում են հրաձգային և հրետանային սպառազինություն, զրահատեխնիկա, ռազմամթերքի գրեթե բոլոր տեսակները, հրթիռային համակարգերի արձակման կայաններ, կառավարման համակարգեր, ռադիոէլեկտրոնային տեխնիկա և այլն:

Rafael Armament Development Authority of Israel ընկերությունն Իսրայելի սպառազինությունների արտահանման խոշոր կազմակերպություններից է: Հիմնադրվել է 1948թ. և սկզբնական շրջանում կրում էր HEMED անվանումը, 1958թ. վերանվանվեց RAFAEL:

2010թ. վիճակագրությամբ՝ վաճառքից կազմակերպության ստացած ընդհանուր եկամուտները կազմում էին $1,056 մլրդ: Կազմակերպությունը ներառվել է զենքի ոլորտում ներգրավված աշխարհի խոշոր 100 կազմակերպությունների ցուցակում՝ զբաղեցնելով 49-րդ դիրքն ըստ վաճառքից ստացված շահույթի[1]: Ընկերության հետազոտությունների հիմնական ոլորտներից են հրթիռային և ավիացիոն տեխնոլոգիաները, ՀՕՊ համակարգերը, տակտիկական հրթիռային զինատեսակները:

Aeronautics Defense Systems Ltd. (նախկինում՝ NETS Integrated Avionics Systems) ընկերությունը հիմնադրվել է 1997թ.: Պաշտպանական ընկերությունը մասնագիտացած է սպառազինությունների համակարգերի և միջոցների, մասնավորապես՝ ռազմական ու առևտրային ԱԹՍ-ների, անվտանգության ապահովման համակարգերի մշակման ու արտադրման ոլորտում: Իրականացնում է նաև խորհրդատվական ծառայություններ: Հիմնականում գործունեությունն ուղղված է արտաքին շուկային: 2012թ. մայիսի դրությամբ ընկերության արտադրած ԱԹՍ-ները մատակարարվել են աշխարհի 14 պետությունների: Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է Իսրայելի Յավնե քաղաքում:

Ընկերության արտադրած ռազմական նշանակության ԱԹՍ-ներից կարելի է առանձնացնել Defense Dominator, Aero-

[1] https://ru.wikipedia.org/wiki/Rafael, Rafael

star, Aerolight, Orbiter, Seastar տեսակները:

Ընկերության նախագծած և արտադրած կառավարման, հետախուզության, դիտարկման և թիրախների խոցման միջոցներից նշենք հիմնականները.

- ցամաքային համակարգեր (Ground ISR Solutions, GISR)
- օդային համակարգեր (Aerial ISR Solutions (AISR)
- ԱԹ համակարգեր
- Կառավարման ցամաքային կենտրոն (GCS) և այլն[1]:

Elbit Systems պաշտպանական ընկերությունը հիմնադրվել է 1967թ., մասնագիտացած է էլեկտրահաղորդակցության, հեռահաղորդակցության, ավիացիայի և պաշտպանական ոլորտներում: Իրականացնում է պաշտպանական ոլորտի սպառազինությունների՝ ռադիոյի, ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների, ԱԹՍ-ների, ռադիոլոկացիոն կայանների արտադրություն, ինչպես նաև ավիացիայի, ռադիոլոկացիոն համակարգերի, հրետանային համակարգերում դիտարկման և հրթիռային տեխնիկայի մշակումներ:

Ընկերության դուստր ձեռնարկություններից են Elbit Systems of America-ն, Tadiran Communication Ltd.-ն, Electro-Optics Elop Ltd.-ն, Elisra-ն և այլն[2]:

Elbit Systems-ը զգալի հաջողություններ է արձանագրել նաև խորհրդային մարտական հնացած տեխնիկայի արդիականացման ուղղությամբ:

[1] https://ru.wikipedia.org/wiki/Aeronautics_Defense_Systems, Aeronautics Defense Systems Ltd.
[2] http://ru.rfwiki.org/wiki/Elbit_Systems, Elbit_Systems

Տեղակայված է Հայֆա քաղաքում: Հիմնական գործընկերներից են Եվրոպայի և ԱՄՆ ընկերությունները: 2010թ. վիճակագրությամբ՝ ընկերության եկամուտները կազմել են $2 մլրդ 670 մլն:

ELTA Systems Ltd ընկերությունն արտադրում է պաշտպանական ոլորտի արտադրանք և մասնագիտացած է ռադիոլոկացիոն միջոցների, ռադիոկապի, ռադիոէլեկտրոնային հետախուզության, ռադիոէլեկտրոնային հակազդման ոլորտներում: Elta-ն իսրայելական խոշոր ընկերություններից մեկի՝ Israel Aerospace Industries ընկերության դուստր կազմակերպությունն է: Հիմնադրվել է 1967թ.: 2006թ. ընկերությունը վաճառել է $805 մլն ընդհանուր արժողության պաշտպանական արտադրանք, որի 90%-ն արտահանվել է աշխարհի ավելի քան 50 երկրներ:

Tadiran Ltd. ընկերությունը հիմնադրվել է 1958թ. Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրի կազմում: Կազմակերպության արտադրանքի հիմնական մասն արտահանվում էր ԱՄՆ շուկա: Այն իրականացնում էր ռազմական նշանակության հեռահաղորդակցական տեխնիկայի, կապի միջոցների, սնուցման տարբեր տարրերի արտադրություն: Հետագայում կոնցեռնի ենթաբաժինները վաճառվեցին մաս առ մաս: Tadiran Communications Ltd. ենթակառուցվածքը, որը զբաղվում էր ռազմական նշանակության սարքավորումների արտադրությամբ, 2008թ. հունիսի 1-ին վաճառվեց Elbit Systems ընկերությանը[1]:

[1] https://ru.wikipedia.org/wiki/Tadiran_Ltd, Tadiran_Ltd

Ադրբեջանի և Իսրայելի ռազմատեխնիկական համագործակցությունը

Վերջին տասնամյակում Ադրբեջանի և Իսրայելի միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցությունը զարգանում է արագ տեմպերով: Հարևան պետության զինված ուժերը սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրելու գործընթացին ակտիվորեն ներգրավվել են իսրայելական պաշտպանական ընկերություններն ու կազմակերպությունները: Հատկապես շատ է խոսվում իսրայելական արտադրության տարբեր տեսակի ԱԹՍ-ների մասին, որոնք ադրբեջանական կողմն ակտիվորեն կիրառեց ս.թ. ապրիլյան պատերազմում:

ԱԹՍ-ների նախագծման և արտադրության ոլորտում Իսրայելն ունի միջազգային հեղինակություն, ինչի մասին խոսում են նաև ստորև բերված վիճակագրական տվյալները: SIPRI ինստիտուտի տվյալներով[1], 2001-2011թթ. Իսրայելը վերահսկում էր ԱԹՍ-ների համաշխարհային շուկայի 41%-ը: 2008թ. Իսրայելն արտաքին շուկայում վաճառել է $150 մլն արժողության ԱԹՍ, 2009թ.՝ $650 մլն, 2010թ.՝ $979 մլն: 2005-2013թթ. Իսրայելը ԱԹՍ-ներ է արտահանել աշխարհի տարբեր երկրներ՝ $4,6 մլրդ ընդհանուր արժողությամբ, ինչը կազմում է իսրայելական սպառազինության ընդհանուր արտահանման 10%-ը:

Իսրայելական ԱԹՍ-ների արտահանումն իրականացվում է ուղղակի (ինչպես, օրինակ, դեպի Գերմանիա, Նիդեռլանդներ, Կանադա), ինչպես նաև երրորդ կողմի միջնորդությամբ (օրինակ, Ինդոնեզիան այդ նպատակների համար որպես միջնորդ

[1] https://www.sipri.org/publications, Stockholm International Peace Research Institute

օգտվում է ֆիլիպինյան ընկերության ծառայություններից, Ֆինլանդիան՝ շվեյցարական)։

ԱԹՍ-ների գծով մասնագիտացած իսրայելական խոշոր ընկերություններն իրականացնում են նաև մասնագետների ուսուցման, վերապատրաստման և մասնագիտացման դասընթացներ արտաքին շուկայի ներկայացուցիչների համար։ Մասնավորապես, 1990թ. չինացի մասնագետներն իսրայելական տեխնոլոգիաների գծով Israel Aerospace Industries ընկերության շրջանակներում ուսուցման դասընթացներ անցան։

Այժմ առավել հանգամանալի ներկայացնենք Իսրայել-Ադրբեջան ռազմատեխնիկական համագործակցության ոլորտը։ Այսպես, 2004թ. Ադրբեջանի և Իսրայելի միջև ստորագրվեց պայմանագիր Թուրքիայում արտադրված իսրայելական սպառազինություններն Ադրբեջանին մատակարարելու վերաբերյալ։ Որոշ տվյալներով, 2008թ. երկու երկրների միջև ստորագրված համաձայնագրով իսրայելական Soltam պաշտպանական ընկերությունը նախատեսում էր Ադրբեջանին ապահովել ականանետերի և ռազմամթերքի մատակարարումներով, Tadiran Communications ընկերությունը՝ կապի միջոցներով, Israel Military Industries-ը՝ հրթիռների ու կառավարման համակարգերով։

2009թ. սեպտեմբերի կեսին իսրայելական պաշտպանական Elbit Systems ընկերությունն Ադրբեջանում բացեց իր ներկայացուցչությունը և սկսեց ԱԹՍ-ների արտադրության համատեղ նախագիծ իրականացնել Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության հետ։ Նշենք նաև, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստվում էր նման տեխնիկա արտադրել ոլորտում համաշխարհային առաջատար Aeronautics ընկերու-

թյան հետ: Կողմերի միջև պայմանավորվածությունը ձեռք բերվեց 2009թ. հունիսին Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի գլխավորությամբ իսրայելական պատվիրակության Ադրբեջան կատարած այցի ընթացքում:

Aeronautics ընկերությունը նախատեսում էր Ադրբեջանում հիմնել իր սեփական ռազմարդյունաբերական գործարանը: Արդեն 2009թ. կեսերին Ադրբեջանում ԱԹՍ արտադրության հարցում ներգրավված էին 2 խոշոր իսրայելական ընկերություններ: Հարկ է նշել, որ 2009թ. հունիսին Շիմոն Պերեսի Ադրբեջան այցելության ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ իսրայելական մեկ այլ պաշտպանական ընկերություն՝ Elta Systems Ltd.-ն, համագործակցելու է Ադրբեջանի հետ արբանյակների համակարգի ստեղծման ոլորտում:

Ի դեպ, 2009թ. կեսերին իսրայելական այդ ընկերությունը հայտարարել էր TecSAR արբանյակի ստեղծման մասին, որը կրում է ռադար՝ սինթեզված սարքավորումներով, ինչը թույլ է տալիս բարձրորակ պատկերներ ստանալ՝ անկախ եղանակային պայմաններից: Հարկ է նշել, որ սա համարվում է բավական արդյունավետ տեխնիկա լեռնային տեղանքում ռազմական գործողությունների վարման համար:

Այցի ընթացքում կողմերի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել սկսել ևս մեկ համատեղ նախագիծ՝ հատուկ մոդիֆիկացված իսրայելական «Նամեռ» տեսակի ՀՄՄ արտադրության նպատակով: Այս զրահամեքենան հագեցած է զրահավորման նոր ու բազմակի հնարավորություններով, որը թույլ է տալիս այն գործնականում ամբողջությամբ պաշտպանել բոլոր կողմերից, այդ թվում և հատակի հատվածից: Զրահամեքենայի

առջևի հատվածում տեղադրված շարժիչն ապահովում է հավելյալ պաշտպանություն հակատանկային նռնակներից և հրթիռներից: Զրահամեքենան կարող է տեղափոխել 12 մարդ, ունի գնդացիր և նռնականետ:

Պայմանավորվածություն էր ձեռք բերվել նաև Ադրբեջանին նորագույն Տավոր (TAR-21) տեսակի ինքնաձիգների, Tadiran ընկերության կապի համակարգերի, Soltam ընկերության հաուբիցների և ռազմամթերքի, ինչպես նաև IMI պետկոնցեռնի հրթիռահրետանային համակարգերի մատակարարումների մասին:

Անդրադառնանք նաև իսրայելական արտադրության ATMOS 2000 տեսակի ինքնագնաց հրետանային կայանի մանրամասներին: Սա հաուբից է, որը նախատեսված է կենդանի ուժի, հրետանային համակարգերի ոչնչացման, ինչպես նաև ականապատված դաշտերում անցումների կամ միջանցքների ապահովման համար: Սկզբնական փուլում տվյալ հրետանային համակարգի մշակումն իրականացվում էր իսրայելական Soltam ընկերության կողմից, որը հետագայում դարձավ մեկ այլ իսրայելական պաշտպանական ընկերության՝ Elbit Systems-ի մասը:

Հատկանշական է, որ հրետանային այս համակարգը նախատեսված էր արտահանման համար, միայն 2006թ. այն կիրառություն գտավ նաև Իսրայելի պաշտպանության բանակում: Ներկայում այս համակարգից ունեն Ռումինիայի, Ուգանդայի, Թաիլանդի, Կամերունի, իսկ 2013թ. սկսած՝ նաև Ադրբեջանի զինված ուժերը (վերջինի պարագայում խոսվում էր M46 տեսակի (130մմ-անոց) 5 միավոր հրետանային համակարգի մասին):

Նշենք, որ ATMOS 2000 հրետանային համակարգի արտադրության մեջ շեշտադրումը կատարվել է այդ համակարգի շար-

ժունակության բարձրացման վրա, այն հեշտ է բերվում մարտական պատրաստվածության, անսարքությունների դեպքում դրանք կարելի է վերացնել հենց դաշտային պայմաններում: ATMOS 2000-ի հաշվարկի կազմում ներառվում է 4-6 մարդ:

Բաց աղբյուրների համաձայն, 2009-2011թթ. Ադրբեջանի ԶՈՒ-ն համալրվել է Rafael պաշտպանական ընկերության Spike LR տեսակի 100 միավոր հակատանկային հրթիռային համալիրներով: Այդ համակարգը 4-րդ սերնդի արտադրանք է՝ ինքնակառավարվող ջերմատեսանելիության համակարգով: Դա հեռահար մարտական զինատեսակ է, որը կարող է թիրախներ խոցել մինչև 4000 մ հեռավորության վրա և նախատեսված է ինչպես շարժական, այնպես էլ անշարժ թիրախների խոցման համար, ինչպես, օրինակ, զրահապատ տեխնիկա, շինություններ, ինժեներական կառույցներ: Spike LR համակարգը բավական հեշտ կիրառելի է, արդյունավետ, բերվում է մարտական պատրաստվածության ոչ ավելի, քան 1 րոպեում, զրահապատ տեխնիկայում պայմանականորեն տեղակայված անձնակազմի կենդանի մնալու հավանականությունը խոցման դեպքում հավասար է զրոյի: Համակարգի հրթիռը թիրախավորում է խոցման օբյեկտն ինքնուրույն, և չի պահանջվում մինչև խոցման պահը օպերատորի կողմից թիրախի ուղղորդում, ընդ որում, թիրախը կխոցվի, եթե նույնիսկ արձակումից հետո այն անհետացել է օպերատորի տեսադաշտից:

2013թ. պաշտոնական Բաքուն պատվիրել էր իսրայելական կողմին (արտադրող կողմը՝ RAFAEL ընկերություն, այլ իսրայելական պաշտպանական ընկերությունների հետ համատեղ) 250 միավոր Spike NLOS (Non Line Of Sight – տեսա-

նելիության սահմաններից դուրս) տեսակի իսրայելական արտադրության բազմանպատակային էլեկտրաօպտիկական հակատանկային հրթիռային համակարգեր (ՀՏՀՀ)։

Ըստ տարբեր աղբյուրների, ադրբեջանական կողմն արդեն 2014-2015թթ. բերեց 80 նման համակարգ։ Այս հրթիռային համակարգերը նախատեսված են զրահատեխնիկայի, պաշտպանված օբյեկտների և ինժեներական կառույցների, ինչպես նաև թշնամու մարդկային ուժի ոչնչացման համար։ Համակարգը կարող է տեղակայվել օդային, ծովային կամ ցամաքային համապատասխան կրող տեխնիկայի վրա։ Spike NLOS համակարգը կարող է թիրախավորել տվյալ օբյեկտը ԱԹՍ-ի կամ արբանյակի միջոցով, ունի թիրախավորման ֆիքսման սեփական համակարգ, հեռակառավարման համակարգ, որն իրականացվում է պատկերի փոխանցման երկկողմանի էլեկտրաօպտիկական համակարգի միջոցով, ինչն էապես մեծացնում է համակարգի մարտական կիրառության հնարավորությունները։ Էլեկտրաօպտիկական կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ընտրել թիրախը, ստանալ հետախուզական տվյալներ և հստակեցնել թիրախը, հեռահար տարածության վրա հասնել գերճշգրիտ թիրախավորման արդյունքների։ 2011թ. դրությամբ այս համակարգի 1 հրթիռի արժեքը գնահատվում էր $145 հազ.։ Համակարգն առավել արդյունավետ կիրառվում է մինչև 25 կմ հեռավորության վրա։

Վերջին տարիներին T-72 «Ասլան» տեսակի տանկերն արդիականացվել են իսրայելական Elbit Systems պաշտպանական ընկերության կողմից։ Տանկերի վրա տեղադրվել են կրակի կառավարման համակարգ, GPS բազայի վրա նավիգացիոն

համակարգ, ջերմատեսանելիության սարքեր: Տեսադիտարկման համակարգերը թույլ են տալիս մարտական գործողություններ իրականացնել ցանկացած կլիմայական պայմաններում, ինչպես նաև գիշերային ժամերին:

Տարբեր աղբյուրների համաձայն, 2012թ. Ադրբեջանն Իսրայելից և մասնավորապես Israeli Aerospace Industries (IAI) կորպորացիայից ձեռք է բերել $1,6 մլրդ արժողության ԱԹՍ-ներ և նորագույն ՀՕՊ համակարգեր: Համաձայն վերոնշյալ պայմանագրի, նախատեսվում էր նաև իսրայելցի համապատասխան մասնագետների այց Ադրբեջան՝ տեղի ուժայիններին այդ համակարգերի աշխատանքներին ծանոթացնելու և ուսուցման նպատակներով:

Խոսվում էր, որ 2012թ. ադրբեջանական կողմը կսկսի Aerostar և Orbiter-2M տեսակի ԱԹՍ-ների արտադրությունը: Նշենք, որ վերջիններիս արտադրությամբ զբաղվելու էր Baku's Azad Systems Co. Ընկերությունը, որը հիմնադրվել էր Ադրբեջանի և Իսրայելի կառավարությունների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում:

Ադրբեջանի պաշտոնական աղբյուրների համաձայն, 2012թ. նախատեսվում էր արտադրել 60 ԱԹՍ: Նշենք նաև, որ 2012թ. սկզբներին լուրեր տարածվեցին, թե IAI իսրայելական կոնցեռնը հիմնել է ԱԹՍ-ների օպերատորների ակադեմիա, որտեղ կարող են ուսում ստանալ ինչպես Իսրայելի պաշտպանության բանակի, այնպես էլ այլ երկրների, այդ թվում և Ադրբեջանի ԶՈՒ համապատասխան ներկայացուցիչները:

Ավելին, մինչ այդ՝ 2008թ. կեսերին, լուրեր տարածվեցին, թե ադրբեջանական կողմը նախատեսում է իսրայելական Silver

Arrow պաշտպանական ընկերությունից ձեռք բերել 10 միավոր բազմանպատակային հետախուզական Hermes-450 տեսակի ԱԹՍ-ներ, որոնք նախատեսված են դիտարկման, հետախուզության և կրակի աջակցման, ճշգրտման, ինչպես նաև մարտական գործողություններում հաղորդակցությունների աջակցման համար:

Ժամանակին Ադրբեջանը վերը հիշատակված ԱԹՍ տեսակից բացի ձեռք էր բերել նաև իսրայելական արտադրության Harop տեսակի ԱԹՍ, որն «ինքնասպան» ԱԹՍ է: Այս տեսակը մարտական գործողություններում առաջին անգամ կիրառվել է ապրիլյան պատերազմում:

Այս տեսակի ԱԹՍ-ն հետախուզական-հարվածային տեխնիկա է, որն արտադրվել է իսրայելական պաշտպանական Israel Aerospace Industries (IAI) ընկերության կողմից, ինքնուրույն է թիրախավորում և ոչնչացնում օբյեկտը: Ցամաքային թիրախների ուղղությամբ հարձակման համար ԱԹՍ-ն ունի 15 կիլոգրամանոց մարտագլխիկ, օդում այն կարող է մինչև 6 ժամ փնտրել թիրախը: Այս ԱԹՍ-ն կարող է օդում կիրառվել մեծ բարձրությունների վրա, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնել տեսադաշտը և նվազեցնել տեսանելի դառնալու հավանականությունը: Թիրախի հայտնաբերմամբ այն ինքնասպան կերպով ընկնում է թիրախի վրա և ոչնչացնում այն: Թիրախը չհայտնաբերելու պարագայում ԱԹՍ-ն վերադառնում է մեկնարկի վայրը: ԱԹՍ-ն կարող է ղեկավարվել հեռվից կամ էլ թիրախավորել ինքնուրույն՝ իր սեփական ռադարի օգնությամբ: Harop-ը բավական արդյունավետ միջոց է հակառակորդի ՀՕՊ համակարգերի դեմ պայքարելու համար, քանի որ դրա փոքր չափսերը հնարավորու-

թյուն են տալիս խուսափել ցամաքային ռադարների կողմից հնարավոր հայտնաբերվելուց։ Ի դեպ, այս մոդելը մեկ այլ՝ Harpy տեսակի ԱԹՍ-ի կատարելագործված տարբերակն է, որը հեռակառավարվելու հնարավորություն չուներ։

Harop-ը մշակվել է 2001-2005թթ., առաջին փորձնական թռիչքն իրականացրել է 2003թ. աշնանը Նեգևի անապատի ռազմական օդանավակայանում։ Առաջին անգամ ներկայացվել է 2009թ. Aero-India ռազմարդյունաբերական ցուցահանդեսին։ ԱԹՍ թռիչքի հեռավորությունն ավելի քան 1000 կմ է, արագությունը՝ 185 կմ/ժ, քաշը՝ 135 կգ։

Այսօր դժվար է միանշանակ ասել, թե որ երկրներն են զինված իսրայելական Harop տեսակի նորագույն ԱԹՍ-ներով։ Տարբեր աղբյուրների համաձայն, այս տեսակի դրոններ նկատվել են Ուկրաինայում և Սիրիայում։ Միայն կարելի է հաստատել, որ 2015թ. հունիսին, ինչպես հայտարարեց Israel Aerospace Industries ընկերությունը, տարբեր պատվիրատուների վաճառվել են հարյուրավոր նման համակարգեր, դրանք սպառման մեծ պոտենցիալ ունեն։

Այսօր կարելի է հաստատապես ասել, որ ԱԹՍ-ները դարձել են ներկայիս ռազմական հակամարտությունների, մարտական գործողությունների անբաժանելի մասը. Ամբողջ տեղեկատվությունը, հետախուզության ողջ սպեկտրը ստացվում է գերազանցապես ԱԹՍ-ների օգնությամբ։ ԱԹՍ-ները, ինչպես նշում են ռազմական ոլորտի ներկայացուցիչները, ռազմական փորձագետները, առաջիկա 10-15 տարվա կտրվածքով սպառազինությունների համակարգերի զարգացման ոլորտի հիմնական միտումներից են։

Բաքվում մեծ ակնկալիքով էին սպասում 2014թ. սեպտեմբերի 11-13-ն անցկացվելիք ADEX-2014 առաջին ադրբեջանական միջազգային պաշտպանական արդյունաբերության ցուցահանդեսին: Այստեղ ներկայացված էին սպառազինության վերը հիշատակված և այլ տեսակներ: Ցուցահանդեսի կազմակերպումը «համընկավ» Իսրայելի պաշտպանության նախարար Մոշե Յաալոնի Ադրբեջան կատարած առաջին այցելության հետ (ինչը ևս խորհրդանշական էր և խոսում էր երկու երկրների միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության խորացման միտումների մասին): Խնդիրն այն է, որ ցուցահանդեսին ներկայացված էին նաև իսրայելական պաշտպանական առաջատար ընկերությունների արտադրանքն ու սպառազինությունները:

ADEX-2014 ցուցահանդեսին Ադրբեջանի պաշտպանության նախարար Յավեր Ջամալովը հանդես եկավ հայտարարությամբ: Նա ասաց, որ 2013թ. ռազմական նշանակության ադրբեջանական արտադրանքի արտահանումների ծավալը կազմել է $123 մլն: Նրա խոսքերով՝ 2013թ. արդբեջանական արտադրության սպառազինության հիմնական գնորդներն են եղել Թուրքիան, Բելառուսը, Ռուսաստանը:

Ըստ ադրբեջանական պաշտոնական տվյալների՝ 2014թ. Ադրբեջանը ՆԱՏՕ անդամ երկրներից մեկն է արտահանել 100 միավոր ԱԹՍ. պայմանագրի մեջ ներառվում էին Orbiter-2M և Aerostar-BP տեսակի ԱԹՍ-ներ, որոնք երկուսն էլ իսրայելական Aeronautics Defense Systems, Ltd. ընկերության արտադրանքն են: ԱԹՍ այս տեսակի սարքերն արտադրվում են Ադրբեջանի պաշտպանության նախարարության և իսրայելական ընկերու-

թյան կողմից Բաքվում ստեղծված Azad Systems համատեղ ձեռնարկության կողմից։

2014թ. Ադրբեջանի պաշտպանական արդյունաբերության նախարարության օպտիկամեխանիկական արտադրական միավորման «Ալով» գործարանում արտադրվում էր պաշտպանական արտադրության 14 տեսակ՝ օպտիկական ցերեկային նշանացույցեր, գիշերային տեսանելիության նշանացույցեր, ջերմատեսանելիության նշանացույցեր, նշանացույցեր հրաձգային 3 զինատեսակների համար։ Գործարանում արտադրվում են նաև նռնականետերի համար նախատեսված ցերեկային-գիշերային տեսանելիության օպտիկական նշանացույցեր։ Գործարանի պաշտպանական նշանակության արտադրության մեջ զգալի են իսրայելական խոշոր պաշտպանական ընկերությունների մասնակցությունն ու աջակցությունը։ Գործարանը պատվիրատուներ ունի ի դեմս թուրքական ASELSAN ընկերության, ՌԴ-ի, Ռումինիայի, Բելառուսի, Իրանի, Իսրայելի և այլ երկրների։

Պաշտոնական տվյալներով, գործարանը 2014թ. պատվերներ ուներ նաև հրաձգային զենքի համար նախատեսված ջերմատեսանելիության սարքերի արտադրության ոլորտում, որոնք նախատեսում էր արտադրել վերը հիշատակված թուրքական ASELSAN ընկերության աջակցությամբ։

Տարբեր գնահատականներով՝ Ադրբեջանի ՀՕՊ ուժերի գրեթե 1/3-ը համալրված է իսրայելական արտադրության ռազմական տեխնիկայով։ Հատկապես ուշագրավ են Barak-8 (եբրայերենից թարգմ.՝ կայծակ) տեսակի զենիթահրթիռային համալիրը և «Երկաթյա գմբեթ» (եբր.՝ Կիպատ բարզել) տեսակի հակահրթիռային պաշտպանության համակարգը։

Ըստ որոշ գնահատականների, 1 միավոր Barak-8 տեսակի զենիթահրթիռային համակարգն արժե $25 մլն: Այս համակարգից Ադրբեջանն ունի շուրջ 1 տասնյակ միավոր:

Առավել բարձր է «Կիպատ բարզել» համակարգի արժեքը: Դա օդային տարածքի պաշտպանության նորագույն համակարգերից է, որից ադրբեջանական կողմն ունի շուրջ 1 տասնյակ միավոր: Դրա ձեռքբերման և տեղադրման մասին պայմանավորվածությունը ստորագրվել էր 2013թ.:

«Երկաթյա գմբեթը» հակահրթիռային պաշտպանության տակտիկական համակարգ է, որը նախատեսված է 4-70 կմ թռիչքային հեռավորությամբ չկառավարվող տակտիկական հրթիռներից պաշտպանվելու, ինչպես նաև մինչև 10 կմ բարձրության վրա ինքնաթիռների, ուղղաթիռների, ԱԹՍ-ների և բարձր ճշգրտությամբ կառավարվող տեխնիկայի դեմ պայքարելու համար: Համակարգը մշակվել է իսրայելական RAFAEL և Israel Aerospace Industries պաշտպանական ընկերությունների կողմից 2005թ.: Շահագործման է հանձնվել 2011թ.: Համակարգի յուրաքանչյուր մարտկոց, որի արժեքն է $50 մլն, կարող է պաշտպանել 150 կմ^2 տարածք[1]:

Barak տեսակի իսրայելական զենիթահրթիռային համալիրը նույնպես նախագծվել և արտադրվել է RAFAEL և Israel Aerospace Industries պաշտպանական ընկերությունների կողմից: Barak-8 ՀՕՊ համակարգը ցամաքային համալիր է, որը նախատեսված է օդային սպառնալիքների, այդ թվում՝ ԱԹՍ-ների, թևավոր հրթիռների, ցամաք-ցամաք տեսակի հրթիռների հայտնաբերման և ոչնչացման համար՝ անկախ կլիմայական պայ-

[1] https://ru.wikipedia.org/wiki/Железный_купол

մաններից։ Համալիրը կարող է պայքարել մինչձայնային և գերձայնային օդային թիրախների դեմ՝ տարբեր բարձրությունների և հեռավորության վրա։ Համալիրը նախատեսված չի եղել հակահրթիռային պաշտպանության համար, սակայն կարող է իրականացնել տակտիկական բալիստիկ հրթիռների խոցման գործողություններ։

Ըստ ԶԼՄ-ի՝ 2000-ական թթ. կեսին ադրբեջանական կողմը ձեռք բերեց իսրայելական արտադրության 160 մմ-անոց տրամաչափով LAR-160 տեսակի համազարկային կրակի ռեակտիվ համակարգի (ՀԿՌՀ) 6 միավոր (որոշ լրատվական աղբյուրներ նշում են 10-ից ավելի միավոր)։ Համակարգը մշակվել է Israel Military Industries պաշտպանական ընկերության կողմից 1970-ականների վերջերին և համալրել Իսրայելի ԶՈՒ սպառազինությունը 1980-ականների սկզբներին։ Դրա արձակած կրակի նվազագույն հեռավորությունը կազմում է 7000-8000 մ, առավելագույն հեռավորությունը՝ մինչև 45000 մ։

Ադրբեջանից բացի, իսրայելական արտադրության այս համակարգով համալրված են նաև Արգենտինայի, Վենեսուելայի, Վրաստանի, Ռուանդայի, Չիլիի զինված ուժերը։

Ներկայում Israel Military Industries պաշտպանական ընկերությունն իրականացնում է LAR-160 ՀԿՌՀ-ի արդիականացման այլ տարբերակ (մեծացվում է կրակի արձակման հեռավորությունը, մշակվում են «կասետային մարտագլխիկներ», որը հայտնի է DRADLAR անվամբ)։ Մշակվել է նաև այս համակարգի ծովային տարբերակը՝ NAVLAR, որը կարող է տեղադրվել փոքր նավերի վրա։ Նախագծերից մեկում նախատեսվում է LAR-160 ՀԿՌՀ-ի հրետանային մասը կիրառել 2 չկառավարվող 350 մմ-

անոց տրամաչափով ռեակտիվ հրթիռների արձակման համար, որոնք ունեն մինչև 80 կմ կրակի հեռավորություն[1]:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, Ադրբեջանի կողմից իսրայելական արտադրության սպառազինությունների և ռազմական տեխնիկայի ձեռքբերման ցուցանիշները բավական խոսուն են: Իսրայելական Haaretz թերթի տեղեկատվության համաձայն, վերջին 4 տարիների ընթացքում Ադրբեջանն Իսրայելից ձեռք է բերել $5 մլրդ ընդհանուր արժողության սպառազինություն[2]:

Զենքի համաշխարհային առևտրի վերլուծության կենտրոնի տարեգրքի տվյալների համաձայն, 2009-2016թթ. Ադրբեջանն Իսրայելից ձեռք է բերել 110 միավոր Aerostar, Hermes-450, Heron-1, Orbiter-2M տեսակի ԱԹՍ-ներ, ինչպես նաև Barak-8 տեսակի զենիթահրթիռային համալիր՝ 9 միավոր (2016թ.), EL/M-2080 GreenPine տեսակի ՀՕՊ ՌԼԿ (ռադիոլոկացիոն կայան)՝ 2 միավոր (2015թ., 2016թ.), տանկեր, ՀՄՄ-եր (հետևակի մարտական մեքենա), ականանետեր և այլն[3]:

2010-2011թթ. ադրբեջանական կողմը ձեռք բերեց իսրայելական արտադրության 10 միավոր CARDOM (Computerised Autonomous Recoil Rapid Deployed Outrange Mortar) 120 մմ ինքնագնաց ականանետեր (Soltam K6 տեսակի): Ականանետային այս համակարգի արտադրությունը սկսվել է 2000-ական թթ.

[1] http://rbase.new-factoria.ru/missile/wobb/lar160/lar160.shtml,
реактивная система залпового огня LAR-160.
[2] http://vognebroda.net/izrail-prodolzhaet-podderzhku-azerbaydzhana,
Израиль продолжает поддержку Азербайджана.
[3] http://russia-armenia.info/node/28337,
Иностранное оружие на апрельской войне в Карабахе.

սկզբներին Soltam Systems ընկերության կողմից, որը հետագայում կազմեց Elbit Systems կազմակերպության մի մասը: Համալիրը կարող է տեղակայվել տարբեր տեսակի զրահատեխնիկայի մարտական հատվածում: Դրա առավելություններից առանձնացվում է հարթակի պտտման հնարավորությունը, ինչը թույլ է տալիս կրակ վարել բոլոր ուղղություններով: Համալիրի կարևոր առանձնահատկություններից է կրակի կառավարման թվայնացված համակարգի առկայությունը, ինչը թույլ է տալիս առավել ճշգրիտ հարվածներ հասցնել[1]:

Երկու երկրների միջև ռազմական համագործակցությունը չի սահմանափակվում սպառազինության մատակարարումներով: Իսրայելական կողմը զգալի աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանի ԶՈՒ սպայական կազմի վերապատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման, ինչպես նաև իսրայելցի ռազմական ներկայացուցիչների կողմից պաշտպանական նշանակության ծառայությունների մատուցման ուղղությամբ, ինչը երկու երկրների միջև ռազմական համագործակցության կարևոր բաղկացուցիչներից է: Դրա մասին է խոսում նաև այն, որ ապրիլյան պատերազմի ընթացքում հակառակորդի կողմից կիրառված ԱԹՍ-ները հեռակառավարվում էին հենց իսրայելցի մասնագետների կողմից:

2008թ. բանակցություններ էին ընթանում Իսրայելի և Ադրբեջանի միջև ռազմական համագործակցության խորացման ուղղությամբ, խոսվում էր նաև Ադրբեջանում իսրայելցի ռազմական հրահանգիչների կողմից հնարավոր վերապատրաստ-

[1] http://topwar.ru/43086-minometnyy-kompleks-cardom-izrail.html, Минометный комплекс CARDOM (Израиль).

ման դասընթացների կազմակերպման մասին: Այս քննարկումները 2011թ. սկսած ստացան գործնական կիրառություն, ինչի արդյունքում իսրայելցի համապատասխան ռազմական հրահանգիչներն իրենց մասնակցությունը ցուցաբերեցին ադրբեջանցի զինծառայողների ուսուցման, վերապատրաստման գործում, ինչը պետք է ասել, նոր լիցք հաղորդեց երկու երկրների միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը:

Ստորև ներկայացվում են Ստոկհոլմի խաղաղության հետազոտման միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալներն Իսրայել-Ադրբեջան ռազմատեխնիկական համագործակցության վերաբերյալ:

Տատակարար	Անվանում	Զինատեսակ	Պատվեր/ քանակ	Պատվեր	Առաքում	Առաքում/ քանակ	Մեկնաբանություն
Ադրբեջան	Aerostar	ԱԹՍ	10	2010	2011-2012	10	ԱԹՍ-ի մասեր
Իսրայել	LAR-160	ՀԿՌՀ	6	2005	2006	6	Համազարկային կրակի ռեակտիվ համակարգ
	EXTRA	Հրթիռ	50	2005	2008-2009	50	LAR-160-ի հրթիռ
	Aerostar	ԱԹՍ	4	2007	2008	4	
	ATMOS 2000	ԻՀԿ	5	2008	2010	5	155 մմ ինքնագնաց հրետանային կայանք
	CARDOM	ԻԱ	10	2008	2010-2011	10	120 մմ ինքնագնաց ականանետ
	Hermes-450	ԱԹՍ	10	2008	2011-2013	10	
	Spike-LR	ՀՏՀՀ	100	2008	2009-2010	100	Հակատանկային հրթիռային համակարգ
	Sufa	Ամենագնաց	10	2008	2009-2010	10	
	Barak 8	Հրթիռ	1	2011			Հակաօդային հրթիռ/ 1,6 մլրդ դլ գործարքի մաս
	Barak 8	Հրթիռ	75	2011			
	EL/M-2080 Green Pine	Ռադար	2	2011			1,6 մլրդ դլ գործարքի մաս
	Heron	ԱԹՍ	5	2011	2013	5	
	Searcher	ԱԹՍ	5	2011	2013	5	1,6 մլրդ դլ գործարքի մաս
	LAHAT	ՀՏՀ		2013			Հակատանկային հրթիռ
	OPV-62	Դահանկանավ	6	2013	2015	1	Կառուցվել է Ադրբեջանում
	Shaldag	Դահանկանավ	6	2013	2014-2015	6	Կառուցվել է Ադրբեջանում
	Spike-NLOS	ՀՏՀՀ	250	2013	2014-2015	80	OPV-62-ի եւ Shaldag-ի համար
	EL/M-2288 AD-STAR	Ռադար		2014			

Աղբյուրը՝
http://hetq.am/arm/news/67136/inchpes-e-israyely-zinum-adrbejanin.html

Հետևություններ

Իսրայել-Ադրբեջան ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության ներկայիս միտումները ցույց են տալիս, որ երկկողմ համագործակցությունն այս ոլորտում ունի զարգացման մեծ պոտենցիալ և առաջիկա տարիներին կբնորոշվի առավել դինամիկ գործընթացներով: Երկու երկրների միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության խորացմանն էապես կնպաստի 2016թ. մայիսի վերջերին Ավիգդոր Լիբերմանի՝ Իսրայելի պաշտպանության նախարար նշանակվելու հանգամանքը: Նորանշանակ նախարարը արցախյան համակարտության կարգավորման հարցում բազմիցս հանդես է եկել ադրբեջանամետ քաղաքական հայտարարություններով և դիրքորոշմամբ:

Կարելի է պնդել, որ Լիբերմանի նշանակումը Իսրայելի պաշտպանության նախարարի պաշտոնին Իսրայել-Ադրբեջան երկկողմ հարաբերությունները և մասնավորապես ռազմական, ռազմատեխնիկական համագործակցությունը կբերի որակապես նոր մակարդակի, ինչը չի կարող չանդրադառնալ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա:

Ավելին, ամենևին էլ պատահական չէր և սպասված էր, որ ապրիլյան պատերազմից հետո չուշացավ Լիբերմանին այդ պաշտոնում նշանակելու մասին որոշումը. սա պետք է պայմանավորել ռազմական գործողություններից հետո Իսրայելի օրենսդիր և գործադիր մարմիններում թուրք-ադրբեջանական լոբբինգի կտրուկ ակտիվացմամբ:

ԳԼՈՒԽ 2.
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շատ է խոսվել հայ և հրեա ժողովուրդների ճակատագրերի նույնության, Հայաստանի և Իսրայելի պետականության ստեղծման գործընթացների միջև նմանությունների մասին: Հայության շրջանում զգալի կարևորություն են ներկայացնում երկու ժողովուրդների նկատմամբ իրագործված ցեղասպանությունների, ազգային ազատագրական պայքարի, հայրենադարձության հարցերի ուսումնասիրությունները: Առանձնակի նշանակություն պետք է տալ նաև հրեա զինվորականության պատմության, բարոյահոգեբանական պատրաստվածության և վարքականոնի հարցերի լուսաբանմանն ու առկա փորձի ուսումնասիրմանը, որը կնպաստի մեր հաղթանակների ու հերոսապատումների համարժեք արժևորման օրինակով ՀՀ ԶՈՒ-ում ռազմահայրենասիրական դաստիարակության, հայ զինվորականի վարքականոնի ձևավորման գործընթացին: Ինչպես Իսրայել պետությունում, որը շարունակ գտնվում է ռազմական սպառնալիքների ներքո, այնպես էլ ՀՀ պարագայում երկրի ԶՈՒ-ն, նրա բարձր մարտունակությունը հանդիսանում են պետության անվտանգության ապահովման կարևորագույն երաշխիքը: Խնդիր, ինչը, ՀՀ ԶՈՒ ռազմատեխնիկական հագեցվածությունից

զատ, մեծապես պայմանավորված է հայ զինվորականի բարոյահոգեբանական, ռազմահայրենասիրական բարձր պատրաստվածությամբ: Ուսումնասիրության նպատակն է նպաստել ՀՀ ԶՈՒ-ում հայ զինծառայողների բարոյահոգեբանական պատրաստվածության բարձրացմանը՝ որպես ՀՀ, ԼՂՀ և հայության անվտանգության ապահովման կարևորագույն գործոն:

2.1. Զինվորականի դերը հրեությունում. հրեա զինվորականի վարքականոնը

Հրեա զինվորականի վարքականոնի ձևավորման գործընթացը

Հրեության մեջ զինվորականի կերպարը մշտապես ընկալվել է որպես հրեական պետականության շարունակականության, հրեա ժողովրդի և նրա ժառանգության պաշտպանության առաջնակարգ երաշխիքներից մեկը: Հատկապես պետականության բացակայության ժամանակաշրջանում էապես կարևորվել է հրեա զինվորականի բարոյահոգևոր բարձր պատրաստվածության հարցը՝ որպես ազգային ինքնության պահպանման կարևորագույն բաղադրիչ: Արդյունքում՝ հրեության պատմության հաղթանակներն ու հերոսապատումները դարձել են այն կարևորագույն արժեհամակարգային սկզբունքները, որոնք հետագայում հիմք հանդիսացան հրեա զինվորի վարքականոնի ստեղծման համար:

Հրեա զինվորականի վարքականոնի շուրջ ձևավորված գաղափարախոսական, արժեհամակարգային ավանդական մոտեցումներն իրենց կիրառական գործածությունը ստացան

Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ դրվեցին հրեական պետականության (Ազգային օջախ) ձևավորման հիմքերը[1]: Հենց այդ ժամանակաշրջանի համատեքստում պետք է դիտարկել Իոսիֆ Տրումպելդորի կերպարը, որն իրապես զգալի դերակատարում և ավանդ ունեցավ հրեա զինվորականի վարքականոնի գաղափարական ու բարոյական նորմերի ձևավորման գործում:

Հրեության շրջանում հերոսացված Իոսիֆ Տրումպելդորը հստակ գիտակցում էր ժամանակաշրջանի թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ մասնավորապես մերձավորարևելյան ռազմաքաղաքական բարդ իրադրությունում հրեական պետականության ստեղծման հարցում հրեա զինվորականի՝ որպես խիզախ, բարոյահոգեբանական բարձր արժեհամակարգ կրող մարտիկի անգնահատելի կարևորությունը: Ի.Տրումպելդորն իր «գերագույն նպատակին» հասնելու ճանապարհին բարձր էր գնահատում այսպես կոչված «ժողովրդի բանակի» ձևավորման գաղափարը, բանակ, որի զինվորականները կկարողանային իրենց հետևից տանել հրեա ժողովրդին, պաշտպանել վերջինիս ու իրենց պետականությունը և չխնայել սեփական կյանքը:

Ի.Տրումպելդորը հրեա զինվորականի վարքականոնի հիմքում տեսնում էր «ասպետական պատասխանատվության» բարոյական նորմը կամ արժեքային համակարգը: Հրեա զինվորականի վարքականոնի՝ Տրումպելդորի գաղափարական մոտեցման կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ նա խորթ էր համարում հրեա զինվորականի վարքականոնի

[1] 1917թ. նոյեմբերի 2-ին Բալֆուրի հռչակագրով բրիտանական կառավարությունն իր աջակցությունն էր ցուցաբերում Պաղեստինում «Հրեա ժողովրդի համար ազգային օջախի» (Jewish National Home) ստեղծման գաղափարին:

հիմքում իրավական նորմերի ամրագրման հանգամանքը՝ առաջնորդվելով հրեա զինվորականի ասպետական հոգեկերտվածքի ազգանվեր մղումներով: Տեղին է հիշատակել Իոսիֆ Տրումպելդորի՝ մահից առաջ ասած խոսքերը. «Երջանիկ է նա, ով զոհվում է հանուն հայրենիքի»[1]:

Հրեա զինվորականի վարքականոնի տրումպելդորյան գաղափարական մոտեցումն աջակցություն ստացավ հրեական պետական հիմնադիր այրերի կողմից (առաջին հերթին հարկ է նշել երկրի առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնին): Հրեա զինվորականի վարքականոնի վերաբերյալ նրանց բարոյական պատկերացումները կենտրոնանում էին պետականակենտրոն գաղափարախոսության վրա, որի համաձայն՝ հրեա զինվորականի և ընդհանրապես հրեայի արժեքային համակարգի հիմքում պետք է դրված լինի ոչ այնքան ասպետական պատասխանատվության, որքան հրեական պետության, «բարձրագույն առաքելության» նկատմամբ վերջինիս անվերապահ ծառայության և հավատարմության զգացումը: Այս համատեքստում, թերևս, տեղին է մեջբերել Դ.Բեն-Գուրիոնի հայտնի տողերը, թե «Իսրայելի պաշտպանության ուժերը նույնպես պետք է դառնան Իսրայելի երիտասարդության, երեխաների ու ներգաղթածների համար սիոնիստական կրթական կենտրոն»:

Առաջին աշխարհամարտի տարիներից մինչև 1948թ. Իսրայել պետության հիմնադրումը և հիմնադրմանը հաջորդած 4 տասնամյակների ընթացքում հրեության պետական-հասարակական տարբեր հատվածներում (Իսրայել, հրեական համայնք-

[1] Форум «Маханей Исраэль». Герои Израиля-Иосиф Трумпельдор, http://eskinweb.narod.ru/heroes/trumpeldor.htm

ներ) հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգային դրույթների ձևավորման գործընթացում զգալի ավանդ ունեցան այդ երկու մոտեցումները, որոնք տարբեր ժամանակագրական փուլերում ստացան նոր ձևակերպումներ։ Հրեա զինվորականի և ընդհանրապես հրեայի վարքականոնի հայեցակարգային հիմնադրույթների ձևավորման գործում զգալի է եղել նաև սիոնիստական գաղափարախոսության, ինչպես նաև հուդայականության կրոնաբարոյական գործոնների ազդեցությունը, որոնք թեև երբեմն հակասության մեջ էին մտնում միմյանց, ինչպես և վերը հիշատակված վարքականոնային գաղափարախոսական մոտեցումների հետ, այնուհանդերձ, միանշանակորեն ունեցել են զգալի դրական ավանդ հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգի կայացման գործում։ Չպետք է անտեսել նաև այն իրողությունը, որ յուրաքանչյուր հրեայի բարոյական, սոցիալ-կենցաղային կերտվածքում գերակշռում է հենց կրոնաբարոյական գործոնի ազդեցությունը, որը մեծապես պայմանավորում է նրա պետական, ազգային պատկանելությունն ու դրա գիտակցումը։ Ինչ վերաբերում է սիոնիստական գաղափարախոսությանը, ապա, ինչպես բազմիցս ասվել է, այն հիմնարար դերակատարում է ունեցել Իսրայելի պետականության կայացման, պետության հիմնադրման և նրա շարունակականության գործընթացում։ Հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգի ձևավորման հիմքում կարելի է առանձնացնել հետևյալ սխեմատիկ կառուցվածքը.



Հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգային հիմնադրույթները

Իսրայել պետության հիմնադրման տարիներին և հատկապես վերջին տասնամյակներում, պայմանավորված արաբա-իսրայելական ռազմական բախումներով և պատերազմներով, կտրուկ աճեց հրեա զինվորականի դերը, ինչը, հետևաբար, նպաստեց վերջինիս վարքականոնի հայեցակարգային նորմերի զարգացման գործընթացին:

Հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգային հիմնադրույթներն ամփոփ բնույթ ստացան միայն 1992թ.[1], երբ Իսրայելի պաշտպանության ուժերի (*Israel Defense Forces-IDF)* կողմից ներկայացվեց այսպես կոչվող «Իսրայելի պաշտպանության ուժերի վարքականոնը» (*The IDF Code of Conduct)*: Վարքա-

[1] "Israel Defense Forces".
http://enc.slider.com/Enc/Israel_Defense_Forces#Code_of_Conduct

կանոնում համադրված են տվյալ ուղղությամբ առկա միջազգային իրավունքը, հրեության ժառանգությունը, ինչպես նաև Իսրայելի պաշտպանության ուժերի ավանդական բարոյական վարքականոնը: Նշենք, որ վարքականոնը կարճ ժամանակահատվածում ստացավ լայն միջազգային հնչեղություն: Ի հաստատումն հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգային համակարգի արդյունավետության, նկատենք, որ հատկապես վերջին տասնամյակում Միացյալ Նահանգների ռազմական գերատեսչությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարում (մասնավորապես ահաբեկիչների դեմ մարտական գործողությունների վարումը քաղաքացիական բնակչության շրջանում) դիմել է հրեական փորձի օգնությանը, կիրառել Իսրայելի պաշտպանության ուժերի գիտահետազոտական, ուսումնակրթական կենտրոններում (*Israel's Judge Advocate General's Office; The IDF School of Military Law)* մշակված վարքականոնի համակարգչային, կոդավորված ծրագրի սկզբունքներն ու արժեքները[1]: Հարկ է նշել, որ ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով Իսրայելի պաշտպանության ուժերի՝ վերը հիշատակված կենտրոնների շրջանակներում 2003թ. մշակվել է նաև ահաբեկչության դեմ պայքարում հրեա զինվորականի վարքականոնի նոր մոդել-հայեցակարգը:

Իսրայել պետության և նրա ռազմական գերատեսչության կողմից հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգային հիմնահարցերին տրված բարձրագույն կարևորության մասին է

[1] Հայեցակարգային վարքականոնը եբրայերեն կոչվում է *Ru'ah Tzahal (The IDF Spirit)*: Դրա համակարգչային ծրագրի մաս են կազմում մինչև 4 բոպե տևողությամբ տեսաֆիլմերը, որոնք ունեն բարոյահոգեբանական, արժեքային տեսական ու կիրառական ուսումնական նշանակություն:

խոսում նաև այն հանգամանքը, որ վերջինս Իսրայելի պաշտպանության ուժերի հայեցակարգի երկու հիմնական բաղադրիչներից մեկն է՝ ներկայացված «Էթիկա» (վարքականոն) խորագրի ներքո։ Մյուս բաղկացուցիչ մասը կրում է «Հիմնական հայեցակարգ» վերնագիրը։

Ստորև առավել հանգամանորեն կվերլուծենք հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգային հիմնադրույթներն ու կառուցվածքային առանձնահատկությունները։ Դատելով վարքականոնի հայեցակարգի «Իսրայելի պաշտպանության ուժերի ոգին» խորագրից՝ դրա բովանդակությունը վերաբերում է ոչ միայն երկրի պաշտպանության ուժերի յուրաքանչյուր հրեա զինվորականի վարքականոնին, լինի շարքային, թե սպա, այլև Իսրայելի պաշտպանության ուժերի՝ որպես ինստիտուցիոնալ համակարգի, բարոյա-արժեքաբանական նորմերին։ Դրանով է պայմանավորված այն, որ վարքականոնը ներկայացվում է Իսրայելի պաշտպանության ուժերի դերակատարման շեշտադրմամբ, որով էապես կարևորվում է նրա ինստիտուցիոնալ-համակարգային գործոնի առաջնակարգությունը։ Վարքականոնի համաձայն, «Իսրայելի պաշտպանության ուժերի նպատակն է Իսրայել պետության և նրա անկախության գոյության պաշտպանությունը, Իսրայելում բնականոն կյանքի խաթարմանն ուղղված բոլոր թշնամական ջանքերի չեզոքացումը։ Իսրայելի պաշտպանության զինվորները պարտավոր են մարտնչել, անվերապահորեն ներդնել իրենց ողջ ունակությունները և նույնիսկ զոհաբերել իրենց կյանքը հանուն Իսրայել պետության, նրա քաղաքացիների ու բնակիչների պաշտպանության։ Իսրայելի պաշտպանության ուժերի զինվորները գործելու են

Իսրայելի պաշտպանության ուժերի արժեքների ու կանոնակարգի համաձայն՝ հավատարիմ մնալով պետության օրենքներին և անհատի արժանապատվության նորմերին, հարգելով Իսրայել պետության՝ որպես հրեական և ժողովրդավարական պետության արժեքները»[1]: Նկատենք, որ Իսրայելի պաշտպանության ուժերի կայացման առաջին իսկ քայլերից ռազմական բարձրագույն հրամանատարությունը երկրի զինված ուժերի մարտունակության և նրա գործառութային արդյունավետության հիմքում դիտարկում էր թվաքանակով ոչ այնքան մեծ, բայց շարժունակ ուժեր (m*obile forces*) ստեղծելու անհրաժեշտության հիմնախնդիրը՝ հիմնվելով յուրաքանչյուր հրեա զինվորականի վարքականոնի ու բարձր պատրաստվածության գործոնների վրա: Այստեղից էլ այն տեսակետի հաստատումը, ըստ որի՝ վարքականոնում ռազմական ինստիտուցիոնալ արժեքաբանական համակարգի առաջնակարգության կողքին հրեա զինվորականի մարդկային արժանապատվությունը դրված է իրավակիրառական բարձրագույն մակարդակի վրա:

Համաձայն վարքականոնի հայեցակարգային փաստաթղթի, «Իսրայելի պաշտպանության ուժերի ոգին», որպես հիմք, ընդունում է հետևյալ չորս հիմնասյուները.

- Իսրայելի պաշտպանության ուժերի ավանդույթները և նրա ռազմական ժառանգությունը,
- Իսրայել պետության, նրա ժողովրդավարական սկզբունքների, օրենքների և ինստիտուտների ավանդույթները,
- հրեության ավանդույթներն իր ողջ պատմության ընթացքում,

[1] http://www.idf.il/1497-en/Dover.aspx, Israel defense Forces. Doctrine

- համամարդկային բարոյական արժեքները՝ հիմնված անհատի արժեքների և արժանապատվության վրա։

Հրեա զինվորականի վարքականոնի երեք հիմնարար արժեքներն են.

1. պետության, նրա քաղաքացիների և բնակիչների պաշտպանությունը,
2. սերն առ հայրենիք և հավատարմությունն առ պետություն,
3. մարդկային արժանապատվությունը[1]։

Հրեա զինվորականի վարքականոնի հիմնարար արժեքներից զատ, փաստաթղթում առանձնացվում են նաև վարքականոնի արժեքները, որոնք ածանցվում են այդ հիմնարար արժեքներից։ Դրանք են.

1. նպատակային կամք առաքելությունների կատարման և հաղթանակի հասնելու համար,
2. պատասխանատվության զգացում (Իսրայելի պաշտպանության ուժերի զինվորականը պետության, նրա քաղաքացիների ու բնակիչների պաշտպանության ակտիվ մասնակից է),
3. զինվորականի կողմից վստահության զգացում,
4. անձնական օրինակի մատուցում (հրեա զինվորականը պետք է կատարի իր պարտականություններն այնպես, ինչպես ինքն է պահանջում գործընկերներից),

[1] Մարդկային արժանապատվություն ասելով հասկացվում է այն, որ Իսրայելի պաշտպանության ուժերը և նրա ենթակա զինվորականները պարտավոր են պաշտպանել մարդու արժանապատվությունը՝ հիմք ընդունելով այն, որ յուրաքանչյուր անհատ արժեք է՝ առանց ծագման, կրոնական, ազգային, գենդերային կամ զբաղեցրած դիրքի խտրականության։

5. մարդկային կյանք (մարտական գործողություններին հրեա զինվորականը պետք է վտանգի իր և իր գործընկերների կյանքը միայն այնչափ, որչափ պահանջում է իրենց վրա դրված առաքելության կատարման նպատակը),
6. զենքի նպատակային գործադրում (*Purity of arms)* (զինվորականը պետք է կիրառի իր զենքը միայն առաքելության կատարման նպատակով, զենք չկիրառի խաղաղ բնակչության նկատմամբ),
7. պրոֆեսիոնալիզմ,
8. կարգապահություն,
9. եղբայրություն կամ թիմային ոգի (*Esprit de corps*) (եղբայրական վերաբերմունք գործընկերների նկատմամբ),
10. առաքելության գիտակցում (*Sense of mission*) (Իսրայելի պաշտպանության ուժերի զինվորականը կառույցում իր ծառայությունը պետք է դիտի որպես առաքելություն, պետք է պատրաստ լինի զոհաբերել ամենը պետության, նրա քաղաքացիների ու բնակիչների պաշտպանության համար)։

Հրեա զինվորականի վարքականոնի հայեցակարգային կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ չի գործում հակառակորդի նկատմամբ թշնամու կերպարի սերմանումը զինվորականության շրջանում, ինչը «փոխհատուցվում» է առ հայրենիք սիրո ու հավատարմության զգացումով և գիտակցումով։ Վարքականոնում բացակայում է նաև հերոսացման գործոնը, այն է՝ հրեա զինվորականի արժեհամակարգում մարտական գործողություններին մասնակցությունը որպես այդպիսին չի դիտարկվում իբրև հերոսություն. բառացիորեն հերոսու-

թյուն են հանդիսանում հրեա զինվորականի՝ առ հայրենիք նվիրվածության և հավատարմության գիտակցումն ու զգացումը՝ որպես արժեք։

Ինչպես արդեն նշեցինք, Իսրայելի պաշտպանության ուժերի հայեցակարգում, որի առաջին՝ հիմնարար հատվածը ներկայացվեց վերը, մյուս՝ «Հիմնական հայեցակարգ» մասնաբաժնում նույնպես առանձնահատուկ շեշտվում են հրեա զինվորականության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնահարցերը՝ որպես Իսրայել պետության, նրա քաղաքացիների ու բնակիչների պաշտպանության երաշխիք։ Այսպես, ներառված հիմնադրույթների շարքում բնորոշ օրինակ է առաջին կետը, ըստ որի՝ «Իսրայելը չի կարող պարտություն կրել անգամ մեկ պատերազմում»։

Հիմնական եզրահանգումներ

Հաշվի առնելով այն իրողությունը, որ Իսրայել պետության ստեղծման նախապատմությունը և նրա հետագա զարգացումը տեղի են ունեցել միջազգային և մերձավորարևելյան աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական բավական բարդ և անկայուն իրադրությունում, Իսրայելի պետականության կայացման և շարունակականության պաշտպանվածության կարևորագույն հիմնասյուներից մեկը (եթե ոչ ամենակարևորը) իրատեսաբար համարվել է հրեա զինվորականի բարոյա-արժեքային համակարգի կայացումն ու նրա արդյունավետության ապահավումը։ Հրեության կողմից հրեա զինվորականի բարձր արժևորման մասին է խոսում այն, որ պետականության բացակայության ժամանակ հրեության մեջ հրեա զինվորականի բարոյահոգևոր

արժեքների շուրջ ձևավորված պատկերացումներն ու ողջ ժառանգությունն ավանդաբար պահպանվել ու փոխանցվել են, իսկ հետագայում հիմք հանդիսացել հրեա զինվորականի հայեցակարգի մշակման համար:

Պետք է նկատել, որ ինչպես հրեաների պարագայում, սեփական ռազմական հաղթանակների և հերոսապատումների ավանդապահության հարցում բնորոշ է նաև հայ ժողովրդի օրինակը, որը նույնպես փառաբանել ու մեծարել է իր հերոսներին ու հաղթանակները: Այս տեսանկյունից էապես կարևորվում է ՀՀ բնակչության և հայության շրջանում հայ ժողովրդի պատմության փառահեղ էջերի և հերոսապատումների պատմական հիշողության վերականգնումը, ինչի կարիքը վերջին մի քանի տարիներին առավել քան զգացվում է: Խնդրի նկատմամբ հետևողական մոտեցումն իր հերթին կարող է նպաստել ՀՀ ԶՈՒ-ում հայ զինվորականության բարոյահոգևոր արժեքների պահպանման և առհասարակ հայ զինվորականի վարքականոնի ստեղծման գործընթացին:

2.2. Կնոջ դերն Իսրայելի պաշտպանության բանակում

Կնոջ դերն Իսրայելի հասարակությունում

Իսրայելը դասվում է այն բացառիկ երկրների շարքին, որտեղ կինը ներգրավված և յուրահատուկ տեղ է զբաղեցնում հասարակության գործունեության տարբեր ասպարեզներում: Բազմիցս անդրադարձներ են եղել Իսրայելի հասարակական, սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական գործընթացներում հրեա կանանց ստանձնած կարևորագույն դերակատարման թե-

մային, որն արմատապես տարբերվում է այլ հասարակություններում կնոջ նկատմամբ ձևավորված ավանդական մոտեցումներից։ Իսրայելում և հրեության շրջանում կնոջ բարձր կարգավիճակը պայմանավորված է հրեական կրոնաբարոյական ավանդույթներով։ Սիոնիստական շարժման պահպանողական շրջանակներում որոշակի վերապահումներով են մոտենում այն տեսակետին, ըստ որի՝ Աստվածաշունչն իր բնույթով և բովանդակությամբ հայրիշխանական է։ Աստվածաշնչյան, հիմնականում Հին Կտակարանի պատմություններում խոսվում է այնպիսի կանանց մասին (հիմնականում հրեա), որոնք առանցքային նշանակություն են ունեցել մարդկության, տվյալ դեպքում՝ հրեության գոյապահպանման գործընթացում։ Բերվում է Սառայի օրինակը, որն անպտղության պատճառով որդի չէր պարգևում Աբրահամին։ Աստված խոստացավ սերունդ պարգևել նրանց նաև նրա շնորհիվ, որ փորձությունների ենթարկեց Սառային՝ ստուգելու դժվար պահերին ամուսնու հանդեպ նրա նվիրվածությունն ու սերը՝ դրանով իսկ խորապես կարևորելով կնոջ դերն իսրայելցիների գոյապահպանման գործում։ Հիշատակելի է աստվածաշնչյան մեկ այլ կնոջ՝ Ռեբեկայի կերպարը, որին նույնպես բացահայտվեց Աստծո կամքը։ Ռեբեկան առաջին կինն էր, որն Աստծո կամոք որպես ամուսին ընտրեց Իսահակին՝ ընդդիմանալով հոր կամքին։ Հին Կտակարանում խոսվում է նաև եգիպտական փարավոնի դստեր մասին, որը Եգիպտոսում հրեաների նկատմամբ սկսված հետապնդումների պատճառով մանկահասակ Մովսեսի փրկության նպատակով գաղտնի պահեց նրա հրեական ծագումը։ Աստված որպես Մովսեսի փրկիչ ընտրեց փարավոնի դստերը, որը հանդուրժողա-

կանություն ու հարգանք ցուցաբերեց մանկահասակի հավատքին՝ դեմ գնալով իր և իր ժողովրդի դավանած հեթանոսությանը։ «Մովսեսի օրենքում», որը նա ստացավ Աստծո կողմից Սինա լեռան վրա, նույնպես մեծապես արժևորվում էր կնոջ դերը. տղամարդկանց հետ հավասար կանանց իրավունք էր վերապահվում զոհ մատուցել Աստծուն, նույնիսկ առանց տղամարդու մասնակցության։

Թալմուդը (հուդայականության կրոնա-իրավական, բարոյական դրույթների շտեմարան) կնոջը վերաբերող հարցերում նույնպես առանձնանում է առաջադեմ մոտեցումներով. Թալմուդում կինը բնորոշվում է որպես ընտանիքի երջանկության ու հաջողության պահապան. «Օրհնանքն իջնում է տան վրա միայն կնոջ շնորհիվ»։

Չնայած հրեա կնոջը հուդայական արժեքներում տրվող բարձր կարևորությանը, սկզբնական շրջանում երկար ժամանակ պահանջվեց հրեական՝ էությամբ հայրիշխանական միջավայրում կնոջ կարգավիճակի վերաբերյալ ավանդապահ կարծրատիպերի վերացման համար։ Միջնադարում հրեա առաջադեմ մտածողները լուրջ քայլեր ձեռնարկեցին հրեա կանանց դերի բարձրացման ուղղությամբ, որոնք, սակայն, մշտապես արժանանում էին ավանդապաշտների դիմադրությանը։ Հրեության ազգակերտման հարցում կանանց պատասխանատվության և պարտականությունների՝ տղամարդկանց հետ հավասարապես ստանձնման գործընթացին նպաստեց երկու կարևոր հանգամանք՝ արևմտյան ֆեմինիստական գաղափարախոսությունն ու սիոնիստական շարժումը, որոնց ազդեցությամբ լուրջ առաջընթաց արձանագրվեց։

Հրեությունում կնոջ նկատմամբ ավանդապաշտ կարծրատիպերը, թերևս, կոտրվեցին հատկապես 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին՝ կապված Պաղեստինում Հրեական ազգային օջախի ստեղծման հետ, երբ հրեա կանայք ակտիվ մասնակցություն ունեցան հրեական պետականության կայացման գործընթացին: Անգնահատելի էր հրեա կանանց դերը Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստների հետապնդումներից հազարավոր հրեաների փրկության հարցում: Իսրայել պետության հիմնադրումից հետո ևս հրեա կինը շարունակել է ակտիվորեն ներգրավվել պետականաշինության կարևորագույն գործին: Զգալի է նրանց ավանդն Իսրայելի ներքին և արտաքին քաղաքականությունում: Ոչ պաշտոնական տվյալներով, վերջին տասնամյակում երկրի դիվանագիտական գործունությունում ներգրավված կանանց մասնաբաժինը 40-43% է:

Կինն առանցքային նշանակություն ունի նաև հրեաների ազգային ինքնության տեսանկյունից: Իսրայել պետության հիմնադրումից երկու տարի անց՝ 1950թ. ընդունված «Հրեաների հայրենադարձության մասին» օրենքում նշված է. «Հրեա է համարվում այն մարդը, որը ծնվել է հրեա կնոջից կամ ընդունել է հուդայականություն և չի դավանում այլ կրոն»[1]:

Կինն Իսրայելի պաշտպանության բանակում

Հրեա ժողովրդի պաշտպանության և անվտանգության ապահովման հարցում հրեա կնոջ մասնակցության առաջին հիշատակումներին հանդիպում ենք Հին Կտակարանում: Աստվածաշնչյան «Իսրայելցի դատավորների գրքում» պատմվում է Դեբո-

[1] http://ru.wikipedia.org/wiki/Закон_о_возвращении_(Израиль)

րա անունով հրեա կնոջ մասին (Ք.ա. մոտ 1200-ական թթ.), որը ներկայանում էր որպես ժողովրդի դատավոր, լուծում իր ժողովրդի ներկայացուցիչների դատական վեճերը, իսկ հետագայում նաև՝ մարգարե, ժողովրդական և քաղաքական առաջնորդ («Դատավորների գրքում» Դեբորան դասվում է առավել հռչակավոր դատավորների շարքին)[1]: Հետագայում, երբ քանանացիների թագավոր Յավինը սպառնում էր հրեա ժողովրդի անվտանգությանը, Դեբորան դարձավ իր ժողովրդի առաջնորդը և կոչ արեց պատերազմել թշնամու դեմ: Դեբորան հրեական ցեղերից մեկի առաջնորդին՝ «իսրայելցի դատավոր» Բարաքին հրամայեց զորք հավաքել ու պատերազմել քանանացիների դեմ[2]: Սակայն Բարաքը համաձայնեց պատերազմել միայն այն դեպքում, եթե Դեբորան իր ձեռքը վերցնի հրեական զորքի հրամանատարությունը, ինչը խոսում է Դեբորայի ժողովրդական հեղինակության մասին: Նա պատերազմում հանդես էր գալիս ոչ միայն որպես զորահրամանատար, այլև որպես հրեա ժողովրդի հոգևոր առաջնորդ: Մեջբերենք պատերազմի ժամանակ Դեբորայի հայտնի խոսքը. «Աստծո թշնամիները իսրայելցիների թշնամիներն են և ընդհակառակը, այդ պատճառով Աստված մեր կողմն է»: Բավական խորհրդանշական է նաև Դեբորա անվան իմաստը. այն եբրայերենից թարգմանաբար նշանակում է «մեղու», իսկ մեղուն Հին Արևելքում համարվում էր ռազմական հզորության խորհրդանիշ: Ավելին, հնագույն եգիպտական և հունական գերեզմանաքարերի վրա պատկերված մեղուն խորհրդանշում է հոգու հավերժությունն ու մաքրու-

[1] http://cyclowiki.org/wiki/Дебора
[2] http://www.eleven.co.il/article/11385, Дебора

թյունը, ասել է թե՝ Դեբորան մարմնավորում էր իր ժողովրդի հոգևոր ուժը: Նրա մասին պատմությունը ցույց է տալիս դեռևս հնագույն ժամանակներում հրեա ժողովրդի կյանքում կնոջ ունեցած մեծ դերը:

Հրեա կանանց խիզախության բնորոշ օրինակ է նաև 66-73թթ. Հռոմեական կայսրության դեմ «Հրեական մեծ ապստամբության» տարիներին Մասադա ամրոցի ինքնապաշտպանությունը, որտեղ պաշարված շուրջ 967 հրեա ապստամբներ՝ կանայք, երեխաներ և տղամարդիկ, ինքնասպանություն գործեցին՝ գերադասելով զոհվել ազատ, քան ողջ մնալ՝ գերեվարված հռոմեացիների կողմից:

Հրեաների ազգակերտման գործում տղամարդկանց հետ հավասար հրեա կանանց ակտիվ մասնակցության ջատագովներն էին հատկապես սիոնիստական շարժման հիմնադիր այրերը: Սիոնիստ գաղափարախոսները գտնում էին, որ Իսրայել պետության հիմնադրման և համայն հրեության անվտանգության ապահովման հարցում իրենց ավանդը պետք է ունենան հասարակության բոլոր անդամները՝ կին, թե տղամարդ: Իսրայել պետության առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնի խոսքերով, «Բանակում զինծառայությունը հանդիսանում է քաղաքացիական պարտքի կատարման բարձրագույն խորհրդանիշը, և քանի դեռ կանայք ու տղամարդիկ հավասար չեն այդ պատվավոր պարտականության կատարման հարցում, չի կարելի խոսել կանանց իրական իրավահավասարության մասին»[1]:

[1] http://voennovosti.ru/2011/02/psixologicheskie-igry-ili-o-devushkax-v-izrailskoj-armii/, Психологические игры или о девушках в израильской армии.

Հրեա կանայք տղամարդկանց հետ կողք կողքի զգալի ներդրում են ունեցել 20-րդ դարասկզբին Պաղեստինում առաջին հրեական բնակավայրերի գոյապահպանման գործընթացում, մարտնչել հրեական պետականության համար մղված պայքարում: Կանայք կամավոր ներգրավվել են հրեական այնպիսի ընդհատակյա ռազմական խմբավորումներում, ինչպիսիք են Հագանան (որը հետագայում դարձավ Իսրայելի պաշտպանության բանակի հիմքը), Լեհին և Էցելը՝ կազմելով այդ կազմակերպություններում ներառված մարտիկների 20%-ը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի դեմ պայքարին միացան 6 հազար հրեա կանայք, որոնցից պետք է հիշատակել հերոսուհի և բանաստեղծուհի Հաննա Սենեշին (1921-1944թթ.)[1]: 1930-ականներին Հունգարիայում սկսված հակասեմականության ալիքը Հ.Սենեշին ներգրավեց տեղի սիոնիստական երիտասարդական շարժման մեջ: Նա պատկանում է Բուդապեշտի այն հրեաների շարքին, որոնք ցանկանում էին իրենց հետագա կյանքը կապել Պաղեստինում ապագա Իսրայել պետության ստեղծման գործընթացի հետ: 1939թ. սեպտեմբերին նրան հաջողվեց տեղափոխվել Պաղեստինում գործող Նահալալ հրեական գյուղատնտեսական բնակավայր: Եվրոպայում նացիստների դեմ հրեաների դիմադրության կազմակերպման նպատակով Հագանան նախաձեռնեց հատուկ վերապատրաստված մարտիկների հավաքագրումը՝ նրանց դեպի Եվրոպա ինքնաթիռներով տեղափոխելու նպատակով: 1942թ. Հ.Սենեշը համալրեց կամավորների շարքերը՝ որպես կապավոր, իսկ 1944թ. մարտին տեղափոխվեց նախկին Հարավսլավիայի

[1] http://www.eleven.co.il/article/13760, Сенеш Ханна.

պարտիզանական բազա: Երեք ամիս անց, սակայն, 1944թ. հունիսի 9-ին, հունգարական սահմանը հատելիս գերեվարվեց: 1944թ. նոյեմբերի 7-ին, 5 ամիս տնած հարցաքննություններից ու կտտանքներից հետո, որոնք այդպես էլ նրան չստիպեցին թշնամուն հայտնել ռադիոհաղորդչի գաղտնի կոդը, նա գնդակահարվեց: 1950թ. նրա մասունքները տեղափոխվեցին Իսրայել և վերահանձնվեցին հողին Երուսաղեմի Հերցելի լեռան վրա:

Հաննա Սենեշը մի քանի տասնամյակ Իսրայելում ընկալվում էր որպես հրեության ամենառողբերգական կերպարներից մեկը: Սակայն հետագա տարիներին Իսրայելում և համայն հրեությունում հրեական հերոսապատումների հիման վրա ազգային կոլեկտիվ հիշողության վերականգնման քաղաքականության արդյունքում Հաննա Սենեշը դարձավ հրեության և Իսրայելի պաշտպանության բանակի ազգային խորհրդանիշը, իսկ նրա պատմությունը ողբերգությունից դարձավ հերոսապատում: Հ.Սենեշի՝ որպես հայրենանվեր հրեա կնոջ և հերոսուհու կերպարով են այսօր Իսրայելի պաշտպանության բանակում բարոյահոգևոր և ֆիզիկական պատրաստվածություն անցնում հազարավոր հրեա կին զինծառայողներ:

Հրեա կանանց անգնահատելի ավանդը հրեական պետականության պաշտպանության գործընթացում շարունակվեց նաև Իսրայել պետության հիմնադրումից հետո: 1948թ. մայիսի 16-ին հիմնվեց Իսրայելի պաշտպանության բանակի Կանանց կորպուսը, որի առաջին հրամանատարը դարձավ գնդապետ Շոշանա Գերշոնը[1]: Կանանց կորպուսի հիմնական գործառույթ-

[1] http://www.calend.ru/event/5224/, Временное правительство Израиля издало «Указ о создании Армии обороны».

ներից էին երկրի ԶՈՒ-ում հրեա կանանց զինծառայության կազմակերպումը, ուսուցումը, նրանց իրավունքների պաշտպանությունը և այլն: 2001թ., սակայն, Կանանց կորպուսը լուծարվեց, որի փոխարեն ստեղծվեց Իսրայելի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի՝ կին զինծառայողների հարցերով խորհրդականի վարչությունը՝ գեներալ-մայոր Սյուզի Յոգևի գլխավորությամբ: Նախորդ ինստիտուտի համեմատ այս կառույցն օժտված էր առավել մեծ լիազորություններով, ինչը նույնպես վկայում է վերջին շրջանում Իսրայելի պաշտպանության բանակում և հասարակությունում կնոջ կարգավիճակի բարձրացման մասին:

«Զինծառայության մասին» օրենքի համաձայն, պարտադիր հիմունքներով զորակոչման ենթակա են 18 տարին լրացած, չամուսնացած և երեխաներ չունեցող բոլոր հրեա աղջիկները: Հրեա հոգևորական և այն կանայք, որոնց համար զինծառայությունը հակասում է իրենց բարոյական արժեքներին, անցնում են քաղաքացիական ծառայություն[1]: Նկատենք, որ ի տարբերություն վերջիններիս, պարտադիր զինծառայություն անցած հրեա կանայք համեմատաբար հեշտ են ինտեգրվում երկրի հասարակական, սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում, քանզի Իսրայելում զինծառայությունը երկրի ԶՈՒ-ում համարվում է կարևոր հարթակ յուրաքանչյուր քաղաքացու հետագա հասարակական առաջխաղացման համար:

Սկզբնական շրջանում Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց զինծառայությունը տևում էր 22 ամիս, սակայն վերջին տարիներին այն ընդհուպ մոտեցել է տղամարդկանց պարտադիր զինծառայության ժամկետին՝ 3 տարի:

[1] http://www.rg.ru/2013/03/26/israil.html, Повестку получит каждый.

Սկզբնական շրջանում կանանց զինծառայությունն իրականացվում էր սպասարկող-վարչարարական և մատակարարման ոլորտներում, սակայն հետագա տարիներին, երբ երկրի ԶՈՒ-ում ներգրավված հրեա կին զինծառայողները լուրջ հաջողություններ արձանագրեցին և զգալի ներդրում ունեցան արաբական երկրների հետ Իսրայելի մղած պատերազմներում, անհրաժեշտություն առաջացավ կանանց ներգրավելու բանակի առավել մարտականացված ստորաբաժանումներում ևս: Իսրայելի ԶՈՒ-ում կանանց ինտեգրման խորացմանը նպաստեց նաև այն, որ մեծացավ երկրի պաշտպանության համակարգում կամավոր զինծառայություն անցնել ցանկացող կանանց թվաքանակը:

1952թ. Իսրայելում ընդունված «Զինծառայության մասին» օրենքի համաձայն, Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց զինծառայությունը սահմանափակվում էր երկու հիմնական կետով. մարտական գործողություններ (հիմնականում հրեա կնոջ գերեվարումից խուսափելու պատճառաբանությամբ) և ֆիզիկական բարձր կարողություններ պահանջող առաջադրանքներ:

Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց ներգրավման հարցում լուրջ խթան հանդիսացավ 1955թ. Հացոր ավիաբազայում «Մոսկիտո» տեսակի ինքնաթիռի վթարը, երբ հրկիզվող ինքնաթիռից զինծառայող, կոչումով սերժանտ Էսթեր Արդիտին, չնայած կյանքին սպառնացող վտանգին, ներս մտնելով այրվող ինքնաթիռ, կարողացավ փրկել անձնակազմի հրամանատար Յակով Թալմոնին, ինչից հետո՝ ընդամենը մի քանի վայրկյան անց, ինքնաթիռը պայթեց[1]: Այդ սխրագործության հա-

[1] http://shaon.livejournal.com/82223.html, Женщины в Израильской Армии.

մար Է.Արդիտին դարձավ Իսրայելի ԶՈՒ առաջին հրեա կին զինծառայողը, որը պարգևատրվեց «Իտուր հա-մոֆետ» (Մատուցած գերազանց ծառայությունների համար)՝ նշանակությամբ զինվորական երրորդ կարգի մեդալով, որը տրվում է «ընդօրինակման արժանի տղամարդկության ցուցաբերման համար»:

1995թ. Իսրայելի Գերագույն դատարանը փոփոխություններ մտցրեց երկրի «Զինծառայության մասին» օրենքում, ինչը հնարավորություն տվեց կանանց՝ ծառայել նաև մարտական ստորաբաժանումներում, ինչպես նաև ուսանել օդաչուների և ծովային հրամանատարների սպայական ուսումնական հաստատություններում: Արդյունքում՝ 2001թ. զինվորական կոչումով լեյտենանտ Ռոնի Ցուկերմանը դարձավ ռմբակոծչի օդաչուի կոչում ստացած առաջին կին զինծառայողը[1]: 2007թ. սեպտեմբերին երկրի ԶՈՒ-ում ստեղծված կանանց հարցերով հատուկ հանձնաժողովի պատրաստած զեկույցում առաջարկվեց հրեա կանանց ընդգրկել զինվորական բոլոր ստորաբաժանումներում և զինծառայության հարցում առաջնորդվել ոչ թե սեռական պատկանելության, այլ զինծառայողների որակական հատկանիշների սկզբունքով:

Իսրայել պետության հիմնադրումից մինչև 20-րդ դարի 90-ականների վերջերը լուրջ սահմանափակումներ էին գործում կանանց՝ զինվորական բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնելու հարցում. այդ արգելքը վերացվեց միայն վերջին տասնամյակում, ինչը նոր խթան հանդիսացավ Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց ներգրավվածության ընդլայնման գործընթացում: Ներկայում Իսրայելի պաշտպանության բանակի զինծառայողների 35%-ը կանայք են:

[1] Նույն տեղում:

Վերջին տարիներին Իսրայելի պաշտպանության բանակի հրամանատարությունը լուրջ քայլեր է ձեռնարկում մինչ այդ բացառապես տղամարդկանց համար նախատեսված մի շարք էլիտար դասընթացներում նաև կանանց ընդգրկելու համար: Վերջերս ավարտվեց երկրի պաշտպանության բանակի պատմության մեջ կին դիպուկահարների պատրաստման առաջին դասընթացը: Ընդ որում, կանայք կազմում էին դասընթացն անցած 16 շրջանավարտների մեծ մասը՝ 13-ը: Դասընթացը նախաձեռնվել էր 2004թ. հիմնված «Կարակալ» հետևակային գումարտակի շրջանակներում՝ գերազանցապես հրեա կանանց մարտական պատրաստվածության ապահովման նպատակով:

Զգալի է հրեա կանանց ավանդը նաև Իսրայելի հատուկ ծառայությունների և հետախուզական գործունեության բնագավառներում: Ներկայում կանայք կազմում են Իսրայելի հետախուզական մարմինների օպերատիվ ստորաբաժանումներում ներգրավված անձնակազմի ավելի քան 20%-ը[1]: Ոլորտում առավել աչքի ընկած հրեա կանանցից են «Մոսադի» բարձրաստիճան հետախույզ, այդ կառույցի նախկին փոխհրամանատար Ալիզա Մագենը, Մալկա Բրավերմանը, որը Մոսադի շարքերը համալրել է Հագանայից և հետագայում դարձել հետախուզության վարչական կառավարման հրամանատար, Մոսադի գործակալ Յաել Պոզները[2]: Թե՛ Մալկա Բրավերմանը, թե՛ Յաել Պոզներն ակտիվ մասնակցություն են ունեցել ռազմական հանցագործ Ադոլֆ Էյխմանի հայտնաբերման գործում. Մ.Բրավերմանը մշակել է նրա ձերբակալման գործողության կազմակերպչական նախագիծը:

[1] http://www.sem40.ru/index.php?newsid=203196, Женское лицо израильской разведки.
[2] Նույն տեղում:

2.3. Հոգևորականությունն Իսրայելի բանակում

Իսրայելն այն բացառիկ երկրներից է, որոնք, լինելով աշխարհիկ պետություններ, պետականաշինության և ազգակերտման գործընթացներում խիստ կարևորում են կրոնաբարոյական արժեքները: Հնագույն ժամանակներից ի վեր, հատկապես երկուհազարամյա պետականության բացակայության ժամանակաշրջանում, հուդայական կրոնաբարոյական արժեքներն առաջնակարգ նշանակություն են ունեցել հրեության անվտանգության ապահովման և ազգային ինքնության պահպանման գործում: Հրեական կրոնաբարոյական նորմերում քանիցս հիշատակվում է, որ «Էրեց-Իսրայել»-ի (Իսրայել պետության) և նրա բնակիչների անվտանգության պաշտպանությունը յուրաքանչյուր հրեայի «սրբազան պարտականությունն» է:

Հրեական պետականաշինության պատմությունում հոգևոր-բարոյական ուսմունքները նորովի վերիմաստավորվեցին սիոնիստական գաղափարախոսության առաջացման շրջանում: Առաջին սիոնիստ կրոնավոր առաջնորդներն անգնահատելի ներդրում են ունեցել 20-րդ դարի սկզբներին հրեական պետականության համար մղված ազգային ազատագրական պայքարում և պետության կայացման հետագա գործընթացում: Հոգևոր-բարոյական արժեքները մեծ ավանդ են ունեցել երկրի ազգային բանակի ստեղծման և զարգացման գործում: Հրեության անվտանգության պաշտպանության համատեքստում այսօր շարունակում են արդիական մնալ հուդայականությունում ամրագրված պատերազմի վարման էթիկայի մեթոդներն ու սկզբունքները:

Հոգևոր զինվորականի ինստիտուտն Իսրայելի բանակում

Իսրայել պետության, նրա բնակիչների և համայն հրեության անվտանգության ապահովման հարցում հոգևոր դասի զգալի ազդեցության մասին է խոսում Իսրայելի պաշտպանության բանակում Հոգևոր զինվորականի ինստիտուտի (եբրայերեն՝ Ռաբբանութ ցվահթ) գոյությունը: 1948թ. Իսրայել պետության և երկրի կանոնավոր Զինված ուժերի ստեղծման հետ միաժամանակ Հոգևոր զինվորականի ինստիտուտի ձևավորման հանգամանքը վկայում է Իսրայել պետության ղեկավար այրերի կողմից երկրի անվտանգության պաշտպանության հարցում հոգևոր-բարոյական արժեքներին տրվող խիստ կարևորության մասին: Իսրայելական բանակում Հոգևոր զինվորականի ինստիտուտի ձևավորումը պայմանավորված է հուդայական ավանդույթներով: Հրեության պատմության տարբեր շրջաններում հրեա ժողովրդի զինվորական և քաղաքական գործիչները, որպես կանոն, հանդես են եկել նաև որպես ազգի հոգևոր առաջնորդներ:

Ինչպես ընդգծում են մասնագետները, ի տարբերություն որոշ երկրների (ՆԱՏՕ անդամ երկրներ) ԶՈՒ-ում գործող հոգևոր զինվորականության, Իսրայելի պաշտպանության բանակի հոգևոր զինվորականի ինստիտուտն առաջնորդվում է խիստ կրոնական, տվյալ պարագայում հուդայականության հոգևոր-բարոյական սկզբունքներով: Ավելին, կրկին ի տարբերություն այդ երկրների պաշտպանական կառույցում գործող նույնատիպ համակարգերի, Իսրայելի զինված ուժերում Հոգևոր զինվորականի ինստիտուտի ինտեգրման գործընթացն առանձնացավ սահուն ու կայուն դինամիկայով՝ հիմնականում այն պատճառով, որ ընդամենը կես դարվա պատմություն կերտած համակարգը հան-

դիսանում է հնագույն դարերից ի վեր հրեությունում ձևավորված հոգևոր-բարոյական արժեքների ժառանգորդը և մարմնավորում է ոլորտում արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները:

Իսրայելում Հոգևոր զինվորականի ինստիտուտը, որը գործում է երկրի պաշտպանության ուժերի Գլխավոր շտաբի ենթակայության ներքո և ունի վարչության կարգավիճակ, ստեղծվել է զինծառայողների հոգևոր-կրոնական կարիքների բավարարման և զինվորական առօրյայում կրոնական նորմերի ու սկզբունքների պահպանման գործընթացի վերահսկման նպատակով: Իսկ ավելի լայն իմաստով Իսրայելի ԶՈՒ-ում Հոգևոր զինվորականի ինստիտուտի գործունեությունը կենտրոնանում է երկրի պաշտպանության հոգևոր ապահովման վրա՝ ներգրավվելով հրեա զինվորականների՝ լինի շարքային զինծառայող, թե բարձրաստիճան սպա, հոգևոր-բարոյական դաստիարակման, մարտական ոգու բարձրացման խնդիրներում:

Հոգևոր զինվորականությունն անմիջական մասնակցություն է ունեցել Իսրայելի պաշտպանության բանակի ներկայացրած բազմաթիվ փաստաթղթերի և հրամանագրերի նախապատրաստման ու մշակման աշխատանքներին, որոնք անմիջականորեն առնչվում են զինվորականության հոգևոր անվտանգության խնդիրներին: Զգալի է Հոգևոր զինվորականի ինստիտուտի ավանդը հրեա զինվորականության վարքականոնի հոգևոր-բարոյական պատրաստվածության գաղափարական և գործնական կիրառության գործում՝ թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական պայմաններում:

Հոգևոր զինվորականությունը երկրի ԶՈՒ Գլխավոր շտաբի դաստիարակության հարցերով վարչության հետ համատեղ ակ-

տիվ մասնակցել է 1992թ. Իսրայելի պաշտպանության բանակի պատրաստած «Հրեա զինվորականի վարքականոնը» կոչվող փաստաթղթի ստեղծման աշխատանքներին, որը նույնպես կրում է հուդայական կրոնաբարոյական նորմերի ազդեցությունը։

Իսրայելի պաշտպանության բանակի Հոգևոր զինվորականի ինստիտուտն ակտիվ գործունեություն է ծավալում նաև երկրի ներքին ու արտաքին տեղեկատվական-քարոզչական ոլորտում, հրատարակում է կրոնաբարոյական և հոգևոր անվտանգությանը վերաբերող գիտակրթական հանդեսներ ու հետազոտություններ, լույս ընծայում հոգևոր գրականություն ու աղոթագրքեր, որոնք նախատեսված են ինչպես երկրի ԶՈՒ զինվորականների, այնպես էլ քաղաքացիական բնակչության հոգևոր-բարոյական դաստիարակության համար։ Հոգևոր զինվորականությունն անմիջական մասնակցություն է ցուցաբերում Իսրայելի բանակի նորակոչիկ զինծառայողների զինվորական երդման արարողակարգի պատրաստման ու կազմակերպման գործընթացին։

Իսրայել պետության կողմից երկրի ԶՈՒ Հոգևոր զինվորականի ինստիտուտին տրվող առանձնակի կարևորության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ վերջինս գործում է Իսրայելի քաղաքացիական Գլխավոր հոգևորականությունից անկախ և անմիջականորեն ենթարկվում է միայն պաշտպանության բանակի Գլխավոր շտաբի պետին, իսկ Գլխավոր հոգևոր զինվորականը նշանակվում և պաշտոնից ազատվում է Գլխավոր շտաբի պետի հրամանով։ Երկրի պաշտպանության բանակի Գլխավոր հոգևոր զինվորականի ենթակայության տակ են գտնվում զինվորական կորպուսների (Կենտրոնական, Հարա-

վային և Հյուսիսային), ինչպես նաև զինվորական գնդերում ու ստորաբաժանումներում գործող հոգևոր զինվորականները, որոնք գտնվում են համապատասխան գնդի, ստորաբաժանման հրամանատարի կամ փոխհրամանատարի անմիջական ենթակայության տակ։

Երկրի ղեկավարությունը կարևոր նշանակություն է տալիս հոգևոր զինվորականության վերապատրաստման կադրային քաղաքականությանը, որը դրված է արդյունավետ հիմքերի վրա։ Իսրայելում հոգևոր զինվորականի վերապատրաստման գործընթացն իրականացվում է հիմնականում երկրի պաշտպանության բանակում գործող զինվորական ուսումնական հաստատություններում (եբրայերեն՝ «յեշիվոթ-եսդեր»), որտեղ հոգևոր-կրոնական դասընթացները համադրվում են մարտական պատրաստվածության տարբեր մասնագիտացումների հետ։ Հոգևոր զինվորական կադրեր վերապատրաստվում են նաև երկրի հոգևոր քաղաքացիական ուսումնական հաստատություններում։

Հոգևոր զինվորականությունը մարտական գործողություններում

1948թ. Իսրայելի պաշտպանության բանակում Հոգևոր զինվորականության ինստիտուտի հիմնադրման գործընթացն առնչվում է սիոնիստական շարժման գաղափարախոսության և մասնավորապես նրա հոգևորական դասի հետ, որի ներկայացուցիչներից շատերն անդամագրվեցին նորակազմ ինստիտուտի շարքերում։ Դա է, թերևս, այն հիմնական պատճառներից մեկը, որ հոգևոր զինվորականությունը հանդիսանում է Իս-

րայելի պաշտպանության բանակի առավել պահպանողական ուժերից մեկը և առանձնանում է արաբա-իսրայելյան հակամարտության հիմնահարցերում համեմատաբար անզիջում մոտեցումներով ու դիրքորոշմամբ: Ավելին, լինելով սիոնիստական շարժման հետևորդներ (գաղափարախոսություն, որը կարևորագույն նշանակություն ունեցավ Իսրայել պետության ստեղծման ու կայացման, ինչպես նաև համայն հրեության համախմբման գործընթացներում)՝ սիոնիստ հոգևորական այրերը կոչված էին Հոգևոր զինվորականի ինստիտուտի շարքերը համալրել ոչ միայն որպես զուտ հոգևորականներ, այլև հրեության և Իսրայել պետության անվտանգության պաշտպանության առաջամարտիկներ: Սիոնիստ հոգևորականության զգալի հատվածը հայտնի է երկրի պետականաշինությանը մատուցած մարտական փայլուն ծառայություններով. նրանցից շատերն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել 20-րդ դարի սկզբին Պաղեստինում հրեական պետականության ստեղծման համար մղված պայքարին:

1948թ. Իսրայելի Զինված ուժերի Հոգևոր զինվորականության ինստիտուտի առաջին ղեկավար նշանակվեց գեներալ-մայոր Շլոմո Գորենը[1]: Վերջինս 18 տարեկանում դառնալով հոգևորական՝ անդամագրվեց Իսրայելի Զինված ուժերի հիմքը հանդիսացող Հագանա խմբավորմանը և մասնակցեց 1936-1939թթ. Պաղեստինում ձևավորված հրեական բնակավայրերի՝ արաբներից պաշտպանության մարտական գործողություններին: Զգալի է Շլոմո Գորենի՝ որպես հոգևորականի և մարտիկի ավանդը ինչպես 1948թ. անկախության համար մղված ռազմա-

[1] http://www.eleven.co.il/article/11268, Горен Шломо.

կան գործողություններին, այնպես էլ 1956թ. Սինայի ռազմարշավին: Նա անմիջական մասնակցություն է ցուցաբերել նաև 1967թ. վեցօրյա պատերազմին. իսրայելական զորքերի կողմից Երուսաղեմի Տաճարի լեռի և Հին քաղաքի գրավման ժամանակ Իսրայելի պաշտպանության բանակի գլխավոր հոգևոր զինվորականը բարձրացավ Տաճարի լեռան վրա՝ փողհարելով և ձեռքին խորհրդանշաբար պահելով Թորայի թերթիկը, ինչն ապշեցուցիչ ազդեցություն էր թողել մարտի մասնակիցների վրա (նկատենք, որ փողհարումը հին հրեական ավանդույթում կարևոր խորհրդանշական իմաստ ունի և կոչված է համախմբելու հրեա ժողովրդին օրհասական իրադրությունում կամ պատերազմում):

Իսկ Երուսաղեմի ազատագրման հաջորդ օրը՝ Խևրոն քաղաքի ազատագրման մարտական գործողությունների ընթացքում, իսրայելական զորքի վերջնական հարձակման գործողության ժամանակ նա ցուցադրաբար մոտեցավ Խևրոն քաղաքի «Նախահայրերի քարանձավին» (Աբրահամի և Սառայի, Իսահակի և Ռեբեկայի գերեզմանները), հրազենային կրակահերթով բացեց փակված դուռը, փողհարեց և ներս մտավ քարանձավ՝ Թորայի թերթիկը ձեռքին և աղոթք կարդալով: Նրա մուտքը «Նախահայրերի քարանձավ» խորհրդանշական իմաստ ունի հրեության պատմության մեջ. խնդիրն այն է, որ Շլոմո Գորենն առաջին հրեան էր, որը մուտք գործեց «Նախահայրերի քարանձավ» վերջին 700 տարիների ընթացքում՝ այն ժամանակվանից սկսած, երբ 13-րդ դարի սկզբներին մամլյուք առաջնորդ Բեյբարսը հրաման արձակեց, որով արգելվում էր հրեաներին ու քրիստոնյաներին մուտք գործել քարանձավ: Շլոմո Գորենի գործողությունները բարձրացրին իսրայելական զորքի մարտական

ոգին և զգալի ազդեցություն ունեցան պատերազմում իսրայելական կողմի վերջնական հաղթանակի արձանագրման գործում[1]: Շլոմո Գորենի լուսանկարը, որտեղ նա պատկերված է փողհարելիս, դարձավ 1967թ. հունիսին վեցօրյա պատերազմի հաղթանակի կարևորագույն խորհրդանիշը:

Հոգևոր զինվորական այրերը, իսրայելական ռազմական գործողություններին հրեա զինվորների հետ կողք կողքի ուղղակի մասնակցություն ունենալուն զուգահեռ, էական աշխատանք են տարել տեղեկատվական պատերազմներում, որոնք առանցքային նշանակություն են ունեցել մարտի դաշտում հրեա զինվորականության մարտական ոգու բարձրացման և հակառակորդին բարոյալքելու առումով:

Ռազմական գործողությունների նախաշեմին հոգևոր զինվորականության քարոզչական քաղաքականությունն ակտիվացել է հատկապես իսրայելական վերջին մարտական գործողությունների ընթացքում (պայքար «Համասի», «Հիզբալլահի» մարտիկների դեմ): Նման տեղեկատվական քարոզչության վառ օրինակներից է 2009թ. գարնանը Գազայի սեկտորում իսրայելա-պաղեստինյան հերթական ռազմական բախումների ընթացքում Իսրայելի հոգևոր զինվորականության ղեկավարության ձեռնարկած տեղեկատվական գործողությունը: Որոշ տվյալների համաձայն, մարտական գործողությունների նախաշեմին հոգևոր զինվորականությունը տարածեց թերթիկներ և հոդվածներ, որոնցում կոչ էր արվում պայքարել հանուն սուրբ հողերի պաշտպանության. ասվում էր, որ «հրեաներին Իսրայելի հողերը տրվել են Աստծո կողմից՝ որպես պարգև, և իրենց պարտա-

[1] http://ru.wikipedia.org/wiki/Горен Шломо.

կանությունն է պայքարել ի շահ դրանց պաշտպանության»։ Ուշագրավ էր նաև 2008թ. դեկտեմբերի վերջին Իսրայելի ձեռնարկած «Ձուլածո արճիճ» ռազմական գործողության ժամանակ Գլխավոր հոգևոր զինվորական Ավի Ռոզնիկ Ռոնցկիի կողմից զինվորների շրջանում թերթիկների տարածումը՝ «Մասնակցի՛ր իմ պայքարին» (Go fight my fight) կոչով։

Սիոնիստ հոգևոր զինվորականության՝ հոգևորականի և մարտիկի համատեղման ավանդույթն իր շարունակությունն է գտել նաև Իսրայելի պաշտպանության բանակի Հոգևոր զինվորականի ինստիտուտի հետագա կադրերի բարոյահոգևոր դաստիարակությունում և մարտական կեցվածքում։ Հոգևոր զինվորականության սպայակազմի ներկայացուցիչների մեծ մասը, որոնք հանդիսանում են Պաշտպանության բանակի զինվորական ուսումնական հաստատությունների շրջանավարտներ, զինծառայությունն անց է կացրել մարտական ստորաբաժանումներում և ակտիվ մասնակցություն ունեցել տարբեր մարտական գործողությունների։

Պատերազմական գործողությունների ընթացքում Իսրայելի պաշտպանության բանակի դիվիզիաներում հավաքագրվում են պահեստայիններ, նրանցից կազմվում են հոգևոր զինվորականների ջոկատներ, որոնք պատասխանատու են նաև մարտի դաշտում զոհված հրեա զինվորների և սպաների հուղարկավորության, ինչպես նաև անհայտ կորած զինվորների հայտնաբերման գործում։ Նշենք, որ հրեա զինծառայողը պաշտոնապես հանդիսանում է զոհված, որպես կանոն, Իսրայելի Պաշտպանության բանակի Գլխավոր զինվորական հոգևորականի կողմից այդ փաստը հաստատվելուց հետո միայն։

Իսրայելի Պաշտպանության բանակի հոգևոր զինվորական ղեկավարները կոշտ դիրքորոշում ունեն նաև հրեության մեջ տարածված «յուրաքանչյուր հրեա ռազմագերու ամեն գնով ազատագրելու» գաղափարի նկատմամբ: Նրանց կարծիքով՝ նման սկզբունքով առաջնորդվելը նպաստում է հակառակորդի կողմից հրեա զինվորականների առևանգման դեպքերի հաճախակիացմանը՝ դրանով իսկ վտանգելով Իսրայելի ազգային և հոգևոր անվտանգությունը: 1985թ. իրականացված «Ջիբրիլի երկրորդ գործարքի» (Ահմադ Ջիբրիլը «Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատ» ահաբեկչական խմբավորման առաջնորդն է) բանակցություններին, որով ազատ արձակվեցին 1,150 դատապարտված ահաբեկիչներ՝ երեք հրեա ռազմագերիների ազատագրման դիմաց, ընդդիմացավ Իսրայելի բանակի նախկին Գլխավոր հոգևորական Շլոմո Գորենը՝ հայտարարելով, որ դա հակասում է հրեական կրոնաբարոյական ավանդույթներին:

2.4. Հրեա ռազմագերիների հիմնահարցն Իսրայելում

Երկուհազարամյա պետականության բացակայության հանգամանքներում հրեա ժողովուրդն իր գոյապահպանության հարցում ապավինել է հրեա զինվորականությանը՝ որպես իր անվտանգության ապահովման երաշխավորի: Հրեա ժողովուրդը մշտապես կարևորել է հրեա զինվորականության վերաբերյալ դարերի ընթացքում ձևավորված հերոսապատումներն ու հաղթանակները, արժևորել յուրաքանչյուր հրեա զինվորին՝ լինի շարքային, թե զորահրամանատար: Հրեությունը հրեա զինվորի փառաբանման և մեծարման ավանդույթները պահպանեց և զարգացրեց նաև մեր օրերում, երբ դրվեցին հրեական պետա-

կանության հիմքերը: 20-րդ դարի սկզբներին հրեական պետականության կայացման և հատկապես 1948թ. Իսրայել պետության հիմնադրման գործում անգնահատելի էր հրեա զինվորականության՝ որպես հրեության ազգային խորհրդանիշի և ազգային ինքնության մարմնավորողի դերը: Գտնվելով անկայուն տարածաշրջանում և շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված հարևաններով, երբ ռազմական բախումներն ու ահաբեկչության սպառնալիքները դարձել են սովորական երևույթներ, Իսրայել պետության ղեկավարությունը և համայն հրեությունը առանցքային ուշադրություն են հատկացնում հրեա զինվորի բարոյահոգևոր և մարտական պատրաստվածության խնդիրներին, արժևորում յուրաքանչյուր հրեա զինվորի դերը պետության անվտանգության ապահովման գործում:

Յուրաքանչյուր հրեա զինվորի բարձր արժևորման և նրա առանցքային դերակատարման թեմայի ուսումնասիրման շրջանակներում առանձնակի տեղ են զբաղեցնում գերեվարված հրեա զինվորականներին ու նրանց ազատ արձակմանը վերաբերող հարցերը, որոնց կանդրադառնանք առավել մանրամասն: Հետազոտությունում առավել հանգամանորեն ուսումնասիրվում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են գերեվարված հրեա զինվորականների և նրանց ազատ արձակման կրոնադավանաբանական հիմքերը (հուդայականություն), Իսրայել պետության ներքին քաղաքականությունում և միջազգային հարաբերություններում հրեա գերիների ու նրանց ազատ արձակման շուրջ ծավալված զարգացումները և միտումները, Իսրայելում և հրեության շրջանում գերեվարված ու անհայտ հրեա զինվորների հիշողությունը և ազգային համերաշխությունը:

Գերեվարված, անհայտ կորած զինվորների և նրանց ազատ արձակման խնդիրների՝ հրեական փորձի ուսումնասիրությունն ուսուցողական նշանակություն ունի հայ ժողովրդի հաղթական էջերի օրինակով ՀՀ-ում և հայության շրջանում ռազմահայրենասիրական առողջ դաստիարակության սերմանման, իսկ ավելի լայն իմաստով՝ ազգակերտման գործընթացի տեսանկյունից: Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն կտա առավել խորքային պատկերացումներ, իսկ հետագայում նաև՝ հայոց հերոսամարտերի ու հաղթանակների օրինակով գործնական մոտեցումներ ցուցաբերել ՀՀ ԶՈՒ յուրաքանչյուր զինվորականի (շարքային, թե բարձրաստիճան սպա) դերի բարձր արժևորման և ըստ արժանվույն ընկալման համար:

Հրեա ռազմագերիների հիմնախնդիրը հուդայականությունում

Գերեվարված հրեա զինվորի և գերությունից նրա ազատման հիմնահարցն առանցքային տեղ է զբաղեցնում հուդայականությունում: Իսրայել պետությունում հրեա զինվորականի գերեվարման և գերությունից ազատման հիմնախնդիրն ասոցացվում է հրեական կրոնադավանաբանական նորմերի և սկզբունքների հետ: Հրեա զինվորի՝ գերությունից ազատման հիմնահարցն ասոցացվում է «Գեուլա» կամ «Ազատագրում» կոչվող բարեգթության ամենօրյա աղոթքի հետ, որով հրեաներն իրենց շնորհակալությունն են հայտնում Աստծուն Մովսեսի առաջնորդությամբ Եգիպտոսից հրեաներին ստրկությունից փրկելու և ազատագրելու համար: Փաստորեն, Աստված հրեա ժողովրդին ներկայանում է ոչ թե որպես երկնքի ու երկրի արարիչ, այլ որպես ազատագրիչ: Ինչպես արձանագրում են աստվածաբաննե-

րից շատերը, եգիպտական ստրկությունից հրեա ժողովրդի ազատագրման իրողությունը հրեության ազգային ինքնության, հուդայականության կրոնա-գաղափարական առանցքային անկյունաքարերից մեկն է: Հետևաբար, հրեաների և, առաջին հերթին՝ հրեա զինվորականության գերությունից ազատման ու փրկագնի վճարման հիմնախնդիրը, ասոցացվելով եգիպտական գերությունից հրեա ժողովրդի ազատագրման հետ, նույնպես կարևոր տեղ է զբաղեցնում հրեական կրոնադավանաբանական նորմերում և ազգային ինքնությունում:

«Միշնե Թորա»-ի (հրեական առաջին ամբողջական օրենսգիրքը, որը գրել է հրեա հայտնի փիլիսոփա, ռաբբի Ռամբամը) 7-րդ՝ «Աղքատներին բարեգործություն անելու մասին» օրենքներում ասվում է. «Գերիների ազատագրումը նախորդում է աղքատների կերակրմանն ու հոգ տանելուն, և գոյություն չունի մեկ այլ պատվիրան, որն առավել կարևոր լինի, քան գերիների ազատագրումը, քանզի գերին և՛ քաղցած է, և՛ պապակ, և՛ մերկ, և նրա կյանքը մշտապես վտանգի տակ է գտնվում: Նա, ով աչք է փակում գերիների ազատման վրա և խուսափում դրանից, դրանով իսկ խախտում է Թորայի («Մովսեսի գրքերը»- *հեղ.*) մեկնություններից և գրություններից շատերը»[1]:

Հրեության ազգային և կրոնադավանաբանական ավանդույթներում գերեվարված հրեաների (հատկապես զինվորների)՝ ամեն գնով ազատագրման սկզբունքը դարերի ընթացքում անհրաժեշտություն առաջացրեց հրեական այլ իրավակրոնական մեկնաբանությունների համար: Դրա հիմնական պատճառն այն

[1] http://www.chabad.org/library/article_cdo/aid/682956/jewish/Mishneh-Torah.htm, The Rambam's Mishneh Torah.

էր, որ գերեվարված հրեային ցանկացած փրկագնով ազատագրելու հրեության պատրաստակամությունը հանգեցրեց թշնամիների կողմից հրեաների առևանգման դեպքերի հաճախակիացմանն ու պահանջների առաջադրմանը: Այդ պատճառով հնագույն ժամանակաշրջանում անհրաժեշտություն առաջացավ որոշակի սահմանափակումներ մտցնել գերեվարված հրեայի ազատագրման և փրկագնի հարցերում, առաջ եկավ «գերիներին ազատագրում են իրենց ունեցած գնի սահմաններում և ոչ ավելին» սկզբունքը, ինչը հիմնականում պայմանավորված էր սոցիալական և տնտեսական շարժառիթներով[1]:

Սակայն հետագայում՝ միջնադարյան ժամանակաշրջանից սկսած, այդ սկզբունքի պաշտպանության ջատագովներն աստիճանաբար տեղի տվեցին և դիրքերը զիջեցին «գերեվարված հրեաներին ցանկացած գնով ազատագրելու» սկզբունքի համախոհներին, որոնց համար գերության մեջ գտնվող հրեայի կամ հրեաների ազատումը դիտվեց առաջնային և հրեական համայնքների անվտանգության ապահովման կարևորագույն նախապայման: Այս միտումը դարերի ընթացքում այնքան արմատացավ հրեական կրոնադավանաբանական նորմերում և հրեության ազգային ինքնությունում, որ գերիների ազատագրման հարցում նրանք սկսեցին առաջնորդվել «ցանկացած գնով և նույնիսկ ավելին» սկզբունքով:

Հուդայական կրոնա-գաղափարական մեկնաբանություններում կարևորվում է եգիպտական ստրկության ժամանակաշրջանը նաև նրանով, որ այն ստիպեց հրեա ժողովրդին

[1] http://www.threeda.ru/iudaizm/ponyatiya-v-iudaizme/plennyx-vykup.html, ПЛЕ ННЫХ ВЫ КУП.

առավելագույնս արժևորել անհատի և իր մերձավորի ազատության գաղափարը: Պատահական չէ, որ Թորայի՝ մերձավորի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ցուցաբերման պատվիրաններում անպայման հիշատակվում է Եգիպտոսում հրեա ժողովրդի ստրկության հանգամանքը: Այստեղից էլ բխում է հուդայականությունում ամրագրված այն սկզբունքը, ըստ որի, փաստորեն, հրեա ժողովրդի «Ազատագրումը» հաջողված է յուրաքանչյուր հրեայի՝ իր մերձավորի ազատության բարձր արժևորումից ու դրա կարևորության գիտակցումից ելնելով: Ասել է թե՝ հրեա ժողովրդի ազատագրումը ենթադրում է յուրաքանչյուր հրեա ռազմագերու ազատագրում: Ուստի տրամաբանված է յուրաքանչյուր հրեա ռազմագերու ցանկացած գնով ազատագրման տարածված սկզբունքը, որի համաձայն՝ քանի դեռ գոնե մեկ հրեա կգտնվի գերության մեջ, հրեական համայնքի և նրա անդամների անվտանգությունը կլինի սպառնալիքի ներքո: Փաստորեն, հրեական կրոնադավանաբանական մեկնություններում այդ մոտեցումը կարելի է բացատրել նաև հրեա ժողովրդի պատմության ընթացքում տեղ գտած ողբերգական էջերի, այդ թվում և եգիպտական ստրկության «կրկնման անթույլատրելիության» սկզբունքից ելնելով:

Հայտնի է, որ հուդայականությունում զգալի տեղ է հատկացվում սինագոգեր կառուցելու նպատակով հավաքվող ֆինանսական միջոցների խնդրին, որն ամրագրված է առանձին կրոնաիրավական նորմերում: Սակայն առավել կարևոր է համարվում հրեա ռազմագերիների ազատագրման հարցը: Վերջիններիս ազատագրման համար, ըստ հուդայականության, «պետք է անել ամենը, հավաքագրել բոլոր միջոցները, նույնիսկ

սինագոգ կառուցելու համար նախատեսված միջոցները» («Միշնե-Թորա», Աղքատներին բարեգործություն կատարելու մասին օրենքները, 8:11)։ Ռազմագերիների ազատագրման մասին կրոնադավանաբանական օրենքը համարվում է այն սակավաթիվ օրենքներից մեկը, որոնք վերաբերում են կյանքի և մահվան խնդիրներին։ Այդ է պատճառը, որ հուդայականությունում և հրեական կրոնական օրենսդրությունում այն համարվում է վերադաս շատ այլ օրենքներից։

Հրեա ռազմագերիների ազատման խնդիրը

Գերեվարված հրեա զինվորականի ազատագրման թեման ոչ միայն չի կորցրել արդիականությունն Իսրայել պետության հիմնադրումից հետո, այլև դարձել է վերջինիս հասարակության և համայն հրեության ազգային ինքնության կարևոր բաղադրիչներից մեկը։ 20-րդ դարի սկզբներին հրեական պետականության հիմնադրման տարիներին և հատկապես 1948թ. Իսրայել պետության ստեղծումից հետո, երբ էլ ավելի արժևորվեց հրեա զինվորականության դերը հրեության և Իսրայել պետության անվտանգության ապահովման հարցում, գերությունից յուրաքանչյուր հրեա զինվորի ցանկացած գնով ազատագրման և հայրենիք վերադարձման հիմնահարցը դարձավ առավել քան կարևոր։ Արդյունքում՝ ամրապնդվեցին հրեա զինվորականին ցանկացած գնով ազատելու և անհրաժեշտության դեպքում՝ «նույնիսկ ավելին» սկզբունքի ու նրա համախոհների դիրքերը։

Իսրայել պետության ստեղծումից հետո հրեա զինվորի գերությունից ազատագրման հիմնահարցում իրենց դիրքերը շարունակեցին պահպանել հուդայականության կրոնա-գաղափա-

րական սկզբունքները։ Այնուամենայնիվ, դրանց կողքին զգալիորեն մեծացան ազգային ինքնության և պետականության գաղափարակիր հիմքերը։ Վերաձևակերպվեցին նաև եգիպտական գերությունից հրեա ժողովրդի ազատագրման վերաբերյալ նախկինում եղած կրոնական պատկերացումները, որոնք իրենց տեղը զիջեցին ազգային ինքնության և կեցության հարցերին։

Իսրայել պետության հիմնադրումից հետո հարևան պետությունների (ռազմականացված կազմակերպությունների) հետ պատերազմների և ռազմական բախումների, ինչպես նաև մշտապես սպառնացող ահաբեկչությունների սպառնալիքների հետևանքով Իսրայելում առանձնակի կարևորություն է տրվում յուրաքանչյուր հրեա զինվորականին, նրա դերակատարմանը հրեության և Իսրայել պետության անվտանգության ապահովման հարցում։ Իսկ ամեն մի հրեայի՝ գերությունից ազատագրման հիմնահարցը դարձել է օրակարգային։ Դա են հաստատում Իսրայել պետության կողմից հրեա գերիների փոխանակման և հայրենիք վերադարձման բազմաթիվ դեպքերը, որոնց ուսումնասիրությունը տպավորիչ է։

Այսպես, Իսրայել պետության անկախության համար մղված պատերազմից անմիջապես հետո վերջինիս ղեկավարությունն արաբական երկրների հետ իրականացրեց գերիների փոխանակում, որի արդյունքում իսրայելական կողմն ազատ արձակեց 6.306 արաբ ռազմագերու՝ 885 հրեա ռազմագերու դիմաց։ Առավել տպավորիչ է 1956թ. Սինայի ռազմարշավից հետո իրականացված ռազմագերիների փոխանակման վիճակագրությունը, որի արդյունքում Իսրայելն ընդամենը 4 զինվորի ազատ արձակման դիմաց Եգիպտոսին հանձնեց 5.500 եգիպտացի ռազմագերու։

Մեկ այլ օրինակ. 1967թ. վեցօրյա պատերազմից հետո իսրայելական կողմն իր 15 զինվորի ազատ արձակման համար գերությունից ազատեց և արաբական երկրներին հանձնեց գերեվարված բոլոր արաբ ռազմագերիներին: Այդ ժամանակ Սիրիայի հետ ստորագրվեց նաև մի առանձին պայմանագիր, որի շրջանակներում Իսրայելն ազատ արձակեց 572 սիրիացի ռազմագերու՝ գերեվարված հրեա օդաչուի և երկու հրեա զինվորների ու գերության ընթացքում մահացած մեկ այլ հրեայի ազատագրման դիմաց: 1978թ. «Լիտանի» կոչվող ռազմական գործողությունից հետո Իսրայել պետությունը սկսեց ռազմագերիների փոխանակման գործարքներ իրականացնել նաև Լիբանանում տեղակայված ռազմականացված խմբավորումների հետ: 1978թ. ապրիլի 5-ին կողմերի միջև ռազմական բախումների արդյունքում գերեվարված Աբրահամ Ամրամի ազատագրման դիմաց 1979թ. մարտի 14-ին իսրայելական կողմն ազատ արձակեց հակառակորդի 76 ռազմագերի: 1982թ. սեպտեմբերին, լիբանանյան առաջին պատերազմի արդյունքում, երբ գերեվարվել էր ութ հրեա զինվորական, ստորագրվեց «Ջիբրիլի առաջին գործարքը»: 1983թ. նոյեմբերին ազատ արձակվեց գերեվարված ութ հրեա զինվորից վեցը, որի դիմաց Իսրայելի ղեկավարությունն ազատ արձակեց հակառակորդի 4.700 և Իսրայելի բանտերում գտնվող ևս 65 ռազմագերու: 1985թ. մայիսի 21-ին իրականացվեց «Ջիբրիլի երկրորդ գործարքը», որի արդյունքում ազատ արձակվեց 1.150 դատապարտված ռազմագերի, որոնց դիմաց գերությունից փրկվեց երեք հրեա զինվոր, որոնցից երկուսը վերը հիշատակված երկու հրեա գերեվարված զինվորներն էին:

2004թ. Իսրայելն ազատ արձակեց հակառակորդի 450

ռազմագերու, ինչի դիմաց հայրենիք վերադարձրեց երեք հրեա գերեվարված զինվորների դիակները։ Իսկ 2008թ. հունիսի 1-ին լիբանանյան կողմին հանձնվեց «Հիզբալլահի» օգտին Իսրայելի դեմ իրականացրած լրտեսության մեղադրանքով դատապարտված Նասիմ Նասերը, որի դիմաց Իսրայելը վերջինից ստացավ 2006թ. ամռանը երկրորդ լիբանանյան պատերազմի արդյունքում զոհված հրեա զինվորների մասունքները։

2006թ. հունիսի 25-ին պաղեստինյան «Համաս» խմբավորման զորայինները ներխուժեցին Իսրայել պետության տարածք (Քերեմ-Շալոն բնակավայրի մոտակայքում) և հանկարծակի հարձակվեցին մոտակա իսրայելյան զորամասային կետերից մեկի վրա, որի արդյունքում զոհվեց երկու իսրայելցի զինծառայող, չորսը վիրավորվեց, գերի վերցվեց ավագ սերժանտ Գիլադ Շալիթը։ Իսրայելցի զինվորականի փոխանակման դիմաց «Համասի» ներկայացուցիչներն Իսրայելի ղեկավարությունից պահանջեցին Իսրայելի բանտերից ազատ արձակել մինչև 18 տարեկան կանանց և երեխաներին։ Երկու օր անց՝ հունիսի 28-ին, Իսրայելը նախաձեռնեց «Ամառային անձրևներ» կամ «Գիլադ Շալիթի ազատագրման օպերացիա» ռազմական գործողությունը, որի արդյունքում կարողացավ ձերբակալել «Համաս» խմբավորման 64 անդամի, այդ թվում Պաղեստինի ազգային վարչության (ՊԱՎ) 8 նախարարի։ Իսրայելի և պաղեստինյան իշխանությունների միջև եգիպտական կողմի միջնորդությամբ բանակցություններում ՊԱՎ կառավարությունը պահանջում էր Իսրայելից ազատ արձակել 1.000 պաղեստինցի բանտարկյալի, ինչպես նաև մինչև 18 տարեկան կանանց ու երեխաներին՝ մինչև հուլիսի 4-ը, այլապես «իսրայելցի սերժանտի գործը

կփակվի»։ Սակայն Էհուդ Օլմերթը մերժեց այն։

2006թ. հուլիսի 12-ին սկսվեց լիբանանյան երկրորդ պատերազմը (հուլիս-օգոստոս), երբ «Հիզբալլահի» զորայինները հրթիռա-ականանետային հարձակումներ սկսեցին Իսրայելի հյուսիսում։ Այդ գործողության արդյունքում սպանվեց 8 իսրայելցի զինծառայող, վիրավորվեց 12-ը։ Զոհված իսրայելցի զինծառայողներ Էհուդ Գոլդվասերի և Էլդադ Ռեգևի մարմինները գերվեցին։ Նրանց մասունքների ազատման համար «Հիզբալլահ» խմբավորման ղեկավարները պահանջեցին Իսրայելի բանտերից ազատ արձակել 1.000 պաղեստինցու։ Սակայն հուլիսի 13-15-ը, ինչպես հայտարարեցին երկրի ռազմական տեսչության պատասխանատուները, երկու հրեա զինվորականի մասունքները գերությունից ազատելու նպատակով իսրայելական կողմը լայն ճակատով անցնում է հարձակման, օդային ռմբակոծություններ իրականացնում Բեյրութի, Տրիպոլիի, Սիդոնի, Բաալբեքի և այլ շրջանների ուղղություններով։

2008թ. հուլիսի 16-ին՝ գերեվարումից երկու տարի անց, իսրայելցի զինծառայողներ Էհուդ Գոլդվասերի և Էլդադ Ռեգևի դիակները վերադարձվեցին Իսրայել։ Դրա դիմաց իսրայելական կողմը բանտից ազատ արձակեց հայտնի լիբանանցի ահաբեկիչ Սամիր Կունտարին, որը 1979թ. դատապարտվել էր քառակի ցմահ բանտարկության հրեա ընտանիքի սպանության մեղադրանքով։ Բացի այդ, Իսրայելի ղեկավարությունը պարտավորություն վերցրեց «Հիզբալլահ» խմբավորմանը հանձնել պաղեստինցի և լիբանանցի գրոհայինների 200 դի (օպերացիան կոչվում էր «Եվ վերադարձան որդիները»)[1]։

[1] http://jewish.kiev.ua/news/1678/, В Израиле прошли похороны Эхуда Гольдвассера и Эльдада Регева.

Հարկ է նշել, որ հրեա զինվորականներ Էհուդ Գոլդվասերի և Էլդադ Ռեգևի ինքնությունը հաստատելու նպատակով իսրայելական կողմի համապատասխան մասնագետներն անցկացրին ԴՆԹ փորձաքննություն, որը հաստատեց, որ դրանք զոհված երկու հրեա զինվորների մասունքներն են: Ի դեպ, մինչև իսրայելական կողմից ԴՆԹ փորձաքննության անցկացումը նման հետազոտություն իրականացրեց նաև ՄԱԿ-ը, սակայն իսրայելական կողմը որոշ կասկածներ ուներ այդ փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

Իսրայելցի մեկ այլ ռազմագերու՝ Գիլադ Շալիթի ազատման և հայրենիք վերադարձման բանակցություններն արդյունք տվեցին միայն 2011թ., երբ այդ տարվա հոկտեմբերի 18-ին նրան ազատ արձակեցին՝ 1027 պաղեստինցի ձերբակալվածի ազատ արձակման դիմաց:

Անհայտ զինվորի խնդիրը

Հուդայականությունում հրեաների ստրկության և ռազմագերիների ազատագրման հիմնահարցի ուսումնասիրությունում կարևոր են նաև հրեական անունների դերն ու նշանակությունը: Հատկանշական է, որ եգիպտական ստրկությունից հրեա ժողովրդի ազատագրման կարևոր նախադյալներից մեկն էլ այն է, որ վերջինս ավանդաբար պահպանել է իր նախնիների անունները: Թորայի հինգ գրքերից մեկը՝ «Ազատագրման գիրքը», որը վերաբերում է Եգիպտոսից Մովսեսի առաջնորդությամբ հրեա ժողովրդի ազատագրման պատմությանը, կրում է «Շեմոթ» խորագիրը, որը նշանակում է «Անուններ»: Խնդիրն այն է, որ հուդայականությունում հրեաների Աստվածը, որը կրում է տասնյակից

ավելի անուններ, ներկայանում է նաև «Հա-Շեմ» անվամբ, որը նշանակում է «Անունը» (որոշիչ հոդով)։ Աստծո անունը Հաշեմով փոխարինելը բացատրվում է նրանով, որ հրեաները պատիվ ունեն ամեն առիթով Աստծո անունը չտալու և հիշատակելու նրան միայն աղոթքներում։ Համաձայն հրեա և այլ կրոնագետների և աստվածաբանների մեկնաբանությունների, Թորայի «Շեմոթ» գրքում հրեա ժողովրդի ներկայացուցիչներին «Անուններ»-ով, փաստացի՝ Աստծո անունով կոչելու հանգամանքը միտված է ցույց տալու Բարձրագույնի և հրեա ժողովրդի միության գաղափարը։

Այստեղից էլ գալիս է ազգությամբ յուրաքանչյուր հրեայի անվան խորհրդանշական կարևորությունը, որը նույնպես ունի կրոնական-արժեքաբանական հիմքեր։ Անվան խորհրդանիշն առավել մեծ բարոյական և արժեքաբանական նշանակություն է ստանում հատկապես հրեա զինվորականության շրջանում։ Հրեությունում բացասաբար են մոտենում «անհայտ զինվոր», «անհայտ զինվորի գերեզման» հասկացություններին։ Խնդիրն այն է, որ զինվորականը, լինելով «անհայտ» և փաստորեն՝ «անանուն», դրանով իսկ հակասում է հուդայականությունում «անվան» շուրջ գործող բարոյական սկզբունքներին և օտարվում իր ինքնության արմատներից։ Խորհրդանշական է հայտնի հրեա բանաստեղծ Յեհուդա Ամիխայի «Մենք չունենք անհայտ զինվորներ» բանաստեղծությունը, որտեղ ասվում է. «Մենք չունենք անհայտ զինվորներ, մենք չունենք անհայտ զինվորների շիրիմներ... և բոլոր զոհվածները վերադառնում են տուն, և նրանք բոլորն էլ ունեն անուններ»[1]։

[1] http://kuking.net/my/weblog_entry.php?e=4606

Մյուս կողմից, հրեությունում անհայտ հրեաներին և հատկապես անհայտ զինվորականներին «անվերապահորեն անվանակարգելու» հիմնախնդիրն ուղղակիորեն կապակցվում է հրեության պատմությունում տեղ գտած ողբերգական էջերի հետ: Դրանով իսկ անհայտ զինվորների «բացահայտման» հարցը վերաբերում է հրեության ազգային հիշողության վերականգնման գործընթացին, որտեղ առաջնակարգ նշանակություն են ստանում նացիստների դեմ պայքարած և վերջիններիս զոհ գնացած յուրաքանչյուր հրեայի և նրա անվան հիշատակումն ու փառաբանումը:

2.5. Հրեությունում Իսրայելի զինվորականության աջակցման ծրագրերը

Իսրայելի պաշտպանության բանակը, երկրի կառավարությունից բացի, զգալի հոգևոր-բարոյական, ֆինանսական և նյութական օգնություն է ստանում Իսրայելում և նրա սահմաններից դուրս գործող հրեական ազգային կենտրոններից ու բարեգործներից: Զինվորականության աջակցման ծրագրերին ներգրավված հրեական կենտրոնները կարևոր առաքելություն են կատարում ինչպես հրեա զինվորականության հոգևոր և նյութական կարիքների բավարարման, միջազգային տեղեկատվական դաշտում նրանց առաքելության արժևորման, այնպես էլ Իսրայել-հրեություն կապերի ամրապնդման համատեքստում:

Հրեական կենտրոններ

1981թ. հիմնադրված «Իսրայելի պաշտպանության ուժերի ընկերներ» կենտրոնի (http://www.israelsoldiers.org/mobiles.php)

նպատակն է Իսրայելի ԶՈՒ երիտասարդ զինվորականների (կին, թե տղամարդ) սոցիալական, կրթական, մշակութային ծրագրերի ապահովումը՝ ի շահ Իսրայել պետության անվտանգության: Կենտրոնը նորարարական ծրագրերով աջակցում է զոհված և կարիքավոր հրեա զինվորների ընտանիքներին, մարտական գործողությունների մասնակից պահեստային զինվորականությանը: Կազմակերպությունը գործում է 15 մասնաճյուղերի միջոցով, որոնք տեղակայված են հրեական առավել խոշոր համայնքներում: Կազմակերպության ներկայացուցիչներն ու հովանավորները կանոնավոր այցելում են Իսրայելի ԶՈՒ տարբեր զորամիավորումներ, հանդիպում զինվորականության հետ, տեղում ծանոթանում նրանց խնդիրներին: Կազմակերպությունն իր էլեկտրոնային կայքի և հասարակական լայն կապերի միջոցով ակտիվ աշխատանքներ է տանում նվիրատվությունների հավաքման ուղղությամբ: «Իսրայելի պաշտպանության ուժերի ընկերներ»-ի կարգախոսն է՝ «Հրեա զինվորականության գործը Իսրայել պետության պաշտպանությունն է, մեր գործը՝ հրեա զինվորականության պաշտպանությունը»:

Հրեա զինվորականության աջակցման գործում զգալի է «Լիբի» Իսրայելի պաշտպանության հզորացման հիմնադրամի (Libi The Fund For Strenghening Israel's Defense /http://www.libifund.org.il/Libi/ENG/Making_a_Difference/) ավանդը, որը հետևողական է զինվորների կրթական, բժշկական, սոցիալ-հասարակական օգնության ցուցաբերման հարցում: «Լիբի»-ն առաջնորդվում է սիոնիստական հոգևոր-բարոյական հիմնարար սկզբունքներով՝ Իսրայել պետության և հրեության պաշտպանության բարձրագույն առաքելության գիտակցում, սեր և նվիրվածություն

առ հայրենիք։ Հիմնադրամն ակտիվ է հրեությունում և այլազգիների շրջանում ուղիղ կապով նվիրատվական ակցիաների կազմակերպման հարցերում։ «Լիբի»-ն ներկայացուցչություն ունի նաև ԱՄՆ-ում՝ «Լիբիի ամերիկացի ընկերներ» կազմակերպություն (http://www.friendsoflibi.org), որն աջակցություն է ցուցաբերում հրեա զինվորականությանը բժշկական, սոցիալ-հոգեբանական և ֆինանսական ուղղությամբ։

1897թ. հիմնադրված ԱՄՆ սիոնիստական կազմակերպության շրջանակներում իրականացվող «ԱՄՆ սիոնիստական կազմակերպության համալսարանական նախաձեռնությունների համացանցը» (http://www.zoa.org/content/on-campus.asp) վերջերս սկսել է նոր գործընկերային նախաձեռնություն, որի նպատակն է Իսրայելի պաշտպանության ուժերի զինվորականության հետ հրեա ուսանողության կապերի հաստատումն ու զարգացումը (էլեկտրոնային հասցեների փոխանակում, հանդիպումների կազմակերպում, նվիրատվությունների հավաքում)։

Կամավորական նախաձեռնություններ

Իսրայելում զինծառայությանն իսրայելցիների և հրեական համայնքների ներկայացուցիչների ներգրավման ոլորտում մեծ հեղինակություն է վայելում Իսրայելի պաշտպանության ուժերի «Մահալ» կամավորական կազմակերպությունը (http://www.mahal-idf-volunteers.org)։ Այն ակտիվ գործունեություն է ծավալում Իսրայելի ԶՈՒ-ում կամավորականների ընդգրկման և վերապատրաստման գործում։ Կազմակերպության ծրագրերը նպատակ ունեն աջակցել Իսրայել պետության պաշտպանու-

թյան ուժեղացմանը, ինչպես նաև հրեական համայնքների համար վերապատրաստել երիտասարդ և փորձառու առաջնորդներ։ «Մահալ»-ի՝ այսպես կոչվող «Իսրայելի պաշտպանության բանակի ծրագիրը» նախատեսված է 24 տարեկանից ցածր արական և 21 տարեկանից ցածր իգական սեռի բոլոր ներկայացուցիչների համար և բաղկացած է 18-ամսյա զինծառայության դասընթացից։ Առանձին ծրագիր է գործում նաև երկրից դուրս բնակվող կրոնավոր հրեաների զինծառայությունը կազմակերպելու համար։ «Մահալ»-ի ծրագրերի միջոցով մինչ օրս ավելի քան 40 երկրների շուրջ 1.000 երիտասարդ կամավորներ անդամակցել են Իսրայելի ԶՈՒ-ին։ Կազմակերպությունն իրականացնում է նաև նորակոչիկների համար եբրայերեն լեզվի ուսուցման դասընթացներ, որոնք նպաստում են երկրի ԶՈՒ-ին և նրա անձնակազմին հրեության տարբեր համայնքների ներկայացուցիչների ինտեգրմանը։ Կազմակերպությունն իր էլեկտրոնային կայքի միջոցով աշխատանքներ է տանում Իսրայելում և հրեական համայնքներում ծրագրերի տեղեկատվական շրջանառության և հասանելիության ապահովման ուղղությամբ։ Այդ ծրագրերից մեկն էլ նվիրված է երկրի զինվորականների և հրեա երեխաների միջև նամակագրական կապերի հաստատմանը. կազմակերպության կայքում գործում է այդ խնդիրներին նվիրված առանձին բաժին, որտեղ զետեղված են երեխաների շնորհակալական նամակները հրեա զինվորներին՝ Իսրայելի պաշտպանությանը մատուցած ծառայությունների համար։

Ոլորտում ունեցած ավանդով աչքի է ընկնում «Իսրայելի սկաութների ընկերներ» կազմակերպության՝ 1991թ. հիմնադրած «Գարին ցաբար» կամավորական ծրագիրը, որը քաջալե-

րում է իսրայելցի և հրեության երիտասարդների զինծառայությունը հայրենիքում: Ծրագիրը ֆինանսավորվում է ինչպես երկրի կառավարությունից, այնպես էլ հրեական խոշոր կազմակերպությունների (Հրեական գործակալություն), անհատ հովանավորների կողմից: Այն նախատեսում է զինծառայության համար հատուկ մշակված միջոցառումներ, որոնց շրջանակներում հիմնականում ԱՄՆ-ում և Իսրայելում յուրաքանչյուր տարի կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ՝ նպաստելու հրեա երիտասարդների ինտեգրմանը հայրենիքում զինծառայությանը:

Իսրայելի պաշտպանության բանակի շրջանակներում գործող «Մարվա» կամավորական ծրագիրը հիմնվել է 1982թ. և իրականացվում է Հարավային Նեգևում տեղակայված Գադնա ռազմակայանում: Ծրագրի շրջանակներում, որը տևում է 7-8 շաբաթ, յուրաքանչյուր շաբաթ ընդգրկված ուսանողները դասընթացներ են անցնում ԶՈՒ տարբեր զորամիավորումներում՝ ստանալով ֆիզիկական և հոգևոր-մտավոր պատրաստվածություն: «Մարվա»-ին կարող են մասնակցել աշխարհի տարբեր հատվածներում բնակվող 18-28 տարիքի, եբրայերենին քիչ թե շատ տիրապետող բոլոր հրեա երիտասարդները:

Իսրայելի պաշտպանության ուժերի համակարգում 1982 թվականից գործող մյուս՝ «Սար-էլ» կամավորական ծրագրի («Ծառայություն հանուն Իսրայելի» /http://www.sar-el.org/) շրջանակներում յուրաքանչյուր տարի 5.000 հրեա կամավոր է ժամանում Իսրայել՝ հայրենիքում զինծառայության 2-3 շաբաթական դասընթացներ անցնելու նպատակով: Կամավորականներն իրականացնում են տեխնիկական, բժշկական և այլ ծա-

ռայություններ։ «Սար-էլ» ծրագիրը ներկայացված է աշխարհի 30 երկրներում, իսկ կամավորների մեծ հոսքեր լինում են հատկապես ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, ինչպես նաև Բելառուսի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ուկրաինայի կամավորական մասնաճյուղերից։ Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հիմնադրումից մինչև 2004թ. տարեվերջ կամավորական ծրագիրն Իսրայել է բերել ավելի քան 100.000 կամավորի, որոնց 6%-ը հայրենադարձվել և ստացել է Իսրայել պետության քաղաքացիություն։

Իսրայելի պաշտպանության բանակի շրջանակներում գործում է նաև մեկ այլ՝ «Աթուդա» նախաձեռնությունը («Գիտական և հայրենադարձության պահեստազոր նախագիծ»), որը հնարավորություն է տալիս նոր հրեա հայրենադարձներին նախքան հիմնական զինծառայություն անցնելը հավաքագրվել ԶՈՒ պահեստազորում և անցնել համապատասխան դասընթացներ։ Իսրայելի այս կամ այն բուհում ուսումն ավարտելուց հետո միայն նրանք հնարավորություն են ստանում անցնել հիմնական զինծառայության։

Միայնակ զինվորականների խնդիրը

Իսրայելի և հրեության տարբեր համայնքների ավելի քան 30 մասնագիտացած կազմակերպությունների համատեղ ջանքերով հետևողական աշխատանքներ են տարվում ընտանիքից և ազգականներից զուրկ միայնակ զինվորականների աջակցման ուղղությամբ։ Ոլորտում ունեցած զգալի ավանդով առանձնանում է Իսրայելի պաշտպանության բանակի փոխգնդապետ, ներկայում պահեստային Ցվիկա Լևիի (Լևիի հայրը Բաքվի

հրեա էր) հիմնադրած և նրա նախաձեռնությամբ գործող համահրեական անկախ ծրագիրը: Նախաձեռնության շնորհիվ հետխորհրդային հանրապետությունների և այլ երկրների հարյուրավոր կամավորներ եկել են Իսրայել, անդամագրվել երկրի ԶՈՒ-ին, ձեռք բերել ընտանիքներ: Տարբեր տվյալներով՝ ներկայում Իսրայելի ԶՈՒ-ում զինծառայություն է անցնում 5 հազար միայնակ զինվորական, որոնց մեջ քիչ չեն կանայք: Ի դեպ, նրանց մեծ մասը այլազգիներ են, սակայն բավական բարձր տոկոս է կազմում այն քրիստոնյա և իսլամադավան զինվորականների թիվը, որոնք ցանկություն են հայտնել ընդունել հուդայականություն և դառնալ հրեա (անցնում են «Գիյուրի» դասընթացներ): Զինծառայության ընթացքում միայնակ զինվորականներից շատերն անցնում են հատուկ մարտական պատրաստվածություն, որոնց շարքերում, ծրագրի ղեկավարության համոզմամբ, առանձնանում են հատկապես ուկրաինացիները: Միայնակ զինվորականներից շատերն ակտիվ մասնակցություն են ունեցել Իսրայելի մարտական գործողություններին (լիբանանյան պատերազմ, իսրայելա-պաղեստինյան բախումներ):

Միայնակ զինվորականների նյութական և հոգևոր աջակցության հարցում ակտիվ են նաև Հրեական գործակալությունը, Հերցլիայի միջդիսցիպլինար կենտրոնը, Զինվորականների օգնության ասոցիացիան, 2010թ. հիմնադրված Մայքլ Լևինի հիշատակի կենտրոնը: Վերջիններս կազմակերպում են տարբեր միջազգային գիտաժողովներ, իրականացնում միջոցառումներ՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, ֆինանսական միջոցների հավաքման նպատակներով: Կազմակերպությունները ֆինանսապես աջակցում են նաև այն

միայնակ զինվորականներին, որոնք ցանկություն են հայտնում զինծառայությունից հետո զբաղվել գիտակրթական կամ պետական գործունեությամբ:

Բարեգործական ծրագրեր

«Փաթեթ տնից» (A Package From Home, www.apackagefromhome.org/) հասարակական-բարեգործական միջազգային ծրագիրը, որը մեկնարկել է 2000թ. Երուսաղեմում, իր առջև դնում է Իսրայելի յուրաքանչյուր զինվորի հոգևոր-բարոյական մարտունակության բարձրացման, նրա կատարած գործի արժևորման առաքելություն: Ակցիան կենտրոնանում է հրեա զինվորականությանն առաջին անհրաժեշտության նյութական և ֆինանսական, հոգևոր կարիքների բավարարման հարցերի վրա:

Հրեությունում գործում են նաև այլ բարեգործական կենտրոններ, որոնք իրենց էլեկտրոնային կայքերի միջոցով աջակցում են հրեա զինվորներին սննդի, հագուստի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների սպասարկման ոլորտում: Հրեությունում մեծ հեղինակություն են վայելում «Համբուրգերներ Իսրայելի զինվորականության համար» (http://burgeridf.org), 2002թ. հիմնադրված «Պիցցա Իսրայելի պաշտպանության ուժերի համար» (http://pizzaidf.org) էլեկտրոնային առցանց ծրագրերը:

2.6. Հայրենասիրության հիմնահարցն Իսրայելի հասարակությունում

Հայրենասիրությունը հրեա ժողովրդի ազգային ինքնության կարևոր բաղադրիչներից է: Հրեությունում հայրենասիրության հիմնահարցը, կապված տարբեր ժամանակաշրջանների ռազմա-

քաղաքական գործընթացների հետ, ունեցել է ինքնարտահայտման տարբեր դրսևորումներ։ Հայրենիքից կտրված լինելով՝ հրեության մեջ հայրենասիրության զգացումն ասոցացվել է կորուսյալ հայրենիքի հետ, իսկ հայրենիքի վերադարձի խնդիրը մշտապես դիտարկվել որպես հրեա ժողովրդի բարձրագույն առաքելություններից մեկը։ Նկատենք, սակայն, որ միջազգային ռազմաքաղաքական զարգացումների բերումով կորուսյալ հայրենիքի վերադարձման հարցում եղած խոչընդոտների ներքո հրեության հայրենասիրության զգացումը (սեր և նվիրվածություն առ հայրենիք) հիմնականում ուներ ուտոպիստական ենթատեքստ։

Մյուս կողմից, երկուհազարամյա պետականության բացակայության ժամանակ հրեությունում հայրենասիրությունը (նկատի է առնվում սերն առ հայրենիք) անհամեմատ քիչ էր ասոցացվում ազգային պետության գաղափարի հետ, քան թե 20-րդ դարասկզբին հրեական պետականության կայացման փուլում։ Սակայն այստեղից չի հետևում այն պարզ տրամաբանությունը, որ պետականության բացակայության հանգամանքը նվազեցրել է հրեության հայրենասիրության զգացումը։ Պետականության բացակայությունը զգալիորեն «փոխհատուցվել» է հրեա ժողովրդի հայրենասիրության դրսևորումներով՝ ասոցացվելով հրեա ժողովրդի ազգային ինքնության առանձնահատկություններով և առաջին հերթին հոգևոր-բարոյական ավանդույթներով։ Չպետք է մոռանալ, որ պետականության բացակայության և հայրենիքից կտրվածության պայմաններում հրեության անվտանգության գործում զգալի են եղել հրեա հոգևորականության և հրեական հոգևոր-բարոյական արժեքների դերն ու նշանակությունը։

Հայրենասիրության արժեքի հիմնահարցն Իսրայել պետությունում

Հրեությունում հայրենասիրության հիմնահարցը սկսեց մեծապես պայմանավորվել ազգային և պետական գործոններով 19-րդ դարի վերջերին սկիզբ առած սիոնիստական շարժման զարգացմամբ: Սիոնիստական քաղաքական և կրոնական գաղափարախոսները հրեության անվտանգության պաշտպանությունը տեսնում էին միայն ազգային ազատագրական պայքարի միջոցով կորուսյալ հայրենիքում հրեական պետականության վերահիմնման ճանապարհով: 20-րդ դարասկզբին Պաղեստինում հրեական առաջին բնակավայրերի հաստատման և դրանց ինքնապաշտպանության կազմակերպման ժամանակաշրջանում հայրենասիրության հիմնահարցը՝ իր նախնական «սեր և նվիրվածություն առ հայրենիք» ընկալմամբ, սկսեց տեսական հիմնավորումներից անցում կատարել գործնական կիրառության: Պաղեստինում հրեական պետականության հիմնադրման գործընթացում հրեության հայրենասիրության հիմնահարցը, ազգային և պետական ընկալումներով հանդերձ, շարունակեց դիտարկվել նաև հրեական հոգևոր-բարոյական ժառանգության համատեքստում, ինչով, փաստորեն, հաջողությամբ համատեղվեցին հրեական ազգային ինքնությունն ու պետականության գաղափարաբանությունը կրոնական ավանդույթների հետ:

Հայրենասիրության հիմնահարցը շարունակում է մնալ հրատապ նաև Իսրայել պետության հիմնադրումից հետո: 1948թ. Իսրայելի ստեղծումից հետո ժամանակ առ ժամանակ ծագող արաբա-իսրայելյան ռազմական բախումներն ու պատերազմներն էլ ավելի ընդգծեցին հարցի կարևորությունը: Իս-

րայելի քաղաքական և հոգևոր ղեկավարությունն այսօր շարունակում է զգալի կարևորություն տալ հրեա բնակչության հայրենասիրության խնդիրներին Իսրայել պետության և համայն հրեության անվտանգության ապահովման համատեքստում: Վերջին տասնամյակում հաճախակի են դարձել Իսրայելի հասարակական-քաղաքական շրջանակներում երկրի անմիջական վերահսկողության և աջակցության ներքո հայրենասիրության հիմնահարցի շուրջ կազմակերպվող գիտահետազոտական միջոցառումները:

Այս ուղղությամբ ակտիվ գործունեություն է ծավալում Իսրայելի «Հերցլիա» քաղաքականության և ռազմավարության ինստիտուտը, որը վերջին շրջանում կենտրոնանում է Իսրայելի բնակչությունում հայրենասիրության հիմնահարցի շուրջ իրականացվող սոցիոլոգիական հետազոտությունների վրա: Հետաքրքիր էին ինստիտուտի կողմից 2006-2008թթ. անցկացված «Հայրենասիրությունը և Իսրայելի ազգային անվտանգությունը» «Հերցլիա» հայրենասիրության ամփոփագրի սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, որտեղ ներկայացվում էին Իսրայելի հրեա բնակչությունում հայրենասիրության դրսևորումները[1]:

Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ Իսրայելի հրեա բնակչության շրջանում հայրենասիրության դրսևորումներն ընդհանուր առմամբ կայուն դրական աճի միտում են ունեցել: Արդյունքները նաև ցույց են տվել, որ Իսրայելի հրեա բնակչությունում հրեա հայրենասեր են համարվում կրոնավորները, ինչպես նաև 45-ն անց մարդիկ: 2006-2008թթ. սոցիոլոգիական հետազոտության արդյունքներից կա-

[1] http://www.herzliyaconference.org/Eng/_Uploads/1388Pat_e.pdf

րելի է առանձնացնել Իսրայելի հրեա բնակչության հայրենասիրության հիմնական բաղադրիչները կամ արժեքներն ըստ իրենց կարևորության աստիճանավորման։ Առանձնացվում են 10 հիմնականները.

1. սեր առ հայրենիք – 92%,
2. «պետության համար կռվելու պատրաստակամության» կարևորության գիտակցում - 90,5%,
3. եբրայերեն – 89%,
4. «Իսրայելի պաշտպանության ուժերի զոհված զինվորականների հիշատակի օրվա ազդարարման» խորհրդանիշի կարևորության գիտակցում – 88%,
5. Երուսաղեմ – 88%,
6. հրեական ինքնության հպարտություն – 88%,
7. բնակություն Իսրայելում – 86%,
8. պետության համար կռվելու անհատական պատրաստակամություն – 85,5%,
9. պետության տեխնոլոգիական և գիտական ձեռքբերումներով հպարտություն – 82,5%,
10. քվեարկություն ընտրություններում – 82%։

Ազգային պատկանելություն։ Սոցհարցումներում ներառված է ազգային պատկանելության ասպեկտը։ «Ինչքա՞ն ես հպարտ հրեա լինելով» հարցադրմանը հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 92%-ը, դրական է պատասխանել։ Ընդ որում, այդ տոկոսային ցուցանիշից 70%-ը իրեն համարել է շատ հպարտ, իսկ մնացյալ 22%-ը՝ բավարար հպարտ։ Պետք է նկատել, որ ազգային պատկանելությամբ հպարտ իսրայելցի հրեա-

ների համար առանցքային կետը հուդայականության հետ կապվածություն ունենալն է։

Ազգային խորհրդանիշներ։ Հայրենասիրության խորհրդանիշների ասպեկտի հետազոտական արդյունքները ցույց են տալիս, որ Իսրայելի հասարակությունն ընդհանուր առմամբ չափից ավելի զգայուն է ազգային խորհրդանիշների նկատմամբ։ Ստացված արդյունքների համաձայն, սիոնիստական կազմակերպություններն ու սիոնիստներն առհասարակ առավել շատ են իրենց ասոցացնում և կապված են ազգային խորհրդանիշների հետ։ Հայրենասիրության ընկալման հարցում ազգային խորհրդանիշներին մեծ տեղ են հատկացնում նաև տարեց մարդիկ։

«Ինչքա՞ն եք զայրանում, երբ մարդիկ ոտքի չեն կանգնում զոհված զինվորականների հիշատակի ազդարարման ժամանակ» հարցախույզի արդյունքները ցույց են տալիս, որ Իսրայելի հրեա բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 80%-ը, զայրանում է, ընդ որում, 64%-ը՝ չափազանց շատ, իսկ 16%-ը՝ շատ է զայրանում։ Մյուս հարցախույզում՝ «Իսրայելի պաշտպանության ուժերի համազգեստ կրելը մեծ առավելությո՞ւն է» հարցադրմանը դրական է արձագանքել Իսրայելի հրեա բնակչության կրկին ճնշող մեծամասնությունը՝ 78%-ը, որից 60%-ը մեծապես համաձայնել է առաջադրված հարցադրման հետ, իսկ մնացած 18%-ը՝ ուղղակի համաձայնել է։

Ազգային խորհրդանիշների շարքում առանձնացվում է նաև Իսրայելի ազգային դրոշը. «Ինչքա՞ն եք բարկանում, երբ զգում եք, որ մարդիկ անհարգալից վերաբերմունք են ցուցաբերում Իսրայելի դրոշի նկատմամբ» սոցհարցմանը Իսրայելի

հրեա բնակչության 79%-ը դրական է արձագանքել։ Ընդ որում, նրանց 62%-ը պատասխանել է, որ չափազանց զայրանում է, իսկ մնացյալ 17%-ը՝ շատ է զայրանում։

Մեր և նվիրվածություն առ Հայրենիք։ Սոցիոլոգիական հետազոտությունների ուղղություններից մեկը վերաբերում էր «իր երկրի համար կռվելու պատրաստակամության» հարցմանը, որն իրականացվում էր Իսրայելի և Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության անդամ մի շարք երկրների համեմատականով։ Արդյունքները ցույց են տալիս, որ սոցիարցմանը մասնակից երկրների շարքում ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Իսրայելում, որի հրեա բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 85%-ը, պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտության դեպքում կռվել սեփական երկրի համար։ Իսրայելի ցուցանիշին հաջորդում են Ֆինլանդիայի (83), Միացյալ Նահանգների (63), Կանադայի (60), Իտալիայի (51) և Ֆրանսիայի (50) արդյունքները։

«Ինչքանո՞վ ես հայրենասեր» հարցադրման միջոցով համեմատական էր անցկացվում Իսրայելի և Միացյալ Նահանգների միջև։ Ամփոփված արդյունքների համաձայն, Իսրայելի բնակչության 34%-ը իրեն համարում էր ծայրահեղ հայրենասեր, 27%-ը՝ շատ հայրենասեր, իսկ 24%-ը՝ որոշ չափով հայրենասեր, այն դեպքում, երբ Միացյալ Նահանգների բնակչության 26%-ն է իրեն համարում ծայրահեղ հայրենասեր, իսկ զգալի մասը՝ 46%-ը, շատ հայրենասեր։

Մյուս հարցադրումը վերաբերում էր հայրենասիրության դրսևորմանն ըստ հայրենիքի պատկանելության։ «Ինչքա՞ն ես հպարտ իսրայելցի լինելով» հարցադրմանը Իսրայելի հրեա

բնակչության մեծամասնությունը՝ 77%-ը, պատասխանել է, որ հպարտ է, որ իսրայելցի է, որից 45%-ը՝ շատ հպարտ, իսկ 32%-ը՝ հպարտ (2006թ.)։ 2006թ. արդյունքների համեմատությամբ, 2008թ. որոշակի աճ է նկատվել. Իսրայելի հրեա բնակչության 84%-ն իրեն հպարտ է համարել, որից 53%-ը՝ շատ հպարտ, 31%-ը՝ բավարար հպարտ։

Սոցհարցման արդյունքներից մեկն էլ վերաբերում էր «Կլինեմ իմ երկրի քաղաքացի, քան թե աշխարհի որևէ պետության քաղաքացի» հարցադրմանը, որը նույնպես իրականացվել էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանն անդամակցող երկրների ու Իսրայելի համեմատականով։ Արդյունքների համաձայն, Իսրայելը զբաղեցնում է հարցմանը մասնակցած պետությունների շարքում երկրորդ դիրքը՝ զիջելով միայն Միացյալ Նահանգներին։ Միացյալ Նահանգների բնակչության 90%-ը համաձայնել է այդ հարցադրման հետ, որից 75%-ը՝ մեծապես համաձայնել է, իսկ մնացյալ 15%-ը՝ ուղղակի համաձայնել։ Իսրայելի հրեա բնակչության 88%-ն է համաձայնել «Կլինեմ իմ երկրի քաղաքացի, քան թե աշխարհի որևէ պետության քաղաքացի» հարցադրմանը, որից 71%-ը՝ մեծապես համաձայնել, մնացյալ 17%-ը՝ ուղղակի համաձայնել է։ Իսրայելի արդյունքները գերազանցել են հարցմանը մասնակցած այնպիսի երկրներինը, ինչպիսիք են Հունգարիան, Կանադան, Լեհաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան և այլն։ Իսկ «գերադասում եմ ապրել Իսրայելում, նույնիսկ եթե այդ տարածաշրջանում լինի միջուկային զենք ունեցող թշնամական երկիր» հարցադրմանը դրական է արձագանքել Իսրայելի հրեա բնակչության մեծամասնությունը՝ 86%-ը, որից

52%-ը՝ մեծապես համաձայնել է հարցադրման հետ, մնացյալ 32%-ը՝ ուղղակի համաձայնել։ Ասել է թե՝ միջուկային զենքի սպառնալիքը չի հանդիսանում Իսրայելի հրեա բնակչության համար երկիրը լքելու պատճառ։

Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, Իսրայելի հրեա բնակչությունում առանձնահատուկ տեղ է հատկացվում Երուսաղեմ քաղաքին՝ որպես Իսրայելի հրեա բնակչության հայրենասիրության առանցքային խորհրդանիշերից մեկին։ Հարցվածների 42%-ը մեծ կարևորություն է տալիս Երուսաղեմին՝ ելնելով քաղաքի պատմական կարևորությունից և նշանակությունից, իսկ 25%-ը՝ նրա ունեցած կրոնական նշանակությունից։

2.7. Պատերազմի էթիկան Իսրայելի հասարակությունում

Պատերազմի էթիկայի հիմնահարցն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հրեական ավանդույթներում։ Այն մեծապես պայմանավորված է հրեա ժողովրդի ազգային ինքնության առանձնահատկություններով և հոգևոր-բարոյական կերտվածքով։ Մյուս կողմից, հրեությունում պատերազմի էթիկայի հիմնահարցը կրում է հրեա ժողովրդի պատմության կնիքը։ Հրեա ժողովուրդը, մշտապես գտնվելով ռազմական սպառնալիքների ներքո, կտրված լինելով հայրենիքից և երկու հազար տարի չունենալով պետականություն, իր ազգային ինքնության պահպանման և անվտանգության պաշտպանության տեսանկյունից էական նշանակություն է հատկացրել պատերազմի էթիկական հիմնահարցերին և դրանց մեկնաբանություններին։

Հնագույն դարաշրջան. Հնագույն դարաշրջանում հրեությունում պատերազմի վարման էթիկայի հիմնախնդիրն ասոցացվել է աստվածաշնչյան ձևակերպումների հետ և այդ իսկ պատճառով գլխավորապես կրում է հոգևոր-բարոյական արժեհամակարգի ազդեցությունը: Աստվածաշնչում խոսվում է «պատերազմի վարման կանոնների» մասին, որոնց համաձայն՝ պատերազմները լինում են երկու հիմնական տեսակի.

•*«Սրբազան կամ պարտադիր պատերազմներ»:* Պատերազմների այս տեսակը քանանացիների դեմ պատերազմներն են, որոնք հրեա ժողովուրդը պետք է վարեր Աստծո ուղղակի պատվիրանով և աջակցությամբ: Կարելի է ասել, որ քանանացիների դեմ պայքարը պարունակում էր այսպես կոչված «սրբազան պատերազմին» (Holy war) հատուկ տարրեր, քանզի քանանացիները, ըստ Աստվածաշնչի, ոչ միայն չունեին հոգևոր-բարոյական արժեքներ, այլև կարող էին խեղաթյուրել հրեա ժողովրդի հոգևոր կերտվածքը և դարձնել նրան մեղսակից: Աստծո կողմից պատվիրված «սրբազան պատերազմները», ելնելով դրանց անվերապահ իրագործման նշանակությունից, այլ կերպ անվանվում էին նաև «պարտադիր պատերազմներ» (եբր.՝ «միլխեմեթ միցվա»)[1]: Հնագույն ժամանակներում, որպես «սրբազան կամ պարտադիր պատերազմի» բնորոշ օրինակ, հիշատակվում է հետևյալ պատմությունը. Ասվածաշնչում ասվում է, որ Մովսեսի մահից հետո Աստծո աջակցությամբ Հեսուն առաջնորդեց հրեա ժողովրդին դեպի Ավետյաց երկիր, որն այդ ժամանակ գտնվում էր այլոց տիրապետության ներքո: Աստված հրամայեց Հեսուին. «Յուրաքանչյուր վայր, որտեղ ոտք կդնեք,

[1] http://xn--80adjlal8bg1a.xn--p1ai/w/index.php

տալիս եմ ձեզ... Եղի՛ր ամուր և խիզախ, քանզի դու կհանձնես այս հողերը այս ժողովրդի տիրապետությանը, որի մասին Ես խոստացել եմ նրանց հայրերին...»:

Հնագույն դարաշրջանում հրեությունում «սրբազան կամ պարտադիր պատերազմի» հասկացությունը համալրվեց ևս երեք ենթատեսակներով, որոնք նույնպես հանդիսանում էին ռազմական սպառնալիքներից և պատերազմներից հրեա ժողովրդի պաշտպանության ժամանակի հրամայականը:

1. Ինքնապաշտպանություն. Հրեական համայնքի, ընտանիքների անդամների և սեփական կյանքի պաշտպանությունը, որը նույնպես ամրագրված է Աստվածաշնչում, հանդիսանում է «պարտադիր պատերազմ»: Ինքնապաշտպանության պատերազմների մասին աստվածաշնչյան գրությունում ասվում է. «Եթե ինչ-որ մեկը եկել է քեզ սպանելու մտադրությամբ, սպանի՛ր նրան առաջինը»:
2. Կանխարգելիչ պատերազմ. կանխարգելիչ կամ զսպման պատերազմները, որոնք համարվում են ինքնապաշտպանության դրսևորումներից մեկը, իրականացվում են այն ժամանակ, երբ ակնառու է դառնում թշնամիների կողմից հրեա ժողովրդի անվտանգությանը ներկայացող սպառնալիքը: Կանխարգելիչ պատերազմը նախատեսում է նախահարձակ գործողություններ:
3. Սպառնալիքի կանխարգելում՝ դաշնակցին աջակցելու միջոցով. «Պարտադիր պատերազմի» վարման այս տեսակը գործի է դրվում այլ տարածքում թշնամու առաջխաղացման կանխման և սեփական ուժերի ուղղությամբ նախահաս սպառնալիքի վերացման նպատակով:

•*«Ոչ պարտադիր կամ սովորական պատերազմներ»* (եբր.՝ «միլխեմեթ ռշութ»)։ Հնագույն ժամանակաշրջանում հրեա ժողովրդի վարած բոլոր այն պատերազմները, որոնք չեն կրել Աստծո կողմից պատվիրված «սրբազան առաքելություն», համարվել են «սովորական կամ ոչ պարտադիր պատերազմներ»։ Աստվածաշնչյան պատմություններում, որպես «ոչ պարտադիր պատերազմի» օրինակ, առանձնացվում է Դավիթ թագավորի ժամանակաշրջանը (Ք.ա. 10-րդ դար), երբ հրեա ժողովրդի դրացի թշնամիներն ավելի քան 300 տարի հարձակումներ էին գործում հրեական սահմանային քաղաքների ու շրջանների վրա, սպանում տեղացիներին, գերեվարում ու կողոպտում նրանց ունեցվածքը։ Այդ ամենին վերջ դնելու միակ ճանապարհը թշնամիներին զենքի ուժով հնազանդեցնելն էր, ինչին դիմեց Դավիթ թագավորը։ Վերջինս, սակայն, կարողացավ իրականացնել իր որոշումը միայն այն բանից հետո, երբ ստացավ «Իմաստունների խորհրդի» (հին եբրայերեն՝ «սանհեդրին») համաձայնությունը։ Թալմուդում նման խորհրդի ստեղծումը կապվում է Մովսեսի անվան հետ, որը նշանակեց 71 իմաստուն դատավորների, որպեսզի վերջիններս աջակցեն իրեն ժողովրդի ղեկավարման հոգևոր և քաղաքական հարցերում։ Կարելի է ասել, որ «ոչ պարտադիր պատերազմները» նույնպես անուղղակիորեն պայմանավորված էին հրեա ժողովրդի հոգևոր-բարոյական արժեքներով, քանզի «Իմաստունների խորհուրդը», որը բաղկացած էր հոգևորականությունից, առաջնորդվում էր հիմնականում կրոնական սկզբունքներով։

Հարկ է նշել, որ «ոչ պարտադիր պատերազմներին» մասնակցության գործում առկա էին որոշակի սահմանափակում-

ներ. դրանց կարող էին մասնակցել միայն խիզախ և հավատացյալ մարդիկ, արգելվում էր մարտին մասնակցել դեռևս չամուսնացած տղամարդկանց:

Միջնադար. Միջնադարյան ժամանակաշրջանում հրեական համայնքներն ապրում էին բարդ ռազմաքաղաքական իրադրությունում: Մերձավոր Արևելքում հաճախակի դարձած պատերազմները և խաչակրաց արշավանքները զգալի բացասական հետք են թողել տեղի հրեական համայնքների ինքնապաշտպանության և ինքնակազմակերպման գործընթացի վրա[1]: Չունենալով պետականություն և գտնվելով տարբեր ժողովուրդների տիրապետության տակ՝ հրեական համայնքները չեն կարողացել կազմակերպված և հավաքական դիմադրություն ցույց տալ հակառակորդների հարձակումներին: Արդյունքում՝ միջնադարում հրեությունում պատերազմի վարման էթիկայի նախկին գաղափարական հիմնադրույթները ոչ միայն լուրջ զարգացում չեն ունեցել, այլև դրանցում սկսել էին շոշափելի դառնալ խաղաղասիրական մոտեցումները:

Մյուս կողմից, միջնադարյան ռաբբիական հոգևոր-բարոյական ուսմունքների զգալի հատվածում ուղղակիորեն արգելվում էր մասնակցել պատերազմներին բոլոր հոգևորականներին և այն մարդկանց, ովքեր նվիրաբերել էին իրենց գործունեությունն ու կյանքը Աստծուն ծառայելուն: Խնդիրն այն է, որ հրեական միջնադարյան հոգևոր ուսմունքներում պատերազմի վարման էթիկայի հարցերում առաջին հայացքից հակասական սկզբունքներն ու պատկերացումները հիմնականում հանդիսանում են այդ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրադրու-

[1] http://icrc.at.ua/magazine/Solomon_RUS.pdf

թյան ուղղակի անդրադարձը, երբ կրոնը, կորցնելով իր հիմնական առաքելությունը, դարձել էր պատերազմների հրահրման և շահարկման առարկա, ինչը և հակաքարոզում էր հրեա հոգևորականությունը:

Պետականության հիմնում. վերադարձ ավանդույթներին. Հրեությունում պատերազմի վարման միջնադարյան ռաբբիական գաղափարական սկզբունքները վերիմաստավորվեցին 19-րդ դարի վերջին, երբ պատմության թատերաբեմ եկավ սիոնիստական շարժումը: Սիոնիստ հոգևորականության առաջնորդները պատերազմի վարման էթիկայի հիմնահարցում կրկին վերադարձան հրեական հնագույն ավանդույթներին, որտեղ առաջնակարգ նշանակություն էր տրվում հոգևոր-բարոյական արժեքաբանությանը: Դա են հաստատում ժամանակաշրջանի հրեա քաղաքական գործիչների և հոգևորականների առաջարկած պատերազմի էթիկայի հարցադրումները: 19-րդ դարի կեսի հայտնի ռաբբի Սամուել Դավիթ Լուցատուն իր կրոնական ուսմունքում ասում է. «Հրեա ժողովրդի կողմից պատերազմի սկսումը կարող է համարվել արդարացված, եթե դու ոտքի ես ելել թշնամու դեմ»: Հոգևորականը «թշնամի» ասելով նկատի է ունենում աստվածաշնչյան այն «զավթողներին, ովքեր մտել են մեր տարածք կողոպտելու նպատակով»[1]:

Ի տարբերություն հնագույն ժամանակաշրջանում հրեությունում պատերազմի վարման էթիկայի վերաբերյալ ձևավորված պատկերացումների և արժեքների, սիոնիստ քաղաքական առաջնորդները ձգտում էին հուդայական հոգևոր-բարոյական սկզբունքները համադրել պետական և ազգային գաղափարա-

[1] Նույն տեղում:

բանական արժեքների հետ, ինչն առաջնակարգ նշանակություն պետք է ունենար հրեական պետականության հիմնադրման գործընթացում:

Պատերազմի վարման էթիկայի վրա սիոնիստական գաղափարախոսության ազդեցության կարևոր առանձնահատկություններից էր այն, որ պատերազմի էթիկայի շուրջ ձևավորված նախկին սկզբունքները համալրվեցին առավել պահպանողական կամ ավանդապահական արժեքներով, ինչը նույնպես թելադրված էր Պաղեստինում հրեական պետականության կայացման հրամայականով: Նկատենք, սակայն, որ պատերազմի վարման էթիկայի սիոնիստական գաղափարաբանական հիմքում դրված էր ոչ թե հարձակողական կամ զավթողական քաղաքականությունը, այլ, ընդհակառակը, 20-րդ դարասկզբին Պաղեստինում ձևավորված հրեական ազգային-ազատագրական պայքարը՝ որպես ինքնապաշտպանություն և ազատագրում: Խորհրդանշական են Վարշավայի ռաբբի Մենախեմ Զեմբայի (1883-1943թթ.) մոտեցումները պատերազմի վարման էթիկայի վերաբերյալ[1]: Նրա պնդմամբ՝ «Թորան արգելում է հրեաներին մասնակցել ագրեսիվ կամ զավթողական պատերազմներին. անհրաժեշտության դեպքում մենք պետք է դիմակայենք թշնամուն բոլոր ճակատներում, Հալախան (հուդայականության օրենքների և իրավական նորմերի ամբողջություն, հուդայական ավանդական իրավունք- *հեղ.*) պահանջում էր, որպեսզի պայքարենք և դիմակայենք մինչև վերջ՝ անասելի վճռականությամբ և խիզախությամբ՝ հանուն Աստծո անվան սրբացման»:

[1] Նույն տեղում:

Պատերազմի էթիկայի հիմնահարցի վրա խոր ազդեցություն ունեցան նաև Եվրոպայում հրեաների հետապնդումների և բռնությունների ալիքն ու նացիստական Գերմանիայի իրագործած Հոլոքոսթը: Հրեության հատկապես պահպանողական շրջանակներում սկսեցին զուգահեռներ անցկացվել հրեա ժողովրդի հերոսապատումների և Հոլոքոսթի միջև: Ի տարբերություն հնագույն դարերում հրեա ժողովրդի հերոսության, հանուն հայրենիքի ինքնազոհաբերման փառահեղ էջերի, Հոլոքոսթը, ըստ սիոնիստ գաղափարախոսների, ասոցացվում էր պասիվ զոհողության և հարմարվողականության հետ: Մյուս կողմից, Եվրոպայի հրեաների նկատմամբ բռնությունների ալիքը նոր լիցք հաղորդեց Պաղեստինում հաստատված հրեաների ազգային ազատագրական պայքարին՝ որպես մինչև վերջ պայքարելու (fighting to the end) պատրաստակամության մարմնավորում: Տեղին է հիշատակել 1943թ. այդ առիթով Իսրայել պետության առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնի ելույթը. «Մենք ապրել ենք արտաքսման կյանքը, կախվածությունը, ստորացումը, ստրկությունն ու դեգրադացիան: Ոչ միայն ուրիշները մեզ բերեցին դրանց, այլև մենք ինքներս եկանք դրանց և ընդունեցինք մեր թուլությունը, մեր արտաքսումը... Մենք չգիտեինք ինչպես ապրել ու մեռնել՝ որպես ազատ մարդիկ: Մասադայի ու Թել-Հայի ինքնապաշտպանության նման, հրեաները պետք է ընտրեին այլ մահ, ոչ թե անուժ, անօգնական, անարժեք զոհաբերումը, այլ մենք պետք է զենքը ձեռքներիս մահանայինք»:

20-րդ դարասկզբին Պաղեստինում հաստատված հրեական բնակավայրերի ինքնապաշտպանության և ազատագրական պայքարի խորհրդանիշ դարձան Թորայում ամրագրված

Աստծո խոսքերը՝ «տիրե՛ք այդ հողերին և բնակեցրե՛ք դրանք, քանզի այդ հողերը ձեզ եմ տալիս Ես, որպեսզի դուք տիրեք դրանց»։ Կրոնական սիոնիզմի խոշոր գործիչներից մեկի՝ Ցվի Յեհուդա Կուկի (1891-1982թթ.)[1] ուսմունքի համաձայն, որը Պաղեստինի վերաբնակեցման շարժման գաղափարախոսն է, «...Իսրայելի տարածքի վրա հրեական ինքնիշխանության հաստատումն ամրագրված է Թորայով, Իսրայելում հաստատված հրեական բնակավայրերը երբեք կամավոր չպետք է հանձնեն Իսրայելի աստվածաշնչյան սահմաններից անգամ ոչ մի հողակտոր»։ Իսկ Ցվի Յեհուդա Կուկի հոր՝ Աբրահամ-Իսահակ հա-Քոհեն Կուկի կրոնափիլիսոփայական աշխատություններից մեկում՝ «Օրոթ» գրքում («Կրակներ») խոսվում է Իսրայելի հետ հրեա ժողովրդի հատուկ ներքին կապի գոյության և այն մասին, որ Աստծո կամոք հրեա ժողովրդի հոգևոր զարգացումն ու արարումը հնարավոր են միայն Էրեց-Իսրայելի տարածքում։

20-րդ դարասկզբից հրեությունում պատերազմի վարման էթիկայի պահպանողական մոտեցումների առաջմղումն իր հետագա արտացոլումը գտավ նաև 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից անմիջապես հետո ձևավորված Իսրայելի պաշտպանության ուժերի մարտական ավանդույթներում։ Իսրայելի պաշտպանության բանակի դոկտրինում ամրագրված են հուդայականության հոգևոր-բարոյական հիմնարար արժեքներն ու հրեության ազգային ինքնության սկզբունքները։ Առանձնացնենք դոկտրինի հոգևոր-բարոյական որոշ հիմնադրույթներ, որոնք ուղղակիորեն կապ ունեն պատերազմի վարման էթիկական հիմնահարցի հետ։ Առանձնահատուկ կարևորություն է

[1] http://ru.wikipedia.org/wiki/Кук,_Цви_Иехуда

ներկայացնում այսպես կոչված «համաչափ փոխհատուցման» սկզբունքը, ըստ որի՝ հակառակորդի կամ հակառակորդների կողմից Իսրայել պետության, նրա բնակչության և համայն հրեության անվտանգությանը նետված յուրաքանչյուր սպառնալիք կամ գործողություն պետք է ստանա Իսրայելի պաշտպանության բանակի՝ սպառնալիքին ուղիղ և հավասար կամ համաչափ փոխհատուցում («ակն ընդ ական» սկզբունքը, լատ.՝ Թալիոնի սկզբունքը)։ Դարերի ընթացքում, կապված Իսրայելի և հրեության անվտանգության հանդեպ թշնամիների ոտնձգությունների և հարձակումների հաճախակիացման հետ, հրեական ավանդույթներում սկսեց գործել այսպես կոչված «ասիմետրիկ փոխհատուցման» սկզբունքը, որի համաձայն՝ հրեությանը հասցեագրված սպառնալիքների հակազդման հարցում գործում է ոչ թե ուղիղ, այլ ասիմետրիկ կամ ոչ գծային սկզբունքը։

Պատերազմի էթիկայի հիմնադրույթների շարքում առանձնացվում է նաև Իսրայելի «պարտության անթույլատրելիության» սկզբունքը, որն ամրագրված է երկրի պաշտպանության ուժերի դոկտրինի «Հիմնական հայեցակարգ» մասնաբաժնի առաջին կետում՝ «Իսրայելը չի կարող պարտություն կրել անգամ մեկ պատերազմում»[1]. գաղափար, որտեղ ամփոփվում են հնագույն դարերից ի վեր հրեության հոգևոր-բարոյական ժառանգությունը, պատմության հերոսապատումներն ու ողբերգական էջերը, ազգային ինքնության արժեքները։

[1] http://www.idf.il/1497-en/Dover.aspx, Israel defense forces

2.8. Հրեա ժողովրդի ազգակերտման պատմությունից. «Մասադայի» հերոսապատումը

Հրեա զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության խնդիրները, Իսրայել պետության պաշտպանական անվտանգության համատեքստում կարևորվելուց բացի, առանցքային նշանակություն ունեն նաև հրեա ժողովրդի ազգապահպանման, ազգակերտման իմաստով: Իսրայել պետության համար անգնահատելի է հրեա ժողովրդի ռազմական պատմության լուսավոր էջերի և հերոսապատումների նկատմամբ ազգային կոլեկտիվ հիշողությանն ուղղված հետևողական քաղաքականության իրագործումը՝ որպես հրեական պետականության շարունակականության նախապայման:

Ռազմական հաղթանակների թեմատիկայի հրապարակայնացումն ու սոցիալականացումն էլ ավելի հրատապ դարձավ Իսրայել պետության հիմնադրումից հետո, որի արդյունքում կարծես թե նորովի վերիմաստավորվեցին պատմական ձեռքբերումներն ու հաղթանակները, ինչպես նաև ողբերգական ու պարտության էջերը: Մյուս կողմից, հրեա ժողովրդի հերոսապատումների թեմատիկան կարևորվում էր նաև նորաստեղծ պետության անվտանգության համար մշտապես գործող ռազմական սպառնալիքների առկայության և պետականության պահպանման համատեքստում:

Սույն աշխատությունում 66-73թթ. Հռոմեական կայսրության դեմ «Հրեական մեծ ապստամբության» տարիներին Մասադա ամրոցի ինքնապաշտպանության օրինակով ցույց է տրվում, թե ինչպես է հրեա ժողովրդի պատմության յուրաքանչյուր հերոսապատում վերածվում ազգային խորհրդանիշի,

առանցքային կարևորություն ստանում հրեա ժողովրդի պատմական հիշողությունում և զինվորականության ռազմահայրենասիրական դաստիարակությունում: Ներկայացվում են Մասադա ամրոցի ինքնապաշտպանության հերոսապատման՝ որպես ազգային ինքնության անքակտելի բաղկացուցչի անգնահատելի դերն ու նշանակությունը հրեական ազգային ազատագրական պայքարի ու պետականության կայացման գործընթացում: Հրեա ժողովրդի հաղթանակները, նաև պարտություններն ու ողբերգական էջերը, տվյալ դեպքում՝ Մասադայի հերոսապատումը լուրջ ազդեցություն են ունեցել և ունեն հրեա ժողովրդի ազգակերտման գործընթացում:

Պատմական ակնարկ

Հրեա ժողովրդի գոյության և ազգային ինքնության պահպանման, ինչպես նաև հրեական պետության հիմնադրման գործընթացում հրեա ժողովրդի պատմական հերոսապատումների շարքում ուրույն տեղ ունի Մասադայի ինքնապաշտպանությունը, որը չնայած ողբերգական ելքին, այնուհանդերձ, հրեության շրջանում ընկալվում է որպես փառահեղ հաղթանակ: Պատմական ակնարկի տեսքով ներկայացնենք Մասադայի ամրոցի ինքնապաշտպանությունը և անդրադառնանք հարցի կարևորությանը:

Մասադայի ամրոցը (եբրայերեն մեցադա՝ ամրոց բառից) գտնվում է Իսրայելի հարավում՝ Հուդայական անապատի արևելյան հատվածում գտնվող լեռան գագաթին[1]: Ամրոցը կառուցվել է Ք.ա. 37-31թթ.: Մասադայի հերոսապատումը վերագրվում է 1-ին դարի երկրորդ կեսին, երբ Պաղեստինը գտնվում

[1] http://www.eleven.co.il/article/12656, Масада.

էր Հռոմեական կայսրության տիրապետության տակ։ Խոսքը վերաբերում է 66-73թթ. Հռոմեական կայսրության դեմ Հրեաստանում ծագած ապստամբության, հռոմեացիների և հրեաների միջև առաջին պատերազմի ժամանակաշրջանին, որը հրահրվեց հռոմեական պրոկուրատոր Գեստիոս Ֆլորոսի կողմից թույլ տրված չարաշահումների հետևանքով։ Ապստամբությունը, որը պատմության մեջ հայտնի է «Հրեական մեծ ապստամբություն» (*The Great Revolt*) անվանումով, ղեկավարում էին գյուղացիների և արհեստավորների շահերն արտահայտող զելոտների (նախանձախնդիրներ) և սիկարիների (դաշույնավորներ) խմբավորումները։ Սկզբնական շրջանում ապստամբներին հաջողվեց տիրել Երուսաղեմին, ապա պարտության մատնել Ասորիքի հռոմեական կառավարիչ Կեստիոս Գալոսի զորքին։ Սակայն կայսր Ներոնը նրանց դեմ ուղարկեց մեծ զորք՝ Փլավիոս Վեսպասիանոսի գլխավորությամբ, որի արդյունքում 67թ. հռոմեացիները կարողացան գրավել Գալիլեան, գերեցին Յոտապատա բերդը պաշտպանող զորավար Հովսեփ բեն Մաթաֆիային (նույն ինքը՝ պատմիչ Հովսեփոս Փլավիոսը)։

69թ. հրեա ապստամբների դեմ գործող հռոմեական բանակը գլխավորեց կայսր հռչակված Վեսպասիանոսի որդի Տիտոսը, որը պաշարեց Երուսաղեմը։ Պաշարվածների մեջ սկսվեց երկպառակություն, որի հետևանքով հնգամսյա պաշարումից հետո՝ 70թ. հռոմեացիները կարողացան գրավել քաղաքը, ավերեցին այն և Սողոմոնի տաճարը։ Կարելի է ասել, որ Երուսաղեմ քաղաքի գրավմամբ Հռոմեական կայսրության իշխանությանն անցավ ողջ Հրեաստանը. բացառություն էր կազմում միայն Մասադայի ամրոցը, որը մինչ հռոմեացիների կողմից Երուսա-

ղեմի գրավումը կարողացել էին ազատագրել Հռոմեական կայսրության առավել արմատական հակառակորդներ համարվող սիկարիները[1]: Վերջիններին հետագայում միացան նաև 70թ. հռոմեացիների կողմից Երուսաղեմի գրավումից հետո քաղաքը լքած տեղացի հրեաներն իրենց ընտանիքներով, ինչի արդյունքում Մասադայում հաստատվեց 967 մարդ: Ամրոցում տեղակայված հրեա ապստամբների դիմադրությունը շարունակվեց մինչև 73թ.: 72թ. աշնանը Հռոմեական կայսրությունը 10.000 զորք (հիմնականում՝ 10-րդ լեգեոնը) ուղարկեց՝ Մասադայի ամրոցում հաստատված հրեա ապստամբների դիմադրությունը կոտրելու նպատակով: Մի քանի ամիս տևած պաշարումից հետո ամրոցի պաշտպանությունն ի վերջո տեղի տվեց հռոմեական զորքերի հարձակումներին և հանձնվեց 73թ. գարնանը: Սակայն տեղի հրեա զորահրամանատարները՝ Էլեազոր բեն Յաիրի գլխավորությամբ և առաջարկով, գերադասելով մահը գերեվարումից, որոշում կայացրին չհանձնվել թշնամուն: Արդյունքում՝ նրանցից յուրաքանչյուրը սպանեց իր ընտանիքի անդամներին, իսկ հետո՝ նաև միմյանց: Երբ հաջորդ առավոտյան հռոմեացիների բանակը ներխուժեց ամրոց, բոլորին գտավ սպանված, բացառությամբ երկու կանանց ու հինգ երեխաների, որոնք կարողացել էին թաքնվել ստորգետնյա ջրախողովակում: Պատմագրության մեջ հրեա ապստամբների այդ քայլը հայտնի է որպես զանգվածային ինքնասպանություն (*mass suicide*):

[1] Սիկարիներ- սիկի անվանումից, որը նշանակում էր սուր, դաշույն: Սիկարիները հրեա զելոտների խմբերից մեկն են: Զելոտականությունն առաջին դարի քաղաքական-կրոնական շարժում էր, որի առաքելությունն էր ազատագրական պայքարը Հռոմեական կայսրության դեմ: Եբրայերեն զելոտ բառը ներկայանում է Քանայիմ անվանումով, նշանակում է «Աստծո կողմից ներկայացվող մարդ»:

Մասադայի ամրոցի ապստամբության մասին առաջին վկայությունը մեզ է հասել 1-ին դարի հայտնի հրեա պատմիչ և զորահրամանատար Հովսեփոս Փլավիոսի (37-100թթ.) հունարեն գրված «Հուդայական պատերազմի մասին» սկզբնաղբյուրից: Հաշվի առնելով սկզբնաղբյուրի կարևորությունը թեմայի ուսումնասիրման հարցում՝ նպատակահարմար ենք համարում մեջբերել մի հատված դրանից. «Պրոկուրատորը մեծ զորք հավաքեց Մասադայի ամրոցը պաշարելու նպատակով: Երկարատև ապստամբությունից հետո, երբ հռոմեական զորքերի կողմից այրվեց ամրոցի փայտե պաշտպանական պատը, նրանք մոտ էին հաղթանակին: Այդ ժամանակ հրեա ապստամբների ղեկավար Էլեազորը, հասկանալով, որ պարտվում են և չցանկանալով հռոմեացիներին հանձնել իր և զինակիցների ընտանիքները, հավաքեց յուրայիններին և ելույթ ունեցավ. «Քա՛ջ զինվորներ, մենք վաղուց ենք որոշում ընդունել չենթարկվել ո՛չ հռոմեացիներին և ո՛չ էլ որևէ մեկին, բացի Աստծուց, քանզի նա է մարդկության միակ արդար և իսկական թագավորը: Այժմ եկել է ժամանակը, որպեսզի մենք գործով իրագործենք մեր որոշումը: Մենք չենք գնա ստրկության և դաժան տանջանքների, որոնք մեզ սպասում են, եթե հանձնվենք հռոմեացիներին: Մենք առաջինն ենք, որ ապստամբել ենք նրանց դեմ և վերջինը, որ պայքարում ենք: Ես դիտում եմ մեր պայքարը որպես Աստծո ողորմածություն, որ նա մեզ հնարավորություն տվեց մահանալ գեղեցիկ մահով և մահանալ որպես ազատ մարդիկ, ինչը վիճակված չէ հանկարածակի գերի ընկած մարդկանց: Վաղը մենք կարող ենք լինել թշնամու ձեռքում, սակայն մենք ազատ ենք մեր ընտրության մեջ՝ ընտրելով փառավոր մահը՝ մեզ համար թանկ մարդ-

կանց հետ միասին: Եթե Աստված բարեգութ չեղավ ժամանակին իր սիրեցյալ հուդայական ժողովրդի նկատմամբ և տարավ նրանց մահվան և հանձնեց սուրբ քաղաքը, ապա արդյոք կարող ենք հուսալ, որ մենք միակն ենք ողջ հրեա ժողովրդից, որ կարող ենք փրկվել և փրկել մեր ազատությունը... Մենք կոչնչացնենք նաև մեր ողջ պաշարները: Մենք հռոմեացիներին կթողնենք միայն սպառված պաշարների մնացորդները, որպեսզի տեսնեն, որ մեզ քաղցը չէ պարտության մատնել, այլ մենք նախընտրել ենք մահը ստրկությունից»:

Էլեազոր Բեն Յաիրի ելույթից հետո բոլոր մարտիկները սպանում են իրենց հարազատներին՝ կանանց ու երեխաներին, իսկ հետո միմյանց խողխողում սրերով[1]: Վերջին կենդանի մնացած զինվորը վերջին անգամ նայեց բոլոր ննջեցյալներին՝ կարծես ստուգելով, որ ոչ ոք կենդանի չի մնացել, և ինքն իրեն նույնպես խողխողեց: Սակայն երկու կին և հինգ երեխա թաքնվել էին ստորգետնյա ջրախողովակում և այդպիսով մնացել աննկատ: Ընդհանուր սպանվածների թիվը հասել էր 960-ի: Հռոմեացիներն առավոտյան մտնելով ամրոց և տեսնելով այդ տեսարանը՝ չէին հավատացել թշնամու կատարած խիզախությանը»:

Առանձնահատուկ կարևորություն ունի Մասադայի ինքնապաշտպանների զանգվածային ինքնասպանությունը: Հրեական իրականությունում ինքնազոհաբերման երևույթին հանդիպում ենք վաղ անցյալում, որի ակունքները գալիս են հուդայականության կրոնադավանաբանական, արժեքային հիմնադրույթներից կամ պատվիրաններից: Հուդայականությունում (Թորայում – Մովսեսի գրքերը) խոսվում է հանուն Աստծո նվիրա-

[1] http://www.eleven.co.il/?mode=article&id=15046&query= , ЭЛ‘АЗАР БЕН ЯИР

բերության գաղափարի մասին, եբրայերեն՝ *Կիդուշ Հաշեմ*: Գաղափարը վերաբերում է յուրաքանչյուր հրեայի կողմից իր Աստծո անվան պատիվը պահելու և չպատվազրկելու բարձրագույն արժեքին: Կիդուշ Հաշեմի բարձրագույն առաքելությունն այն է, որ հրեան պետք է զոհաբերի կյանքը՝ չխախտելու համար Աստծո՝ կրոնափոխության արգելման պատվիրանը (առաջնորդվում է «*ավելի լավ է սպանվել, քան խախտել այն*» սկզբունքով):

Հարկ է նշել նաև, որ Մասադայի ինքնապաշտպանության պատմական հիշողության վերականգնման սկզբնական շրջանում (նախորդ դարի սկզբներին) զանգվածային ինքնազոհաբերման ակտը ոչ միանշանակ էր ընկալվում հրեա ժողովրդի կողմից՝ պայմանավորված վերջինի ողբերգական ելքով: Սակայն հետագայում այն, նաև սիոնիստական գաղափարախոսների ջանքերով, հրեա ժողովրդի պատմության ողբերգական էջից վերածվեց հերոսապատման և բավական կարճ ընթացքում դարձավ Պաղեստինում սկիզբ առած հրեա ազգային ազատագրական պայքարի խորհրդանիշ: Հրեա իրականությունում առհասարակ ինքնազոհաբերման և տվյալ պարագայում՝ զանգվածային ինքնազոհաբերման հիմնահարցն ընդգրկում է ուսումնասիրման լայն շրջանակ և ըստ էության առանձին հիմնարար հետազոտության նյութ է ներկայացնում:

Մասադայի խորհուրդն Իսրայել պետության հիմնադրման գործընթացում

Մասադայի հերոսապատման՝ որպես հրեա ժողովրդի ազգային պատմական հիշողության խորհրդանիշի, ձևավորման ակունքները գալիս են 19-րդ դարի վերջերից, երբ Եվրոպայում

սկսեց կազմավորվել սիոնիստական շարժումը: Շարժման առաքելությունն էր երկու հազարամյակ հայրենիքից կտրված հրեա ժողովրդին Պաղեստին վերադարձնելն ու ազգային ազատագրական պայքարի միջոցով հրեական պետություն ստեղծելը: Ազատագրական պայքարի ոգեկոչման հարցում սիոնիստ գաղափարախոսները մեծ նշանակություն էին տալիս հրեա ժողովրդի պատմական հիշողության վերականգնմանը՝ հիմնվելով խորհրդանիշների ձևավորման անհրաժեշտության վրա: Այս տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն ստացավ հնագույն դարաշրջաններում հրեա ժողովրդի ազգային ազատագրական պատերազմների թեմատիկան, որի փայլուն օրինակ էր Մասադան:

20-րդ դարասկզբին Պաղեստին առաջին հրեա հայրենադարձների ազգային ազատագրական պայքարի սկզբնական փուլում Մասադան կարճ ժամանակում վերածվեց ազգային ոգեկոչման կարևոր աղբյուրի, որը խորհրդանշում էր հրեա ժողովրդի ազգային ազատագրական պայքարի շարունակականությունը: Նրանց արժեհամակարգում Մասադայի ինքնապաշտպանությունը մարմնավորում էր հայրենասիրության բարձր գիտակցության, ազատության նկատմամբ ունեցած սիրո, ազգային արժանապատվության, և ամենակարևորը՝ մինչև վերջ կռվելու պատրաստակամությունը (*fighting to the end*):

Մասադայի հերոսապատման զարթոնքը կամ վերածնունդը լուրջ թափ ստացավ, սակայն, միայն նախորդ դարի 20-ական թվականներից, երբ Պաղեստինում համաշխարհային սիոնիստական շարժման առաջնորդների աջակցությամբ արդեն լայն պաշտպանական գործողություններ էին ծավալվում՝ ի

շահ Հրեական ազգային օջախի ստեղծման։ 1920-1930-ականներից Մասադայի ոդիսականը դարձավ Պաղեստինում բրիտանական կառավարության դեմ գործող հրեական ընդհատակյա պարտիզանական խմբավորումների թե՛ գաղափարախոսությունների, թե՛ պաշտպանական գործողությունների, ռազմավարության կարևոր խորհրդանիշներից մեկը։ Դրա մասին է վկայում այն, որ հրեա ընդհատակյա պարտիզանական խմբավորումները, որոնք այդ ժամանակաշրջանում գործում էին գաղտնիության պայմաններում, կանոնավոր արշավներ էին կազմակերպում դեպի Մասադա լեռը՝ ի նշան Մասադայի սխրագործության նկատմամբ մարտիկների նվիրվածության և հավատարմության։ Իրենց ակտիվությամբ առավել աչքի էին ընկնում հատկապես այնպիսի զինյալ խմբավորումներ, ինչպիսիք էին Հագանան[1] և Պալմահը[2], որոնք հետագայում կազմեցին Իսրայելի Պաշտպանության բանակի միջուկը։ Բացի վերջիններից, դեպի Մասադայի լեռ արշավներ էին իրականացնում նաև այլ հայտնի հրեական զինյալ խմբավորումներ, ինչպես, օրինակ, «Ուժեղ մարդկանց դաշինք»-ը, Էցելը և Լեհին, բայց քանի որ դրանք համարվում էին առավել արմատական և խիստ ընդհատակյա ու գաղտնի կազմակերպություններ, այդ արշավ-

[1] Հագանան (եբրայերեն՝ պաշտպանություն) կառույց է, որը միավորում էր 1920թ. ենթամանդատային Պաղեստինում պաղեստինաբնակ հրեաների կողմից ստեղծված հրեական ռազմականացված ընդհատակյա մի քանի խմբերին։

[2] Պալմահը (եբրայերեն՝ հարվածային ջոկատներ) Հագանայի հատուկ նշանակության կամ դիվերսիոն-հետախուզական ստորաբաժանումն է։ Պալմահի ստեղծման նախապատմությունը վերագրվում է 1941թ. մայիսի կեսերին, երբ ինչպես արաբների, այնպես էլ գերմանացիների ու իտալացիների դեմ պայքարում շարժունակ, արագ արձագանքման ու կանոնավոր պաշտպանական զորքեր ունենալու նպատակով Հագանայի ղեկավարությունը որոշում ընդունեց հիմնել 9 ջոկատ, որով կազմավորվեց Պալմահը։

ները չէին կարող կրել կանոնավոր բնույթ։ Ստորև առավել հանգամանորեն կանդրադառնանք այդ ռազմականացված խմբավորումներից մի քանիսին, որոնց գործունեությունն այս կամ այն չափով ասոցացվել է Մասադայի խորհրդի հետ։

«Ուժեղ մարդկանց դաշինք» ռազմական խմբավորումը։ «Ուժեղ մարդկանց դաշինք» հրեական զինյալ խմբավորումը (եբրայերեն՝ Brit Habirionim, անգլ.՝ The Strongmen Alliance) բրիտանացիների դեմ իր ակտիվ ռազմական գործունեությունը ծավալել է հիմնականում 1930-1933թթ.։ Այն հիմնադրվել է Աբբա Աքիմեիրի, Ուրի Զվի Գրինբերգի և դոկտոր Ջոշուա Յավինի կողմից։ «Ուժեղ մարդկանց դաշինք» խմբավորման ստեղծման համար հիմք հանդիսացան 1929թ. ծագած արաբական ըմբոստությունները, ինչպես նաև Հեբրոնի և Սաֆեդի հրեաների նկատմամբ իրականացվող ջարդերը կանխելու՝ Հագանայի անհաջող փորձերը։ Զինյալ խմբավորման գաղափարախոսությունն ազդեցություն էր կրել իտալական ֆաշիզմից։

Խմբավորման գործունեության համար որպես պատմական մոդել ծառայում էր Մասադայի սիկարիների շարժումը։ Դաշինքն առաքելություն ուներ բրիտանացիների և այլոց դեմ պայքարը, որոնք ներկայանում են որպես սիոնիզմի թշնամիներ։ Խմբավորման առաջնորդներն իրենց համարում էին «ազգային զեալ»-ի (զելոտ բառից) ժառանգության հետևորդները։ Հատկանշական է, որ դաշինքի անդամներից շատերը նախկինում եղել են Էցելի, իսկ հետագայում՝ նաև Լեհիի մարտիկներ, որոնց գաղափարական հայացքներում դրվում էր սիկարիների հետ ինքնության կամ նույնացման խորհրդանիշը։ Ընդհատակյա խմբավորման անդամներն իրենց թշնամի էին

համարում նաև այն հրեաներին, որոնք համագործակցում էին բրիտանական կառավարության հետ: Այս մարգինալ մոտեցումը, ի դեպ, կրկին կապվում է Մասադայի ինքնապաշտպանների անվան հետ, որոնք նույնպես ունեին բավական արմատական հայացքներ և իրենց թշնամի էին համարում նաև այն հրեաներին, որոնք ժամանակին հպատակվել են Հռոմեական կայսրությանը կամ համագործակցել վերջինի հետ: Դաշինքի գրքերից մեկը կոչվում էր «Մենք սիկարիներ ենք» և սկսվում էր Ուրի Զվի Գրինբերգի բանաստեղծությամբ, որտեղ նա փառաբանում էր սիկարիներին:

«Իսրայելի ազատության զինվորներ» խմբավորումը: «Իսրայելի ազատության զինվորներ» խմբավորումն (եբրայերեն՝ Lehi- Fighters for freedom of Israel) այլ կերպ հայտնի է «Սթերն Գենգ» անվանումով (խմբավորման հիմնադիր Աբրահամ Սթերնի անվամբ): Սկզբնական շրջանում Աբրահամ Սթերնը Զեև Ժաբոտինսկու հիմնադրած սիոնիստական շարժման կողմնակիցներից էր և մեկ այլ հրեական ռազմականացված խմբավորման՝ 1931թ. հիմնադրված Իրգուն (Էցել) շարժման անդամ[1]:

1940թ. հունիսին, երբ Իրգուն ընդհատակյա զինյալ խմբավորման առաջնորդները որոշեցին դադարեցնել պարտիզանա-

[1] «Իսրայելի ազգային ռազմական խմբավորումը» (հայտնի է Իրգուն կամ Էցել անունով) ռազմականացված սիոնիստական խմբավորում էր, որն իր հիմնական գործունեությունը ծավալում էր Պաղեստինում 1931-1948թթ.: Հիմնադրվել էր Հագանայի շրջանակներում և գաղտնիության ապահովման նպատակով կրում էր Հագանա Բեթ (Պաշտպանություն Բ կամ Երկրորդ պաշտպանություն) անվանումը: Կազմակերպության գաղափարախոսության հիմքում գերակայում էր այն սկզբունքը, որի համաձայն՝ միայն հրեական ռազմական խմբավորումները կարող են պայքարել արաբների և բրիտանացիների դեմ՝ ի շահ հրեական պետության ստեղծման: 1948թ. Իսրայել պետության հիմնադրմամբ Իրգունի մի մասն ընդգրկվեց Իսրայելի նոր կազմավորված զինված ուժերի կազմում:

կան պայքարը բրիտանացիների դեմ, Աբրահամ Սթերնը լքեց վերջինիս շարքերը և հիմնադրեց իր սեփական սիոնիստական զինյալ խմբավորումը, որը հայտնի դարձավ որպես «Իսրայելի ազգային ռազմական կազմակերպություն» (հայտնի է նաև Լեհի անվանումով)։ Աբրահամ Սթերնի գլխավորած կազմակերպության հիմնական նպատակն էր Պաղեստինից բրիտանացիների դուրսբերումը, հրեաների ներգաղթի ապահովումն ու հրեական պետության հիմնումը։ Հրեական պետության ստեղծման իրականացումը Սթերնը տեսնում էր միայն ռազմական պայքարի ճանապարհով։ Սթերնը հավատացած էր, որ պատերազմում Պաղեստինի հրեաներին հարկավոր է պայքարել ավելի շատ բրիտանացիների դեմ, քան թե վերջիններիս հետ դաշնակցել ու պատերազմել գերմանացիների դեմ։ Նա նաև փորձեց գերմանացիների հետ շփումներ հաստատել, որոնք հետագայում կարող էին աջակցել Պաղեստինում հրեական պետության ստեղծմանը։

Ինչպես նախորդ, այնպես էլ Սթերնի զինյալ խմբավորման գաղափարախոսությունում մեծ տեղ էր հատկացվում Մասադայի հերոսապատմանը։ Ա.Սթերնը և նրա զինակիցները Մասադայի հերոսապատման փորձառությունը կիրառում էին ինչպես իրենց խմբավորման բուն ռազմական գործողություններում՝ որպես ռազմավարություն, այնպես էլ մարտական պայքարի գաղափարական հիմքերում։ Նրանք այն համոզմունքին էին, որ «Մասադայի հերոսամարտիկների պայքարի շնորհիվ է հրեա ազգը շարունակում գոյատևել»։

Ա.Սթերնի գաղափարախոսության վրա զգալի ազդեցություն է ունեցել Մասադայի ինքնապաշտպանության զորահրամանատար Էլիեզեր բեն Յաիրի հերոսական կերպարը։ Հատկա-

նշական է, որ Լեհի կազմակերպության հիմնադրման շրջանում Սթերնը փոխեց իր անունը և ներկայացավ որպես ԱՎԻ («Աբրահամ Բեն Յահիր»), ինչի արդյունքում բավական կարճ ժամանակահատվածում հայտնի դարձավ հասարակությանը որպես ուղղակի «Յահիր»:

Լեհի պարտիզանական խմբավորման շրջանակներում հրատարակվել են սիկարիների և զելոտների սխրագործություններին, ինչպես նաև Մասադային վերաբերող մի շարք հոդվածներ: Կազմակերպության հրատարակած հոդվածներից մեկում՝ «Մասադայի փիլիսոփայությունը» խորագրով, փաստերի հիման վրա համեմատականներ էին անցկացվում Մասադայի ինքնապաշտպանության առաջնորդների և Լեհի խմբավորման մարտական գործունեության միջև՝ նպատակ ունենալով հաստատել հրեա ժողովրդի անկախության համար մղված պայքարի շարունակականության գաղափարը: Հոդվածում ասվում էր. «Մասադան այն կետն է, որտեղից փաստացի Լեհին սկսում է իր գործունեությունը»:

Եվս մեկ խորհրդանշական օրինակ. 1942թ., երբ Սթերնի դիրքերը բավական թուլացել էին, Հագանան վերջինիս առաջարկեց իր աջակցությունը, որը, սակայն, կտրականապես մերժվեց: Արդյունքում՝ կարճ ժամանակ անց նրան ոչ մեծ դժվարությամբ կարողացավ հայտնաբերել բրիտանական հետախուզությունը, որից հետո նա սպանվեց բրիտանացի սպայի կողմից: Ինչպես հաստատում է հետազոտողների մեծ մասը, Հագանայի արված աջակցության առաջարկի մերժումը Սթերնի կողմից ուներ մեկ նպատակ. հասկանալով իրադրության ողջ բարդությունը՝ Սթերնը խորհրդանշաբար չընդունեց այդ օգնու-

թյունը և, կարծեք թե, Մասադայի ինքնապաշտպանների օրինակով, գնաց ինքնազոհաբերման՝ արտահայտելով նվիրվածությունն ու հավատարմությունը Մասադայի հերոսապատմանը:

Գադնա զինյալ կամավորական շարժումը: Մեծ է Մասադայի խորհրդի դերն Իսրայել պետության հիմնադրման տարիներին գործող մեկ այլ հրեական զինյալ շարժման՝ Գադնա կամավորական կազմակերպության գործունեությունում: Գադնան (երիտասարդության գումարտակներ) հիմնադրվել է 1948թ. Հագանայի կազմում ներառված մի շարք երիտասարդական խմբավորումների հիման վրա, որոնց ճամբարներում հրեա երիտասարդները զինվորական բարձր պատրաստվածություն էին անցնում՝ Հագանայի գործողություններին մասնակցելու նպատակով: Գադնա կամավորական շարժման այդ շրջանի առաջնորդ Մոշե Գիլբոան «Այն օրերին, այս ժամանակ» հոդվածի հեղինակն է (որի հիման վրա հետագայում լույս տեսավ նաև Յ.Յադինի «Մասադա. այն օրերին, այս ժամանակ» գիրքը)[1]: Հոդվածում հեղինակը զուգահեռներ էր անցկացնում մաքքավեականների և Իսրայելի Պաշտպանության բանակի հերոսության միջև, մաքքավեականներին ներկայացնում որպես «հնա-

[1] Համաշխարհային հրեության շրջանում մեծ հեղինակություն է վայելում Յիգաել Յադինի հեղինակած «Մասադա. այն օրերին, այս ժամանակ» (*Masada: In Those Days – At This Time*) գիրքը: Ի դեպ, գրքի վերնագրի վերջին 4 բառերը, որոնք բառացիորեն վերցված են հրեական «Հաննուկա» տոնի փոքր պատմություններից, ունեն խորհրդանշական նշանակություն և կապվում են Մասադայի դիցաբանության հետ: Դրանով հեղինակը փորձում է Մասադայի օրինակի հիման վրա ցույց տալ, որ այն, ինչ եղել է անցյալում, կարող է պատահել նաև այսօր: «Հաննուկան» ութօրյա հրեական տոն է, հայտնի է նաև որպես Լույսերի տոն: Հրեական այս տոնը կապվում է մ.թ.ա. 167թ. Սիրիայի Անտիոք IV թագավորի դեմ հրեաների (մաքքավեականներ) ապստամբության հետ, որն արգելել էր հուդայականության դավանումը: Հրեական ավանդությունում Հաննուկան արտահայտում է հրեաների նվիրվածությունն ու հավատարմությունը Երուսեղեմի Սուրբ տաճարին և հուդայականությանը:

գույն Իսրայելի բանակ»։ Հեղինակը շեշտում էր, որ «Մասադան էլ երբեք չի ընկնի, և որ Իսրայել պետությունը կիրագործի իր մարգարեների ու պետություն կերտողների տեսությունները»։ Հարկ է նշել նաև, որ հրեական այլ զինյալ խմբավորումների օրինակով Գադնա կամավորական կազմակերպությունը նույնպես կանոնավոր երիտասարդական արշավներ էր նախաձեռնում դեպի Մասադա լեռ։

***

Մասադայի սխրագործությունը վառ արտացոլում է գտել նաև գերմանացիների դեմ Հագանայի, Պալմահի և այլ հրեական պարտիզանական ընդհատակյա կազմակերպությունների մղած պայքարում։ Մասադայի հերոսապատման անվան հետ է կապվում Երկրորդ աշխարհամարտի տարիներին գերմանացիների դեմ հրեաների մղած պայքարում (1942թ.) Հագանայի երկու զորահրամանատարների՝ Յոխանան Ռաթների (Yochanan Ratner) և Յիցհակ Սադեհի (Yitzhak Sadeh) կազմակերպած «Հյուսիսի համար նախագիծը» (Plan for North), որը հայտնի է նաև որպես «Մասադայի նախագիծ»[1]։ «Հյուսիսի համար նախագիծը» նպատակ էր հետապնդում համախմբել Յիշուվի[2] բնակչությանը Հայֆայի և Քարմելի լեռներում՝ գերմանացիների դեմ պարտիզանական պայքար կազմակերպելու համար։ Նախագծի՝ լեռներում առանձնանալու և կռվելու ռազմավարության ընտրությունը պատահական չէ և ասոցացվում է Մասադայի ինքնապաշտպանության ռազմավարության հետ։

[1] «Հյուսիսի համար նախագիծն» այլ աղբյուրներում հանդիպում է որպես «Մասադան Քարմելի վրա» նախագիծ։
[2] Պաղեստինում հաստատված հրեաների շրջանը կամ բնակավայրը։

«Մասադայի նախագծի» հետ է կապվում նաև Հագանայի Հայֆա քաղաքի զորահրամանատարներից մեկի՝ Դավիթ Շալթիելի (David Shaltiel)[1] գործունեությունը: Հետազոտողներից շատերն են հիշատակում գերմանացիների դեմ Հագանայի մղած մարտերից մեկում Դ.Շալթիելի հայտնի ելույթը՝ զուգահեռներ անցկացնելով վերջինիս ու Մասադայի ինքնապաշտպանության առաջնորդ Էլիազար բեն Յաիրի ելույթների միջև: Ստորև մեջբերում ենք նրա խոսքերը (1942թ. գարուն). «Ավելի հեշտ էր մեռնել Մասադայում, քան ապրել Գեստապոյի վարչակազմի ներքո... Ավելի լավ է մենք հավաքենք 3000 մարդ, որոնք պատրաստ են ամեն ինչի, և գնանք դեպի լեռներ՝ պարտիզանական պայքար մղելու համար»:

Տեղին է հիշատակել նաև այդ ժամանակաշրջանում Հրեական գործակալության (Jewish agency) առաջնորդներից մեկի՝ Յիցհակ Գրինբաումի դերակատարումը գերմանացիների դեմ պայքարում, որը նույնպես հրեա ժողովրդի ազատագրական պայքարում մեծ տեղ էր հատկացնում Մասադայի հերոսապատմանը: 1942թ. հունիսի 30-ին Հրեական գործակալության առաջնորդների հանդիպման ընթացքում Յիցհակ Գրինբաումն ազդեցիկ ելույթ ունեցավ, որտեղ նշվում էր. «Եթե մեզ վրա հարձակվեն (գերմանացիները- *հեղ.*) և նվաճեն մեր դիրքերը, պետք է վստահ լինենք, որ մեզանից հետո առնվազն կթողնենք «Մասադայի» լեգենդը»:

Մասադայի հերոսապատման օրինակով էր կազմված նաև հայտնի Իրգուն զինյալ խմբավորման մշակած «Երուսաղեմի

[1] Անկախության համար մղված զինված պայքարի ընթացքում Դավիթ Շալթիելն առանցքային դերակատարություն է ունեցել Հագանայի՝ Իրգուն և Լեհի ընդհատակյա կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կոորդինացման գործում:

հին քաղաքի» նախագիծը, որի հիմնական նպատակն էր հավաքել կազմակերպության բոլոր ստորաբաժանումների հազարավոր մարտիկներին Երուսաղեմի հին քաղաքում և կռվել հանուն հրեական պետության հիմնադրման (հավանաբար, 1947թ. աշնանը)։

Մասադայի խորհուրդը և Իսրայելի Պաշտպանության բանակը

20-րդ դարի 30-40-ական թթ. հրեական պետության ստեղծման համար պայքարող հրեական զինված ընդհատակյա խմբավորումների մարտական և գաղափարական գործունեությունում Մասադայի հերոսապատման մեծարման ավանդույթն էլ ավելի նոր եռանդով շարունակվեց Իսրայել պետության հիմնադրումից հետո՝ դառնալով նրա Պաշտպանության բանակի ազգային խորհրդանիշներից մեկը։ Վերջինիս կազմավորման առաջին տարիներից սկսած՝ շարունակվեցին հրեա զինվորականության կանոնավոր արշավները դեպի Մասադայի լեռ, որոնք հետագայում դարձան Իսրայելի Պաշտպանության բանակի զինծառայողների կարևոր ուսումնավարժություններից մեկը։ Մասադայի զինվորական արշավներն իրականացվում են մեծ շուքով. լեռան գագաթին բարձրաձայն արտասանվում է Էլիազար բեն Յաիրի ելույթը (նաև հատվածներ Հովսեփոս Փլավիոսից), որից հետո զինվորականության կողմից միահամուռ հնչեցվում են հայտնի դարձած «Մասադան էլ երբեք չի ընկնի» (Masada Shall Never Fall Again)[1] բառերը, տրվում է հավատարմության և

[1] «Մասադան էլ երբեք չի ընկնի» արտահայտությունը պատկանում է հրեա բանաստեղծ Իցհակ Լամդանի (1899-1945թթ.) գրչին՝ հայտնի «Մասադա» բանաստեղծությունից (1927թ.), որը նվիրված էր Մասադայի հերոսապատմանը։ Այդ արտահայտությունը նաև հրեական ընդհատակյա զինյալ խմբավորումների զինվորական կարգախոսներից մեկն էր։

նվիրվածության զինվորական երդում։

Մասադայի ռազմական ուխտագնացությունը, հաշվի առնելով լեռնահովտի աշխարհագրական բարդ դիրքը, պայմանավորված է մեծ դժվարություններով և զինվորներից պահանջում է ֆիզիկական ու հոգեբանական բարձր կամային հատկանիշներ, պատրաստվածություն, որոնց հաղթահարումը խորհրդանշական նշանակություն ունի և նույնպես կապվում է Մասադայի ինքնապաշտպանության մարտիկների կրած դժվարությունների հետ։

Բացի այդ, Մասադայի լեռան վրա զինվորականները «Հրեական մեծ ասպտամբության» ռազմական փորձի օրինակով ուսումնական զորավարժություններ են կազմակերպում։ Թե՛ նախքան հրեական պետականության ստեղծումը, թե՛ Իսրայել պետության հիմնադրումից հետո հրեա զինվորականությունը պատերազմական գործողությունների նախօրեին պարտադիր այցելություններ է կազմակերպում դեպի Մասադայի ամրոց, տալիս հավատարմության և նվիրվածության երդում։ Մինչև 1967թ. վեցօրյա պատերազմը, երբ Արևմտյան պատը («Լացի պատ») դեռևս չէր պատկանում հրեաներին, Մասադան, կարելի է ասել, ստանձնել էր Իսրայելի բնակչության և համաշխարհային հրեության պատմական սրբավայրին փոխարինողի դերը[1]։

Նշանակալի է Մասադայի խորհուրդն Իսրայել պետության սահմաններից դուրս բնակվող հրեության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում՝ որպես ազգային

[1] Նշենք նաև, որ Արևմտյան պատը սրբատեղի է համարվում նաև հրեա զինվորականության համար. Իսրայելի Պաշտպանության բանակի նորակոչիկ զինծառայողները զինվորական երդում են տալիս նրա մոտ։

ինքնության պահպանման, Իսրայելի և հրեության միջև կապերի ամրապնդման կարևոր գործոն։ Իսրայելի Պաշտպանության բանակի ղեկավարության ակտիվ միջամտությամբ առանձնակի կարևորություն է տրվում հրեա հայրենադարձների շրջանում Մասադայի հերոսապատման՝ որպես հրեա ժողովրդի ազգային ինքնության պահպանման ու ազգակերտման անքակտելի բաղկացուցչի ընկալմանը, որտեղ Մասադան խորհրդանշում է հրեա ժողովրդի պատմության հիմնական փուլերի՝ հնագույն ժամանակաշրջանի ազգային ազատագրական պայքարի, հայրենիքից կտրված և պետականության բացակայության երկհազարամյա գոյապահպանության և Իսրայել պետության ստեղծման միջև անքակտելիության ու շարունակականության գաղափարը։

Հավելենք, որ հրեա ժողովրդի պատմության հաղթանակների և հերոսապատումների պատմական հիշողության վերականգնման և դրանց ազգային խորհրդանիշների վերածման գործընթացն առանցքային կարևորություն ունի Իսրայելի բնակչության և հրեա զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության տեսանկյունից։ Հրեա զինվորականության ազգային խորհրդանիշների թեմատիկայի ուսումնասիրության շրջանակները, որոնք բավական ընդգրկուն են, շարունակում են մեծ նշանակություն ունենալ հայ ժողովրդի հերոսապատումների համարժեք հետազոտման և արժևորման օրինակով հայ զինվորականության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում։

Մասադայի հերոսապատումը և Հոլոքոսթը. անցում ողբերգությունից հաղթանակի

Իսրայելի ազգային կոլեկտիվ հիշողությունում Մասադան և Հոլոքոսթը թեև դասվում են հրեա ժողովրդի պատմության ամենաողբերգական իրադարձությունների շարքին, սակայն ունեն հաղթական պայքարի և հերոսապատման ընկալումներ: Կարելի է ասել, որ հրեական ազգային կոլեկտիվ հիշողությունում դրանք ունեն շրջադարձային նշանակություն. համաշխարհային հրեության մեջ անգնահատելի են նրանց պատմական դերակատարությունն ու ուսուցողական նշանակությունը Իսրայել պետության, նրա բնակիչների և հրեության անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում:

Հրեա ժողովրդի ազգային-գաղափարական մտածողությունում Մասադայի և Հոլոքոսթի միջև սկսեցին զուգահեռներ անցկացվել Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի կողմից Եվրոպայի հրեաների նկատմամբ իրականացված բռնությունների և հետապնդումների տարիներին, որոնք հանգեցրին 6 միլիոն հրեաների ցեղասպանության: Այդ տարիներին, սակայն, հրեության գաղափարական առաջնորդների և հատկապես Պաղեստինում հաստատված սիոնիստական գաղափարախոսների հայացքներում Մասադան և Հոլոքոսթը ներկայանում էին որպես միմյանց հակադիր դրսևորումներ: Ի տարբերություն Մասադայի, որը մարմնավորում էր հնագույն ժամանակաշրջանում հրեա ժողովրդի ազգային ազատագրական պայքարում ցուցաբերած հերոսությունը, հայրենասիրությունը և ինքնազոհաբերումը՝ հանուն հայրենիքի և ազգային արժանապատվության, Հոլոքոսթը, ըստ սիոնիստ

գաղափարախոսների, ասոցացվում էր պասիվ զոհողության, առանց դիմադրության պայքարի և հարմարվողականության հետ: Արդյունքում՝ Պաղեստինում հաստատված հրեաների համար, ի հակադրություն Եվրոպայի հրեաների «պասիվության», էլ ավելի ընդգծվեց Մասադայի՝ որպես անհնազանդության, անկախության պայքարի և ինքնազոհաբերման պաստրաստակամության ազգային խորհրդանիշի կարևորումը: Մյուս կողմից, Եվրոպայի հրեաների նկատմամբ բռնությունների ալիքը նոր լիցք հաղորդեց Պաղեստինում հաստատված հրեաների ազգային ազատագրական պայքարին և Մասադայի փառաբանմանը՝ որպես անկախության համար մղված պայքարի *վերջին հենակետ*, ի հակադրումն Հոլոքոսթի հարմարվողականության և հնազանդության, *մինչև վերջ պայքարելու* (*fighting to the end*) պատրաստակամության մարմնավորում: Տեղին է հիշատակել 1943թ. այդ առիթով Դավիթ Բեն-Գուրիոնի հրապարակային ելույթը, որում նա հակադրում էր Հոլոքոսթը հրեա ժողովրդի հաղթական էջերին: Ելույթում նա փառաբանում էր 1920թ. Թել-Հայ հրեական բնակավայրի ինքնապաշտպանությունը՝ անվանելով այն «երկրորդ Մասադա»[1]: Բեն-Գուրիոնի խոսքերով, ինչպես Մասադան, Թել-Հայը ցուցաբերեց արժանապատ-

[1] 1920թ. Թել-Հայ բնակավայրի ռազմագյուղացիական պաշտպանությունը կապվում է հրեա ժողովրդի ազգային հերոսներից մեկի՝ պաշտպանությունը գլխավորած Իոսիֆ Տրումպելդորի կերպարի հետ: Վերջինս իր «գերագույն նպատակի» իրագործումը կապում էր «ժողովրդի բանակի» գաղափարի հետ, որի զինվորականներն իրենց հետևից կտանեին հրեա ժողովրդին, կպաշտպանեին վերջինիս ու հրեական պետականությունը՝ հանուն դրա չխնայելով սեփական կյանքը: Թել-Հայի ինքնապաշտպանությունում իր մահկանացուն կնքելիս Տրումպելդորն արտասանում է հետևյալ խոսքերը. «Երջանիկ է նա, ով զոհվում է հայրենիքի համար»: Այդ բառերը փորագրված են Տրումպելդորի գերեզմանին, որի առջև Իսրայելի պաշտպանության բանակի երիտասարդ զինվորականները երդում են տալիս:

վությամբ մեռնելու նոր ճանապարհ՝ պահելով զենքը ձեռքներին. «Մենք ապրել ենք արտաքսման կյանքը, կախվածությունը, ստորացումը, ստրկությունն ու դեգրադացիան: Ոչ միայն ուրիշները մեզ բերեցին դրանց, այլև մենք ինքներս եկանք դրանց և ընդունեցինք մեր թուլությունը, մեր արտաքսումը... Մենք չգիտեինք ինչպես ապրել ու մեռնել՝ որպես ազատ մարդիկ: Մասադայի ու Թել-Հայի նման, հրեաները պետք է ընտրեին այլ մահ, ոչ թե անուժ, անօգնական, անարժեք զոհաբերումը, այլ մենք պետք է զենքը ձեռքներիս մահանայինք»:

Եվրոպայի հրեաների դիրքորոշումը, որն ակտիվորեն քննադատվում էր Իսրայել պետության հիմնադրումից հետո՝ 1940-1950-ականներին, նաև Իսրայել պետության ղեկավարության ջանքերով սկսեց նոր ընկալումներ ստանալ միայն 1960-ականներից սկսած՝ դառնալով Իսրայելի անցյալի հերոսական էջերից մեկը: Արդյունքում՝ Իսրայելի ազգային կոլեկտիվ հիշողությունում յուրօրինակ խորհրդանշական կամուրջ ստեղծվեց Մասադայի, Հոլոքոսթի և Իսրայել պետության հիմնադրման միջև (հաստատվում է երեքի միջև շարունակականությունը), որտեղ Հոլոքոսթը մարմնավորում է Հրեաների արտաքսման (Jewish Exile) էջի ավարտը և հրեական պետության հիմնադրման սկիզբը: 1960-70-ականներից սկսած՝ Իսրայել պետությունը լուրջ քաղաքականություն է տանում հրեա համայնքների պատմության, ավանդույթների ուսումնասիրման ուղղությամբ՝ արտաքսման մեջ հրեաների պատմությունը դիտելով որպես հրեության կոլեկտիվ անցյալի անքակտելի մաս: Մասադայի և Հոլոքոսթի զուգահեռներում վերիմաստավորվեցին նաև նախկինում կարծրացած «հերոսներ» և «զոհեր» կատեգորիաները: Արդյուն-

քում՝ վերջիններս ողբերգության ընկալումից անցում կատարեցին հրեա ժողովրդի համար հաղթանակած անցյալին:

Հետևություններ

Սիոնիստական շարժման ձևավորման ժամանակաշրջանը հիմք դրեց հրեա ժողովրդի պատմության հերոսական իրադարձությունների՝ որպես ազգային խորհրդանիշների, հրեության կոլեկտիվ և պատմական հիշողության զարթոնքին: Հրեական հերոսապատումների օրինակով Մասադան նույնպես առանցքային դերակատարում ունեցավ 1920-ականներին Պաղեստինում հաստատված հրեաների ազգային ազատագրական պայքարում և հրեական պետականության հիմնադրման գործընթացում: Մասադայի՝ որպես զինյալ խորհրդանիշի, կերպարը շարունակում է անփոփոխ մնալ Իսրայել պետության հիմնադրումից հետո: Մասադայի ոդիսականը, սակայն, ավելին է, քան զինյալ խորհրդանիշը. զգալի է Մասադայի ինքնապաշտպանության կոլեկտիվ հիշողության դերն Իսրայել պետության գործունեության գրեթե բոլոր ոլորտներում (գրականագիտություն, դիցաբանություն, ռազմարվեստ, գիտություն, կրոնագիտություն և այլն): Մասադան հաջողությամբ ներգրավվել է ինչպես պաղեստինա-իսրայելյան դիվանագիտական հարաբերություններում, այնպես էլ ժամանակ առ ժամանակ կիրառություն է ստանում Իսրայելի մերձավորարևելյան քաղաքականությունում: Պետական հետևողական քաղաքականության արդյունքում չի կորել Մասադայի հերոսապատման թեմայի ակտուալությունն Իսրայելի սահմաններից դուրս և հատկապես Միացյալ Նահանգներում ու Արևմտյան Եվրոպայում: Դա են հաս-

տատում արևմտյան մամուլում և վերլուծականներում Մասադային վերաբերող բազմաթիվ հրապարակումները (քաղաքական, ռազմական, պատմական, կրոնադավանաբանական), որոնք դառնում են գիտական բանավեճերի և քաղաքական շահարկումների նյութ։

Մասադայի թեմատիկան ակտուալ է նաև մերօրյա միջազգային հարաբերություններում։ Բավական է հիշատակել 2008թ. մայիսի 15-ին Իսրայելի Քնեսեթում (խորհրդարան) Իսրայել պետության հիմնադրման (1948թ. մայիսի 14-15) 60-ամյակի կապակցությամբ Միացյալ Նահանգների նախկին նախագահ Ջ.Բուշ-կրտսերի հայտնի ելույթը, որտեղ նշվում էր նաև Մասադան. «Իսրայելի քաղաքացիներ, Մասադան էլ երբեք չի ընկնի, և Ամերիկան մշտապես ձեր կողքին կլինի»։ Իսկ մինչ ելույթը, նույն օրը նախագահ Բուշն այցելել էր Մասադայի լեռ։

Իսրայել պետության ղեկավարության հետևողական քաղաքականության արդյունքում հրեա զինվորականության բարոյահոգևոր արժեհամակարգը բավական բարձր մակարդակի է, առանցքային նշանակություն են ունեցել նաև հրեա ժողովրդի պատմական հաղթանակների և հերոսապատումների կոլեկտիվ հիշողության վերականգնումն ու դրանց հրապարակայնացումը։ Հատկապես բարձր է Իսրայելի Պաշտպանության բանակի զինվորականության՝ հայրենիքին նվիրվածության, հանուն Իսրայել պետության ու հրեության անվտանգության ապահովման ինքնազոհաբերման բարձր պատրաստակամության գիտակցումը։ Դա են փաստում նաև հրեական Քաղաքականության և ռազմավարության ինստիտուտի՝ 2006թ. հայրենասիրության խնդիրներին նվիրված սոցհարցումների արդյունքները,

որոնց համաձայն՝ Իսրայելի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 85%-ը, պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտության դեպքում կռվել իր պետության համար և զոհվել հանուն նրա։

2.9. Զինվորականության հոգևոր-բարոյական արժեհամակարգի հիմնահարցեր. միջազգային փորձ և հայ իրականություն

Ներկայացնենք զինվորականության արժեհամակարգի միջազգային փորձը, ինչը կնպաստի նաև հայ զինվորականության բարոյահոգևոր պատրաստվածության հիմնահարցերի վերաբերյալ մեր պատկերացումների խորացմանն ու ընդլայնմանը։ Վերջինիս արժեքաբանական, բարոյահոգևոր դաստիարակության համատեքստում էական նշանակություն է ստանում զինվորականության շրջանում միջանձնային և մարդկային հարաբերությունների բարելավման հարցը։ Հիմնախնդրի ուսումնասիրության տեսանկյունից նպատակահարմար ենք համարում ուշադրություն դարձնել երկու հիմնական և, կարելի է ասել, միմյանցից անբաժան ուղղությունների վրա, որոնք են.

1. զինվորականության և հասարակության շրջանում միջանձնային հարաբերությունների ոլորտի միջազգային փորձը,
2. մարդկային հարաբերությունների՝ հայ ժողովրդի և հայ զինվորականության բարի ավանդույթների նկատմամբ պատմական և կոլեկտիվ հիշողության վերականգնման գործընթացը՝ միջազգային փորձի համադրմամբ։

Միջազգային փորձի դիտարկումներ

Ինչպես արդեն նշեցինք, հայ զինվորականության շրջանում միջանձնային հարաբերությունների բարելավման և մարդկային հարաբերություններում արժեքաբանական, բարոյական ուղղությունների զարգացման գործում էական տեղ է հատկացվում տարբեր երկրների հասարակություններում և զինվորականությունում տիրող միջանձնային հարաբերությունների փորձի ուսումնասիրությանը, որի շրջանակներում կներկայացնենք մեզ հետաքրքրող երկրների զինվորականության վերաբերյալ կարևոր դիտարկումներ։

Ֆրանսիական մոդել։ Միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից բավական ուսանելի է միջանձնային հարաբերությունների «ֆրանսիական մոդելը», որը կիրառվում է ինչպես այդ երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Պետք է նշել, որ ֆրանսիական մոդելն այդ երկրում սկիզբ է առել նախորդ դարի 60-70-ականներին, սակայն զգալի ազդեցություն է ունեցել նրա հասարակական, մշակութային և զինվորական կյանքում հատկապես 80-ականներից սկսած։

Ֆրանսիական մոդելը ներկայացնում է մարդկային այնպիսի հարաբերություններ, որոնցում անձանց բնավորության և խառնվածքների անհամատեղելիության ու հակասությունների հիման վրա ձևավորվում և զարգանում են միջանձնային արդյունավետ հարաբերություններ։ Բավական է հիշատակել միմյանցից բնավորությամբ և հոգեբանական խառնվածքով տարբերվող, նույնիսկ հակասական կերպարներով ֆրանսիական ֆիլմերը (օրինակ, «Անհաջողակները»՝ Պիեր Ռիշարի և Ժերար Դեպարդիեի մասնակցությամբ, 2003թ. նկարահանված

նույնանուն ֆիլմը՝ այս անգամ Ժան Ռենոյի և Ժերար Դեպարդիեի մասնակցությամբ և այլն)։ Ֆրանսիական մոդելում կիրառված երկու հակասական կերպարները, չնայած բնավորությունների, հետաքրքրությունների անհամատեղելիությանն ու անընդմեջ հակառակումներին, ոչ միայն լավ, այլև անբաժանելի ընկերներ ու մտերիմներ են։ Նշենք, որ ֆրանսիական մոդելը, որը լայն տարածում գտավ ֆրանսիական մշակութային կյանքում, արագ ու անխոչընդոտ ներարկվեց նաև այդ երկրի հասարակության գրեթե բոլոր ոլորտներում։

Ինչպես նշվեց վերը, հակասական երկու կերպարների ֆրանսիական մոդելը լայն տարածում է գտել այդ երկրի սահմաններից դուրս և կարող է տեղայնացվել նաև հայկական իրականությունում ու օգտագործվել հայ զինվորականությունում միջանձնային հարաբերությունների կարգավորման և ոլորտում առկա բացասական կարծրատիպերի վերացման գործում։ Ֆրանսիական մոդելի՝ հայկական իրականության հետ համատեղելիության հարցում նկատի է առնվում մեր իրականությունում մարդկային հարաբերությունների և առհասարակ հասարակական գործունեության տարբեր ոլորտներում մարդկային գործոնի, միջանձնային փոխհարաբերությունների զգալի ազդեցության հիմնախնդիրը։

Մյուս կողմից, ֆրանսիական մոդելի կիրառությունը հայաստանյան հասարակության և զինվորականության շրջանում հնարավորություն կտա միջանձնային հարաբերությունները բերել առավել հանդուրժողական դաշտ, ինչը կարևոր խնդիր է համարվում մեր օրերում։ Ավելին, մեր իրականությունում լայն տարածում է վայելում այն թյուր բարդույթը, որի ազդե-

ցության հետևանքով մարդկային հարաբերություններում առկա հակասություններն ու բնավորությունների և հետաքրքրությունների անհամատեղելիությունը հանգեցնում են առավել լուրջ խնդիրների՝ բերելով միջանձնային հարաբերությունների մարգինալացման, միմյանցից օտարման: Արդյունքում՝ էապես տուժում են մարդկային հարաբերությունները՝ ընդհուպ մինչև այդ կապերի խզումն ու հակադրվելը: Այս համատեքստում ֆրանսիական մոդելը կարող է դրական և արդյունավետ նախադրյալ հանդիսանալ մարդկային հարաբերություններում առկա հակասությունների անհամատեղելիության շուրջ ձևավորված թյուր պատկերացումների ու կարծրատիպերի վերացման ուղղությամբ:

Ֆրանսիական մոդելը կարող է արդյունավետ կիրառություն ստանալ հայ զինվորականության մեջ նաև այն առումով, որ հայության շրջանում մարդկային փոխհարաբերություններում իշխող են զգացմունքային, բարոյահոգևոր գործոնները, որոնք չափազանց մեծ նշանակություն ունեն միջանձնային հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման համատեքստում:

Նորվեգական մոդել: Զինվորականության բարոյական արժեքաբանական նորմերի և հոգևոր դաստիարակության վերաբերյալ ինքնատիպ սկզբունքներ են պարունակվում Նորվեգիայի պաշտպանական ուժերի համակարգում: Խորհրդանշական է այդ երկրի զինվորական դոկտրինի բնութագիրը, որի համաձայն՝ Նորվեգիայի ռազմական հայեցակարգը «արժեքաբանությամբ առաջնորդվող համակարգ» է (valued-driven organi-

sation)։ Հայեցակարգում նշվում է. «Մենք պաշտպանում ենք արժեքները և առաջնորդվում ենք այդ արժեքներով»։

Նորվեգական զինվորական հոգևոր-բարոյական արժեքային սկզբունքներում գերիշխող են ինչպես համամարդկային-հումանիստական, այնպես էլ ազգային, ավանդական-պահպանողական ուղղությունները, որոնք ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև, որպես կանոն, ներկայանում են անքակտելիորեն և փոխլրացնող գործառույթներ են կատարում։

Առավել հանգամանորեն անդրադառնանք Նորվեգիայի ռազմական դոկտրինում տեղ գտած հիմնարար բարոյական արժեքաբանական սկզբունքներին։ 2007թ. ընդունված ռազմական դոկտրինում (Norwegian Armed Forces Joint Operational Doctrine) առանձին բաժին է նվիրված զինվորականության բարոյական արժեքներին և բարոյահոգևոր դաստիարակությանն առհասարակ։ Համաձայն այդ սկզբունքների, նորվեգացի զինվորականի հոգևոր-բարոյական կարևորագույն արժեքների շարքում առանձնացվում է զինծառայության, ռազմական գործողությունների և զինվորական կյանքում թիմի ու թիմային աշխատանքի գաղափարը։ Ռազմական դոկտրինում ասվում է. «Մենք չենք կարող իրականացնել մեր նպատակները առանձին, դրանց իրագործումը կարող է համարվել նպատակային ու արդարացված, եթե աշխատում ենք միասին»։ Թիմային գործողությունների բարոյական արժեքը հիմնվում է այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են զինվորականության ներկայացուցիչների միջև փոխադարձ հարգանքը, սեփական գործողությունների, միմյանց և ողջ հասարակության նկատմամբ զինվորականի բարձր պատասխանատվության գիտակցումն ու խիզախությունը։

Երկրի ռազմական դոկտրինի հիմնարար արժեքներից հարկ ենք համարում նշել նաև անհատների հավասարության և ժողովրդավարության սկզբունքների նկատմամբ հավատի սկզբունքը, որն ինչպես Նորվեգիայի զինվորականության, այնպես էլ հասարակության կենտրոնական արժեքներից է։

Ռազմական դոկտրինի համամարդկային արժեքների կողքին էապես կարևորվում են նաև Նորվեգիայի զինված ուժերի դարավոր ավանդույթները, որոնք նորվեգացի զինվորականության ինքնության հիմնասյուներից են։ Դոկտրինում ասվում է. «Նա, ով կրում է զինվորական համազգեստը, մեր մասնագիտության (մեր գործի- *հեղ.*) մի մասնիկն է»։

Իռլանդական զինվորականության բարոյական արժեքները։ Ուշագրավ բարոյական սկզբունքներ են պարունակվում նաև Իռլանդիայի զինվորականության արժեհամակարգում։ Երկրի զինվորական հոգևոր-բարոյական արժեքաբանության կենտրոնական գաղափարներից առանձնացվում է զինվորականության կարգապահության անհրաժեշտությունը։ Իսկապես, եթե մանրամասն անդրադառնանք Իռլանդիայի զինվորականության բարոյական արժեհամակարգին առնչվող փաստաթղթերին, որոնց մեկնաբանություններին ու հանրային իրազեկվածության ապահովմանը մեծ ուշադրություն է դարձվում, ապա կնկատենք, որ այդ փաստաթղթերում զինվորական կարգապահության սկզբունքն ու զինծառայության բուրգային կարգապահական ինստիտուտն այդ երկրի զինվորականության բարոյահոգևոր մարտունակության և դաստիարակության անկյունաքարերից են։ Երկրի ռազմական հայեցակարգի համաձայն, զինվորական կարգապահության՝ որպես հիմնարար

բարոյական արժեքից են սերում այնպիսի բարոյական սկզբունքներ, ինչպիսիք են փոխադարձ հարգանքը, նվիրվածությունը, թիմի և միասնականության գաղափարը, բարոյական խիզախության սկզբունքը և այլն: Նպատակահարմար ենք համարում Իռլանդիայի զինվորականության բարոյական արժեհամակարգին վերաբերող փաստաթղթերից մեջբերել այդ սկզբունքների հիմնական մեկնաբանությունները.

1. հարգանք – դու պետք է վերաբերվես քեզ շրջապատող զինվորականներին արժանապատվությամբ, հարգանքով, հանդուրժողականությամբ և փոխըմբռնմամբ, անկախ նրանից՝ մարտական գործողություններ են, թե խաղաղ պայմաններ,
2. նվիրվածություն – դու պետք է հավատարիմ ու նվիրված լինես քո հրամանատարներին ու ենթականերին, քո թիմին ու նրա անդամներին,
3. ինքնազոհաբերություն – քո անձնական շահերը չպետք է գերադասես առաքելության ու քո թիմի կարիքներին,
4. բարոյական խիզախություն – դու պետք է կատարես այն, ինչ գտնում ես ճիշտ, այլ ոչ թե այն, ինչ հեշտ է և տարածված, մատչելի,
5. ազնվություն – դու պետք է լինես անկեղծ, նվիրված ու ազնիվ, միայն այդ դեպքում թիմն ու թիմի անդամները կվստահեն քեզ, ինչն իր հերթին կուժեղացնի թիմի գործողությունները: Նկատենք, որ ազնվության արժեքից է սերում զինվորականության շրջանում միմյանց նկատմամբ հավատի սկզբունքը, որը նույնպես առանցքային նշանակություն ունի զինվորականի հոգևոր-բարոյական դաստիարակությունում:

Իռլանդիայի զինվորական արժեհամակարգում, ինչպես արդեն նշվեց, առանձնակի տեղ է հատկացվում թիմին և թիմային գործողությունների, միասնականության գաղափարին։ Ինչպես զինվորական կարգապահության, այնպես էլ առավել ևս թիմային գործողությունների և միասնականության սկզբունքը, ըստ էության, համադրելի և ուսանելի է հայաստանյան զինվորական իրականությունում։ Հայ զինվորականությունը հայ ժողովրդի անվտանգության պաշտպանության և ազգային-ազատագրական պայքարի դարաշրջաններում մշտապես հաղթանակներով է դուրս եկել շնորհիվ զինվորական միասնականության և թիմային աշխատանքի սկզբունքի (ֆիդայական շարժումներ)։ Նվիրվածությունը թիմին և թիմի յուրաքանչյուր անդամին հայ զինվորականության արդիական և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից է։ Դժվար է չհամաձայնել, որ ներկայում հայ զինվորականության բարոյահոգևոր արժեհամակարգում հետին պլան է մղվել հայ զինվորականության պատմության՝ թիմի և միասնականության սկզբունքը կամ արժեքը։ Հաղթական էջերի և ավանդապատումների նկատմամբ կոլեկտիվ հիշողության վերականգնման գործընթացը (օրինակ՝ ազգային ազատագրական, ֆիդայական շարժումների սցենարային կիրառությամբ ուսումնավարժությունների կազմակերպում, դասալսումների անցկացում և այլ սցենարային, ռազմական խաղային միջոցառումներ) կնպաստի այդ ավանդույթների նորովի վերիմաստավորմանը։

Հայ իրականություն

Պատմության ընթացքում սպառնալիքների և իրական թշնամանքի մթնոլորտի արդյունքում հայ ժողովուրդն իր գոյապահպանության և անվտանգության հարցում մշտապես ապավինել է հայոց զինվորականությանը, նրա մարտական և բարոյահոգևոր բարձր պատրաստվածությանը, փառաբանել նրա հերոսականությունը: Հայ զինվորականի մեծարումը նաև պայմանավորված է զինվորականության հասարակայնացման գործընթացով, այն է՝ հայության պատմության ողջ ընթացքում զինվորականության շարքերը համալրում էին թե՛ ռազմական ոլորտի ներկայացուցիչները, թե՛ մտավորականներն ու գյուղացիները:

Խորհրդային կարգերի փլուզմամբ և Արցախյան հերոսամարտի փայլուն հաղթանակով նոր կազմավորված Հայոց բանակում սկսեց արագ տեմպերով ընթանալ սոցիալականացման բարդ գործընթաց, որն ուներ ինչպես իր տրամաբանական, այնպես էլ արհեստածին նախադրյալները: Խնդիրն այն է, որ հատկապես վերջին տասնամյակում հայ զինվորականության շրջանում ընթացող սոցիալականացման միտումներն ուղեկցվեցին լուրջ բարոյական-արժեքաբանական մոտիվներով, ինչը, թերևս, պետք է կապել ՀՀ անկախացումից հետո երկրի ծանր սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական վիճակի հետ: Սակայն, մյուս կողմից, չպետք է հայ զինվորականության խնդիրները պայմանավորել զուտ երկրի սոցիալ-հասարակական գործընթացներով, այլ նաև փնտրել այլ շարժառիթներ, ինչպես, օրինակ՝ ազգային ինքնության և խառնվածքի հիմնահարցերը: Արդյունքում՝ հայության և հատկապես հայ զինվորականության շրջանում ավանդություն դարձած «եղբայրական-

թիմային» հարաբերությունները, որոնք էլ ավելի ամրապնդվեցին Արցախյան հերոսամարտի ընթացքում, ենթարկվեցին աստիճանական ձևախեղումների։ Սոցիալականացման այս գործընթացն իր բացասական ազդեցությունն ու հետևանքները չէր կարող չթողնել հասարակության մեջ հայ զինվորի փառաբանման ավանդույթների վրա։ Մյուս կողմից, բացասական միտումները զգալիորեն նպաստեցին նաև հայ զինվորականության շրջանում միջանձնային հարաբերությունների (զինվոր-զինվոր, զինվոր-սպա) վատթարացմանը։ Ավելին, զինվորական կյանքում և այնտեղ ձևավորված մարդկային հարաբերություններում տեղի է ունենում օտարման արժեքաբանական գործընթաց, որն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին՝ «հրամցված» շարժառիթներ։

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել, որ այս ամենի հետ մեկտեղ հայ իրականությունում ենթագիտակցաբար, իսկ այնուհետև՝ գիտակցաբար որոշակիորեն ձևախեղման է ենթարկվել նաև հայ զինվորականության առաքելության ու նպատակի հիմնահարցը, որը բարձր պետական և համամարդկային արժեքաբանական ընկալումներից տեղափոխվել է սոցիալ-կենցաղային մակարդակ։ Այն է՝ հայ իրականությունում հայոց պետականության և ողջ հայության անվտանգության պաշտպանության գիտակցումը, որը յուրաքանչյուր հայի, առավել ևս հայ զինվորականի բարձրագույն առաքելությունն է, դարձել է աղոտ։ Վերը նշված միտումներից առանձնացնենք վառ օրինակներից մեկը. հայ իրականության մեջ փորձ է արվում հայ զինվորականության շրջանում տեղի ունեցող գործընթացներն ու իրադարձությունները պայմանավորել գլոբալ և հատկապես

հետխորհրդային սոցիալականացման «տրամաբանական, բնականոն» միտումներով՝ պարզաբանելով դրանք հարևան երկրների նմանատիպ միտումներով, իրադարձություններով և առկա վիճակագրությամբ: Պետք է նշել, որ այդ գործելաոճով մենք ինքներս նախ փորձում ենք հակասել հայության պատմական հոգևոր-բարոյական ժառանգությանն ու հայ ազգային ինքնության առանձնահատկություններին, և երկրորդ՝ նպաստում ենք հասարակությունում և զինվորականության շրջանում բարոյահոգևոր արժեքների խեղաթյուրմանը:

Հայ զինվորականության բարոյահոգևոր ավանդական արժեքների պահպանման և խորացման նպատակներով ներկայացնենք մի շարք առաջարկություններ.

ա. հայության և հայ զինվորականության շրջանում հայ ազգի և հայոց պետականության անվտանգության պաշտպանության «բարձրագույն առաքելության» գիտակցման ընկալման բարձրացում,

բ. յուրաքանչյուր զինվորականի մեջ՝ լինի շարքային զինվորական, թե սպա, հայության և հայոց պետականության պաշտպանության խնդրի՝ որպես յուրաքանչյուր զինվորականի բարձրագույն առաքելության արժեքաբանական, բարոյահոգևոր ավանդույթների վերականգնում,

գ. հայ զինվորականության և հայության շրջանում զինծառայության նպատակի ձևակերպման արժեքային հիմքերի կաղապարում,

դ. հայ զինվորականությունում համամարդկային արժեքների՝ հայ ազգային ինքնությանը հարիր ավանդույթների և պատմական հիշողության վերականգնում,

ե. զինվորականության շրջանում մարդկային, միջանձնային հարաբերությունների՝ խորհրդային ժառանգության բացասական հետևանքների վերացում և հայ ազգային ավանդույթների վերականգնում,

զ. հայ զինվորականության միջանձնային հարաբերությունում «հավաքական կամ թիմային» զինծառայության ավանդույթների պատմական հիշողության վերականգնում (օր.՝ Արցախյան հերոսամարտը). «թիմային» զինծառայության առաքելության արդյունավետ կիրառման օրինակներ կարող են ծառայել ամերիկյան և իսրայելական զինված ուժերը,

է. զինվորականության միջանձնային հարաբերություններում կարող է արդյունավետորեն կիրառվել վերը նշված «ֆրանսիական մոդելը», որով երկու հակասական կերպարների մտերմությամբ շեշտվում են նրանց ընկերությունում փոխլրացման հարցի անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ անհատի նկատմամբ հանդուրժողականության և հավասար իրավունքների ու պարտականությունների կարևոր սկզբունքները,

ը. հայ զինվորականությունում սոցիալականացման գործընթացներում արժեքաբանական հիմնահարցերի առաջմղում և կարևորում,

թ. հայ զինվորականության և հայության շրջանում զինվորականի (շարքային, թե սպա) ստանձնած «բարձրագույն առաքելության» գիտակցման արժևորում,

ժ. հայ զինվորականության և հայության շրջանում զինվորականի (շարքային, թե սպա) արժևորում,

ի. յուրաքանչյուր հայ զինվորական պետք է զգա իր արժևորումը թե՛ զինվորականության, թե՛ հասարակության մեջ։

ԳԼՈՒԽ 3.
ՍՓՅՈՒՌՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. ԱՄՆ հրեական լոբբինգը

Միացյալ Նահանգներում գործող ազդեցիկ էթնիկ լոբբիստական խմբերի և կազմակերպությունների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հրեական լոբբինգը: Այն կարևոր դերակատարում ունի ԱՄՆ օրենսդիր և գործադիր մարմիններում որոշումների կայացման գործընթացում և ամերիկյան քաղաքական համակարգի կարևոր բաղկացուցիչ տարրերից է: Հրեական, ինչպես և այլ ազդեցիկ լոբբիստական խմբերն ու կազմակերպություններն ԱՄՆ-ում իրենց գործունեությունը, որպես կանոն, ծավալում են երկու հարթությունում՝ ուղղակի և անուղղակի լոբբիստական գործունեություն:

Ուղղակի լոբբիստական գործունեությունն իրականացվում է ԱՄՆ օրենսդիր և գործադիր մարմիններում որոշումների կայացման մեխանիզմների վրա տվյալ լոբբիստական խմբի, նրա ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անհատների ուղղակի ազդեցության միջոցով: Անուղղակի լոբբիստական գործունեությունն իրականացվում է գերազանցապես հասարակական շահագրգիռ խմբերի և շերտերի անմիջական մասնակցությամբ: Լոբբիստական գործունեության մեջ հաճախ կիրառվող անուղղակի տեխնոլոգիաներից են.

1. հասարակական կարծիքի մոբիլիզացում (զանգվածային ակցիաների նախաձեռնում, իշխանություններին հասցեագրված զանգվածային դիմումների կազմակերպում, ակտիվ գործունեություն ԶԼՄ դաշտում, դատական գործընթացների նախաձեռնում),
2. ընտրարշավների կիրառում (ընտրություններում անհատական մասնակցություն կամ «սեփական» թեկնածուների առաջադրում, ընտրարշավների ֆինանսավորում և քաղաքական աջակցում),
3. ֆորմալ կապերի կիրառում (նորմատիվ-իրավական ակտերի և նախագծերի մշակում, դրանց քննարկումների կազմակերպում, իշխանության մարմինների ներկայացուցիչների խորհրդատվություն և ընդունվող որոշումների փորձաքննություն, տեղեկատվության տրամադրում, իշխանության մարմիններում ընթացող աշխատանքներին մասնակցության ցուցաբերում),
4. ոչ ֆորմալ կապերի կիրառում (գիտաժողովների, կլոր սեղանների կազմակերպում և անցկացում, անձնական կապերի օգտագործում, ոչ ֆորմալ հանդիպումների կազմակերպում),
5. խորհրդարանականների և իշխանության գործադիր ներկայացուցիչների վրա հոգեբանական ազդեցության կիրառում (զանգեր, նամակներ, հեռագրեր)։

ԱՄՆ հրեական անուղղակի լոբբիստական գործունեության դասական օրինակ է նաև այս կամ այն հարցում այլ երկրների հրեական համայնքների նեգրավվածության ապահովումն

ու ազդեցության բանեցումը ԱՄՆ հասարակական-քաղաքական դաշտի վրա։

ԱՄՆ հրեական լոբբիստական գործունեության նպատակն ու էությունը ենթադրում են տարբեր խմբերի և առանձին անհատների (միշտ չէ, որ ազգությամբ հրեա են) փոխհարաբերություններ միմյանց միջև, ինչպես նաև ԱՄՆ պետական քաղաքական, հասարակական ինստիտուտների հետ՝ ի շահ Իսրայելի ԱՄՆ արտաքին քաղաքականության վրա ազդեցություն գործելու նպատակներով։ Երկրի հասարակական հարթությունում գտնվում են այն քաղաքացիները՝ ազգությամբ հրեա և ոչ հրեա, որոնք գործունություն են ծավալում ի շահ իսրայելա-ամերիկյան հարաբերությունների զարգացման։ Նրանք ակտիվ ընտրազանգված են և կարող են ընտրությունների միջոցով զգալի ազդեցություն ունենալ ԱՄՆ քաղաքական վերնախավում։

Պատահական չէ, որ մասնագետներից շատերը հրեական լոբբինգը դասում են Միացյալ Նահանգների այնպիսի ազդեցիկ լոբբիստական խմբերի և կազմակերպությունների շարքին, ինչպիսիք են «Զենքի ազգային ասոցիացիան» և «Թոշակառուների ամերիկյան ասոցիացիան»։

Միացյալ Նահանգներում գործող հրեական լոբբիստական առաջատար կազմակերպություններից է Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեն (The American Israel Public Affairs Committe – AIPAC) կամ «ԱՄՆ իսրայելամետ լոբբին», որը լոբբինգ է իրականացնում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանությունում։ Հրեական կոմիտեն համախմբում է Միացյալ Նահանգներում իրականացվող հրեական լոբբինգը։

Հրեական կոմիտեն անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն է և ֆինանսավորվում է իր անդամների ֆինանսական հատկացումներից: Ստեղծվել է Իսայահ Լեո Քենենի[1] կողմից, որը 1954թ. Ամերիկյան սիոնիստական խորհրդի կազմում, որպես լոբբիստական բաժին, հիմնադրեց Ամերիկյան սիոնիստական հասարակական հարցերով կոմիտեն: Վերջինս 1959թ. վերանվանվեց Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտե: Կառույցը կապված էր Միացյալ Նահանգների կառավարության կողմից նորաստեղծ հրեական պետությանն աջակցելու, ԱՄՆ-Իսրայել տնտեսական, քաղաքական և ռազմական կապերի հաստատման ու զարգացման, Մերձավոր Արևելքում ԱՄՆ արտաքին քաղաքականության ուղղորդման խնդիրների իրագործման հետ:

Սկզբնական շրջանում կազմակերպությունն իր գործունեությունը ծավալել է ԱՄՆ Կոնգրեսում՝ հանդիսանալով նրա սակավաթիվ լոբբիստական խմբերից մեկն այդ ժամանակահատվածում: Կազմակերպության անդամներն ակտիվորեն աշխատում են ոչ միայն ԱՄՆ օրենսդիր և գործադիր մարմիններում, այլև հասարակության տարբեր շրջանակների հետ՝ ձգտելով նրանց ներգրավել Իսրայել-ԱՄՆ համագործակցության զարգացման միջոցառումներին:

Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեն ԱՄՆ հրեական կազմակերպություններից մեկն է, որը չի ազատվել հարկերից, քանի որ իրավաբանորեն գրանցված է որպես իսրայելական լոբբիստական կազմակերպություն: Այն

[1] 1951-1953թթ. Քենենը Ամերիկյան սիոնիստական խորհրդի ներկայացուցիչն էր Վաշինգտոնում:

իր արդյունավետ գործունեության արդյունքում 1970-ականներին արդեն դարձավ ԱՄՆ հրեական ամենաազդեցիկ կառույցներից մեկը։ Նրա գործունեության շրջանակներում են գտնվում Իսրայել պետությանը և հրեության շահերին առնչվող այն բոլոր հիմնահարցերը, որոնք քննարկվում են ԱՄՆ Կոնգրեսում և Սպիտակ տանը։ Հարկ է նշել, որ կոմիտեի զգալի ազդեցությունը ԱՄՆ Կոնգրեսի վրա պայմանավորված է այն հանգամանքով, որ հրեաները ԱՄՆ ընտրարշավների խոշոր հովանավորներն են։

Ամերիկա-իսրայելյան հասարակական հարցերով կոմիտեին անդամակցում են Միացյալ Նահանգների պաշտոնյաներն ինչպես դեմոկրատական և հանրապետական կուսակցություններից, այնպես էլ անկուսակցական քաղաքական գործիչներ։

1998թ. Fortune ամսագիրը հրապարակեց ԱՄՆ Կոնգրեսի անդամների, Սպիտակ տան աշխատակիցների, ինչպես նաև լոբբիստների սոցհարցման արդյունքները՝ կազմելով լոբբիստական ազդեցության վարկանիշը։ Այդ արդյունքների համաձայն, Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեն, ըստ լոբբիստական գործունեության արդյունավետության ցուցչի, 25 առավել ազդեցիկ լոբբիստական խմբերի շարքում զբաղեցրեց 4-րդ հորիզոնականը։ Իր ազդեցությամբ կոմիտեն գերազանցեց Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիային, Արտադրական արհմիությունների կոնգրեսին, Անշարժ գույքի վաճառքի գծով գործակալների ազգային ասոցիացիային, Ամերիկյան բժշկական ասոցիացիային և Ամերիկյան առևտրի պալատին։

Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեի ջանքերի շնորհիվ Իսրայելը Երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ արտաքին ֆինանսական խոշորագույն աջակցությունն ստացած պետությունն է:

Կոմիտեի անմիջական մասնակցությամբ Իսրայելը 1994թ. ԱՄՆ-ից ստացավ $3 մլրդ-ի տնտեսական և ռազմական օգնություն: Կազմակերպությունը որոշիչ դերակատարություն է ունեցել 1992թ. միջազգային փոխառությունների գծով ԱՄՆ կառավարության կողմից երաշխիքների ստանձնման մասին որոշման հարցում, որոնք պետք է օգնեին Իսրայելին ենթակառուցվածքների զարգացման ֆինանսավորման հարցում՝ հայրենադարձության կազմակերպման արդյունավետության ապահովման նպատակով:

Կազմակերպությունը լուրջ ազդեցություն ունեցավ այն հարցում, որ չնայած ԱՄՆ տնտեսական ճգնաժամին և այլ երկրներին հատկացվող բյուջետային օգնությունների կրճատումներին, Իսրայելը 2002թ. ԱՄՆ կառավարությունից ստացավ $2,76 մլրդ-ի ֆինանսական աջակցություն ($2,04 մլրդ՝ ռազմական ծախսերի համար, $720 մլն՝ տնտեսական), իսկ 2003թ.՝ $3,7 մլրդ ($3,1 մլրդ՝ ռազմական, 600 մլն՝ տնտեսական ծախսեր):

Կոնգրեսի հետազոտական ծառայության 2009թ. զեկույցի վիճակագրության համաձայն, 1949-2009թթ. Իսրայելը Միացյալ Նահանգներից ստացել է ավելի քան $106 մլրդ ֆինանսական աջակցություն, որում մեծ մասնաբաժին է կազմել ռազմական բաղադրիչը[1]: Այսպիսով, Իսրայել պետությունը ԱՄՆ-ից ստանում է տարեկան միջին հաշվարկով $3 մլրդ ֆինանսական

[1] Jeremy M. Sharp, “U.S. Foreign Aid To Israel”, Congressional Research Service. December 4, 2009.

աջակցություն: Նշենք, որ Միացյալ Նահանգները տարբեր երկրների հատկացնում է տարեկան միջինը $18 մլրդ ֆինանսական աջակցություն:

Ֆինանսական խոշոր աջակցության տրամադրումից բացի, ԱՄՆ-ը էական քաղաքական աջակցություն է ցուցաբերում Իսրայելին, որում զգալի ավանդ ունի Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեն: 1972-2006թթ. ԱՄՆ-ը վետտո է դրել ՄԱԿ-ում Իսրայելին քննադատող 42 բանաձևերի վրա[1]:

Տարբեր տվյալներով՝ հրեական կոմիտեն տարեկան կտրվածքով ներգրավվում է Միացյալ Նահանգների 100 օրենսդրական և քաղաքական նախաձեռնություններում, որոնք վերաբերում են Մերձավոր Արևելքում ԱՄՆ արտաքին քաղաքականության հարցերին և ԱՄՆ-Իսրայել ռազմավարական հարաբերությունների զարգացմանը:

Կոմիտեն ակտիվ գործունեություն է ծավալում նաև ԱՄՆ և Իսրայելի գործադիր ու օրենսդիր իշխանության բարձրաստիճան պաշտոնյաների միջև հանդիպումների կազմակերպման և կապերի ամրապնդման ուղղությամբ:

Կառույցը, որոշ տվյալների համաձայն, գլխավորում և կոորդինացնում է Միացյալ Նահանգներում գործող ավելի քան 7 տասնյակ հրեական լոբբիստական խմբերի և կազմակերպությունների աշխատանքները: Այն ակտիվ լոբբիստական գործունեություն էր իրականացնում ինչպես իրաքյան, այնպես էլ աֆղանական ռազմական գործողությունների, «Հիզբալլահ» շարժման և Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումներում:

[1] Евгений Иванов, Этнические лобби в США, http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=20469.

Աղյուսակ 2

ԱՄՆ ֆինանսական աջակցությունն Իսրայելին ($մլն), Կոնգրեսի հետազոտական ծառայության 2008թ. զեկույցի տվյալներով,

Տարի	Ընդհանուր	Ռազմական	Տնտեսական	Գաղթի	ԱԴՀ	Այլ
1949-1996	68,030.9	29,014.9	23,122.4	868.9	121.4	14,903.3
1997	3,132.1	1,800.0	1,200.0	80.0	2.1	50.0
1998	3,080.0	1,800.0	1,200.0	80.0	?	?
1999	3,010.0	1,860.0	1,080.0	70.0	?	?
2000	4,131.85	3,120.0	949.1	60.0	2.75	?
2001	2,876.05	1,975.6	838.2	60.0	2.25	?
2002	2,850.65	2,040.0	720.0	60.0	2.65	28.0
2003	3,745.15	3,086.4	596.1	59.6	3.05	?
2004	2,687.25	2,147.3	477.2	49.7	3.15	9.9
2005	2,612.15	2,202.2	357.0	50.0	2.95	?
2006	2,534.5	2,257.0	237.0	40.0	?	0.5
2007	2,500.2	2,340.0	120.0	40.0	?	0.2
Ընդհ.	**101,190.8**	**53,643.4**	**30,897.0**	**1,518.2**	**140.3**	**14,991.9**

ԱԴՀ- «Ամերիկյան դպրոցներ և հիվանդանոցներ» դրամաշնորհ

ԱՄՆ-ում գործող երկրորդ հրեական խոշոր լոբբիստական կոորդինացնող կազմակերպությունը Խոշոր ամերիկյան-հրեական կազմակերպությունների նախագահների գիտաժողովն է (Conference of Presidents of Major American Jewish Organizations): Այն ԱՄՆ հրեության կոորդինացիոն կենտրոնական կազմակերպությունն է, որն ընդգրկում է 52 հրեական գործակալություն և կազմակերպություն[1]: Գիտաժողովի անդամ կազմակեր-

[1] Conference of Presidents of Major American Jewish Organizations, http://www.conferenceofpresidents.org/content.asp?id=55

պություններից են նաև Ամերիկա-հրեական հասարակական հարցերով կոմիտեն, 1913թ. ձևավորված Հակազրպարտման լիգան (Anti-Defamation League), ինչպես նաև 1897թ. հիմնադրված ԱՄՆ սիոնիստական կազմակերպությունը:

Գիտաժողովի գլխավոր նպատակներից են ԱՄՆ-Իսրայել հարաբերությունների խորացումը, ԱՄՆ օրենսդիր և գործադիր իշխանության շրջանակներում Իսրայել պետության և ԱՄՆ հրեական համայնքների շահերի պաշտպանությունը, համայն հրեության անվտանգության ապահովման հիմնահարցերը:

2006թ. հուլիսի 27-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում հիմնվեց մեկ այլ լոբբիստական կազմակերպություն՝ Իսրայելի դաշնակիցների խումբը (Israel Allies Caucus), որտեղ ներգրավվեցին ԱՄՆ-Իսրայել հարաբերությունների ամրապնդման, Միացյալ Նահանգներում իսրայելամետ որոշումների և նախաձեռնությունների կողմնակից կոնգրեսականներ: Լոբբիստական այս խմբի հիմնադիր անդամներն են Դեյվ Ուելդոնը (հանրապետական, Ֆլորիդա), Էլիոթ Էնգելը (դեմոկրատ, Նյու Յորք), Թրենթ Ֆրենքսը (հանրապետական, Արիզոնա) և Գենե Գրինը (դեմոկրատ, Տեխաս)[1]:

Center for Responsive Politics կենտրոնի տվյալներով՝ 2009թ. Միացյալ Նահանգներում Իսրայել պետության շահերը լոբբինգի ենթարկելու գործում 10 ընկերություն հատկացրել է $3,650,488: Հատկացումների ճնշող մեծամասնությունը՝ $2,769,721, տրամադրել է Ամերիկա-իսրայելական հասարա-

[1] International Israel Allies Caucus Foundation (IIACF), http://www.iiacf.org/index.php/site/about/

կական հարցերով կոմիտեն, $299,900-ը՝ Ամերիկայի սիոնիստական կազմակերպությունը[1]:

ԱՄՆ հրեական խոշոր բարեգործական կառույցներից պետք է առանձնացնել Միացյալ հրեական կոչ կազմակերպությունը՝ UJA-ն (United Jewish Appeal): Հիմնադրվել է 1938թ.՝ նացիստական Գերմանիայում հրեաների նկատմամբ իրականացվող հետապնդումների դեմ պայքարելու, Գերմանիայի հրեաներին աջակցելու նպատակով:

Երկրորդ աշխարհամարտից հետո կազմակերպության շարքերը զգալիորեն համալրվեցին, և նրա կողմից հավաքված ֆինանսական միջոցներն ուղղվեցին այն հրեաների աջակցմանը, որոնք փրկվել էին հիտլերյան հետապնդումներից: 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից հետո կազմակերպությունը վերիմաստավորեց իր գործունեության հիմնական ուղղությունները և իր առջև խնդիր դրեց աջակցել Իսրայել պետության կայացման գործընթացին:

1948-ից հետո կազմակերպությունը Իսրայել պետության համար ֆինանսական միջոցներ հավաքող հիմնական հրեական կառույցն էր: Վերջին տարիներին այն իր տարեկան ֆինանսական հավաքագրումներն իրականացնում է Ամերիկյան բարեգործական կազմակերպությունների ֆեդերացիայի հետ համատեղ, որը նույնպես նախկինում իր ֆինանսական միջոցների զգալի մասը հատկացնում էր ամերիկյան հրեաների կարիքները հոգալուն:

[1] "Center for Responsive Politics", Annual Pro-Israel Lobby, http://www.opensecrets.org/lobby/indusclient.php?lname=Q05&year=2009

Այսօր այդ երկու կազմակերպությունների տարեկան համատեղ ֆինանսական հավաքագրումների արշավներին իրենց մասնակցությունն են ցուցաբերում ԱՄՆ գրեթե բոլոր հրեական համայնքները: Միացյալ հրեական կոչ կազմակերպությունը զգալի ֆինանսական աջակցություն է ցուցաբերում նաև կրոնական, պատմական և ժամանակակից հիմնահարցերին առնչվող կրթական ծրագրերին, ձգտում է ընդլայնել հրեական համայնքների ապագա առաջնորդների մտահորիզոնը:

Հակազրպարտման լիգան (Anti-Defamation League) հիմնականում զբաղվում է հակասեմականության դեմ պայքարով և ակտիվ գործունեություն է ծավալում Միացյալ Նահանգներում: Կազմակերպությունն իրականացնում է ԱՄՆ նախագահի աշխատակազմի, Կոնգրեսի և պետդեպարտամենտի ներկայացուցիչների իսրայելամետ և հակահիսրայելական հայտարարությունների, ելույթների և հարցազրույցների մոնիթորինգ:

3.2. Գլոբալ փոփոխությունները և հրեական համայնքները

Խորհրդային Միության փլուզումը նոր տեղաշարժերի պատճառ հանդիսացավ գլոբալ աշխարհակարգում և, մասնավորապես, հետխորհրդային տարածքում: Անկախ պետությունների ձևավորումը, ինչպես նաև եվրասիական տարածաշրջանում ընթացող ռազմավարական-քաղաքական զարգացումներն էական ազդեցություն ունեցան Իսրայելի արտաքին քաղաքականության վրա մի քանի հիմնական պատճառներով:

Նախ՝ հետխորհրդային տարածքում նոր պետությունների առաջացումն Իսրայելի առջև հնարավորությունների լայն դաշտ բացեց՝ ներգրավվելու տարածաշրջանային զարգացումներում:

Երկրորդ՝ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը նոր լարվածություն հաղորդեց եվրասիական տարածաշրջանային զարգացումներին. զգալիորեն մեծացավ լարվածությունն իրանա-իսրայելյան, իրանա-ամերիկյան հարաբերություններում:

Երրորդ՝ Հեռավոր Արևելքում օրեցօր հզորանում է Չինաստանը: Իսրայելի կառավարությունը մեծ նշանակություն է տալիս չին-իսրայելական հարաբերությունների զարգացմանը: Միացյալ Նահանգների քաղաքական անհաջողությունները (առաջին հերթին՝ իրաքյան ռազմարշավը) Իսրայելի կառավարության առջև բարձրացնում են ի դեմս Չինաստանի՝ ԱՄՆ-ին այլընտրանք հանդիսացող ռազմավարական նոր դաշնակցի ձեռքբերման հարցը:

Պաշտոնական Վաշինգտոնը խանդով է մոտենում չին-իսրայելական ռազմական համագործակցությանը: Ժամանակին Պենտագոնը նույնիսկ դադարեցրեց Իսրայելի հետ համագործակցությունը՝ F-35 տեսակի ռմբակոծչի ստեղծման ծրագրի շուրջ, ի պատասխան Չինաստանի հետ իսրայելական պաշտպանական ձեռնարկությունների համագործակցության հաստատման: Նկատենք, որ Ռուսաստանից հետո Իսրայելը Չինաստանին ռազմական սարքավորումներ մատակարարող երկրորդ պետությունն է: Ավելին, 2003թ. միայն առաջին կիսամյակում Չինաստանի և Իսրայելի միջև ապրանքաշրջանառությունը կազմել է $500 մլն: Թեև այն ավելի քան 18 անգամ զիջում է Իսրայել–ԱՄՆ ապրանքաշրջանառության տարեկան ծավալներին, այդուհանդերձ, չին-իսրայելյան տնտեսական համագործակցությունն ունի զարգացման մեծ հեռանկարներ (առաջին հերթին՝ բարձր տեխնոլոգիաների ասպարեզում):

Չորրորդ՝ Խորհրդային Միության փլուզումը հանգեցրեց հետխորհրդային հրեական համայնքների նկատմամբ Իսրայելի քաղաքականության վերանայմանը: Արդյունքում՝ տեղի հրեական համայնքներն ընդունեցին որակապես նոր գործառութային ձևաչափեր, ստեղծվեցին Իսրայել–հետխորհրդային հրեական համայնքներ փոխհարաբերությունների առավել արդյունավետ մեխանիզմներ, որոնք ի վիճակի կլինեն համարժեք արձագանքել տարածաշրջանային զարգացումներին, պաշտպանել տարածաշրջանում Իսրայելի ազգային շահը:

Իսրայելի կառավարությունը, ողջունելով ԱՊՀ տարածքից հրեական համայնքների ներկայացուցիչների հայրենադարձությունը, միևնույն ժամանակ էապես կարևորում է տեղի հրեական համայնքների առկայությունը՝ նրանց դիտարկելով որպես տվյալ երկրում և տարածաշրջանում իր պետական շահերի հետապնդման գլխավոր տարրերից մեկը: Իսրայել պետության առջև ծագել էր եվրասիական տարածաշրջանում գործող հրեական կազմակերպությունների և համայնքների նկատմամբ երկրի վարած քաղաքականությանն առավել նպատակաուղղվածություն տալու խնդիրը: Արդյունքում՝ 2002թ. մարտի 5-ին հիմնադրվեց Եվրասիական հրեական կոնգրեսը (ԵՀԿ), որի նախագահ ընտրվեց Ղազախստանի խոշոր հասարակական գործիչ, գործարար Ալեքսանդր Մաշկևիչը (վերջինս կառույցի նախագահն էր մինչև 2011թ.): Կոնգրեսը հիմնադրվեց Ղազախստանի հրեական կոնգրեսի, Ռուսաստանի հրեական կազմակերպությունների ու համայնքների ֆեդերացիայի և Ուկրաինայի հրեական կազմակերպությունների և համայնքների ասոցիացիայի առաջնորդների նախաձեռնությամբ: Կոնգրեսի հայեցակարգի ձևավորման

ակունքները գալիս են 1991թ., երբ նախկին ԽՍՀՄ հրեական համայնքը միացավ Հրեական համաշխարհային կոնգրեսին:

ԵՀԿ նախագահի պաշտոնում ղազախստանցի հասարակական գործչի նշանակումը խորհրդանշական էր այն առումով, որ նորաստեղծ հրեական կազմակերպության կոորդինացիոն կենտրոն ընտրվել է հենց այդ երկիրը: Վերջինս աշխարհագրական տեսանկյունից կարևոր ռազմավարական նշանակություն ունի: Իսրայելը, սուղ բնական ռեսուրսներ ունենալով, մեծ նշանակություն է տալիս Ղազախստանի և ողջ կասպյան տարածաշրջանի նավթագազային պաշարներին:

ԵՀԿ-ն կոչված է կոորդինացնելու ԱՊՀ անդամ բոլոր երկրներում, ինչպես նաև Բուլղարիայում, Մոնղոլիայում, Ճապոնիայում, Հնդկաստանում, Ավստրալիայում և Նոր Զելանդիայում գործող հրեական կազմակերպությունների և համայնքների (ըստ որոշ տվյալների՝ վերոնշյալ երկրների տարածքում ներկայումս բնակվում է շուրջ 2 մլն հրեա) աշխատանքները: Կազմակերպության գրասենյակները տեղակայված են Ալմաթիում, Մոսկվայում և Կիևում:

Հետխորհրդային տարածաշրջանային զարգացումները գտնվում են նաև Իսրայելի հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում: Ըստ մի շարք լրատվամիջոցների, ԱՊՀ որոշ երկրներում Իսրայելի հատուկ ծառայություններն ակտիվ գործունեություն են ծավալում Իրանի դեմ: Պաշտոնական Թեհրանը մեկ անգամ չէ, որ դժգոհություն է հայտնել Բաքվի իշխանություններին՝ Իրանի դեմ Ադրբեջանում իսրայելյան ռադիոլոկացիոն համակարգի ստեղծման, ինչպես նաև Ադրբեջանի տարածքից «Մոսադի» հետախուզական գործունեության կապակցությամբ:

Հետխորհրդային տարածաշրջանում ակտիվ գործունեությամբ առանձնացել է ԱՊՀ և բալթյան երկրների հրեաների բյուրոն՝ «Նաթիվը» (նախկինում՝ ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի հրեաների հարցերով զբաղվող բյուրո)։ Բյուրոյի ստեղծման մասին համաձայնությունը 1951թ. տվել է Իսրայելի առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնը։ Այն ուներ նախկին ԽՍՀՄ-ում հետախուզական գործունեություն, սիոնիստական քարոզչություն ծավալելու առաքելություն։

Խորհրդային Միության փլուզումից հետո, ըստ էության, վերափոխվեցին նաև «Նաթիվի» գործունեության ուղղությունները ու հիմնական նպատակները։

Վերջին տասնամյակում հետխորհրդային տարածքում «Նաթիվի» գործունեության հանդեպ Իսրայելի պետական որոշ մարմիններում և հատկապես անվտանգության կառույցներում առկա է որոշակի բացասական դիրքորոշում։ Մասնավորապես, Հրեական գործակալությունն ու Իսրայելի ԱԳՆ-ն գտնում են, որ խորհրդային կարգերի փլուզման, ԱՊՀ տարածքից հայրենադարձության նվազման պատճառով անիմաստ է դառնում «Նաթիվի» գործունեությունը։ Սա, թերևս, պայմանավորված է հետխորհրդային տարածքում գործունեության առաջատարության հարցում Իսրայելի հատուկ ծառայություններում առկա տարաձայնություններով։ Լուրեր են պտտվում նաև հետխորհրդային տարածքում «Նաթիվի» իրականացրած հետախուզական գործունեությունը «Մոսադի» իրավասությանը հանձնելու մասին։ Այդ առումով ուշագրավ է 1998թ. ապրիլի վերջին իսրայելական «Հաարեց» թերթի այն հրապարակումը (հիմնված այդ երկրի ԱԳՆ-ից ստացված անանուն տեղեկատվության վրա), ըստ

որի՝ չնայած Իսրայելի այդ ժամանակվա վարչապետ Բենիամին Նեթանյահուի ցուցումին, «Նաթիվը», այնուամենայնիվ, շարունակում էր ԱՊՀ երկրներում զբաղվել գաղտնի տեղեկատվության հավաքմամբ։

Չնայած իր գործունեության սահմանափակմանը, «Նաթիվի» աշխատակիցները ԱՊՀ տարածքում այսօր ևս զբաղվում են հրեական համայնքների երիտասարդ կադրերի հավաքագրմամբ, տեղի գիտնականների և մասնագետների հետ կապերի հաստատմամբ։ Որոշ լրատվամիջոցների տվյալներով, բյուրոն միաժամանակ զբաղվում է հետխորհրդային երկրների ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև հասարակական իրադրության վերաբերյալ տեղեկատվության հավաքմամբ։ Այս առումով, թերևս, զգալի է «Նաթիվի» համակարգում գործող Վերլուծության և հետախուզության բաժնի դերակատարումը։

Վերջին ժամանակներս հետխորհրդային հրեաների արտագաղթի միտում է նկատվում դեպի Արևմուտք (մասնավորապես՝ Գերմանիա և ԱՄՆ)։ Ելնելով այս հանգամանքից՝ «Նաթիվի» ղեկավարությունը, Իսրայելի կառավարությունից ստանալով համապատասխան լիազորություններ, նախատեսում է գործունեության դաշտի մի մասն ուղղել դեպի ԱՄՆ և Գերմանիայի խոշոր հրեական համայնքներ։

3.3. Հայրենադարձության իսրայելական փորձը

Ուսումնասիրությունում անդրադարձ է կատարվում Իսրայել պետության կողմից արտերկրում բնակվող հրեաների հայրենադարձության կազմակերպման և հայրենիքում նրանց սոցիալ-մշակութային ինտեգրման հիմնական մեխանիզմներին և գործա-

ռույթներին: Խոսվում է նաև պետության կողմից իրականացվող այն ծրագրերի և տրամադրվող արտոնությունների մասին, որոնք նպաստում են հայրենադարձների՝ երկրի հասարակական կյանքում հնարավորինս անխոչընդոտ ինտեգրման գործընթացին:

«Վերադարձի մասին» օրենքը

1950թ. հուլիսի 5-ին երկրի խորհրդարանը միաձայն ընդունեց «Վերադարձի մասին» օրենքը, ինչը հիմք դրեց սիոնիստական գաղափարախոսության իրավական նորմերի ամրագրմանն ու հանդիսացավ Իսրայել պետության՝ որպես հրեական ազգային պետության ձևավորման և գոյատևման հիմնաքարը[1]: «Վերադարձի մասին» օրենքով ամրագրվում էր յուրաքանչյուր հրեայի Իսրայել պետություն հայրենադարձվելու իրավունքը[2]: Օրենքն իրավունք էր տալիս Իսրայելի սահմաններից դուրս բնակվող հրեաներին, վերադառնալով հայրենիք, ստանալ քաղաքացիություն: Օրենքի համաձայն, հրեա է համարվում այն անձը, որը ծնվել է հրեա կնոջից կամ ընդունել է հուդայականություն և չի դավանում այլ կրոն[3]:

Հետագա տասնամյակներում հայրենադարձության մասին օրենքի կիրառության շրջանակներն ընդլայնվեցին: 1960-ական թթ. վերջին հայրենադարձների քանակական կտրուկ աճի արդյունքում անհրաժեշտություն առաջացավ վերանայել հայրենադարձության վերաբերյալ նախկինում գործող մեխանիզմները: 1967թ. ստեղծվեց հայրենադարձության և ինտե-

[1] http://callofzion.ru/pages.php?id=580, Закон о возвращении (1950 год) - полный текст.
[2] Նույն տեղում:
[3] http://il4u.org.il/blog/about-israel/repatriation/zakon-o-vozvrashhenii, Закон о возвращении.

գրման տեսչությունը, որը կոչված էր կոորդինացնելու Իսրայելի կառավարության և Հրեական գործակալության (եբրայերեն՝ «Սոխնութ». գործակալությունը զգալի աշխատանքներ է իրականացրել հրեական սփյուռքի հայրենադարձության հարցում) աշխատանքները:

1968թ. որոշում ընդունվեց հիմնել Հայրենադարձության և ինտեգրման նախարարություն[1]: Ընդ որում, պայմանավորվածություն ձեռք բերվեց Հրեական գործակալության հետ, որ վերջինս զբաղվեր դեպի երկիր հայրենադարձների ապահովմամբ, իսկ նորաստեղծ նախարարությունն իր վրա էր վերցնում երկրում հայրենադարձների ինտեգրման խնդիրները[2]: Գործակալության կենտրոնն Իսրայելում է:

Հայրենադարձության հոսքի կտրուկ ակտիվացման արդյունքում անհրաժեշտություն առաջացավ որոշակի փոփոխություններ մտցնել այդ օրենքում. 1970թ. ընդունված «Վերադարձի մասին» օրենքի փոփոխություններով իրավունք էր ընձեռվում հայրենադարձվել նաև այն անհատներին, որոնք ազգակցական կապեր ունեն հրեաների հետ՝ երեխա, թոռ, ամուսին, երեխայի կամ թոռան ամուսին[3]:

1999թ. ընդունված նոր փոփոխությունների համաձայն, Իսրայել պետության քաղաքացու հետ ամուսնացած արտերկրացին չի կարող ինքնաբերաբար ստանալ Իսրայել պետության քաղաքացիություն: Անհրաժեշտություն էր առաջանում, որպեսզի նա անցնի քաղաքացիության ձեռքբերման փուլային

[1] Առաջին անգամ նախարարությունը հիմնադրվել է 1948թ., սակայն գոյատևել է ընդամենը 3 տարի:

[2] https://ru.wikipedia.org/wiki/Министерство_абсорбции_Израиля

[3] http://callofzion.ru/pages.php?id=580, Закон о возвращении (1950 год) - полный текст.

գործընթաց: Այս իրավական նորմը չի տարածվում այն զույգերի վրա, որոնց ամուսիններից մեկը գտնվում է «Վերադարձի մասին» օրենքի իրավական կիրառության դաշտում, և այն զույգերի վրա, որոնք իրենց ամուսնությունը ձևակերպել են մինչ Իսրայել հայրենադարձվելը[1]:

1990-ական թթ. սկզբին Իսրայելի բնակչությունը համալրվեց նոր հայրենադարձների զանգվածային ալիքով: Սա պայմանավորված էր Խորհրդային Միության փլուզմամբ, հետխորհրդային տարածքում նորանկախ հանրապետությունների ձևավորմամբ: Միայն 1990-1996թթ. ԱՊՀ տարածքից Իսրայել վերադարձավ ավելի քան 600 հազ. հրեա:

Հայրենադարձությամբ Իսրայելի ղեկավարությունը կարողացավ ոչ միայն ամրապնդել հայրենիք–սփյուռք հարաբերությունները, այլև օգտագործել այն՝ երկրի ներքին խնդիրների կարգավորման առումով: Նախ՝ աշխարհասփյուռ հրեաների հայրենադարձության ապահովումը զգալի դեր ունեցավ Իսրայելի գիտակրթական, գիտահետազոտական ներուժի համալրման և զարգացման հարցում:

Երկրորդ՝ հայրենադարձության քաջալերմամբ Իսրայելի ղեկավարությունը ձգտում է նպաստել երկրի պաշտպանունակության բարձրացմանը և, մասնավորապես, ապահովել երկրի պաշտպանական ու անվտանգության մարմինների անձնակազմի համալրումը:

Երրորդ՝ երկքաղաքացիության ընդունումը հնարավորություն է ընձեռում համալրել Իսրայելի պետական բյուջեի արտաքին տրանսֆերտների մասնաբաժինը:

[1] http://il4u.org.il/blog/about-israel/repatriation/zakon-o-vozvrashhenii

Չորրորդ՝ հայրենադարձության խնդրի ապահովումն Իսրայելի կառավարությունը կարևորում է նաև երկրի ժողովրդագրական նկարագրի տեսանկյունից։ Վերջին տարիներին հրեական լրատվամիջոցները հեղեղված են հաղորդագրություններով, թե երկրի հրեա բնակչությունը քանակային առումով աստիճանաբար սկսում է դիրքերը զիջել արաբ բնակչությանը, որն առանձնանում է ժողովրդագրական աճի բարձր ցուցանիշներով։

Հրեական սփյուռքի հայրենադարձությունը, այնուամենայնիվ, իր հետ բերեց նաև ժողովրդագրական նոր խնդիրներ։ «Վերադարձի մասին» օրենքում տեղ գտած փոփոխությունների հիման վրա Իսրայել են ներգաղթում հրեաների հետ հեռավոր «ազգակցական» կապեր ունեցող մարդիկ, որոնց շարքում իրականում քիչ չեն այլազգիներն ու այլադավանները։ Ավելին, վերջին ժամանակներս ակտուալ է դարձել Իսրայելից տեղացի (ոչ հայրենադարձվածների) հրեա բնակչության արտագաղթի (մասնավորապես՝ ԱՄՆ և Արևմտյան Եվրոպայի երկրներ) հարցը։

2003թ. վիճակագրությամբ հրեա բնակչությունը կազմում էր Իսրայելի ողջ բնակչության (6.7 մլն) մեծամասնությունը՝ 5.4 մլն (81%), իսկ այլազգիները՝ գերազանցապես արաբներ, 1.3 մլն (19%)։ Հրեական աղբյուրների համաձայն, 1948թ. նույնպես հրեաները երկրի բնակչության 81% էին, ասել է թե՝ Իսրայել հրեաների վերադարձը ոչ թե համալրում է այդ երկրի բնակչությունը, այլ լրացնում է նրա աստիճանական նվազումն ի հաշիվ տեղացի հրեաների։

Հայրենադարձության և ինտեգրման նախարարության գործառույթները

Սկզբնական շրջանում նախարարությունը կոչվում էր Ինտեգրման նախարարություն, միայն վերջերս՝ 2013թ. հոկտեմբերի 6-ին, այն վերանվանվեց Հայրենադարձության և ինտեգրման նախարարություն: Իսրայել պետության ղեկավարությունը նախարարության վերանվանման հարցը պայմանավորեց վերջին ժամանակաշրջանում նախարարության գործունեության բնույթի և գործառույթների վերափոխումներով[1]:

Հայրենադարձության և ինտեգրման նախարարությունը կազմված է ավելի քան 20 վարչությունից, որոնցից թեմայի շրջանակներում մեզ հետաքրքրող բաժիններին կանդրադառնանք ստորև[2]:

1. Գիտական ինտեգրման վարչությունն ուղեկցում է երիտասարդ հայրենադարձներին բուհերում ուսուցման ողջ ընթացքում, աջակցություն ցուցաբերում նրանց ուսման մեջ, ինչպես նաև սոցիալական խնդիրների լուծման առումով: Կազմակերպվում են խորհրդակցություններ, աջակցություն է ցուցաբերվում կրթական ուղղվածության ընտրության հարցում, կազմակերպվում են կարիքավոր ուսանողների համար օժանդակ դասընթացներ: Նման ուսանողները ստանում են նաև կրթաթոշակներ կամ բնակարանի վարձակալության և ընթացիկ ծախսերի համար արտոնյալ վարկեր:

[1] http://9tv.co.il/news/2013/10/06/160155.html.
Министерство репатриации объявило о ребрендинге.
[2] http://www.moia.gov.il/russian/pages/default.aspx

2. Գործարարար նախաձեռնությունների վարչությունն աջակցում է այն հայրենադարձներին, որոնք ցանկանում են Իսրայել պետությունում զբաղվել մասնավոր գործարարությամբ: Այդ նպատակով վարչությունում կազմակերպվում են գործարարության զարգացման տարբեր միջոցառումներ՝ խորհրդատվական կենտրոններում համապատասխան խորհրդատվությունների կազմակերպում, անհատ ձեռներեցների համար նախատեսված դասընթացների անցկացում և գործարարության զարգացման համար արտոնյալ վարկերի տրամադրում[1]:
3. Բնակարանով ապահովման վարչության գործառույթներից է նոր հայրենադարձներին ժամանակավոր կամ մշտական կացարաններով ապահովումը:
4. Հասարակական ինտեգրման վարչությունը հիմնականում զբաղվում է նոր հայրենադարձների հասարակական, մշակութային, լեզվական ինտեգրման հարցերով: Ընդ որում, հայրենադարձների յուրաքանչյուր էթնիկ խմբին իսրայելական հասարակությունում ընձեռվում են մշակութային ինքնության ազատ արտահայտման բոլոր հնարավորությունները: Հիմնական շեշտադրումը կատարվում է հայրենադարձների շրջանում հրեական և իսրայելական ինքնագիտակցության և ինքնության զարգացման վրա:
5. Հայրենադարձ զինվորականների վարչությունն աջակցում է զինվորական հայրենադարձներին և նրանց ընտանիքներին Իսրայելի պաշտպանության բանակում ադապտացման և առավել հեշտ ինտեգրման հարցերում:

[1] http://www.moia.gov.il/russian/pages/default.aspx

6. Ուլպանների (լեզվի ուսուցման կենտրոններ- *հեղ.*) վարչությունը մասնագիտացած է հայրենադարձների շրջանում եբրայերենի ուսուցման հարցերում:

Հայրենադարձության կազմակերպման մեխանիզմները

Ինչպես նշվեց, Իսրայել հայրենադարձության կազմակերպման գործընթացն իրականացվում է «Վերադարձի մասին» օրենքի հիման վրա, ինչը գործնականում նշանակում է, որ Իսրայել ժամանելուն պես հրեան դառնում է այդ երկրի քաղաքացի՝ իր բոլոր իրավունքներով ու պարտականություններով: Այն անձինք, ովքեր ունեն այլ երկրի քաղաքացիություն, կարող են պահպանել այն, քանի որ Իսրայել պետությունն ընդունում է երկքաղաքացիությունը:

Ինչպես հրեաների շրջանում է տարածված ասել, հայրենադարձության ֆիզիկական և իրավական բուն գործընթացը մեկնարկում է Բեն-Գուրիոնի անվան օդանավակայան ժամանման պահից սկսած, երբ նոր հայրենադարձներին անձնագրային հսկողության անցկացման գործընթացից հետո ուղեկցում են հայրենադարձների համար նախատեսված սպասասրահ: Սպասասրահում կազմակերպվում է հայրենադարձի գրանցման գործընթացը, որը ներառում է.

1. գրանցման թերթիկի լրացում, որն անհրաժեշտ է Իսրայելի ՆԳՆ-ում փոխարինել անձը հաստատող փաստաթղթով (թեուդաթ զեութ),
2. նոր հայրենադարձի անձը հաստատող փաստաթղթի կամ վկայականի ձևակերպում (թեուդաթ օլե),

3. առաջին ծախսերի համար նախատեսվող ֆինանսական միջոցների հատկացում,
4. բուժսպասարկման ուղեգրի տրամադրում,
5. որոշ դեպքերում՝ հյուրանոցային ուղեգրի տրամադրում (եթե առաջիկայում հայրենադարձը չունի բնակության վայր)։

Օդանավայականում հայրենադարձների ինտեգրման առաջին քայլերն առավել հեշտ կազմակերպելու և Իսրայել պետություն ժամանման պես երկրի մասին առաջին լավ տպավորությունների ապահովման նկատառումներով տեղում իրականացվում է մի շարք ծառայությունների սպասարկման գործընթաց։ Այսպես, օդանավակայանում հայրենադարձին տրվող ծառայություններն են.

1. հիվանդներին և հաշմանդամներին առաջին բուժօգնության կազմակերպում,
2. մոր և մանկան սենյակի հատկացում,
3. անվճար հեռախոսազանգ կատարելու հնարավորության ընձեռում Իսրայելի ներսում և արտերկիր,
4. թեթև հյուրասիրության կազմակերպում[1]։

Օդանավակայանում նախարարությունը յուրաքանչյուր հայրենադարձի կամ հայրենադարձ ընտանիքի կցում է անհատական մշտական ներկայացուցիչ-խորհրդատու՝ հետագա ինտեգրման հարցերով զբաղվելու համար։ Ասել է թե՝ ժամանման պահից սկսած հայրենադարձի հետագա ինտեգրման գործ-

[1] http://www.moia.gov.il/russian/pages/default.aspx

ընթացը կոորդինացնում և ուղղորդում է հատուկ ներկայացուցիչ-խորհրդականը, ինչն էական նշանակություն ունի յուրաքանչյուր հայրենադարձի համար թե՛ Իսրայելի պետական համակարգին, թե՛ տեղի հասարակությանն առավել մատչելի և հնարավորինս անխոչընդոտ ինտեգրվելու տեսանկյունից: Օդանավակայանում գրանցման գործընթացն ավարտելուց հետո հայրենադարձներն անցնում են մաքսային զննում, որից հետո Հայրենադարձության և ինտեգրման նախարարության աշխատակիցը համապատասխան տրանսպորտով ուղեկցում է հայրենադարձին դեպի նրա բնակության վայր:

Հայրենադարձության նախարարություն նախատեսվող այցելությունը հայրենադարձների առաջին կարևոր քայլերից է, որից կախված է հայրենադարձության գործընթացի հետագա իրավական և փաստացի հաջող ընթացքը: Նախարարությունում հայրենադարձը ստանում է.

1. «հայրենադարձության զամբյուղ» կոչվող նպաստի, բնակարանի վարձակալության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և նպաստների ձեռքբերման, երեխաների համար կրթական փաթեթների ապահովման, ինչպես նաև այլ հաստատություններից աջակցություն ստանալու հնարավորությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն և խորհրդատվություն,
2. իր անհատական բանկային հաշվի մասին տեղեկատվություն, որին փոխանցվելու են հասանելիք ֆինանսական միջոցները,
3. եբրայերենի ուսուցման նպատակով հայրենադարձի բնակության վայրին մոտ տեղակայված տարբեր ուլպանների

վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն (ընդ որում, եբրայերենի ուսուցումը հայրենադարձության և հաջող ադապտացման կարևոր պայմաններից է, ուստի խորհուրդ է տրվում հայրենադարձներին Իսրայելում եբրայերենի ուսուցումը կազմակերպել բնակության հաստատման առաջին ամիսներից սկսած և չհետաձգել այն, քանի որ այս ոլորտում հայրենադարձին ցուցաբերվող աջակցությունն իրականացվում է միայն Իսրայելում բնակության հաստատման առաջին մեկուկես տարվա ընթացքում)։

Այժմ առավել հանգամանորեն անդրադառնանք «հայրենադարձության զամբյուղ» նպաստին։ Այն կոչված է աջակցելու հայրենադարձներին Իսրայելում իրենց բնակության առաջին փուլում առօրյա ծախսերի հետ կապված խնդիրներում։ Այս նպաստը կարող են ստանալ որոշակի երկրներից եկած հայրենադարձները։ Մյուս կողմից, այն կարող են ստանալ այն հայրենադարձները, որոնք եկել են Իսրայել առաջին անգամ՝ «հայրենադարձության» վիզայով։ Ընդ որում, «հայրենադարձության զամբյուղ» նպաստի ստացման պայմաններից է նոր հայրենադարձի կարգավիճակ ստանալուն նախորդող 3 տարվա մեջ 18 ամիսների ընթացքում անընդհատ կամ գումարային ներկայության ապահովումն Իսրայելում։

Եվ այսպես, «հայրենադարձության զամբյուղ» նպաստ կարող են ստանալ հետևյալ չափանիշներին համապատասխանող հայրենադարձները.

3. հայրենադարձը եկել է Իսրայել պետություն հետևյալ երկրներից՝ Արևելյան Եվրոպա՝ ԱՊՀ երկրներ, Լեհաստան, Ռու-

մինիա, նախկին Հարավսլավիայի բոլոր երկրները, Բուլղարիա, Ալբանիա, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա, Լատինական Ամերիկայից՝ Արգենտինա, Սալվադոր, Ուրուգվայ, Բոլիվիա, Բրազիլիա, Գվատեմալա, Հոնդուրաս, Դոմինիկյան Հանրապետություն, Վենեսուելա, Մեքսիկա, Նիկարագուա, Պանամա, Պարագվայ, Պերու, Կուբա, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Չիլի, Աֆրիկայից՝ Մարոկո, Ալժիր, Թունիս, Լիբիա, Եգիպտոս, Սուդան, Եթովպիա, Ասիայից՝ Սիրիա, Լիբանան, Հորդանան, Եմեն, Ադեն, Չինաստան, Հնդկաստան, Իրան, Իրաք և Սաուդյան Արաբիա։

4. Մինչև Իսրայել ժամանումը հայրենադարձը 1 տարուց ոչ ավելի բնակվել է այն երկրում, որը չի ներառվում վերը հիշատակված ցուցակում։
5. Հայրենադարձը չի բնակվում «Սոխնութ» գործակալության ենթակայության տակ գործող «ինտերգրման կենտրոն»-ում, որը բնակարանային համալիր է։ Հայրենադարձությունից առաջ հայրենադարձվողները կարող են համաձայնեցնել «Սոխնութ» հրեական գործակալության՝ հայրենադարձության հարցերով կոորդինատորի հետ ժամանակավոր հիմունքներով «ինտեգրման կենտրոններում» բնակվելու հարցը։ Իսկ ժամանակավոր փուլի ավարտից հետո հայրենադարձները պետք է բնակարան վարձակալեն մասնավոր հիմունքներով[1]։

[1] http://www.moia.gov.il/Russian/Subjects/FinancialAssistance/Pages/AbsorptionBasket.aspx

Այս նպաստը տրվում է հայրենադարձին անմիջապես օդանավակայանում՝ ժամանման պահին, որպես նվեր: Հայրենադարձության առաջին տարվա ընթացքում՝ «հայրենադարձության զամբյուղ» նպաստի վճարման ավարտից հետո և մինչև աշխատանքի տեղավորումը, նոր հայրենադարձները Հայրենադարձության և ինտեգրման նախարարությունից ստանում են նվազագույն կենսապահովման համար անհրաժեշտ նպաստ: Այս նպաստը ստանում են այն հայրենադարձները, որոնք գրանցված են Աշխատանքի տեղավորման բյուրոյի բաժանմունքում և աշխատանք են փնտրում կամ սովորում են որակավորման բարձրացման դասընթացներում, կամ պրոֆեսիոնալ վերարակավորման դասընթացներում, ինչպես նաև նրանք, ովքեր չեն կարող աշխատել առողջական խնդիրներից ելնելով կամ էլ գտնվում են նախաթոշակային տարիքում:

Նշենք, որ «հայրենադարձության զամբյուղ» նպաստը տրվում է այն դեպքում, երբ հայրենադարձը մշտական հիմունքներով կրթություն է ստանում ուլպանում և յուրաքանչյուր ամիս ներկայացնում է դասընթացներին կանոնավոր հաճախելու մասին տեղեկանք[1]: Հայրենադարձված ընտանիքը ստանում է նպաստ այն դեպքում, երբ 2 ամուսիններն էլ կրթություն են ստանում ուլպանում կամ էլ հաշվի է առնվում ընտանիքի եկամուտների ընդհանուր մակարդակը: Այն հայրենադարձներին, որոնք ուլպանում ուսում ստանալու անհրաժեշտություն չունեն, նպաստը վճարվում է աշխատանքի շուկայում գրանցման, օրական դասընթացներով ուսում ստանալու կամ համա-

[1] http://www.moia.gov.il/russian/pages/default.aspx

պատասխան մասնագիտացման ձեռքբերման կենտրոններ հաճախելու հիման վրա։

Հայրենադարձության կազմակերպման կարևոր մեխանիզմներից է հայրենադարձների համար բնակության ապահովումը։ Հայրենադարձին բնակության վայրի ընտրության մի քանի հնարավորություն է տրվում.

1. վարձակալել բնակարան մասնավոր շուկայում,
2. «Հայրենիքում առաջին տունը» նախագծի շրջանակներում բնակարանի վարձակալում կիբուցում (գյուղատնտեսական ավան-համայնավարություն),
3. ազգականների մոտ ժամանակավոր բնակեցում,
4. բնակեցում ուսանողական հանրակացարաններում։

Նշենք նաև, որ «հայրենադարձության զամբյուղ» ստացողների պարագայում բնակարանի վարձակալության համար նախատեսված նպաստը ներառվում է այդ «զամբյուղի» մեջ։ Իսկ «հայրենադարձության զամբյուղ» չստացողները կարող են ձեռք բերել բնակարանի վարձակալության նպաստ հիփոթեքային բանկում։ Այդ նպատակով հայրենադարձը պետք է դիմի որևէ հիփոթեքային բանկ և ձևակերպի արտոնությունների (թեուդաթ զաքաութ) ստացման իրավունքը հաստատող փաստաթուղթը։

Հայրենադարձության գործընթացի կազմակերպման բաղկացուցիչ մասերից է երեխաների ներգրավումն ուսումնական և կրթական հաստատություններում (մանկապարտեզներ, դպրոցներ), ինչն իրականացվում է թաղապետարաններում գործող կրթության բաժինների կողմից։ Նույն թաղապետարաններում գործող սոցիալական ապահովման բաժինների կողմից

կազմակերպվում է հաշմանդամների և տարբեր քրոնիկական հիվանդություններով տառապող հայրենադարձ երեխաների ուսուցումը:

Հայրենադարձության հետ կապված կարևոր հարցերից մեկն էլ վերաբերում է երեխաների և տարեցների համար նախատեսված նպաստներին: «Հայրենադարձության զամբյուղ» ձեռք բերողները կարող են ստանալ երեխաների կամ տարեցների նպաստներն իրենց անհատական բանկային հաշվեհամարներից: Հայրենադարձի կարգավիճակ ունեցող, սակայն «հայրենադարձության զամբյուղ» չստացողները պետք է դիմեն բնակության վայրին մոտակա Բիտուախ Լեումի (Ազգային ապահովագրման տեսչություն) բաժանմունք և այնտեղ լրացնեն երեխաների և տարեցների ծերության նպաստների ստացման մասին դիմում:

Հայրենադարձի ինտեգրման քայլերից է նաև առողջապահական ապահովագրման խնդիրը: Սկզբնական փուլում հայրենադարձը պետք է գրանցվի փոստային բանկի որևէ բաժանմունքում, լրացնի գրանցման թերթիկը, որտեղ և կիրականացվի համապատասխան գրառում նրա կողմից ընտրված բուժսպասարկման ծառայության վերաբերյալ: Բուժօգնություն ստանալու համար այդ թերթիկն անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բուժհաստատություն, որտեղ հայրենադաձին կհանձնվի անդամակցության տոմս:

Ինտեգրման հետագա քայլերը

Ուլպանում ուսման ավարտից հետո հայրենադարձներն անցնում են աշխատանքի տեղավորման փուլ և շարունակում են

նախարարությունից ստանալ աջակցություն՝ ընդհուպ մինչև Իսրայելում բնակության առաջին տարվա ավարտը։ Աշխատանքի անցման գործընթացը սկսվում է հայրենադարձի՝ աշխատանքի շուկայում գրանցման ձևակերպումից։ Այդ նպատակով հայրենադարձները պետք է դիմեն Հայրենադարձության և ինտեգրման նախարարության շրջանակներում գործող հատուկ մասնագիտացված կենտրոններ։ Ստուգման են ենթարկվում հայրենադարձների՝ Իսրայելում աշխատանքի թույլտվություն ստանալու համար ստաժավորման կամ վերապատրաստման դասընթացների հնարավորությունները, ինչպես նաև դասընթացներին հաճախելու ժամանակահատվածում նախարարության կողմից հատկացվող նպաստների ստացման հնարավորությունը։ Եթե հայրենադարձը գրանցվել է աշխատանքի շուկայում կամ ուսում է ստանում Աշխատանքի նախարարության կողմից հավատարմագրված օրական հիմունքներով անցկացվող դասընթացներում, նա իրավասու է ստանալ նվազագույն կենսապահովման զամբյուղ կամ նպաստ (ավթահաթ ահնասա)։ Եթե տարիքի, առողջական վիճակի կամ ընտանեկան հանգամանքների պատճառով հայրենադարձը չի գրանցվել աշխատաշուկայում, նա կարող է ստանալ այդ պարագաների համար նախատեսված «հատուկ նպաստ»։

Իսրայելում հայրենադարձության առաջին տարվա ավարտից հետո «հայրենադարձության զամբյուղ» ստացողները սկսում են ստանալ այն հիփոթեքային բանկում։ «Հայրենադարձության զամբյուղ» չստացողները շարունակում են ստանալ բնակարանի վարձակալության նպաստ այնպես, ինչպես ստանում էին Իսրայելում բնակության առաջին տարում։

Այդ ժամանակահատվածում, եթե հայրենադարձը չի աշխատում, սակայն գրանցված է աշխատաշուկայում կամ ուսում է ստանում Աշխատանքի նախարարության կողմից կազմակերպվող դասընթացներում, կամ էլ Հայրենադարձության նախարարությունից ստացել է «հատուկ նպաստ», ապա անհրաժեշտություն է առաջանում դիմելու Բիտուախ Լեումի՝ նպաստի ստացման պահանջներն ու պայմանները ստուգելու նպատակով։

Եթե հայրենադարձն ուսում է ստանում Հայրենադարձության և ինտեգրման նախարարության կողմից անցկացվող պրոֆեսիոնալ դասընթացներում, ապա նա կարող է շարունակել ստանալ այդ նախարարության կողմից տրվող նպաստը մինչև դասընթացի ավարտը։ Որակավորման բարձրացման, վերաորակավորման, ստաժավորման և այլ դասընթացներում ուսում ստանալու հնարավորություն տրվում է նաև Իսրայելում բնակության առաջին տարվա ավարտից հետո։

Ինտեգրման այլ ծրագրեր և արտոնություններ

«Հայրենիքում առաջին տունը» ծրագրի շրջանակներում հայրենադարձների ընտանիքը կարող է բնակարան վարձակալել կիբուցում և օգտվել վերջինիս ծառայություններից՝ սննդի կազմակերպում, եբրայերենի ուսուցում, մանկապարտեզների և դպրոցների հաճախում։ Այս ծրագիրը վճարովի է, իսկ բնակարանի վարձակալումը կիբուցում տևում է 1 տարի։

«Իսրայելական տուն» ծրագրի շրջանակներում Հայրենադարձության և ինտեգրման նախարարությունն արտերկրում կազմակերպում է հատուկ նախագիծ, որի նպատակն է Իս-

րայելի հետ արտերկրում բնակվող իսրայելցիների կապերի պահպանումն ու ամրապնդումը[1]: «Իսրայելական տուն» նախագիծն իրականացվում է արտերկրում Իսրայելի հյուպատոսությունների և դեսպանությունների միջոցով:

Նախագծի շրջանակներում արտերկրում բնակվող իսրայելցիներին, որոնք հետաքրքրված են Իսրայել վերադարձի հարցերով, ապահովում են որակյալ խորհրդատվություններով, նախատեսում հայրենիք վերադարձի ծրագրման դեպքում կազմակերպել նրանց անհատական ուղեկցումը: Ներկայում աշխարհում գործում է 14 «իսրայելական տուն», որոնք կենտրոնացած են ԱՄՆ-ում, Կանադայում, Եվրոպայում և ՌԴ-ում[2]:

«Գարին Ցաբար» կամավորական նախագիծն իրականացվում է 1991 թվականից: Դրան կարող են մասնակցել արտերկրում բնակվող 18-23 տարեկան հրեա պատանիները, որոնք ցանկանում են հայրենադարձվել Իսրայել՝ Պաշտպանության բանակում ծառայելու նպատակով[3]: Առաջին 4 ամիսների ընթացքում նախագծի մասնակիցները սկսում են Իսրայելի Պաշտպանության բանակում ինտեգրման գործընթացը, ծանոթանում զինծառայության պայմաններին, սովորում եբրայերեն ուլպաններում, ճամփորդում երկրում: Նախագիծը ֆինանսավորվում է Իսրայելի պետական կառույցների կողմից՝ Հայրենադարձության նախարարություն, Պաշտպանության նախարարություն և այլն:

«Վաուչեր» ծրագիրը նոր հայրենադարձներին և վերադարձած իսրայելցիներին աջակցում է աշխատանքի տեղավորման,

[1] http://www.moia.gov.il/Russian/RETURNINGRESIDENTS/Pages/IsraeliHouse3.aspx
[2] Նույն տեղում:
[3] http://www.moia.gov.il/Russian/RETURNINGRESIDENTS/Pages/GarinZabar.aspx

մասնավոր գործարարության և գիտնականների ինտեգրման հարցերում: Ծրագիրն աջակցություն է ցույց տալիս նրանց նոր մասնագիտության ձեռքբերման կամ որակավորման բարձրացման հարցերում: Ծրագրի շրջանակներում սուբսիդիաներից օգտվելու իրավունք ունեն.

- նոր հայրենադարձները,
- վերադարձած իսրայելցիները,
- հայրենադարձների երեխաները (հայրենադարձության օրը 15 տարին լրացած),
- այն հայրենադարձները, որոնց տարիքը դիմումի պահին գերազանցում է 18 տարին,
- աշխատունակ անձինք,
- գործազուրկները,
- ոչ որակյալ աշխատանքով զբաղվող անձինք (մաքրում, պահպանություն),
- Իսրայելի աշխատաշուկայում պահանջարկ չունեցող մասնագիտություններով անձինք:

Ծրագրի շրջանակներում սուբսիդիաներ ստանում են նոր հայրենադարձները՝ 10 տարի ժամկետով Իսրայել պետությունում հայրենադարձի կարգավիճակ ստանալուց սկսած, Եթովպիայից հայրենադարձները՝ 15 տարի ժամկետով, Կովկասից՝ 1989թ. հունվարի 1-ից հետո կարգավիճակ ստացածները, վերադարձած իսրայելցիները՝ մինչև 2 տարի:

Աշխատանքի տեղավորման հարցում ցուցաբերված աջակցությունն արտահայտվում է նաև աշխատավարձի ֆինանսավորմանը մասնակցության տեսքով: Հայրենադարձներին

և վերադարձած իսրայելցիներին աշխատանքի տեղավորման խթանման նպատակով Հայրենադարձության և ինտեգրման նախարարությունը մասնակցում է հայրենադարձների աշխատավարձի ֆինանսավորմանը՝ սահմանափակ ժամկետներում: Նախարարությունը, գործատուի հետ միասին համամասնակից լինելով հայրենադարձի աշխատավարձի ֆինանսավորմանը, խթանում է գործատուի շահագրգռվածությունը հայրենադարձին աշխատանքի տեղավորման հարցում: Նախարարության մասնակցությունը հայրենադարձի աշխատավարձի ֆինանսավորմանը կախված է հետևյալ չափորոշիչներից.

1. աշխատանքի տեսակը,
2. արտադրության աշխարհագրական տեղանքը,
3. գործատուի մասնակցությունն աշխատավարձի վճարմանը,
4. հայրենադարձի կրթության և աշխատանքի տեսակի համապատասխանությունը,
5. նախարարության քաղաքականությունը՝ որոշակի պրոֆեսիոնալ ուղղություններով աշխատանքի տեղավորման աջակցման հարցում՝ կախված տվյալ պահին երկրի տնտեսության վիճակից:

Հայրենադարձներին տրվող կարևոր արտոնություններից են նաև վերջիններիս մաքսային հարկի վճարումից ազատումը՝ հայրենադարձության օրվանից 4 տարվա ընթացքում, գործարարության ձեռնարկմանն աջակցումը, բնակարանի ձեռքբերման հարցում արտոնյալ վարկերի տրամադրումը և այլն:

ԳԼՈՒԽ 4.
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

4.1. ԱՄՆ հրեական համայնքի գիտական պոտենցիալը

ԱՄՆ հասարակական, տնտեսական և քաղաքական ոլորտներում հրեաների դիրքերի ամրապնդման գործընթացը պայմանավորված է եղել հրեական համայնքի գիտակրթական պոտենցիալի զարգացման գործընթացով: ԱՄՆ-ում հրեական կրթական, ուսումնական, գիտական հաստատությունների հիմնադրման գործընթացը, ինչպես նաև տեղի հրեական համայնքի ներկայացուցիչների ակտիվ ներգրավումը երկրի առաջատար ուսումնական հաստատություններում նպաստել է Միացյալ Նահանգների օրենսդիր և գործադիր մարմիններում որոշումների կայացման մեխանիզմների վրա հրեաների ազդեցության ձևավորմանը: Ստորև ընդհանուր պատկերով կներկայացնենք ԱՄՆ քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում հրեական համայնքի դիրքերի ամրապնդման գործընթացը:

Հրեաները ԱՄՆ-ում հայտնվել են 18-րդ դարի վերջին, սակայն դեպի այդ երկիր նրանց առավել հոծ գաղթ եղել է 19-րդ դարի առաջին տասնամյակներում, հիմնականում Արևմտյան Եվրոպայից, Գերմանիայից:

Արևմտյան Եվրոպայից դեպի Միացյալ Նահանգներ հրեաների արտագաղթն առավել ակտիվ տեմպեր է ունեցել հատկապես 1880-ականներից մինչև 1914-15թթ.: Դա հիմնակա-

նում պայմանավորված էր Արևելյան և Արևմտյան Եվրոպայում հակասեմականության ակտիվացման միտումներով, հրեաների հետապնդումներով և Առաջին աշխարհամարտի սկսմամբ։ 1880թ. տվյալներով՝ ԱՄՆ-ում հաշվվում էր 230 հազ. հրեա։ Սկզբնական շրջանում հրեաներն առավել ակտիվորեն էին ինտեգրվում ԱՄՆ տնտեսության տարբեր ճյուղերում, սակայն համեմատաբար քիչ դերակատարում ունեին երկրի քաղաքական կյանքում։

1870-ականներից ԱՄՆ-ում հրեաները սկսեցին ակտիվորեն ներգրավվել երկրի գրական-մշակութային կյանքում։ Հրատարակվում էին հրեական առաջին պարբերականները, բացվեցին հրեական կրթական քոլեջներ։ 1900-ականներին ԱՄՆ հրեաների թվաքանակը 1 մլն էր, 1915թ. դրությամբ՝ 3 մլն 250 հազար, 1925թ.՝ 4,5 մլն։

Նոր գաղթած հրեաների վերաբնակեցման հարցերով զգալի աջակցություն էին ցուցաբերում ԱՄՆ հրեական հասարակական կազմակերպությունները։ Սկզբնական շրջանում հրեաներն աշխատում էին թեթև և սննդի արդյունաբերությունում, զբաղվում փոքր առևտրով և արհեստներով։ Հետագա տարիներին նրանց մի հատվածն աստիճանաբար ներգրավվեց երկրի տնտեսական և քաղաքական կյանքում՝ ստեղծելով խոշոր ձեռնարկություններ և առևտրային խմբեր։ Այդ ժամանակաշրջանում ամերիկյան կինոարտադրությունը գրեթե ամբողջությամբ ստեղծվեց հրեա ձեռնարկատերերի կողմից։ Հրեաները հիմնեցին թերթեր, հայտնի դարձան ազգությամբ հրեա խոշոր գիտնականները։ Ժամանակի ընթացքում հրեաներից ոմանք դարձան միջին օղակի քաղաքական գործիչներ (խոշոր քաղաք-

ներում, նահանգների օրենսդրական կոմիտեներում, Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում), դատավորներ և պետական բարձրաստիճան պաշտոնյաներ։ 1915թ. առաջին հրեան դարձավ նահանգապետ (Մ.Ալեքսանդեր, Այդահո նահանգ)։

ԱՄՆ-ում հրեաների հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում ինտեգրման գործում անգնահատելի դեր ունեցավ ԱՄՆ սիոնիստական շարժումը՝ որպես հրեական ազգային շարժում, որը սկիզբ առավ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին։ Շարժման ակունքներում կանգնած էին ռաբբի Ի.Լիզերը, Շ.Լազարուսը, Մ.Նոահը և այլք։ 1825թ. Նոահը փորձեց Նյու Յորք նահանգում հիմնել հողագործական գաղութ «Արարատ» անվամբ՝ տարբեր երկրներից դեպի Իսրայել հրեաների վերաբնակեցման նպատակով։

1896-97թթ. ձևավորվեցին քաղաքական սիոնիզմի կողմնակիցներից բաղկացած խմբեր, 1898-ին ստեղծվեց ամերիկացի սիոնիստների դաշնությունը։ 1906-1907թթ. հիմնադրվեց Համալսարանական սիոնիստական լիգան, 1915թ.՝ ԱՄՆ Միջհամալսարանական սիոնիստական դաշնությունը։

ԱՄՆ սիոնիստները զգալի աջակցություն են ցուցաբերել Իսրայել պետության ստեղծմանն ու պաշտպանությանը՝ ֆինանսապես, քաղաքականապես և այլն։ Միևնույն ժամանակ, սիոնիստական շարժումն աստիճանաբար ձուլվում էր համահրեական հասարակական կազմակերպությունների հետ, որոնք նույնպես աջակցում էին Իսրայելին։ Հրեական տեղական կազմակերպությունները համախմբվեցին ազգային հողի վրա, և 1954թ. սկսեց գործել ԱՄՆ հիմնական հրեական կազմակերպությունների նախագահների խորհուրդը։ Հրեական կազմակեր-

պությունների առաջնային առաքելությունը հակասեմականության դեմ պայքարն էր, ինչպես նաև հրեաների մշակութային, կրթական, գիտական ու սոցիալական աշխատանքին վերաբերող հարցերը։

20-րդ դարի սկզբից ԱՄՆ հրեական համայնքների ղեկավար շրջանակները գործնական քայլեր ձեռնարկեցին տեղի հրեաներին համապատասխան կրթությամբ ապահովելու, նրանց գիտակրթական պոտենցիալը բարձրացնելու ուղղությամբ։ 1960-ականներին ԱՄՆ հրեաների 80%-ը, ըստ համապատասխան տարիքային խմբերի, սովորում էր երկրի համալսարաններում և քոլեջներում։

Ըստ վիճակագրական հավաստի տվյալների, այդ շրջանում ամերիկյան միջին հրեա ընտանիքի եկամուտները զգալիորեն բարձր էին ԱՄՆ բնակչության այլ էթնիկ կամ կրոնական փոքրամասնության ներկայացուցիչների եկամուտներից։

Այս ժամանակաշրջանում հրեա ֆինանսիստների ազդեցությունը 20-րդ դարի սկզբների համեմատ զգալիորեն նվազել էր։ Փոխարենը զգալիորեն աճեց հրեաների ազդեցությունն ու դերակատարությունը ԱՄՆ գիտության, կրթության ոլորտում։ Գործնականում գրեթե ամբողջությամբ վերացվեցին հրեաների նկատմամբ նախկինում առկա սահմանափակումները երկրի հետազոտական կենտրոններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատանքի տեղավորման հարցում։

Վիճակագրական տվյալների համաձայն, 1960-ական թթ. վերջին ԱՄՆ համալսարաններում և քոլեջներում աշխատում էր 30 հազար հրեա, ինչը կազմում էր երկրի բարձրագույն դպրոցների դասախոսական կազմի ընդհանուր թվաքանակի

մոտ 10%-ը։ Նրանց հետազոտական գործունեությունն ընդգրկում էր գիտության բոլոր ոլորտները։ Քիչ չեն ազգությամբ հրեա այն գիտնականները, որոնք միջազգային ասպարեզում հայտնի են իրենց հետազոտություններով և գիտական գործունեությամբ և ստացել են Նոբելյան մրցանակներ բժշկության, ֆիզիոլոգիայի, ֆիզիկայի, քիմիայի, տնտեսագիտության ու այլ ոլորտներում (հատկապես 1940-ականների կեսերից մինչև 1960-ականների սկիզբը)։

1980-ական թթ. վերջին ԱՄՆ հրեաների ավելի քան կեսը՝ մինչև 65 տարիքային խմբում, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներ էին։ Հրեա երիտասարդության 85%-ը սովորում և աշխատում էր երկրի համալսարաններում ու քոլեջներում։

1981թ. հրեական դաշնությունները կազմավորեցին հրեական կրթության Հյուսիսամերիկյան ծառայությունը։ Հյուսիսային Ամերիկայում հրեական կրթության հարցերով անկախ հանձնաժողովը 1990թ. խորհուրդներ էր տալիս մշակելու ԱՄՆ և Կանադայի բոլոր հրեական համայնքների համար ստանդարտ և կիրառական ծրագրեր հրեական կրթության ապահովման համար և աջակցում էր հրեաներին՝ նրանց ուսման ֆինանսական հարցերը հոգալու համար։

1980-ականների վերջին Բրանդայզայի համալսարանը միակ ոչ կրոնական հրեական համալսարանն էր։ 1985թ. ԱՄՆ 250 խոշոր քոլեջներ առաջարկում էին տարբեր դասընթացներ, որոնք վերաբերում էին հրեա ժողովրդի պատմությանն ու մշակույթին։ Երկրի 99 բուհերում հուդայականության թեմայով կարելի էր ստանալ բակալավրի ակադեմիական աստիճան։

1974թ. ԱՄՆ-ում ստեղծվեց Հրեական գիտությունների բաց ակադեմիան։

ԱՄՆ-ում գործում է հրեական կրթության զարգացած համակարգ՝ սկսած մանկապարտեզներից, վերջացրած բարձրագույն ուսումնական հաստատություններով։

ԱՄՆ գիտական, հասարակական և քաղաքական ոլորտներում հրեաների բարձր դիրքեր զբաղեցնելու մեկնարկը համընկավ դեպի այդ երկիր հրեաների ներգաղթի երրորդ փուլի հետ։ ԱՄՆ առաջին քաղաքացին, որը 1907թ. Նոբելյան մրցանակ ստացավ ֆիզիկայի գծով, Պրուսիայից հրեա ներգաղթյալների որդի Ալբերտ Աբրահամ Մայքելսոնն էր։

Օսկար Սոլոմոն Շտրաուսը 19-րդ դարի վերջին դառնում է ազգությամբ հրեա առաջին նախարարը ԱՄՆ կառավարությունում։ 1906-1909թթ. նա զբաղեցնում է առևտրի և աշխատանքի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնը, 1909-1910թթ. նշանակվում Թուրքիայում ԱՄՆ դեսպան, իսկ հետագայում ստանձնում նախագահ Վուդրո Վիլսոնի խորհրդականի պաշտոնը։

1950-2010թթ. ԱՄՆ ներկայացուցիչներին բաժին հասած Նոբելյան մրցանակների 25%-ը ստացել են հրեաները։

4.2. Խորհրդային գիտնականների ավանդն Իսրայելում գիտության զարգացման գործում

Իսրայել պետության հիմնադրումից հետո երկրի ղեկավարությունը զգալի ուշադրություն էր դարձնում գիտության, կրթության զարգացմանը՝ որպես պետության զարգացման և անվտանգության ապահովման երաշխիք։ Իսրայելում գիտության

զարգացմանը զգալի աջակցություն ցուցաբերեցին տարբեր երկրների հրեական համայնքները։ Այդ գործին առավել ակտիվորեն ներգրավվեցին Եվրոպայի, Միացյալ Նահանգների հրեական համայնքները։

Առանձին պետք է խոսել Իսրայել պետությունում գիտության զարգացման գործում ԽՍՀՄ հրեական համայնքների ունեցած զգալի ավանդի մասին։ Խորհրդային հրեա գիտնականները մեծ ներդրում են ունեցել ճշգրիտ գիտությունների զարգացման գործում։ Օրինակ, Իսրայելի միջուկային ծրագրերի ստեղծմանն ակտիվորեն մասնակցել են խորհրդային գիտնականները, որոնք մեծ գիտական պոտենցիալ և փորձ ունեին ԽՍՀՄ միջուկային զենքի ստեղծման գործընթացում։ Ստորև համառոտ կներկայացնենք Իսրայելում գիտության զարգացմանը խորհրդային հրեա գիտնականների ներգրավման գործընթացը։

1925թ. Երուսաղեմում Հրեական համալսարանի հիմնադիրներից էին պրոֆեսորներ Գերմանիայից ու Չեխիայից, ԱՄՆ-ից ու Լեհաստանից։ 1955-1975թթ. Իսրայել պետության տարբեր քաղաքներում հիմնադրվեց 5 համալսարան՝ Թել Ավիվի, Բար Իլանի, Հայֆայի, Բեեր Շևի և Իսրայելի բաց համալսարանը։ Վերը հիշատակված համալսարանները ստեղծվել են արևմտյան երկրներից սերած գիտնականների կողմից։ «Երկաթյա վարագույրը» խոչընդոտում էր ոչ միայն ԽՍՀՄ-ից հրեաների արտահոսքին, այլև Արևելյան ու Արևմտյան Եվրոպաների միջև գիտական կապերի, ԽՍՀՄ և իսրայելցի գիտնականների միջև համագործակցության հաստատմանն ու զարգացմանը։

ԽՍՀՄ-ից հրեաների առաջին զանգվածային ներգաղթն Իսրայել տեղի ունեցավ 1970-ական թթ. սկզբին, ինչի արդյուն-

քում տեղի ունեցավ նաև խորհրդային հրեա գիտնականների զգալի հատվածի ներգաղթ։ Անհրաժեշտություն առաջացավ ստեղծել այնպիսի մարմին, որը ոչ միայն կաջակցեր Իսրայելի գիտական հանրությունում խորհրդային հրեա գիտական ներուժի ինտեգրմանն ու ադապտացման գործընթացին, այլև պայմաններ կստեղծեր դրա առավել արդյունավետ կիրառման համար։ Արդյունքում՝ 1973թ. Իսրայել պետության կառավարության հատուկ հանձնարարականով Հետազոտությունների և զարգացման հարցերով ազգային խորհրդի շրջանակներում հիմնադրվեց Գիտնականների աբսորբցիայի (ինտեգրման) կառավարական կենտրոնը։

1975թ. կառավարական կենտրոնն անցավ Աբսորբցիայի նախարարության ենթակայության տակ։ 1989թ., մինչև խորհրդային հրեաների վերջին զանգվածային արտահոսքի սկիզբը, կենտրոնն աջակցություն էր ցուցաբերել 3500 գիտնականի։ Գործատուները ստացան ֆինանսական դոտացիաներ ներգաղթած 2500 գիտնականների աշխատանքի տեղավորման համար, որոնց 65%-ը աշխատանք գտավ համալսարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում, 20%-ը՝ կառավարական և հասարակական հիմնարկներում, հիվանդանոցներում, լաբորատորիաներում, 15%-ը՝ արդյունաբերության ոլորտում։

1988թ. սկսած՝ Իսրայել արտագաղթեց ավելի քան 13.000 խորհրդային գիտնական, սակայն պետությունը ոչ բոլորին կարողացավ ապահովել համապատասխան աշխատանքով և ֆինանսական աջակցությամբ։

Գիտահետազոտական կառույցներում և ինստիտուտներում ներգաղթած խորհրդային գիտնականներին համապատաս-

խան աշխատանքով ապահովելու և պաշտոններ տալու գործում դրական արդյունքներ արձանագրելու նպատակով ԱՊՀ երկրների գիտնականների նախաձեռնող խումբը 1993թ. հիմնեց Իսրայելի գիտնական հայրենադարձների միությունը: Վերջինիս նպատակն էր ֆորմալ և ոչ ֆորմալ հարթություններում լոբբիստական գործունեություն ծավալել այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են հայրենադարձ գիտնականների պրոֆեսիոնալ ինտեգրմանն ու աշխատանքի պայմանների բարելավմանը: Միությունը համաիսրայելական ասոցիացիա է, որում ներգրավված են մի քանի տասնյակ կրոնական և նեղ մասնագիտական կազմակերպություններ: Միությունը սերտ համագործակցություն է հաստատել Իսրայելի պետական ինստիտուտների հետ՝ հայրենադարձ գիտնականների պրոֆեսիոնալ ինտեգրման գործընթացը կազմակերպելու և նրանց գիտական պոտենցիալն առավել արդյունավետ կիրառելու նպատակով:

Հավելված

Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում

Վարդան Աթոյան

21-րդ դարում տարբեր երկրների ուղեղային կենտրոնները վեր են ածվում ոչ միայն ներպետական, այլև, շատ դեպքերում՝ հանրային քաղաքականության գլոբալ դերակատարների: Այդ հանգամանքով պայմանավորված՝ հրատապ խնդիր են դառնում աշխարհի տարբեր երկրների ուղեղային կենտրոնների (ՈւԿ) փորձի ուսումնասիրությունը և մեզանում դրա ներդրման հնարավորությունների գնահատումը:

Վերոնշյալի համատեքստում նշենք, որ իսրայելական ՈւԿ-ների ուսումնասիրությունը մեզ համար կարևորվում է մի շարք հանգամանքներով: Նախ՝ Իսրայելն իր պատմական անցյալով, տարածաշրջանային հակամարտություններով, մեծաթիվ սփյուռքով, իր չափերով և մի շարք այլ առումներով Հայաստանի հետ ունի բազմաթիվ նմանություններ: Բացի այդ, Իսրայելի ուսումնասիրությունը, որպես ազգային պետության մոդել, իր բոլոր ասպեկտներով և տարբեր ոլորտներում հաջողված փորձով, այդ թվում ինտելեկտուալ ռեսուրսները համախմբող կառույցների ստեղծման գործում, ժամանակի հրամայականն է: Այդ համատեքստում պետք է նշել, որ հայրենական մասնագիտական գրականության մեջ, թերևս որոշ բացառություններով, Իսրայելի ՈւԿ-ների գործունեությանն ու դերակատարությանը նվիրված աշխատանքների մեծ բաց կա: Այս աշխատանքը փորձ է մի փոքր լրացնելու այդ բացը և կարևորե-

լու իսրայելական ՈՒԿ-ների գործունեության ուսումնասիրությունը թե՛ տեսական, թե՛ կիրառական իմաստով:

Ինչպես նշում է Վան Լիր Երուսաղեմ (Van Leer Jerusalem) ինստիտուտի աշխատակից Բենջամին Բալինթը (Benjamin Balint)՝ Իսրայելում ՈՒԿ-ների տարածումը պայմանավորված է Իսրայելի «արևմտյան քաղաքական մշակույթով»: Երկրորդը կապված է ԱՄՆ-ում ապրող կամ սովորող մեծաթիվ իսրայելցիների հետ: Նրա խոսքով՝ Իսրայելում ՈՒԿ-ների հիմնադիրներն ուղղակիորեն կապված են ԱՄՆ-ի հետ, նրանք կամ այնտեղի բնակիչներ են, կամ սովորել են այնտեղ[1]:

Ըստ ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տնօրեն Ջեյմս ՄաքԳանի (J.G. McGann) 2016թ. հրապարակած զեկույցի[2]՝ Իսրայելում գործում է 58 ՈՒԿ, որոնցից շատերը դասվում են աշխարհում լավագույնների շարքին: Մասնավորապես, Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտը (ԱԱՀԻ) աշխարհի լավագույն ՈՒԿ-ների շարքում 108-րդն է: Վերջինս 42-րդն է նաև պաշտպանությանն ու ազգային անվտանգությանն առնչվող լավագույն ՈՒԿ-ների շարքում և 4-րդը՝ Միջին Արևելքի ՈՒԿ-ների շարքում: Ընդհանուր առմամբ, Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի լավագույն 75 ՈՒԿ-ներից 13-ը իսրայելական են, որոնց թվում են

[1] Does Israel Need Think Thanks, by Hannah Elka Meyers *Middle East Quarterly* Winter 2009, pp. 37-46. URL: http://www.meforum.org/2061/does-israel-need-think-tanks

[2] McGann J.G 2015 Global Go To Think Tank Index Report, Think Thanks and Civil Societies Program, International Relations Program University of Pensylvania, Philadelphia, PA USA (Feb/9/2016).
http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks

Բեգին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտը, Իսրայելի սոցիալական և տնտեսական առաջընթացի կենտրոնը և այլն:

Ուսումնասիրության ընթացքում մեր կողմից դիտարկվել են Իսրայելի 58 ՈւԿ-ներից 10-ը, որոնցից լավագույն երեքը ներկայացնենք առավել մանրամասն:

Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտ (Institute for National Security Studies)

Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտն (ԱԱՀԻ) իրականացնում է նորարարական, ժամանակին համահունչ, բարձրորակ հետազոտություններ, որոնք Իսրայելի ազգային անվտանգության վերաբերյալ հանրային քննարկումների առիթ են տալիս[1]: ԱԱՀԻ-ն ինչպես Իսրայելի, այնպես էլ արտերկրի քաղաքական գործիչների համար իրականացնում է քաղաքական վերլուծություններ, միաժամանակ՝ առաջարկություններ ներկայացնում որոշումներ կայացնողներին:

ԱԱՀԻ-ն շահույթ չհետապնդող, ապակուսակցական ՈւԿ է, որի հիմնական նպատակն է նպաստել Իսրայելի՝ որպես անվտանգ, ժողովրդավարական և հրեական պետության ապագային: Ինստիտուտը ձգտում է իր ազդեցությունը տարածել Իսրայելի քաղաքականություն մշակողների և որոշումներ կայացնողների վրա, ամեն տարի կազմակերպում է միջազգային կոնֆերանսներ, որոնց մասնակցում են ճանաչված պետական գործիչներ և ազգային անվտանգության ոլորտի ներկայա-

[1] The Institute for National Security Studies official web page.
URL: http://www.inss.org.il/index.aspx?id=4447

ցուցիչներ ինչպես Իսրայելից, այնպես էլ ամբողջ աշխարհից: Կոնֆերանսները հիմնականում վերաբերում են 21-րդ դարում Իսրայելի ազգային անվտանգության մարտահրավերներին: 2016թ. իններորդ ամենամյա կոնֆերանսին, որը կրում էր «Փոխվո՞ւմ են խաղի կանոնները» (Changing Rules of the Game?) խորագիրը, մասնակցում էին Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլին (Reuven Rivlin), արտաքին գործերի, պաշտպանության, ֆինանսների, էկոնոմիկայի, արդարադատության նախարարները, ինչպես նաև Իսրայելում մի շարք երկրների դեսպաններ[1]:

ԱԱՀԻ-ն իրականացնում է 14 հետազոտական ծրագիր.

1. Սպառազինությունների վերահսկողություն և տարածաշրջանային անվտանգություն
2. Իսրայելա-պաղեստինյան հարաբերություններ
3. Կիբեռանվտանգության ծրագիր
4. Օրենք և ազգային անվտանգություն
5. Ռազմական և ռազմավարական հարցեր
6. Ահաբեկչություն և սառեցված հակամարտություններ
7. Իսրայելի հասարակություն և հանրային կարծիք
8. Ռազմական հավասարակշռություն
9. Հայրենիքի անվտանգություն
10. Տեխնոլոգիական կանխատեսում
11. Կիրառական բանակցություններ
12. Տնտեսագիտություն և ազգային անվտանգություն
13. Չինաստան
14. Սիրիա:

[1] 9th Annual International Conference: Changing Rules of the Game? URL: http://www.inss.org.il/index.aspx?id=4480&eventid=10709

ԱԱՀԻ հիմնական հրատարակություններն են.

- Իսրայելի ռազմավարական հետազոտություն (Strategic Survey for Israel). տարեգիրք, որում ուսումնասիրվում են Իսրայելի ռազմավարական միջավայրի վրա ազդող հիմնական զարգացումները, ինչպես նաև ներկայացվում են առաջարկություններ Իսրայելի ազգային անվտանգության ներկա և ապագա հնարավոր մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ:
- Զեկույցներ, որոնցում արտացոլվում են ընթացիկ խնդիրների և դրանց քաղաքական հետևանքների վերաբերյալ վերլուծական աշխատանքները:
- Ռազմավարական գնահատում (Strategic Assessment). ԱԱՀԻ-ի եռամսյակային պարբերականը, որում ներկայացված են Իսրայելի ռազմավարական իրավիճակի, ընթացիկ իրադարձությունների և ժամանակակից միտումների վերաբերյալ ակնարկներ:
- Ռազմական և ռազմավարական հարցեր (Military and Strategic Affairs). տարեկան երեք անգամ հրապարակվող ամսագիր ռազմական ոլորտում Իսրայելի մարտահրավերների վերաբերյալ:
- ԱԱՀԻ-ի հայացք (INSS Insight). ընթացիկ իրադարձությունների արագ արձագանքման վերաբերյալ լրագիր, որը թողարկվում է էլեկտրոնային եղանակով շաբաթական մեկ-երկու անգամ:

ԱԱՀԻ-ի աշխատակազմը բաղկացած է ավելի քան 50 փորձագետից, որոնց թվում են համալսարանների պրոֆեսոր-

ներ, ռազմաօդային ուժերի նախկին սպաներ, Ատոմային էներգիայի հանձնաժողովի նախկին աշխատակիցներ, Քնեսեթի նախկին պատգամավորներ, նախկին նախարարներ և նախարարների տեղակալներ: Կենտրոնի տնօրեն Ամոս Յադլինը (Amos Yadlin) 40 տարի աշխատել է Իսրայելի պաշտպանական ուժերում, եղել է Ռազմական հետախուզության ղեկավար, Ռազմաօդային ուժերի փոխհրամանատար:

Թեև հաստատության պաշտոնական կայքում դրամական արտահայտությամբ տեղեկատվություն չկա եկամուտների չափերի վերաբերյալ, բայց դրանց գոյացման աղբյուրները հայտնի են: Լինելով շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ ինստիտուտն իր առաքելությունն իրականացնում է անհատներից, խոշոր կորպորացիաներից և առաջատար հիմնադրամներից միջոցների ներգրավման՝ նվիրատվությունների շնորհիվ: Ինստիտուտը նվիրատվություններն ընդունում է վճարային քարտերի, չեկերի, դրամական փոխանցումների միջոցով, որոնք հարկային նվազեցումներ են համաձայն Իսրայելի օրենսդրության: Մասնավորապես, «Եկամտային հարկի որոշման» 46-րդ հոդվածը դոնորների համար ապահովում է հարկային նվազեցումներ, եթե նրանց նվիրատվություններն ուղղված են հավաստագրված հանրային հաստատություններին: Դոնորները կարող են ստանալ 35% հարկային նվազեցում, եթե նրանց նվիրատվությունը գերազանցում է 180 շեկելը (մոտավորապես $50), բայց ոչ ավելի, քան 9 մլն շեկելը (մոտավորապես $2.6 մլն), կամ մինչև նրանց վճարելիք ամբողջ հարկի 30%-ը[1]:

[1] Council on Foundations, Israel, Tax Allowances.
URL: http://www.cof.org/content/israel#allowances

Պետք է նշել, սակայն, որ թեև օրենսդրությամբ տրված է այդպիսի շահադրդիչ հնարավորություն, այնուամենայնիվ, ըստ Աշխարհի նվիրատվության ցուցչի 2015թ. զեկույցի, իսրայելական մասնավոր կազմակերպությունների և անհատների նվիրատվությունները մեծ չեն՝ 75-րդ տեղն աշխարհում[1]:

Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտ (Israel Democratic Institute)

Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտը (ԻԺԻ) անկախ, ապակուսակցական ՈՒԿ է, որի գործունեությունն ուղղված է Իսրայելում ժողովրդավարության հիմքերի ամրապնդմանը[2]: Հիմնադրվելով 1991թ.՝ ԻԺԻ-ն աջակցում է պետական պաշտոնյաներին և քաղաքացիական ծառայողներին հետևյալ 4 ձևերով.

- *Հետազոտություններ.* իրականացնում է Իսրայելի ժողովրդավարական կարևոր խնդիրներին վերաբերող քաղաքական հետազոտություններ:
- *Երկխոսություն.* գումարում է բաց խորհրդաժողովներ, կազմակերպում ակտիվ հանրային քննարկումներ և ստեղծում կոնսենսուս հասարակության և կառավարության միջև:
- *Բարեփոխումներ.* բարեփոխումների համար մշակում է հետազոտական հիմք ունեցող նախագծեր, որոնք ուղեկցվում են գործնական կիրառություն ունեցող ռազմավարությունների մշակմամբ:

[1] CAF World Giving Index, November 2015, page 9. URL: http://philanthropy.ru/wp-content/uploads/2015/11/WGI2015_Report_PRINT_2015.pdf

[2] Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտի պաշտոնական կայք: URL: http://en.idi.org.il/about-idi/

- *Արժեքների արմատավորում.* նպաստում է Իսրայելի՝ որպես հրեական և ժողովրդավարական պետության ինքնության համար կենսական նշանակություն ունեցող արժեքների և նորմերի արմատավորմանը:

ԻԺԻ-ի տեսլականը հիմնվում է Իսրայելի անկախության հռչակագրի սկզբունքների վրա: Այդ սկզբունքները հրեական, մարդասիրական, ազատական և եղբայրական արժեքներով պետություն ստեղծելու սիոնիստական նկրտումների արտահայտությունն են[1]: Ինստիտուտը բավական մեծ ազդեցություն ունի Իսրայելի քաղաքական կյանքում, որի վկայությունը դրա ձեռքբերումներն են.

- ԻԺԻ-ի գործունեությունը հանգեցրել է Քնեսեթի հետազոտությունների և տեղեկատվական կենտրոնի հիմնադրմանը: Այն ստեղծվել է 2000թ.՝ Քնեսեթի անդամներին, հանձնաժողովներին, վարչություններին օբյեկտիվ տեղեկատվությամբ, արժանահավատ տվյալներով և անհրաժեշտ հետազոտություններով ապահովելու, ինչպես նաև ընթացիկ քննարկումների, օրենսդրության և խորհրդարանական համապատասխան գործունեության վերաբերյալ հենքային ուսումնասիրություններ իրականացնելու համար[2],
- մշակել է Իսրայելի սահմանադրության առաջնային նախագիծը,

[1] IDI Vision, official web page. URL: http://en.idi.org.il/about-idi/
[2] Knesset Research and Information Center official web-page.
URL: https://www.knesset.gov.il/mmm/eng/MMM_about_eng.htm

- 2015թ. կազմել է Իսրայելի և տարածաշրջանի պետությունների միջև լարվածության թուլացման առաջին համապարփակ նախագիծը[1],
- նպաստել է Իսրայելի ազգային տնտեսական խորհրդի և կառավարությունում փոքրամասնությունների հարցերով հատուկ մարմնի ստեղծմանը: Ազգային տնտեսական խորհուրդը ստեղծվել է 2006թ.՝ վարչապետի անմիջական ենթակայության տակ բարձր վերլուծական կարողություններով օժտված և մակրոտնտեսական խնդիրներին արհեստավարժ լուծումներ առաջակող մարմին ունենալու նպատակով[2],
- մասնակցել է ազգային անվտանգության ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, Իսրայելում կրոնական լարվածության թուլացման ուղղությամբ տասնյակից ավելի օրենքների մշակմանը:

ԻԺԻ-ի հիմնական հետազոտական կենտրոններն են.

1. Կառավարման և էկոնոմիկայի կենտրոն (The Center for Governance and the Economy). ԻԺԻ-ի փորձագետները ձգտում են ամրապնդել Իսրայելում ժողովրդավարության հիմքերը՝ քաղաքականություն մշակողներին Իսրայելի քաղաքական համակարգի և տնտեսության վերաբերյալ կիրառական առաջարկություններ ներկայացնելով: Կենտրոնի ծրագրերն են.

[1] A Plan to Reduce Tension between Religion and State in Israel. Recommendations for Policy Makers - Elections 2015. URL: http://en.idi.org.il/analysis/idi-press/publications/hebrew-books/a-plan-to-reduce-tension-between-religion-and-state-in-israel/

[2] Prime Minister's office official page. URL: http://www.pmo.gov.il/English/PrimeMinistersOffice/DivisionsAndAuthorities/TheNationalEconomicCouncil/Pages/TheNationalEconomicCouncil.aspx

ա. Քաղաքական ռեֆորմը (Political reform), որը ստեղծվել է 2009թ. Քնեսեթի գործունեության բարելավման հրատապ անհրաժեշտությունից ելնելով: Տասը հոգուց բաղկացած հետազոտական խումբը մշակել է քաղաքական բարեփոխումների իրականացման մի շարք առաջարկություններ, որոնք ներկայացվել և քննարկվել են Քնեսեթում:

բ. Տնտեսության և հասարակության Էլայ Հուրվիցի անվան կոնֆերանս (The Eli Hurvitz Conference on Economy and Society). հայտնի է որպես Իսրայելի ամենաազդեցիկ տնտեսական կոնֆերանս, որի տարեկան համաժողովին մասնակցում են տարբեր պետական գործիչներ, այդ թվում Իսրայելի վարչապետը:

2. Կրոնի, ազգի և պետության կենտրոն (The Center for Religion, Nation and State). ինստիտուտի փորձագետներն իրենց լուծումներն են առաջարկում այնպիսի խնդրահարույց հարցերում, ինչպիսիք են ներգաղթը, պետության վերափոխումը, ամուսնությունը և մարդու իրավունքները: Կենտրոնի ծրագրերն են.

ա. Կրոն և պետություն (Religion and State):

բ. Մարդու իրավունքներ և հուդայականություն (Human Rights and Judaism):

գ. Իսրայելի վերափոխում (Israeli Conversion):

3. Ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների կենտրոնը (The Center for Democratic Values and Institutions) բաղկացած է հետևյալ ծրագրերից՝ Ժողովրդավարության սկզբունքներ (Democratic Principles), Մեդիա բարեփոխումներ

(Media Reform), Թափանցիկ կառավարում (Open Government), Արաբա-հրեական հարաբերություններ (Arab-Jewish Relations), Համաչափությունը հանրային քաղաքականության մեջ (Proportionality in Public Policy), Դատահիրավական բարեփոխումներ (Reform of the Judiciary), Ռազմաքաղաքական հարաբերություններ (Civil-Militiary Relations):

4. Անվտանգության և ժողովրդավարության կենտրոն (The Center for Security and Democracy). ԻԺԻ-ն ձգտում է օրենքի գերակայության շրջանակներում ամրապնդել Իսրայելի ինքնապաշտպանական կարողությունները: ԻԺԻ-ի փորձագետները գնահատում են Իսրայելի հակաահաբեկչական միջոցառումները, խորհուրդներ տալիս Քնեսեթին, կառավարությանը, ներկայացնում են ահաբեկչության դեմ պայքարի իրենց նորարարական առաջարկությունները, որոնք ուղղված են հավասարակշռելու Իսրայելի ազգային անվտանգությունը:

ԻԺԻ-ն հրապարակում է հոդվածներ, վերլուծականներ, մենագրություններ, որոնք, սակայն, հստակ պարբերականություն չունեն: Ինստիտուտի Տնօրենների խորհուրդը բաղկացած է ճանաչված քաղաքական գործիչներից, Իսրայելի գործարար միջավայրի, գիտական շրջանակների կարկառուն ներկայացուցիչներից: Տնօրենների խորհուրդը հավաքվում է տարեկան 4 անգամ, իրականացնում է վերահսկողություն ինստիտուտի պլանավորման, քաղաքականության և գործունեության վերաբերյալ, կրում ֆիդուցիար պատասխանատվություն (այլ սուբյեկտի շահերի անունից հանդես գալու իրավունք) ինստիտուտի բյուջեի և ֆինանսական ակտիվների համար: Տնօրենների խորհրդի անդամ են ծագումով հրեա, ծնունդով ամերիկացի

հայտնի գործարար և բարեգործ Բերնարդ Մարկուսը (Bernard (Bernie) Marcus)[1], «Ինտել» կորպորացիայի նախկին գործադիր կառավարիչ Ամիր Էլսթեյնը (Amir Elstein)[2]: Խորհրդի անդամների թվում են նաև ֆիզիկոսներ, տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչներ: Հետազոտողների թվում են Քնեսեթի նախկին պատգամավորներ, մաթեմատիկոսներ, իրավաբաններ, պատմաբաններ, Իսրայելի նավատորմի նախկին հրամանատարներ, խորհրդատուներ և համալսարանների պրոֆեսորներ:

ԻԺԻ-ի եկամուտները հիմնականում ձևավորվում են նվիրատվությունների հաշվին: 2015թ. բյուջեն կազմել է ավելի քան $9 մլն, որի 80.5%-ը ձևավորվել է ամերիկյան հիմնադրամների և մասնավոր դոնորների նվիրատվություններից, 12%-ը՝ իսրայելյան հիմնադրամներից և մասնավոր դոնորներից, իսկ մնացածը՝ Եվրոպական հետազոտական խորհրդի և այլ կազմակերպությունների կողմից:

Բեգին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոն (Begin-Sadat Center for Strategic Studies)

Բեգին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (ԲՍՌՀԿ) առաջնորդվում է իրատեսական, պահպանողական և սիոնիստական օրակարգով[3]: Կենտրոնը հիմնադրվել է 1993թ. Կանադայի հրեական համայնքի առաջնորդներից մեկի

[1] IDI board of directors, official web page.
URL: http://en.idi.org.il/about-idi/board-of-directors/mr-bernard-(bernie)-marcus/
[2] IDI board of directors.
URL: http://en.idi.org.il/about-idi/board-of-directors/mr-amir-elstein/
[3] Բեգին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի պաշտոնական կայք, տե՛ս URL: http://besacenter.org/

կողմից, որպես ապակուսակցական և անկախ հետազոտական կենտրոն, ասոցացված Բար Իլան համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետին: ԲՍՌՀԿ-ն իրականացնում է ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքական խնդիրների վերաբերյալ հետազոտություններ, մասնավորապես՝ Իսրայելի ազգային անվտանգությանն ու արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև Միջին Արևելքին առնչվող հետազոտություններ: Կենտրոնը կազմակերպում է կոնֆերանսներ, դասախոսություններ, ճեպազրույցներ, ինչպես տեղական, այնպես էլ միջազգային լսարանների համար: Այն նաև համագործակցում է աշխարհի լավագույն ՈւԿ-ների, այդ թվում ամերիկյան ՌԵՆԴ (RAND) կորպորացիայի, Ջոնս Հոփկինսի առաջադեմ միջազգային հետազոտությունների դպրոցի (The Johns Hopkins School of Advanced International Studies) և այլ կենտրոնների հետ[1]:

Կենտրոնում հետազոտություններ իրականացվում են առանց հստակ առանձնացված ծրագրերում դրանք ընդգրկելու: Հետազոտության թեմաները բազմազան են, հիմնականում վերաբերում են տարածաշրջանի երկրներին, ինչպես նաև Իսրայելի համար ռազմավարական նշանակություն ունեցող երկրներին և դրանց ղեկավարներին, մասնավորապես՝ առանձին հետազոտական թեմաներ կան, որոնք կրում են «Բարաք Օբամա», «Բաշար ալ Ասադ», «Բենիամին Նեթանյահու» և այլ առաջնորդների անուններ: Այդ թեմաների տակ սովորաբար պատրաստվում են այնպիսի հոդվածներ, որոնցում քննարկվում են տվյալ ղեկավարի գործողությունները կոնկրետ իրադրություններում: Օրինակ, «Բարաք Օբամա» թեմայի շրջանակ-

[1] BESA Global Reach, official page. URL: http://besacenter.org/about/global-reach/

ներում ընդգրկված է հոդված սիրիական քաղաքացիական պատերազմի վերաբերյալ, որտեղ ընդհանուր իրավիճակից զատ ներկայացված են նաև ԱՄՆ նախագահի գործողություններն այդ պատերազմի ընթացքում:

ԲՍՌՀԿ-ն հրատարակում է Իսրայելի և Միջին Արևելքի վերաբերյալ ուսումնասիրություններ, տարածաշրջանի հեռանկարին առնչվող պարբերականներ (օրինակ՝ «Միջին Արևելքի անվտանգության և քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրություններ» - Mideast Security and Policy Studies), մենագրություններ, գրքեր և տեսանյութեր:

Կենտրոնի հետազոտողների թիվը հասնում է 32-ի, որի մեկ երրորդը Իսրայելի Պաշտպանության բանակի, այլ պաշտպանական ուժերի, Ազգային անվտանգության խորհրդի, ռազմական հետախուզության, Ֆինանսների նախարարության, Արտաքին գործերի նախարարության նախկին աշխատակիցներ են, մասնավորապես՝ փորձագետներ, վերլուծաբաններ, խորհրդականներ և դեսպաններ:

ԲՍՌՀԿ պաշտոնական կայքում դրամական արտահայտությամբ տեղեկատվություն չկա եկամուտների չափերի և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ:

***

Ներկայացված ՈւԿ-ների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք էական ազդեցություն ունեն Իսրայելում քաղաքականություն մշակողների վրա: Սակայն պետք է նշել, որ այս ազդեցությունը չի կարող համեմատվել ամերիկյան կամ բրիտանական ՈւԿ-ների՝ համապատասխանաբար ամերիկյան և բրի-

տանական գործերի վրա ունեցած ազդեցության հետ[1]: Այդ տեսակետին են հանգել նաև ԱԱՀԻ-ի կողմից կազմակերպված քննարկման մասնակից ՈւԿ-ների ղեկավարները, որի հիման վրա ԱԱՀԻ հետազոտող Յուել Գուզանսկին (Yoel Guzansky) պատրաստել է «ՈւԿ-ների դերը և ազդեցությունն Իսրայելի օրինակով» հոդվածը: Այդ հոդվածում նշվում է, որ թեև իսրայելական ՈւԿ-ների աշխատանքը շատ կարևոր է, սակայն դրանք այդքան էլ չեն ազդում որոշումների կայացման վրա: Մյուս կողմից, Իսրայելում ՈւԿ-ները ոչ այնքան բազմազան են, ոչ էլ այնքան ազդեցիկ, որքան Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում[2]: Այնուամենայնիվ, Իսրայելում նկատվում է ՈւԿ-ների թվի աճի կայուն շարժընթաց (ՈւԿ-ների թվաքանակի շարժընթացը ներկայացված է Գծապատկեր 1-ում) և արդեն նկատելի է, որ որոշ ՈւԿ-ներ հետևողականորեն փորձում են իրենց ազդեցությունն առավել ընդլայնել պետական և հասարակական կարևոր հարցերում որոշումների կայացման գործընթացում:

ԱԱՀԻ-ի կողմից 2014թ. հունվարի 22-ին կազմակերպված քննարկման մասնակից ՈւԿ-ների ղեկավարները նաև անդրադարձել են այն հիմնական խոչընդոտներին, որոնք խանգարում են ՈւԿ-ներին քաղաքական որոշումների վրա ազդեցություն ունենալ: Այդ խոչընդոտներն ըստ այդ քննարկման մասնակիցների հետևյալն են.

[1] Սարուխանյան Ս., «Ուղեղային կենտրոնները» Իսրայելում. ազգային և ցանցային կառույցների համադրություն», «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (28), 2009թ., էջ 61:
[2] Guzansky Yoel, The Role and Influence of Think Tanks in the Israeli Experience, (January 22, 2014). URL: http://www.inss.org.il/index.aspx?id=4480&eventid=6601

Գծապատկեր[1]



1. Ակադեմիական հետազոտություններն, անկասկած, առավելություն ունեն, սակայն հաճախ դրանք չեն համապատասխանում որոշումներ կայացնողների պահանջներին:
2. Քաղաքականություն մշակողները չեն կարդում ծավալուն աշխատանքներ, նրանք պարզապես ժամանակ չունեն հոդվածները խորությամբ ուսումնասիրելու համար:
3. «Գիտական ճշմարտությանը» հավատարիմ մնալու փորձը կարող է հակասել բարձրաստիճան պաշտոնյաների քաղաքական և բարոյական տեսակետներին[2]:

Մեկ այլ փորձագետ, ամերիկյան Հադսոն ինստիտուտի (Hudson Institute) նախկին աշխատակից Հանա Էլկա Մեյերսը (Hannah Elka Meyers) Միջին Արևելքի ֆորումում հրատարակած «Արդյո՞ք Իսրայելն ուղեղային կենտրոնների կարիք ունի» հոդվածում առանձնացնում է ամերիկյան ՈւԿ-ների համեմատ դրանց փոքր ազդեցության հետևյալ պատճառները.

[1] Գծապատկերը կազմվել է ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տարեկան զեկույցների արդյունքների ուսումնասիրության հիման վրա:

[2] Guzansky Yoel, The Role and Influence of Think Tanks in the Israeli Experience, (January 22, 2014). URL: http://www.inss.org.il/index.aspx?id=4480&eventid=6601

1. Հիմնական պատճառն Իսրայելի քաղաքական կառուցվածքն է: Ինչպես շատ եվրոպական երկրների խորհրդարանները, այնպես էլ Իսրայելի Քնեսեթը մուտքի ավելի փոքր հնարավորություններ են թողնում իրենից դուրս քաղաքական խորհրդատուների ներգրավման համար, քան ԱՄՆ Կոնգրեսը և գործադիր իշխանությունը: Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տնօրեն Ջեյմս ՄաքԳանը բացատրում է. «Խորհրդարանական մոդելում օրենսդիրն ու գործադիրը միահյուսված են. ամերիկյան մոդելում գործադիր և օրենսդիր մարմիններն առանձին են, հետևաբար ուղեղային կենտրոնը ներգրավման ավելի մեծ հնարավորություններ ունի և ստիպված չէ գործ ունենալ միայն մեկ առանձին մարմնի հետ»: Բացի այդ, ամերիկյան ֆեդերալիզմը հանգեցրել է թույլ քաղաքական կուսակցությունների ձևավորմանը: «Ապակենտրոնացված համակարգը, որում իշխանությունը բաժանված է դաշնային, պետական և տեղական մակարդակների միջև, ՈւԿ-ների համար իրենց ազդեցությունը տարածելու ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում»[1],- նշում է ՄաքԳանը: Խորհրդարանական համակարգում, ընդհակառակը, կուսակցություններն ավելի ազդեցիկ են, ինչը խոչընդոտում է դրսից քաղաքական հարցերում խորհրդատվություն ստանալուն:

[1] James McGann. "Development of Think Tanks and Their Role as Catalysts for Ideas and Actions in the U.S. Political System", Briefing, Foreign Press Center, Washington D.C., Feb. 28, 2006.

2. Ամերիկյան ՈւԿ-ները շահում են նաև նրանից, որ ավանդաբար ամերիկացիներն անվստահություն ունեն իշխող կառավարության հանդեպ: Այդ պատճառով նրանք ավելի մեծ վստահությամբ են լցվում արտաքին փորձագետների նկատմամբ: Մյուս կողմից, քիչ հավանական է, որ Իսրայելի քաղաքացիներն ուշադրություն կդարձնեն քաղաքական խնդիրների վերաբերյալ ոչ կառավարական ուժերի կողմից առաջարկվող լուծումներին: Արդյունքում՝ Իսրայելում հիմնական ռազմավարական որոշումները կայացվում են առանց հանրային մակարդակում քննարկումների:
3. Ամերիկյան ՈւԿ-ների համեմատ, Իսրայելի ՈւԿ-ներն ավելի շատ ակադեմիական կողմնորոշում ունեն, որն էլ երևում է հենց հրատարակված գրքերի քանակից: Միջին Արևելքի ՈւԿ-ները տարեկան հրատարակում են 800 գիրք, հյուսիսամերիկյան կենտրոնները՝ 540: Ինչպես նշում է ՄաքԳանը՝ «Վատ չէ այդքան գրքեր ունենալը, բայց քաղաքականություն կերտողները դա չեն կարդում: Ինչո՞ւ եք հրատարակում դրանք: Այստեղ մեկ պարզ բացատրություն կա. դա ակադեմիական կողմնորոշումն է»:
4. Ավելի խոր մակարդակում Իսրայելի ՈւԿ-ների պակաս ազդեցիկ լինելը պայմանավորված է մարդկանց գործունեության և բիզնեսի վարման մի շարք մշակութային նորմերով: Օրինակ, Իսրայելում հանրային քննարկումների ժամանակ իրենց գաղափարներն առաջ տանելու համար կարիք չկա ՈւԿ-ների անունից կամ նրանց միջոցով հանդես գալ, քանի որ Իսրայելի քաղաքական գործիչները ժողովրդի կողմից ավելի ընդունելի են, քան ՈւԿ-ները:

Իսրայելը չափերով գրեթե ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի չափ է: Դրան համապատասխան էլ կառավարությունն ավելի փոքր է, նրանց միջև առկա են անձնական կապեր, որը քիչ շերտեր է թողնում արտաքին խորհրդատուների ներթափանցման համար: Քաղաքական կարիերա սկսելն այսպիսի կառավարություն մուտք գործելով ավելի դյուրին է, քան ԱՄՆ-ում, որտեղ գրեթե անհնար է մուտք գործել կառավարություն, քանի դեռ մարդկանց կողմից մեծ ուշադրության չես արժանացել, որը հնարավոր է ՈւԿ-ների միջոցով հանդես գալու դեպքում:

5. Իսրայելի քաղաքական մշակույթում ոչ պաշտոնական երևույթների առկայությունը ևս հանգեցրել է նրան, որ պետական պաշտոնյաներն ավելի շատ հակված են խորհուրդներ ընդունել անձնական ծանոթներից, քան պաշտոնական ինստիտուտներից: Դա պայմանավորված է ոչ միայն Իսրայելի չափերով, այլև նրա սոցիալական և գաղափարական արմատներով: Դրա վառ օրինակը, ինչպես նշում է ամերիկյան Բարուք Քոլեջի (Baruch College) ասոցացված պրոֆեսոր Դով Ուաքսմանը (Dov Waxman), նախկին վարչապետ Գոլդա Միերի (Golda Meir) հայտնի «խոհանոցային սենյակն» է ("Kitchen Cabinet"): Գ.Միերի տան խոհանցում սուրճի սեղանի շուրջ, ծխախոտի ընկերակցությամբ ընդունվում էին բոլոր կարևոր որոշումները[1]:

Ամփոփելով՝ նշենք մի շարք հետևություններ.

[1] Does Israel Need Think Thanks? // by Hannah Elka Meyers, *Middle East Quarterly,* Winter 2009, pp. 37-46. URL: http://www.meforum.org/2061/does-israel-need-think-tanks

1. Իսրայելական ՈւԿ-ների գործունեությունն ուղղված է Իսրայելի՝ որպես անվտանգ, ժողովրդավարական և հրեական պետության հիմքերի ամրապնդմանը: Վերջիններս մասնակցում են ինչպես ազգային անվտանգության ամրապնդմանը, այնպես էլ կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, Իսրայելում կրոնական լարվածության թուլացման ուղղությամբ օրենքների մշակմանն ու փոփոխմանը: Միաժամանակ, Իսրայելի ՈւԿ-ները նաև մշակում են քաղաքական տարբեր խնդիրների վերաբերյալ այլընտրանքային լուծումներ և ներկայացնում կառավարությանը կամ Քնեսեթին:
2. ՈւԿ-ների աշխատակազմում ընդգրկված են ոչ միայն ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, այլև հաճախ Իսրայելի պաշտպանական ուժերի նախկին աշխատակիցներ, Քնեսեթի նախկին պատգամավորներ ու նախարարներ, իսկ տնօրենների խորհրդում ընդգրկվում են տարբեր ոլորտի ազդեցիկ ներկայացուցիչներ ամբողջ աշխարհից, այդ թվում՝ ֆիզիկոսներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչներ և հայտնի գործարարներ:
3. ՈւԿ-ները կազմակերպում են կոնֆերանսներ, որոնց մասնակցում են ամենատարբեր մակարդակի քաղաքական գործիչներ՝ կուսակցությունների ներկայացուցիչներ, Քնեսեթի պատգամավորներ, նախարարներ, ինչպես նաև երկրի վարչապետն ու նախագահը:
4. Իսրայելում ՈւԿ-ները ֆինանսավորվում են հիմնականում նվիրատվությունների հաշվին, իսկ որոշ ՈւԿ-ների դեպքում դրանց գերակշռող մասը ստացվում է ԱՄՆ-ից:

Ավելացնենք նաև, որ վերջերս (2016թ. հուլիսին) Իսրայելի Քնեսեթում ընդունվել է օրենք, ըստ որի՝ այն հասարակական, ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք իրենց ֆինանսավորման 50%-ից ավելին ստանում են արտերկրից, պարտավոր են հայտարարագրել այդ փաստն իրենց բոլոր հրապարակումներում: Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուն հայտնել է, որ օրենքը պետք է շտկի իրավիճակը, երբ օտար երկրները կոպտորեն խառնվում են Իսրայելի ներքին գործերին[1]: Իր հերթին, երկրի արդարադատության նախարար Այելեթ Շակեդը (Ayelet Shaked) նշում է, որ դա արվում է այդ կազմակերպություններում թափանցիկության բարձրացման և օտարերկրյա պետությունների միջամտությունն Իսրայելի ներքին գործերին կրճատելու նպատակով[2]: Մինչդեռ Իսրայելի քաղաքացիական իրավունքի ասոցիացիան (Association for Civil Rights in Israel) գտնում է, որ դրա նպատակը ոչ թե թափանցիկության բարձրացումն է, այլ կոնկրետ կազմակերպություններին հալածելը, որոնք կառավարությունից տարբերվող կողմնորոշում ունեն: Կազմակերպությունը բերում է այն փաստարկները, որ առկա օրենսդրությունն արդեն իսկ ապահովում է այդ կազմակերպությունների թափանցիկությունը, քանի որ այն կազմակերպությունները, որոնք ստացել են 20 հազար շեկելը (մոտ $5200) գերազանցող նվիրատվություն, պարտավոր են հայտնել դոնորի ինքնությունը և տարեկան 4 անգամ հաշվետվություն

[1] Кнессет начал борьбу с «иностранными агентами» (12/07/2016) URL: http://cursorinfo.co.il/news/novosti1/2016/07/12/knesset-nachal-borbu-s-inostrannimi-agentami/

[2] У Израиля появятся свои иностранные агенты // Журнал "Коммерсантъ Власть" № 6 от 15.02.2016, с. 34. URL: http://www.kommersant.ru/doc/2901156

ներկայացնել օտարերկրյա նվիրատվությունների վերաբերյալ: Հետևաբար, ըստ վերոնշյալ ասոցիացիայի տնօրենի, օրինագծի նպատակն է ազդել ձախակողմյան ուժը ներկայացնող կազմակերպությունների գործունեության վրա, այլ ոչ թե բարձրացնել դրանց թափանցիկությունը[1]: Պարզ է, որ նման օրինագծի ընդունումը որոշ չափով կխոչընդոտի նվիրատվությունների ներգրավմանը:

Այսպիսով, առանձնացված բնորոշումները փաստում են, որ Իսրայելի հանրային քաղաքականության մեջ ՈւԿ-ներն իրենց էական դերն ունեն, իսկ նրանց թվի պարբերական ավելացումը, վերջիններիս կողմից կազմակերպված միջոցառումներին բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունը, օրենքների մշակման գործում ներգրավվածությունը, ներկայացված առաջարկությունների քննարկումը Քնեսեթում խոսում են ՈւԿ-ների դերի կայուն բարձրացման և ազդեցության աճի մասին:

[1] Anti-NGO Legisletion in Israel Updated February 2016, Debbie Gild Hayo, Adv. Director of Policy Advocacy, Association for Civil Rights in Israel, p. 3. URL: http://www.acri.org.il/en/wp-content/uploads/2016/02/Anti-NGO-Bills-Overview-Updated-Febuary-2016.pdf

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միանշանակ է, որ Իսրայելն այսօր ակտիվորեն ներգրավված է Հարավային Կովկասի ռազմաքաղաքական գործընթացներում: Մեր տարածաշրջանում իսրայելական գործոնի ակտիվացումն առաջիկայում նույնպես կդիտարկվի որպես բացասական միտում ՀՀ անվտանգային և պաշտպանական խնդիրների համատեքստում՝ երկու հիմնական պատճառով.

1. Հարավային Կովկասի ռազմաքաղաքական գործընթացներում Իսրայելի ներգրավումն ընթանում է Իսրայել-Ադրբեջան երկկողմ քաղաքական, ռազմատեխնիկական համագործակցության խորացման համատեքստում:
2. Ի տարբերություն Ադրբեջանի, Իսրայելի հետ Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները բավական ցածր մակարդակում են: Իսրայելի հետ Հայաստանի հարաբերությունները սահմանափակվում են մշակութային, հասարակական ոչ համակարգային շփումներով, ինչը մեծ բացթողում է Հայաստանի մերձավորարևելյան քաղաքականությունում: Իսրայելական կողմը, ըստ հավաստի աղբյուրների, արդեն նախաձեռնություն ցուցաբերել է Հայաստանին իսրայելական արտադրության սպառազինությունների մատակարարման հարցում, ինչը դրական արձագանք չի ստացել հայկական կողմից:

Ելնելով վերը նշված իրողություններից, ինչպես նաև մերձավորարևելյան ներկայիս ռազմաքաղաքական վերադասավորումներից՝ վաղուց արդեն անհրաժեշտություն է առաջացել վերանայել, վերիմաստավորել ինչպես Հայաստան-Իսրայել համագործակցության ներկայիս մակարդակը, այնպես էլ Հայաստանի մերձավորարևելյան քաղաքականությունն առհասարակ։

Իսրայել-Ադրբեջան ռազմատեխնիկական համագործակցության ներկա տեմպերը վկայում են այս ուղղությամբ հարաբերությունների խորացման միտումների մասին՝ մանավանդ հաշվի առնելով ապրիլյան պատերազմից հետո ադրբեջանական կողմի շահագրգռվածությունն իսրայելական արտադրության սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մատակարարումների հարցում։

Առաջիկա տարիներին երկու երկրների միջև ռազմատեխնիկական համագործակցության ամրապնդմանը կնպաստի 2016թ. մայիսին Ավիգդոր Լիբերմանի՝ Իսրայելի պաշտպանության նախարար նշանակվելը։ Վերջինս արցախյան հակամարտության կարգավորման հարցում բազմիցս հանդես է եկել ադրբեջանամետ քաղաքական հայտարարություններով և դիրքորոշմամբ։ Փաստենք, որ Լիբերմանի՝ Իսրայելի պաշտպանության նախարար նշանակվելը Իսրայել-Ադրբեջան երկկողմ ռազմատեխնիկական համագործակցությունը կբերի որակապես նոր մակարդակի, ինչը չի կարող չանդրադառնալ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա։

Հետազոտությունում անդրադարձել ենք նաև Իսրայելի օրինակով զինվորականության հոգևոր-բարոյական դաստիա-

ռակության, արժեքաբանական հիմնահարցերի ուսումնասիրմանը, որոնց լուսաբանումը, որպես միջազգային փորձի վառ օրինակ, կարող է այս կամ այն չափով նպաստել մեր իրականությունում զինվորականության շրջանում արատավոր երևույթների նվազեցմանը, ինչպես նաև զինվորականության մարտունակության բարձրացմանը։

Հետազոտության այլ թեմաների՝ Իսրայելի օրինակով սփյուռք-պետություն հարաբերություններին, հայրենադարձության կազմակերպման մեխանիզմներին, գիտակրթական պոտենցիալին վերաբերող հարցերի ուսումնասիրումը հնարավորություն կտա հայկական իրականությունում ուշադրություն դարձնել նմանօրինակ հիմնահարցերին և առավել արդյունավետ ու ճկուն կիրառական հայեցակարգային մոտեցումներ ցուցաբերել սփյուռք-պետություն համագործակցության, հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ տարվող իրավաքաղաքական և հասարակական աշխատանքներում։ Խնդիրն ակտուալ է հատկապես սիրիական ռազմաքաղաքական ընթացիկ զարգացումների համատեքստում, երբ բազում սիրիահայեր փախստական են դարձել, և նրանց մի մասը Կանադայի, Միացյալ Նահանգների կամ Լիբանանի փոխարեն ընտրել է հայրենադարձվելու ճանապարհը։ Նրանց մի հատվածը կարողացավ ինտեգրվել հայաստանյան սոցիալական, հասարակական կյանքում, մյուս մասը, ցավոք, կրկին ընտրեց հիմնականում դեպի արևմտյան երկրներ գաղթելու ուղին։ Ներկայիս գլոբալացման միտումների համատեքստում ժամանակը բացասաբար է անդրադառնում արտերկրի հայկական համայնքների հայա-

պահպանության վրա, ուստի անհրաժեշտություն է առաջանում առավել ճկուն պետական մոտեցումներ ցուցաբերել թե՛ արտերկրի հայկական համայնքներում հայապահպանության մեխանիզմների կիրառությանը, թե՛, որն առավել կարևոր է, հայկական համայնքներում հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ առավել ակտիվ քայլեր կատարելուն։

Սույն հետազոտությամբ մեր առջև խնդիր ենք դրել մեկ անգամ ևս կարևորել և կիրառական համակարգված քայլեր ձեռնարկել վերը նշված խնդիրները ներկայացնելու և դրանց համարժեք ու արագ արձագանքելու ուղղությամբ։

Կարեն Վերանյան

ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գիտական խմբագիր՝
Վահրամ ՀՈՎՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 28 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 300։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Էդգար Փարթներս» ՍՊԸ տպարանում։